




Արբուհի՛ Աստվածածին, Մա՛յր
Լույսի, բարեխոսի՛ր մեր ազգի
համար, որ լինենք սո՛ւրբ և արդար
ժողովուրդ, թող որ մեր Տեր ու Փրկիչ
Քրիստոսի Խոսքով և Սուրբ Հոգու
առաջնորդությամբ արժանավորվենք
Աստծո արդարությանը և Երկնքի
արքայությանը, ազատվելով
մեր կյանքը գետնող ամենա՛յն
ախտասիրություններից և չարիք ծնող
ամենա՛յն անօրենություններից:
Ամեն:

ԱՐՅԱԽՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկրորդ, համահավաք հրատարակություն
Գիրքն ընծայվում է Արցախի Թեմի վերաբացման
25- ամյակին



Վկայությունները հավաքեց եւ գրառեց
Մաքսիմ Անդրանիկի Ոսկանյանը

Երևան,
«Լուսարաց» հրատարակատուն, 2014թ.



Գիրք առաջին

Արցախի ազատագրումը Աստծո ձեռքով

ՆԱԽԱՆՆԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

 րպեսզի Աստվածածինը՝ մարդկության ամենաերանելի Մայրը ծնվեր, անհրաժեշտ եղավ, Արրահամից սկսած՝ հավատացյալ ընտրյալ Հայերի երեք 14 սերունդ: Այսինքն թե՛ Մարիամը սովորական ծնունդ չէր: Այլ՝ արքայական հավատին կոչված մարդկության հույսերի ծնունդն էր: Եվ Մարիամը Սուրբ Հոգուց հղիանալով, նաև Սուրբ Հոգու եւ Սուրբ եկեղեցու խորհրդակիրը դարձավ մարդկանցս մեջ, մեղավոր մարդկանցս համար: Մայր Միջնորդ, որ մեր սրտերում ծնվի Հիսուս: Մայր Միջնորդ, որ վերստին ծնունդ ունենանք: Ինչպես Հակոբի եւ Եսափի մայրը, որ Հակոբ որդու Աստվածապաշտության նախանձավորությունը տեսնելով՝ իր խորհուրդներով եւ առաջնորդությունը հենարան եղավ Հակոբին՝ Հոր օրհնության ամենաարժեքավոր մասը ժառանգելու, այդպես էլ մեր Աստծո Մայրը՝ Մարիամը, Փրկչի Ավետարանը սրտանց սիրողների, իրենց մեղքերը ատողների, հանուն Փրկչի իրենց անձն ուրացողների, նրան նվիրյալների համար բոլոր ժամանակներում խորհրդատու է, բարեխոս, ամենահոգածու օգնական եւ հենարան եւ Մայրն է Նվիրական: Մայրը, խրատատուն եւ դաստիարակն է նաև սրբությանը հետետրդ բոլոր մայրերի եւ քույրերի: Մայրը միակ, ում բոլոր ազգերն են իրավամբ երանի տալիս:

- Ահա՛ քո մայրը,- ասաց Խաչյալ Հիսուս Հովհաննես աշակերտին՝ ցույց տալով Մարիամ Աստվածածինին: Եվ Հովհաննես աշակերտի համար մորն ասաց,- Ահա՛ քո որդին: Այս մեզ եւս վերաբերվում է: Եվ եկեղեցում, պաշտամունքի ժամանակ, երբ բեմում դրված Մարիամի պատկերին ենք նայում՝ մանուկ Հիսուսը գրկին, այդ մանկան փոխարեն՝ մեր դարձի սկզբնական ժամանակում՝ յուրաքանչյուրս մեզ ենք տեսնում. այդպես մենք եւս հայտնվելով Սուրբ Հոգու եւ Մայր եկեղեցու խորհրդակիր՝ Մարիամ մոր գրկում, օր օրի վերստին ծնվում եւ որդեգրվում ենք Աստծուն ու այդպես մեծանում:

Ի Հայրապետութեան Գարեգնի Բ Սրբազնագոյն Կաթողիկոսի
Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարքի

Հրամանաւ Պարգեւի Սրբազան արքեպիսկոպոսի՝
առաջնորդին թեմի Հայոց Արցախեայ

 շմարիտ որ, Արցախի պաշտպան Աստվածածինը նախօրոք էր հովանի արցախցի Պարգե սրբազանին եւ Մայրն ու Խորհրդատուն էր սրբազանի, եւ Աստված նախօրոք էր Աստվածամոր Մայրական հովանավորութեամբ սրբազանին նախապատրաստում Արցախի համար: Նոր էր արեղա ձեռնադրվել: Կարգ է, որ նոր ձեռնադրված արեղաները Մայր Աթոռի միաբանների հետ հերթով պատարագ կատարեն: Յոթը միաբաններ էին, որոնց պատարագումներից հետո միայն հերթը հասնում էր արեղաներին: Բայց երբ բացակայում էր պատարագիչ միաբանը, հիվանդության կամ այլ մի պատճառով, անհրաժեշտ էր դառնում, որ մեկը բացակայողին փոխարիներ: Եվ զարմանալի ներդաշնակությամբ, Աստվածածնի տոների պատարագներին սկսեցին ի պաշտոնն պարտավոր միաբանները հարգելի պատճառով բացակայել, եւ պատարագի մատուցումն ու քարոզը արտահերթ կերպով ահա վիճակվում էր նորընծա արեղային: Այս, զարմանալի օրինաչափությունը, իհարկե, աննկատ չմնաց: Եվ միաբաններից Հայր Զավենն ասաց.

- Աստված ահա դարձնում է քեզ Աստվածածնի տոների մասնագետ:


Սակայն, քչերը գիտեն, որ Աստվածային նախախնամությունը մկրտության նոր ծննդյամբ էր Պարգե սրբազանին Մայր Աստվածածնի հովանուն արժանացրել: Սրբազանը մկրտվել էր սեպտեմբերի 8-ին՝ Աստվածածնի ծննդյան տոնի օրը եւ արեղա էր ձեռնադրվել կրկին սեպտեմբերի 8-ին, կրկին Աստվածածնի ծննդյան օրը: Նախախնամությունը այս օրինաչափությամբ ամենքին ի տես է խոսում մեզ հետ, որովհետեւ, հայտնի է, որ սրբերից ում տոնի օրը մկրտվում ես կամ ձեռնադրվում, նա էլ, նախախնամությամբ, առանձնակի է դառնում քեզ հովանի:

- Աստված մեզ եւս հուշի առավել բարեպաշտ գտնվել բոլոր սրբերի եւ առավել եւս Աստվածածնի՝ Եկեղեցու Մոր տոներին աղոթքներով եւ պահքերով նախապատրաստվել, լինել ու դառնալ սուրբ եւ ազնվական՝ արժանանալով մեր Փրկչի այն խոսքին, որ Աստվածամոր վերաբերյալ ասաց Հովհաննես աշակերտին եւ նաեւ այսօր՝ կենդանի գործերի միջոցով մեր Արցախի առաջնորդ Պարգե սրբազանին՝ Ահա քո Մայրը:

ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ ՏԵՍԻԼՔՈՎ ՀԱՅՏՆՈՒՄ Է ԱՐՅԱՆ ԱՆԻԱՐՀԻ ԱԶԱՏԳՐՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԵՒ ԳՈՒՐԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳԻՒ ԱՐՅԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԶԵՌՆԱԳԻՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 985 թվականին, հուլիս ամսին, երկու հավատացյալ եղբայրներ Երեւանից մեկնեցին Արցախ. նրանք ծագումով արցախցի էին, բայց ծնվել էին Երեւանում: Եվ յոթ օր ծոմ պահելուց հետո Գանձասարի վանքում աղոթք արեցին եւ խնդրեցին Աստծուն, թե՛ Տեր, հայտնի մեզ՝ ինչ է սպասվում ապագայում մեր հայրենիքին, մանավանդ՝ Արցախ աշխարհին: Եկեղեցիները փակված են, հավատացյալների բանակը՝ սակավացած: Եվ այս աղոթքին ի պատասխան՝ Աստված տեսիլք տվեց նրանց: Եղբայրները նախ տեսան ողջ Արցախը մոայլ գույների մեջ: Ժողովուրդը մուգ զգեստներով էր ու տխուր: Եվ հանկարծ, շողողացող լույսերի մեջ երկնքից իջավ Աստվածածինը եւ Աջ ձեռքի ցուցամատով հերթով ցույց էր տալիս զանազան բնակավայրեր: Եվ ուր մատով ցույց էր տալիս, այնտեղ փոքր ի փոքրն արյուն էր թափվում: Եվ հետո տեսիլքի մեջ երեւաց Գանձասարը, որ պայծառանում էր եւ այնքան պայծառացավ, որ արեւի պես սկսեց լուսավորել ամբողջ Արցախ աշխարհը: Եվ ամեն մի բլուրի վրա մի ոսկե խաչ կար, որն իր հերթին լուսավորում էր իր մոտակա տարածքը: Իսկ տեսիլքի վերջում երեւաց, որ ամբողջ Արցախի ժողովուրդը զգեստափոխված է, ամենքն էլ սպիտակ զգեստներով էին եւ փառաբանում էին Աստծուն: Եվ շատ լուսավոր մի տեսարան էր իջել ամբողջ Արցախի տարածքի վրա, եւ ողջ Արցախի տարածքով երկնքում գրվեց ՀԱՅԱՍՏԱՆ-ՀԱՎԱՏԲ:

Եվ երբ եղբայրները վերադարձան Երեւան ու տեսիլքը պատմեցին Գուրգեն սարկավագին, որ այդ ժամանակ ծառայում էր Սբ. Էջմիածնում, նա մեծ ուրախությամբ ու ոգեւորությամբ մեկնեց, թե՛ նախ որոշ չափով արյուն պիտի թափվի Արցախում, որից հետո Գանձասարը պիտի բացվի, եւ պիտի Գանձասարից օրհնությունը տարածվի ամբողջ Արցախով մեկ: Հավատքը վերելք պիտի ապրի, եւ Արցախը պիտի միանա Հայաստանին կամ պիտի դառնա Հայաստանի մի մասը: Եվ տեսիլքը ուրախությամբ մեկնելուց հետո Գուրգեն սարկավագը



Եվ հանկարծ, շողշողացող լույսերի մեջ երկևրից իջավ Աստվածածինը եւ աջ չեռքի ցուցամատով հերթով ցույց էր տալիս զանազան բնակավայրեր:

իր կարծիքն հայտնեց, թե զուցե տասնյակ տարիներ հետո միայն այս ամենն իրականանա: Քանի որ այդ օրերին ո՛վ կմտածեր, թե՛ երեք տարի անց շարժումը պիտի սկսվեր: Գուրգեն սարկավագի մեկնությունը լսելով, եղբայրներից փոքրը, որպես տեսիլքին շարունակություն, ժպտալով ասաց նրան՝ զու էլ Արցախի առաջնորդը պիտի լինես:

- Երբ քսան- երեսուն տարի հետո եպիսկոպոս դառնամ, միզուցե եւ Արցախի առաջնորդը լինեմ:- Պատասխանեց սարկավագը: Սակայն Աստված նախօրոք է տնօրինում ամենայն բարին, եւ ահա տեսիլքից ընդամենը երեք ամիս անց՝ սարկավագին արեղա ձեռնադրեցին: Իսկ երեք տարի անց էլ, երբ եպիսկոպոս ձեռնադրեցին՝ արդեն շարժումը սկսվել էր: Այդժամ Գուրգենը, որ վերանվանվել էր Պարզեւ եւ արդեն եպիսկոպոս էր, հասկացավ, որ տեսիլքում զգուշացվածը շատ արագ էլ պիտի կատարվի եւ ոչ թե տասնյակ տարիներ հետո: Եվ արյուն պիտի թափվի, եւ պատերազմ պիտի լինի, եւ պիտի պատերազմում Արցախը հաղթի եւ միանա Հայաստանին: Եվ իսկապես էլ, ամեն բան ըստ Աստվածածնի տեսիլքի, արագ ընթացավ: Եվ Պարզեւ եպիսկոպոսը առաջնորդ կարգվեց համայն Արցախ աշխարհին:

-ԹՈՂ ՈՐ ՏԻՐԱՄԱՅԻՐԸ ԼԻՆԻ ՄԵՐ ԱՐՅԱՆ ԱԵՒԱՐՀԻ ՊԱԵՏՊԱՆԸ,- ԱՍԱՅ ՎԵՀԱՓԱՌԸ

1988 թվականին վեց հոգի Մայր տաճարում ձեռնադրվեցին եպիսկոպոս՝ երեքը Երուսաղեմի համար, մեկը՝ Ռուսաստանի առաջնորդ, մեկը՝ Սյունաց թեմի, իսկ Պարզեւ սրբազանը՝ Արցախի: Յույրարքանչյուր առաջնորդի Վազգեն Վեհափառը հանձնում էր առաջնորդական մեկ պանաքս /լանջին կախվող հիսուսի կամ Տիրամոր նկարը/: Եվ երբ հերթը Պարզեւ սրբազանին հասավ, պանաքսներից երկուսն էին մնացել: Վազգեն վեհափառը Պարզեւ սրբազանին առաջարկեց ընտրել երկուսից մեկը: Պանաքսներից մեկի վրա հիսուսն էր, մյուսին՝ Աստվածածինն էր՝ մանուկ հիսուսը գրկին: Եվ հավանաբար այն բանից, որ Արցախում Խորհրդային տարիներին ոչ մի եկեղեցի չէր գործել եւ հոգևոր Արցախի համար այժմ Երկնային Մայրական խնամքն էր անհրաժեշտ, սրբազանը մտքում ընտրեց երկրորդ պանաքսն, ուր Տիրամոր պատկերն էր: Տիրամայրը Արցա-



խի պաշտպանը կլինի,- մտքում ասաց նա: Սակայն իր ընտրութիւնը Աստծուն եւ Նրանով՝ Կաթողիկոսին թողնելով, պատասխանեց.

- Վեհափառ Տեր, Դու՛ք Ձեր ընտրութեամբ տվեք: Վեհափառ մի պահ կենտրոնացավ, գննեց պանաքները եւ Տիրամոր պատկերովը ընտրելով, հանձնեց Պարգե սրբազանին՝ բարձրաձայն մաղթելով.

- Թող Տիրամայրը լինի մեր Արցախ աշխարհի պաշտպանը: -Եվ սրբազանի ուրախ ժպիտը տեսնելով, հետաքրքրվեց, թե ինչու՞ է ժպտում:

- Վեհափառ Տեր,- խոստովանեց սրբազանը,- այդ Պանաքեն էի ուզում եւ այդ խոսքերն էլ սպասում Ձեզանից:

- Առավել լավ,- ժպտաց վեհափառը:

Եվ զարմանալին այն է, որ երբ մի քանի ամիս անց սրբազանը Արցախից եկավ Մայր Աթոռ եւ մտավ Մայր Տաճար, աջ կողմի «իր անկյունում», ուր սովորութիւն ուներ մոմ վառել ու աղոթել, հանկարծ աչքն ընկավ Տաճարի պատի Աստվածամոր պատկերին եւ զարմանքով տեսավ, թե Աստվածամոր այս պատկերի ու իր պանաքի պատկերները նույնն են: Ասես Տիրամայրն ասում էր. Պատահական բան մի կարծիր, որդյակ, Աստված քեզ նախորոք էր նախապատրաստում Արցախ աշխարհը հովվելու համար:

ՏԵՐ ԱՍՏՎԱԾ, ԻՆՉ ԿԼԻՆԻ՝ 25-30 ԲՈՊԵ ԺԱՄԱՆԱԿ ՏՈՒՐ

1 992 թվականի հունվարն էր: Շուշիից 179 ազերի զինվորներ իջան Քարին Տակ: Կամենում էին գյուղը գրավել: Հայերս փոքր ու հերոս այս գյուղում ունեինք ընդամենը 27 զինվոր: Եվ երբ հայ զինվորները տեսան զեպի գյուղ իջնող ազերիների՝ իրենցից մեծ թվաքանակը, ինչպես քարինտակցի մի զինվոր է վկայել, ասացին. Տեր Աստված, ի՞նչ կլինի, մեզ 25-30 բոպե ժամանակ տուր՝ գոնե կանանց, ծերերին եւ մանուկներին կարողանանք գյուղից դուրս հանել, որ հանգիստ խղճով կովենք ու թե նահատակվելու ենք՝ նահատակվենք:

Հայ զինվորների խնդրանքը ամիջապես էլ լսելի եղավ Աստծուն, որովհետեւ հանկարծակի կտոր, սպիտակ մի ամպ հայտնվեց եւ կանգնեց հայերի ու ազերիների մեջտեղում: 20-25 բոպեում, երբ վերջին մարդուն գյուղից հեռացրել էին, ամպը, ինչպես որ հանկարծակի եկել էր, այդպես էլ հանկարծակի անհետացավ: Եվ ահավոր մի ճակատամարտ

-Պատահական բան մի կարծիր, որդյակ, Աստված քեզ նախորոք էր նախապատրաստում Արցախ աշխարհը հովվելու համար:

սկսվեց: Աստված պատերազմեց մեր հերոսների կողմից, եւ մոտ 79 ազերիներ ընկան, իսկ 40-ը ծանր վիրավորեցին, մնացածները սարսափահար փախան: Մեր զինվորներից 7-ը նահատակվեցին: Հաղթանակը փաստավոր էր, ճշմարիտ որ՝ Աստվածային, որովհետեւ օրհնյալ ու օրհնյալ է Նրա սերը իր հետեւորդների նկատմամբ եւ նեղության ժամերին մենակ ու անօգնական երբեք չի թողնում նրանց:

ԽԱՉ ՊԱՏԵՐԱԶՄԻ

1 992 թվականի մայիսի 9-ին ազատագրվեց Շուշի քաղաքը: Եվ այս հաղթանակի մեջ Աստվածային մեկ կարեւոր գործոն փայլատակեց: Այդ Քրիստոսի հաղթանակի՝ Խաչի խորհուրդն է:

Շուշիի գրավումը վաղուց էր նախապատրաստված, սակայն չգիտես ինչու, ծրագիրը չհաջողվեց ո՛չ ապրիլ ամսին եւ ո՛չ էլ մայիսի առաջին օրերին: Եվ միայն հարձակման հաստատ որոշումն ընդունվեց, թե մայիսի 7-ին է կայանալու: Բացի այն բանից, որ 7-ը Աստծո խորհրդակիր թիվն է, հաջորդ Աստվածային խորհուրդը հայ զինվորները իրականացրին: Եվ ահա հարձակումից առաջ, բոլոր զինվորներն անխտիր՝ 2425 հոգի, մոտենում էին հոգեւորականներին եւ խաչ էին խնդրում, որ խաչ կրելով գնան ճակատ: Իհարկե, խաչը ամենքին չբավարարեց: Եվ ուրբեր չկարողացան խաչ ձեռք բերել՝ իրենք էին կարմիր կտորից կտրում, ամրացնում իրենց վրա: Եվ խաչի նշան դրեցին թե տանկերի, թե զրահամեքենաների եւ թե այլ զենքերի վրա էլ: Ինչպես Սասունցի Դավթի Խաչ Պատերազմին, հայ մարտիկները խաչ կրելով եւ իրենց զենքերի վրա խաչի նշան դնելով՝ այդպես գնացին ճակատ: Այս ամենքիս հայտնի իրողությունն է: Սակայն թե ինչպե՞ս եղավ, որ մեր զինվորները հանկարծ որոշեցին խաչի նշանով ելնել մարտի, այս հարցի պատասխանն ստացա գրուցելով քահանայի թո՞ս, գեներալ մայոր Արկադի Տեր Թադևոսյանի հետ:

- Խաչի նշանը աջ ձեռքի եւ մեջքի վրա կրելու հրամանը ես եմ տվել, - ասաց գեներալը: Եվ այդ՝ ո՛չ պատահականորեն: Արկադին ցույց տվեց հայերեն մի օրացույց՝ 1915 թվականի, վրան գրված էր սեղանի եւ գրպանի օրացույց: Քայքայված տեղերը խնամքով ստանձված էին: Իմ ներս մտնելու պահին էլ գեներալն այս թանկարժեք օրացույցի հերթական պոկված էջերն էր ստանձում:

- Այս օրացույցը միշտ էլ իմ սեղանին է, ես հիմնականում այս օրացույցով եմ առաջնորդվում, բնականաբար՝ Շուշիի ազատագրման օրերին էլ: - ասաց գեներալը:


Այս օրացույցում նշված էին մեր հոգեւոր բոլոր տոները: Բնականաբար նաեւ խաչի երեւման տոնը, որ ըստ օրացույցի, կարծեմ, մայիսի 5-ին էր:

- Նաեւ խաչի նշանը մեր զինվորներին կտարբերեր ազերի զինվորներից. չէ՞ որ թե մերոնք, թե նրանք խորհրդային բանակի նույն համագգեստներն էին հազել, - ավելացրեց գեներալը:

- Մայիսի 5-ին էլ որոշել էինք հարձակվել, սակայն ձյուն եկավ եւ հետաձգեցինք: Եվ հարձակվեցինք մայիսի 7-ին:

Եվ մայիսի 9-ին տոնվեց փաստավոր հաղթանակ, որ ամենքին է հայտնի:

Խաչի խորհրդով հաղթանակը անօրենների դեմ պատերազմներում պատմության մեջ հայտնի է մի շարք վկայություններով: Կոնստանդինոս արքան, երբ անօրեններից կրած մի շարք պարտություններից հետո աղոթեց Աստծուն, բացահայտ տեսիլք տեսավ. երկնքում երեւաց խաչի նշանը եւ մի գրություն, թե՛՝ Սրանով/Մաչով/ հաղթիր: Եվ իր դրոշակը Խաչը դարձրեց, իսկ բոլոր զինվորները իրենց վահանների վրա խաչը դրվագելով, փոքրաթիվ խմբով հարձակվեցին բարբարոսների մեծաթիվ բանակի վրա եւ հրաշալի հաղթանակ տարան: Ուրիշ մի ներդաշնակություն արդո՞ք չէր լրացնում այս ամենին՝ Շուշիի հաղթանակի պարագայում: Ինչու՞ օրինակ, միայն մայիսի 7-ին հաջողվեց հարձակվել: Այդ օրը Խաչի խորհրդի հետ ինչ որ կապ ունի: Այս մասին խորհում էր նաեւ Արցախի առաջնորդ Պարգեւ սրբազանը եւ մի քանի օր անդադար աղոթում էր: Եվ Սուրբ Հոգուց մղում ստանալով՝ մի օր աչքն ընկավ «Հայ եկեղեցու տոներ» գիրքը, բացեց մի պատահական էջ, եւ պարզվեց, որ բացել է այն էջը, որտեղ իր հարցի պատասխանն է: ԵՐԵՒՄԱՆ ԽԱՉԻ տոնի մասին էր այդ էջը: Պարզվում է, 357 թվականին, Կյուրեղ Երուսաղեմցու օրոք, Երուսաղեմ քաղաքում, մայիսի 7-ին երկնքում երեւացել է Խաչի նշանը: Եվ այդ օրը, նշանը տեսնելով, հազարավոր հրեաներ եւ հեթանոսներ եկել՝ մկրտվել են: Մեզ մոտ այս տոնը շարժական տոն է, սակայն բուն Խաչի Երեւումը մայիսի 7-ին է եղել: Այդժամ Առաջնորդը հասկացավ, որ Աստված հետաձգում էր հարձակումը, որ հարձակման օրը համընկնի Խաչի Երեւման տոնի



Հարչակումից առաջ բոլոր զինվորները գններալից հրաման ստացան թիկունքի եւ աջ չեռքի վրա՝ խաչ կրել...

հետ, տոն, որ Սուրբ Հոգու մղմամբ եւ հրամանով Արկաղի Տեր-Թաղե-
նոյանի՝ նշանավորեցին հայ զինվորները՝ ամենքն էլ խաչ կրելով եւ
Աստծո ամենահաղթ այս նշանի զորավոր զորութեամբ խիզախելով՝
բերեցին փառավոր հաղթանակի մեզ արդեն հայտնի պտուղը՝ Շուշիի
ազատագրումը: Շուշիի ազատագրումը ղեկավարում էր Աստվածա-
պաշտ գններալը, որ թո՞՞ էր քահանայի եւ այնքան սիրվեց մեր ժողո-
վուրդի կողմից, որ նրան Կոմանդոս /Ջորութեամբ հաղթող հրամանա-
տար/ անվանեցին: Օրհնյալ է Աստված:

ՔԱՀԱՆԱՅԻ ԶԱՐՄ ԳԵՆԵՐԱԼ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ- ԹԱԴԵՒՈՍՅԱՆԸ ԽԱՉԻ ՆՇԱՆՈՎ ՏԱՆՈՒՄ Է ՍՔԱՆՉԵԼԻ ՀԱՂԹԱՆԱԿ

Ամենեւին պատահական չէր, որ նազարեթ քահանան եկեղեցա-
պահ Անդրանիկին ու նրա ընկերներին Սուրբ Սարգիս զորավա-
րի ուխտատեղիում երբ աղբյուրի ջրով մկրտեց, մկրտեց նաեւ խաչով
ու Սրով: Որովհետեւ թե հին եւ թե նոր կտակարանները պատվիրան
պահողներին նաեւ սրով պահպանություն են վերապահում ազգի,
ազգային սրբությունների, ազգային արժեքների համար, որ Տիրոջով
եղան: «Իմ Ավետարանը ինձ է պահպանում, ես էլ իմ սրով պահա-
նում եմ իմ Ավետարանը»-ասել է Ջորավար Անդրանիկը:

Եվ ամենեւին պատահական չէր, որ քահանայի որդի եւ քահանայի
թո՞՞ նժդեհը եղավ «Վարդանանց նման մտածելու, պատերազմելու»
քարոզիչ, երբ Վարդանանք մեր ազգի մեջ սրբեր են եւ առավել Աստվա-
ծապաշտ ու եկեղեցապահ լինելու իրավական խորհրդանիշն ունեն:

ԱՍԵԼԻՔՍ ԱՅՆ Է, ՈՐ ԱՍՏԾՈ ԵԿԵՂԵՑԻՆ Է, ՈՐ ԱԶԳԱՅԻՆ ՀՏԵՐՈՍ-
ՆԵՐ ԵՒ ԸՆՏԻՐ ԶՈՐԱՎԱՐՆԵՐ Է ՄՆՈՒՄ: Քանի որ Աստված է կարող
սքանչելի հաղթության զորություն շնորհել իր ընտրյալ անոթներին:

Արարիչ Աստծո զորութեամբ լցված Սամփոսոնը մեն մենակ բանակ-
ներ էր կոտորում: Տասներկուամյա Դավիթը ոտաբոբիկ եւ մեն մի
պարսատիկով ելավ մինչ ատամները սպառազեն հսկա Գողիաթի դեմ,
սակայն բանն այն է, որ հավերժ Կենդանի Աստծով ելավ եւ Աստվա-
ծահայհոյ հսկային պատասխանեց. «Ես մենակ չեմ, այլ իմ Աստծո
զորութեամբ եմ զալիս քեզ վրա...ասաց եւ... պարսատիկից արձակած
քարը մեխեց հսկայի ճակատի ճիշտ մեջտեղում» եւ մանուկն Աստծով

սպանեց ահռելի հսկա գազանին: «Թեկուզ բանակներ էլ երևեն իմ դեմ, սիրտս չի վախենա, քանի որ ինձ հետ ես, Տեր»- հետագայում խոստովանեց Դավիթն իր սաղմոսարանում:

Եվ ամենեւին էլ պատահական չէր, որ Շուշվա Խաչ- Պատերազմին քահանայի զարմ էր ղեկավարում՝ գեներալ Արկադի Տեր Բաղետոսյանը, որ սակավ բանակով, բայց զորությամբ Աստծո սքանչելիորեն ազատագրեց մեր Շուշին:

- Շուշիի ազատագրումից առաջ Աստծո հետ կապված որևէ հայտնություն ունեցել եք,- հարցրեցի գեներալին:

- Ես քահանայի թոռ եմ, ինձ համար նվիրական են անգամ ավերակ եկեղեցիները: Եվ երազիս մեջ հաճախ եկեղեցիներ եմ տեսնում: Բացի այդ մի ալբոմ ունեմ, ուր եկեղեցիների նկարներ են: Հաճախ եմ թերթում: Մինչ ազատագրումը՝ Շուշիում չեմ եղել: Նկարով էի ճանաչում Կանաչ ժամն ու Ղազանչեցոց եկեղեցին: Չէի էլ պատկերացնում, որ Ղազանչեցոց եկեղեցին այդպիսի մեծ զորություն ունենար: Ազատագրումից առաջ երազիս մեջ այդ զորությամբ հայտնվեցի Ղազանչեցոց եկեղեցում: Երբ ազատագրեցինք, տեսա ու ճանաչեցի. ահա այստեղ էր, որ Աստված երազում ինձ բերեց,- պատասխանեց գեներալը:

Պատահական բան չէ: Որքան էլ աշխարհիկ քաղաքականությունները պնդեն, թե պատերազմը հավատի հետ կապ չունեն, բայց մենք մեր պատմությունից եւ Սուրբ Գրքից գիտենք, որ Աստծով են բոլոր հաղթանակները: Որ այս դեպքում եկեղեցիների եւ հատկապես Շուշիի եկեղեցու երեսումով է ի հայտ եղել՝ Աստծո սիրո եւ զորության ներկայությունն ու գոտեւորումը խորհրդանշելով:

Հարձակումից առաջ Արկադին փոքրաթիվ իր բանակը, ինչպես նախորդ գլխում տեսանք, զինեց նաեւ Խաչի նշանով, որ Աստծո՝ այս աշխարհի վրա հաղթության Խորհրդանշանն է: Եվ երկնքից տրված ավանդույթ Տիրոջից, որպեսզի քրիստոնյաներս պատերազմի երևանք մեր Տիրոջ նշանով: Ըստ քրիստոնեական այս արդար ավանդույթի՝ Արկադին իր փոքրաթիվ բանակը Խաչի նշանով զինելով հարձակվեց գերեզմարված Շուշի քաղաքի վրա եւ ազատագրեց անառիկ մեր Շուշին: «Շուշվա հաղթանակը հայ ազատագրական պայքարի ծաղիկն է», - հայտարարեց Սպարապետ Վազգեն Սարգսյանը: Եվ Շուշիի սքանչելի ազատագրման համար գեներալին իշխանությունը Ազգային հերոսի



Խաչի խորհրդանշանով տարած հաղթանակից հետո:

Գեներալ- մայոր Արկադի Տեր- Բաղետոսյանը:

կոչում շնորհեց, իսկ ժողովուրդն իր սիրելի հերոսին անվանեց «Կենդանի լեգենդ», «Կոմանդոս», - ասել ուզելով, որ քահանայի շատավիղջ

հրամանատար եղավ մարդկանց համար արտասովոր ու մշտահաղթ նախախնամությունը՝ Խաչով եւ Սրով սքանչելի հաղթանակի: Այսինքն, ժողովուրդն ասաց ճշմարտությունը, որ Արկաղի Տեր Թաղեուսյանը հաղթող հրամանատար եղավ ՉԵՌԱՄԲՆԱԽԱՆՆԱՄՈՒԹՅԱՆ, որ Օրհնյալ է հավիտյանս: Ամեն:

ՈՒՒՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՈՒՇԻ, ԸՍՏ ՖԻԴԱՅԻՆԵՐԻ

Աֆոյի երգն ավելի շատ հաղթական մարտ էր, քան երգ: Միայն արվեստով անկարելի էր լսողներին մեջ երգով նման ոգի կենդանագրել, որ Աստծո շնորհով եւ գորությունը կարողանում էր Աֆոն: Աֆոյի երգով ասես հանդիպում էիր ապուպապերիդ. կենդանանում էին Անդրանիկն ու Աղբյուր Սերոբբ, մեր մյուս ֆիդայիները, եւ ոգի դարձած, շրջում մեր մեջ, մեզ ոտքի հանում բանավոր պատերազմների:

Որովհետեւ մեր մեծերը միայն անցավոր մարմնով են մեռած, սակայն հոգով կենդանի են, եւ եթե հավատաս՝ ամիջապես քո կողքին կլինեն՝ Աստծո սերն ի հայտ անելով եւ հաստատելով մեկ ազգ ու մեկ ժողովուրդ լինելու արքայական նվիրականությունը: «Ուրիշներ չարչարվեցին, բայց դուք ճիտորեն նրանց վարձի մեջ մտաք»- սուրբ մեծերի մասին հայտնեց մեզ մեր Տեր Հիսուսը:

Աֆոյի երգ-արդար մարտը,



«Սասունցիներ» ջոկատի հրամանատար Ալֆրեդ Ներսիսյանը:
1989 թվական:

երգ-հաղթանակը կենդանի կյանք էր, կենդանի հավատ, արժվի իմացական թոխչք, մեզ ու մեր մեծերին իր երգով հանդիպեցնող, նրանց հետ հաշտեցնող, նրանց բանակից դարձնող երկնային նվիրակ: Եվ դա ամենեւին պատահական չէր, որովհետեւ այդ նույն՝ արդար երգի հաղթանակը տեսնում ենք նաեւ Աֆոյի ուխտագնացություն մեջ, որ եղավ դեպի գերավար Շուշիի Ղազանչեցոց եկեղեցի:

...Մի շաբաթ էր անցել, երբ Էլչիբեյը իր գործով մեր Շուշի քաղաք էր մտել, հայերին արտաքսել եւ քաղաքը բնակեցրել էր ազերիներով: Շուշիում այլեւ ոչ մի հայ չէր մնացել: Գուցե միայն գերիներ: Շուշեցի փախստականները տեղավորվել էին Ստեփանակերտի հյուրանոցում: Այս ամենին արդեն տեղյակ էր Կենսաբանական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Ներսիսյանը՝ Աֆոն, որ Բնապահպանության նախարարության փոխնախարարն էր: Աֆոն Երեւանից Ստեփանակերտ մեկնեց փախստական շուշեցիներին օգնելու ու նրանց օրվա կարիքները հոգալու համար տարած դրամը բաժանեց: Երեւանից Ստեփանակերտ էին եկել նաեւ արձակագիր Վրեժ Իսրայելյանը եւ լրագրող, բանաստեղծ, արվեստաբան Սպարտակ Ղարաբաղցյանը: Երեքով տաքսի վարձեցին ու գնացին Բերդաձոր՝ ընկերներից մեկին՝ Թաթուլին տեսության: Թաթուլը օգաչու հյուր ուներ, որ ետդարձին միացավ մեր տղերքին՝ Ստեփանակերտ հասնելու եւ այնտեղից էլ՝ իր ծառայության վայրը մեկնելու համար: Ետդարձին Աֆոն առաջարկեց ուխտի գնալ Շուշիի Ղազանչեցոց սքանչելի եկեղեցին: Մեր սրբատեղին գրավել են, սակայն ո՞վ կարող է մեզ խանգարել, որ ուխտի գնանք: Տղերքն ընդդիմացան թե՛ երբ քաղաքն ազատագրենք, այն ժամանակ էլ՝ ուխտի կգնանք: Այժմ վտանգավոր է, ավելի ճիշտ ստույգ գերվել կամ մահ է նշանակում: Սակայն Աֆոյի այն խոսքին թե՛ կարո՞ղ է վախենում եք, տղերք, չէ՞ որ ուխտի ենք գնում, Աստված մե՞ծ է: Այդժամ Վրեժն ու Սպարտակը, օգաչուն ու վարորդը, որ գուցե փոքր ինչ վախենում էին, որովհետեւ մարդկայնորեն, գրեթե նույնն էր թե՛ գնում են մորթվելու, վիրավորված համաձայնվեցին: Տները մեզ հետ: Գնացինք: Մարդ էլ գերեզմանաված Աստծո տուն հավատով ու սիրով ուխտի գնա ու վախենա: Եկեղեցին իր սուրբ գորությունը կպահի իրենց՝ եթե չերկմտեն, այլ միայն հավատան: Ունեցած մեն մի հատիկ գնեքն էլ՝ Աֆոյի կարճ սուրն էր, որ Էլչիբեյի բանակի, ավտոմատների ու զրահամեքենաների դեմ քիչ հավանական էր, որ պետք գար: Աստված պահա-

պան ու առաջնորդ:

- Շուշին շուն թուրքի ձեռքին է, բայց Աստված մեզ հետ է, որովհետեւ մեր ուխտը սուրբ է ու արդար,- ասացին եւ տաքսին սլացավ դեպի գերեվարված Շուշի:

Քաղաքն արդեն մոտ էր, սակայն ահա՝ երկու զրահամեքենա փակել էին ճանապարհը: Ջրահամեքենաների մոտ ռուս եւ ազերի զինվորներ էին խռնվել: Նայելով, որ մոտեցող տաքսու համարանիշն ազրբեջանական է, զրահամեքենաները մի փոքր ետ քաշվելով՝ ճանապարհը բացեցին: Փառք Աստծո, ո՛չ կանգնեցրին տաքսին եւ ո՛չ էլ անցաթուղթ պահանջեցին: Ջրահամեքենաներից բացի, քիչ հեռու՝ թուրքերը հավելյալ ուղեփակոց էին դրել եւ ուղեփակոցի մոտ զինված ազերիներ կային: Տեսնելով, որ զրահամեքենաները տաքսու առջեւ ճանապարհը բացեցին, ուղեփակոցի զինված մարդիկ գուցե մտածեցին թե՛ տաքսին ազերի նոր բնակիչներ է բերում՝ իրենք եւս ուղեփակոցը բացեցին ,ու... ճանապարհն ազատվեց: Խոստովանենք, որ նման բաներ նախախնամություն մատով են լինում եւ ո՛չ թե պատահականորեն, եւ ո՛չ թե մարդկայնորեն:

Քիչ անց մտան Շուշի, ուր արդեն հայեր չկային: Հայերի տներում արդեն թուրքեր էին բնակվում, փողոցներում միայն թուրք զինվորներ ու թուրք վերաբնակիչներ էին: Աֆոն մինչեւ գոտկատեղը մեքենայի պատուհանից դուրս ելավ եւ կարճ սուրբ թափահարելով Անդրանիկ գորավարի մասին երգեր էր երգում:

-Անդրանիկը քաջ

իր զինվորներով...

Թուրքերը շփոթի մեջ ընկած լսում ու նայում էին: Շուշիի փողոցներում պանում էր հայ մտավորական մեր ուխտագնացների տաքսին եւ լսվում էր Աֆոյի հայրենասիրական, հաղթ երգերը: Բայց Աստված կապել էր թուրքերի մտքերը: Ու՛մ մտքով կանցներ, որ հայերի այս փոքր խումբը պատերազմական բոլոր կանոններն արհամարհելով, միայն իրենց Քրիստոս Տիրոջ հավատով, եւ այն էլ օրը ցերեկով համարձակվեին Շուշի մտնել, որպեսզի իրենց գերավար Եկեղեցին այցելեն: Հայի Աստվածն ուրիշ է: Հայը կարող է, որովհետեւ գարմ է Սասնա Դավթի եւ Անդրանիկի, ընտիր անունների՝ Արաբոյի, Գեորգ Զավուշի, Մախրուտոյի՝ զենքով եւ երգով պատարագվելու միշտ պատրաստ մեր քրիստոնյա ընտրյալ Ֆիդայիների:

Թուրքերը լսում էին հայոց լեզվով մարտական երգերը, որ ուղեկցվում էր կարճ սրի ռիթմիկ թափահարումով, լսում, ապշած նայում էին, բայց Տիրոջ կամքով ոչինչ չէին նախաձեռնում: Կամ գուցե մտածում էին թե հայոց գործն արդեն Շուշի է մտել: Հասան եկեղեցի:

- Հարկ է, որ եկեղեցու շուրջ երեք անգամ պտտվենք, որպեսզի մեր ուխտն ընդունելի լինի,- առաջարկեց Աֆոն:

- Թուրքերը հիմի գլխի ընկած կլինեն,- զգուշացան տղերքը,- երբ Շուշին ազատագրենք, այն ժամանակ կգանք, մեր կիսատ ուխտը կլրացնենք: Այսօր այսքանն էլ բավական է: Եկանք, հասանք ուխտավայր: Ետ դառնանք:

Համբուրեցին եկեղեցու պատը, խաչակնքեցին, եւ տաքսին ետ սլացավ, սակայն այժմ երկրորդ՝ ամենակարճ ճանապարհով, որ դարավանդով կտրուկ իջնում էր վար՝ դեպի Ստեփանակերտ: Դարավանդի վրա, ձյմարիտ որ, ճանապարհը երկու զրահամեքենաներով արդեն փակված էր: Կար նաեւ Շուշիից ռացիայով պահախմբերին արդեն զգուշացված լինելու տարբերակը: Եվ վերջապես՝ անկարելի էր, որ դեպի Ստեփանակերտ իջնող որեւէ մեքենա առանց ստուգելու բաց թողնեին: Իսկ տղերքի ունեցած միակ զենքն, ինչպես ասացինք, Աֆոյի կարճ սուրն էր:

- Յմ, Մարութա բարձրիկ Աստվածածին: Հացն ու գինին- Տեր Կենդանին: Խաչ պատերազմին: Քաջություն հետ իմաստություն վարվել էր պետք: Արծիվն արծիվ է՝ թե՛ իմաստուն մտքով եւ թե՛ զենքով:

Աֆոն վարորդին պատվիրեց դանդաղ մոտենալ, որ պահակախումբը ժամանակից շուտ զենքի չդիմեր, ապա վարորդին հրահանգեց հանկարծակի արագություն հավաքելով՝ թեքվել արտերի մեջ ու շրջանցել զրահամեքենաներն ու պահակախմբին: Տաքսին այդպես հանկարծակի թեքվեց կողքի արտերն ու շրջան կազմելով դուրս եկավ զրահամեքենաներից այն կողմ, հարթ ճանապարհ: Թուրքերն սկսեցին կրակել, սակայն այդ պահին, Աստծուց էր, տաքսին հայտնվեց ճանապարհի այն մասում, ուր դարավանդը կտրուկ թեքվում էր վար: Այդպես՝ տաքսին հանկարծակի անհետացավ դարավանդից ներքեւ եւ կորավ թուրքերի տեսողաշտից: Մերոնց տաքսին արդեն գտնվում էր անվտանգ հեռավորության վրա: Ուխտագնացությունն իրականացված էր: Մեր երանելի եղբայրներն իրենց քաջասրտությամբ եւ անպայմանորեն մեր Տեր Աստծո պահպանությամբ հոգեւոր հաղթանակ տարան՝

ոչ թե առօրեական ուխտի, այլ ըստ ֆիդայիների ուխտի գնալով մեր փառահեղ եկեղեցին: Տեր մեր Հիսուս Քրիստոս, հավիտյան օրհնյալ ես: Քրիստոնյա ֆիդային միայնակ էլ մի բանակ է եւ՝ զորավոր: Իսկ Տերն այս ուխտագնացությանը մեր եղբայրներին առաջնորդեց, որ պատմվի, գրի առնվի, որ մենք եւս քաջ լինենք վստահել Աստծուն, աներկմիտ հավատով վստահենք, որովհետեւ, ամեն դեպքում, միայն Աստված է, որ մղում է մեզ սքանչելի հաղթանակների:

Հետագայում նման հոգեւոր հաղթանակ Ա.Ֆոն տարավ նաեւ արցախյան ազատամարտի ժամանակ, երբ «Սասունցիներ» ջոկատի հրամանատարն էր: Ա.Ֆոնի Ջոկատում բոլորն էին ընտիր երգում, ինչպես սասունցիներն են երգում, զորընդեղ: Լենդրուշը, Տիգրանը, Վահրամը, Թաթուլը, Միսակը, հարութը, Գեւորգը, հունանը... ամենքն էլ: Երգում եւ պարում էին մարտական պարեր: Այս երգ ու պարերը աշխարհայինից տարբեր էին եւ փառաբանություններ էին մեր Տեր Աստծուն՝ Քրիստոսին եւ խորապես անդրաշխարհիկ էին, ոգեկոչ, որ մեր նահատակ մեծերը, մեր ազգի սրբերը եւս իրենց զորությամբ մասնակից դառնան արդար մարտին: Եվ դառնում էին: Այդժամ 30 հոգիանոց ջոկատն իր զորությամբ հարյուրապատկվում էր, դառնում անպարտելի բանակ:

1992 թվականն էր, ձմեռ: Ստեփանակերտը ոմբակոծվում էր բոլոր կողմերից: Թուրքերը քաղաքի շրջակա բարձունքներում խիստ հարմար դիրքեր էին գրավել: Մեր քիչ թվով մարտիկները հրաման ունեին վերացնել հակառակորդի ոմբակոծող այդ հենակետերը: Ա.Ֆոնի ջոկատը, որ Քարազխում էր պատերազմում, շտապ ետ կանչվեց: Բանն այն էր, որ Ստեփանակերտ քաղաքից մեկ կիլոմետրի վրա գտնվող ազերիների Մալիբեյլու գյուղն ամենավտանգավոր ոմբակոծողն էր: Եվ Ստեփանակերտից ավելի բարձր դիրքի վրա գտնվելով՝ քաղաքն առել էր կրակի հեղեղի տակ: Մերոնք մի քանի անգամ փորձեցին գյուղը գրավել, բայց անհաջողության մատնվեցին ու նահանջեցին: Այս գործում նախախնամության մատով, ոգով առաջնորդվող նվիրյալներ են պետք. մտածեց լեզենդար Կոմանդոսն ու Ա.Ֆոնի ջոկատն ընտրեց Մալիբեյլուն գրավելու: «Սասունցիների» հավատն աներկրա է, ջոկատի գեներն էլ ընտիր են: Նրանք կարող են: Ջոկատում հոգեւորական էլ կար՝ Օնիկը, որ իր կրոնական հանդերձի վրա էր գենքը կրում: Ջոկատն իր բժիշկներն էլ ուներ՝ Սասունն ու Տարոնը: Մահու կռիվ էր լինելու: Այնուամենայնիվ ջոկատի տղերքից մեկը թղթի

վրա ծնողներին ուղղված հրաժեշտի խոսքեր գրեց եւ դրեց գրպանը: Լեզենդար Կոմանդոսին թվաց, թե տղերքին վերջին անգամ է տեսնում ու տխրեց: Թող մեր Տեր Աստված ձեզ հաղթանակի տանի ու պահապան լինի,- աղոթեց գեներալը: Եվ Ա.Ֆոնի ջոկատը երգով, որ Ասվածային զորություններ էր շարժում եւ քահանայի թոռ՝ լեզենդար գեներալի պահպանիչ աղոթքով եւ մեր մահացած մեծերի ու սրբերի կենդանի հոգիների միաբանությամբ գնաց Մալիբեյլուի վրա: Եվ ջոկատի այս զորընդեղ հարվածից անառիկ գյուղը երեքաց, սասանվեց ու ընկավ կրակների մեջ: Եվ ժամեր անց, գյուղն ասես չէր էլ եղել: Գյուղի մյուս կողմից էլ Վալերիկի տղերքը ներխուժեցին, Փառք Աստծո, մարտի առաջին, «վայրենի» փուլում ռուսական ականանետն էլ եկավ, գնդակոծեց ազերիների հենակետերն ու հեռացավ: Ստեփանակերտ քաղաքն այսպես ազատվեց ամենավտանգավոր այս չար խոցից, ոմբակոծող վիշապից: Ջոկատը ետ դարձավ մեղրի շրջանակներ եւ մի քանի գերիներ ավար առած: Աստծո եւ սրբերի պահպանությունն ունեին, ուստիեւ Ա.Ֆոնի ջոկատից ոչ մեկը չընկավ, միայն Ջորոն վիրավորվեց: Վերին շուրթից թեթեւակի վիրավորվեց Տիգրանն այն պահին, երբ մեր սրբերին ու ղեկավարներին հայհոյող թուրքին կամեցավ հայհոյանքով պատասխանել: Նույն պահին գնդակը կպավ պատին եւ ետ ցատկելով՝ խանձեց Տիգրանի բեղերը: Այս հիշեցնում է Աստվածային Ջորավար Անդրանիկի խոսքն այն մասին, թե հարկ է, որ մեր գինվորները չհայհոյեն, այլ պատշաճ է ու զորավոր է, որ մերոնք՝ երգեն ու կովեն, երգելով պատերազմեն: Պատճառը պարզ է, մեզ զորակցում են սրբերը, որ հայհոյանք չեն ընդունում:

Երբ դարձան Ստեփանակերտ, լեզենդար Կոմանդոսը փառք տվեց Աստծուն եւ ասաց. -Ես հույս չունեի թե մեկնումեկիդ կարող եմ կրկին տեսնել, սա Աստծո պարգեւն էր, որ եւ գյուղը գրավեցիք եւ հրակնատները լռեցին եւ ամենքդ էլ կենդանի ետ դարձաք: Հուզված էր լեզենդար գեներալը, եւ աչքերում արցունքներ հայտնվեցին: Նկատվում էր, որ շատ էր մտատանջվել Ա.Ֆոնի ջոկատի ճակատագրի համար: Եվ ահա Աստված ամենքին էլ կենդանի ետ վերադարձրեց, ինչպես իր որդիներին:

ԼԵԳԵՆԴԱՐ ԿՈՄԱՆԴՈՍԻ ԵՒ ՆՈՒՆԻ ԼԵԳԵՆԴԱՐ ՈՒՒՏԱԳՆԱՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ինձ բախտ վիճակվեց ներկա լինել այս՝ ինձ համար արտասովոր հանդիպմանը, որովհետեւ այս մեծերի մեջ կենդանի Աստծո օժուժում եւ շունչ տեսնելով՝ ակնածանք ունեմ նրանց հանդեպ: Ակնածանք, որ ունեմ Աստծո ֆիդայիների ամեն գործ ու բանի նկատմամբ: Հանդիպումը ԴՕՍԱՏԻ գարածում էր, ուր լեզենդար Կոմանդոսը ինձ ու իմ հոգեւոր խաչքառեր թերթին վագոն-տնակ էր հատկացրել՝ շատ անգամներ ուրախանալով, թե «Մեն մենակ թերթ է տպագրում, միայն հայր կարող է նման բան անել»: Թերթից բացի տպագրում էի նաեւ հոգեւոր բուկլետներ, հոգեւոր օրացույցներ եւ ուղարկում բանակ, մեր որդիներին: Տնանկիս համար այդ վագոն-տնակը փրկություն էր, աշխարհի կենտրոնը, բոլոր տեսակի պալատներից թանկ, ուր ես նստում էի աթոռին, ինչպես ձիու թամբին /աթոռի թիկունքի կողմն իմ առջևում/ եւ ժամերով մեկնում... բանավոր պատերազմների: Նախքան այս տնակը մի խոնավ խցիկում էի ապրում, որ գեներալը տեսնելով իրավամբ անվանեց «Իրոգենեսի տակառ»: Այս «Տակառում» խոնավությունից հիվանդացել էի, վրաս վերքեր էին բացվել եւ բազմաթիվ իմ աղոթքներին «Արեւոտ տեղ» ապրելու, պատասխան էի ստանում՝ եւ տեսիլքով, եւ հայտնություն, թե՛ «Արկաղիի ձեռքով պիտի քեզ այդ խցիկից հանեմ»: Հոգեւորը, ինչպես գիտենք, երբ ջանում է ուղիղ ընթանալ, հալածանքի է ենթարկվում, խրվում անտանելի դժվարությունների մեջ: Ինչպես Շուշին թուրքերից, ես էլ ասես հոգեւոր ծանր նեղություններից ազատագրված մի փոքր քաղաք, որին գեներալն Աստծով՝ այս կյանքում ազատեց: Գեներալն ազատեց ինձ նաեւ էլեկտրաէներգիայի վարձ վճարելուց եւ արեւի արժանացնելով՝ առողջացա խոնավությունից առաջացած հիվանդությունից, լքված լինելու անհանգստությունից եւ նման այլ չարիքներից: Շնորհակալ եմ:

Աֆոն՝ Շուշիի ուխտագնացը, որին մեկ տասնամյակից ավելի չէի տեսել եւ արդեն մի ճերմակած ու պատվական այր էր, ինչպես հիշատակեցի՝ փոխնախարար, մի օր հայտնվեց գարածում: Նա առաջին հերթին հենց վագոն-տնակով իմ ազատագրումը նկատեց ու զնահատեց: Ինձ համար նրա գնահատանքը թանկ էր: Այդ պահին Աստծո կամոք եկավ եւ Արկաղի Տեր-Թադեոսյանը՝ Կոմանդոսը: Քահանայի պատիվ տալով գեներալին, ում ձեռքի տակ Արցախյան հերոսամար-

տում ծառայել էր, Աֆոն համբուրելով գեներալի աջը եւ ինձ ցույց տալով, որ բավականին ու նկատելիորեն չարչարված էի, ասաց. «Այս մարդուն օգնելով դու հաստատեցիր, որ հաղթական Կոմանդոս ես ոչ միայն պատերազմում, այլ նաեւ այս դառն աշխարհի մարտերում էլ»: Ես, խոնավ, հիվանդարար խցիկից հայտնվելով հինգ պատուհանով արեւոտ վագոն-տնակում, երբ բավարար չափով առողջացա, մտածում էի թե՛ իմ հայրերը ինչպիսի խոնարհ սիրով եւ պատիվ տալով շնորհակալություն պիտի հայտնեին Կոմանդոսին, եթե, մի հրաշքով՝ կենդանի մարմնանալով հայտնվեին: Աֆոն երբ Կոմանդոսին քահանայի պատիվ տվեց եւ համբուրեց գեներալի աջը՝ որպես քահանայի, եւ շնորհակալություն էր հայտնում, այդ պահին արդեն ճերմակած մագերով Աֆոյի մեջ իրենց շնորհակալությունը գեներալին հայտնող իմ հայրերին տեսա այնպես կենդանի, այնպես իրական, վեր մարդկային բանականությունից եւ աշխարհի չափորոշումներից, որ կոկորդս սեղմվեց, դիմադրում էի, որպեսզի աչքերս չթրջվեն. երեխա՛ ես, ասում էի ինքս ինձ, բայց երեւի 54 ամյա երեխա էի դեռ եւ... մի կողմ քաշվեցի: Տեսածս կենդանի հրաշք էր: Աֆոյի մեջ ճանաչեցի իմ ապուպերին: Եվ հասկացա, որ մենք՝ նախեւառաջ հոգու ժողովուրդ ենք:

Օրհնյալ է Աստված: Ամեն:

ԵՒ ԱՄԱՐԱՍԻ ԱՐԹՈՒՐԻ ԳԼԽԻՆ ԱՆԿԵՋ ՄՈՐԵՆՈՒ ԿՐԱԿՆ ԷՐ ԲՈՒՆԿԿԵԼ



1993 թվականն էր: Արցախում ծանր մարտեր էին: Բանակի բուժքույրերից մեկը, անունը՝ Աիդա, որ հայաստանից էր եկել, մկրտվելու էր Գանձասարում: Մկրտողը Տեր Հովհաննեսն էր, կնքահայրը՝ Արթուր Ալեքսանյանը, որ այժմ գնդապետ է, մարտական առաջին կարգի շքանշանակիր եւ ճանաչված է Ամարասի Արթուր անունով: Եվ երբ մկրտության արարողակարգն սկսվեց, կնքահոր մագերն սկսեցին այրվել՝ զարմացնելով եւ վախեցնելով ներկաներին: Փորձեցին հանգցնել՝ չկարողացան: Աստծո ներկայության նշանն էր՝ Աստվածաշնչյան

անկեղ մորենու կրակն էր Ամարասի Արթուրի գլխին, կրակ, որ վառվում, սակայն մորենուն չէր վնասում եւ այժմ էլ չէր վնասում Արթուրին: Եվ Նրա գլխի մազերից մեկն անգամ չվնասվեց:

ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ՕՐՎԱ ՀՐԱԵՔԸ

1 993 թվականն էր, Սուրբ Զատիկի օրը: Երեկոյան ժամը 6-ի կողմերն էր. մեր հոգեւորականները՝ Պարգեւ Սրբազանը, Հարություն քահանան, Հովհաննես քահանան, Հայր Վրթանեսը, Դավիթ դպրապետը, մոմավաճառն ու պահակը... թվով՝ 10-15 հոգի ականատես եղան Արցախյան երկնային այս նշան-հրաշքին: Պատարագը նոր էին ավարտել, երբ ահա երկնքի արեւմտյան կողմում դեպի վեր բարձրացող մի ճառագայթ նկատեցին, որ վեր ելնելով՝ թեքվում էր աջ ու ձախ կողմերի վրա, այդպես՝ երկու առանձին, հավասար խորաններ կազմելով: Խորաններից մեկում արեւն էր, մյուս կողմում՝ լուսինը: Արեւն ու լուսինը հայտնվելով կողք կողքի՝ առանձին լուսավոր խորանների մեջ, մնացին այդպես՝ մոտ 20-25 րոպե՝ զարմացնելով եւ սքանչացնելով եւ գոտեւորելով մեր հոգեւորականներին, թե՛ քաջ ու աներեր մնացեր Ձեր հավատարմած Վարդապետութեամբ, որովհետեւ Տերը ձեզ հետ է: Անշուշտ այս հրաշքը մեզ հիշեցնում է պատերազմող հրեաներին, երբ Տիրոջ կամքով ձեռքերը վեր բարձրացրած աղոթող Մովսեսի ձեռքերի ուղղությամբ երկնքում անշարժ մնացին արեւն ու լուսինը: Եվ Տիրոջ խոսքի համաձայն հրեաներն այդ մարտում այնքան ժամանակ պիտի կռուորեն հակառակորդին, քանի դեռ արեւն ու լուսինը քովընդքովի լինեին ըստ Մովսեսի ձեռքերի հրամանի: Նոր եւ առավել օրհնյալ ուխտով Մովսեսի ձեռքերի հրամանին փոխարինում էին Արցախի մեր հոգեւորականների հաստատուն հավատով նվիրաբերված աղոթքները՝ առաջնորդությամբ արքեպիսկոպոս Պարգեւ Մարտիրոսյանի: Օրհնյալ է Աստված:

ՃԵՄԱՐԻՏ ՈՐ ԱՐՅԱՆԻ ՊԱԵՏՊԱՆԸ ԱՍՏՎԱԾԱԾԻՆՆ Է

1 930 թվականից Արցախում ոչ մի եկեղեցի չէր գործել: Եվ ահա, 1989 թվականի հոկտեմբերի 1-ին՝ Վարազա Խաչի տոնի օրը Արցա-

խում առաջինը բացվեց եւ վերածովեց Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտչի եկեղեցին: Իսկ ինչու՞ հատկապես հոկտեմբերի 1-ին: Պարգեւ սրբազանը գիտեր, որ նման պարագայում նախախնամություն ձեռքն է գործում, եւ պատահականությունները բացառվում են: Եվ ահա այս մեծ արարողությունից հետո մի քանի օր անդադար աղոթում էր իր հարցի պատասխանը ստանալու համար: Եվ Սուրբ Հոգու ազդումով՝ գրադարանից ահա վերցնում է ուղղափառ եկեղեցու տոների մասին գիրքը, եւ պարզվում է, որ 10-րդ դարում, երբ որ թուրքերը ասպատակում էին Բյուզանդիան, եւ մեծ վտանգ կար, որ ողջ այդ երկիրը կգրավեն, Պոլսում այդժամ Աստվածամոր տաճարում, պատարագ էր մատուցվում, որին մասնակցում էր ժամանակի մեծ սրբերից Անդրեասը՝ Մուրացկանը Վասն Հիսուսի: Նա խնդրում էր Աստվածածնին, որ պաշտպան կանգնի Բյուզանդիային: Այդժամ, ամենքին ի տես, եկեղեցու առաստաղը բացվեց, երեսաց Աստվածածինը եւ իր շուրջառը նետեց Բյուզանդիայի վրա: Եվ պատարագի մասնակիցները բոլորն իրար նայելով՝ ասում էին, թե Աստվածածինը մեր դատապաշտպանը եղավ, ուստի անհնար է, որ չհաղթենք: Եվ ճշմարիտ, այդպես էլ եղավ: Թուրքերն այդ մարտերի ժամանակ պարտվեցին: Եվ երբ 600 տարի անց, 15-րդ դարում թուրքերը նվաճեցին Բյուզանդիան, / պատճառը՝ բարեպաշտությունը պակասել էր Աստծու եւ Աստվածածնի նկատմամբ/, այդժամ բյուզանդական եկեղեցին Աստվածածնի երեւման օրը՝ հոկտեմբերի 1-ը հռչակեց որպես Աստվածածնի հովանու տոն: Եվ այս տոնի առիթով տարբեր ազգեր կառուցեցին բազմաթիվ տաճարներ, որ անվանվեցին Աստվածածնի հովանու տաճարներ:

Նման դեպք եղավ նաեւ Ռուսաստանում. երբ ռուսները պատերազմում էին թաթար մոնղոլների դեմ, Աստվածածնի հովանու տոնի ժամանակ հաղթեցին: Այդժամ մի նոր տաճար եւս կառուցեցին Աստվածածնի հովանու անվամբ, որը գտնվում է Կրեմլում: Եվ այս տաճարը սուրբ երանելի Վասիլիսի ամենասիրած վայրն էր եւ այդտեղ էլ ամփոփվել են սրբի մասունքները: Այստեղ կա նաեւ մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի խորանը:

...Եվ այս վկայությունները ընթերցելով, Արցախի Առաջնորդ Պարգեւ Արքեպիսկոպոսը տեղեկացավ, որ իրենք Պատերազմող Արցախի առաջին եկեղեցու բացումը կատարել են Աստվածամոր հովանու տոնի բուն օրը, որ համընկել է Սուրբ Վարազա Խաչի տոնի հետ:



Նախախնամութեան ձեռքով Աստվածածնի հովանու տոնի օրը Արցախում առաջին եկեղեցու վերածովելը վստահեցրեց, որ Արցախ աշխարհի դատապաշտպանը Աստվածածինն է եւ կրկին՝ ընդդեմ տաճիկների /թուրքերի/:

- Հաղթանակի համար կարեւորը,- այդ օրերին ասել է Պարզե սրբազանը,- նախ, թեկուզ եւ մեկ եկեղեցի բացելով, հոգեւոր շրջափակումը վերացնելն է, ապա մնացած տարածքային շրջափակումները անհնար պիտի լինի, որ տեղի չտան:

ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ ԵՐԵՒՈՒՄ Է ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

N գործառնախ գինձորնների պատմածից

1 998թվականին Արցախի գործառններից մեկում, երեկոյան կողմ, երբ գինձորները դրսում շարված էին հաշվարկելու, թե ովքեր են ներկա կամ բացակա, եւ հրամանատարը նրանց իր խոսքն էր ասում, հանկարծ երկնքում արեւելյան կողմից երեւաց Աստվածածինը՝ հիսուս մանկանը գրկած: Զինձորները հանկարծակի գալով՝ ապշեցին եւ քարացած նայում էին: Տեսիլքը մի քանի րոպե տեւեց, ապա Աստվածածինը շրջվեց դեպի աջ, դեպի արեւելք ու անհայտացավ: Այդ միակ օրն էր, որ գործառնում կարգապահութիւնը 100 տոկոսանոց էր: Եվ գինձորները, որ երեկոները սովորութիւնն ունեին սենյակները թողնելով դուրս գալ ու աննպատակ շրջել, այդ օրը, տեսիլքի գործարար ազդեցութեան տակ գտնվելով, նախախնամութեան երկյուղից ծագած իմաստութեամբ՝ անգամ սենյակներից դուրս չեկան, այլ լրջացած խորհում էին եւ իրենց տեսած երկնային ակնհայտ հրաշքը քննում:



Հանկարծ երկնքում արեւելյան կողմից երեւաց Աստվածածինը՝ հիսուս մանկանը գրկած: Զինձորները հանկարծակի գալով՝ ապշեցին եւ քարացած նայում էին:



Բժշկության հրաշքներ

ՄԱՆՈՒԿ ԿՈՍՏԱՆԸ ՄԱՀԻՅ ՓՐԿՎԵՅ ՍՈՒՐԲ ԱՎԱԶԱՆԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՄԲ

Առստան Մեհրաբյանի ծնողները պարսկահայեր էին, բարեպաշտ մարդիկ: Կոստանը տկար ծնվեց եւ մոտ 40 օրեկան էր, երբ արդեն մարմինը սեւացել ու կապտել էր: Մահամերձ էր: Հայրը տեսնելով, որ երեխան շուտով հոգին պիտի ավանդի, ամիջապես ՄԲ. Էջմիածնից քահանա հրավիրեց, որ գոնե մկրտություն ստանալով մեռնեք, քանի որ Գրվածքն ասում է. «Ոչ ոք, ով ջրից ու հոգուց վերստին ծնված չլինի, չի տեսնի երկնքի արքայությունը»: Այսինքն, մկրտություն ստանալով, մանկիկը, թե տարեցը պիտի երկնքի արքայությանն արժանանան, եթե անգամ մկրտությունից հետո մեռնեն էլ: Սակայն բազմաթիվ են դեպքերը Հայոց եկեղեցում, որ մանավանդ, հիվանդություններով երկար տառապած, անգամ մահամերձ երեխաները, ավագանի մկրտություն ստանալով՝ արագ բժշկվել են: Ինքս մի քանի ծանր հիվանդ, ապրելու համար անհույս երեխաների կնքահայր եմ եղել, եւ նրանք մերձավորների հավատով մկրտվելով՝ արագ առողջացել են: Իսկ լավագույնը, եթե իսկապես հավատի մեջ գիտակից ծնողներ ենք, երեխային պիտի մկրտել տանք նրա ութ օրականը լրանալուն պես, ինչպես առաքյալներն են պատվիրել /Ղուկաս Ավետարանիչ «Առաքելական կանոններ»/: Այդպես իսկ երեխային նախօրոք հանձնելով Աստծո հոգածու ձեռքը:

Նույն հրաշքը եղավ ահա նաեւ մահամերձ Կոստանի հետ: Եվ հենց մահամերձ մանկանը մկրտեցին, արագ առողջացավ: Սակայն նախախնամության կամքով, թե՛ ճակատագրի, Կոստանի երեխաներից մեկը նույնպես արատով ծնվեց եւ մոտ 4 տարեկան էր, չէր խոսում եւ նորմալ քայլել չէր կարողանում:

- Քո Հայրը քեզ մկրտել տալով՝ քո կյանքը փրկել է, հապա ինչու՞ ես քո արատով ծնված երեխայի մկրտությունը հետաձգում,- հանդիմանում էր նրան վանահայրը: Եվ փառք Աստծո, որ այդ հետաձգումը երկար չտևեց: Իսկ այդ մասին՝ հաջորդ գլխում:



ՄՈՏ ՉՈՐՍ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՅԻ ԼԵԶՈՒՆ ԲԱՑՎԵՅ ԵՒ ՈՏՔԵՐՆ ԱՄՐԱՑԱՆ

1 987-88թ. էր: Այդ օրերին Պարգե Սրբազանը Հոփսիմե Վանքի վանահայրն էր: Վանքի վարորդն էր Կոստան Մեհրաբյանը, որ բարեպաշտ ծնողների որդի էր եւ մկրտության ավագանով փրկվել էր ստույգ մահից: Այս Կոստանի երեք երեխաներից մեկը՝ երեք ու կես տարեկան հայկը, չէր խոսում, ավելին՝ նորմալ քայլել էլ չէր կարողանում, քանի որ ոտքերը ի ծնե տկար էին: Հայրն այս բանի համար շատ էր մտատանջվում:

- Բեր մկրտենք, գորություն կիջնի երեխայի վրա եւ Աստծով կառողջանա,- ասում էր վանահայրը: Սակայն հայրը պատճառաբանում էր, թե պիտի պատրաստություն տեսնի, սեղան զցի եւ քանի որ աղքատ էր, այս պատճառով անընդհատ երեխայի մկրտությունը հետաձգում էր:

- Աստծո համար այդ սեղանը բոլորովին նշանակություն չունի,- համոզում է Տեր Հայրը:- Կարելորդ հավատով եւ նվիրումով կարգը կատարվի: Եվ վերջապես հայրն համոզվելով՝ բերեց երեխային: Նման

ղեպքերի համար եկեղեցական կարգ կա. լեզուն փակ հիվանդի առավոտյան բերում են եկեղեցի այն պահին, երբ եկեղեցու դուռը ղե փակ է: Եկեղեցու բանալին կպցնում են երեխայի շուրթերին, ապա դռան մեջ մեկ պտույտ պտտացնելով ասում են սաղմոսի այս խոսքը «Տեր, եթե շրթունս իմ բանաս, բերանն իմ երգեսցէ զօրհնություն Քո»: Նման բժշկման օրինակները մեր եկեղեցում բազմաթիվ են Այսպիսի բժշկման մի ղեպքի Տեր Հայրը ներկա էր եղել Մայր Աթոռում երբ Հայր Գաբրիելն էր կարգը կատարում եւ երեխայի լեզուն բացվել էր: Եվ այդ օրինակից քաջալերված՝ հուսադրամ էր, վստահեցնում վհատված հորը:

Եվ վերջապես Կոստան Մեհրաբյանը բերեց երեխային: Նախ երեխային մկրտեցին: Ապա հաջորդ առավոտյան լեզուն բացվելու հարավանդ սուրբ կարգը կատարեցին: Եվ ահա, երեք օր անց / ինչպես Ավետարանից ենք հիշում՝ 3-ը Տիրոջ կողմից դրած նշան է / երեխայի լեզուն բացվեց եւ ոտքերն ամրացան: Անընդհատ սկսեց խոսել ու վազվզել: Կոստանի ուրախությունը չափ ու սահման չկար: Երջանիկ էր: Չափ ու սահման չկար նաեւ հոփսիմե Վանքի վանահոր ուրախությունը: Եվ ճշմարիտ որ արժեր ուրախանալ, քանի որ Աստծո հրաշքով բշխված այս տղան արտակարգ տղա դարձավ: Օրհնյալ է Տերը, Օրհնյալ են Տիրոջ Տան փրկարար կարգերը եւ դրանք կատարողները Ամեն:

Բժշկությունը ընծայած այս մկրտություններն ինձ հիշեցրին Տեր Աթանասի եւ Տեր Բարսեղի ձեռքով գործված մկրտության Աստվածային հրաշքները: Իմ խնդրանքով Տեր Աթանասը այցելեց եւ մկրտեց երկու երեխաների, որոնք երկար ժամանակ իրենց ծնված օրից ծանր հիվանդներ էին եւ համարվում էին անհուսալի: Մկրտությունից հետո այս մանուկները արագ ոտքի ելան: Իսկ Տեր Բարսեղը մկրտեց ծնողից ի վեր իմ հիվանդ մանկանը եւ նա նույնպես բժշկվեց: Մի քանի ամսական դուստրս, որ թաթիկները շարաթններով բռունցք էր արել, երբ քահանայի մկրտության կարգը ձեռքերին հասավ, ձեռքերը երկարեց քահանային, բռունցքները բացեց եւ ափերը ղեպի վեր դարձրեց, որպեսզի քահանան ափերը սուրբ դրոշմով կնքի: Զարմանքից քահանան մի պահ մկրտությունը դադարեցրեց, ապա ուրախ ու պայծառ ժպիտով ժպտաց ու ասաց.

- Այս մանուկը գիտի, թե իրեն ինչու՞ են եկեղեցի բերել:

ՄԵԾ ԵՐԿՐԱԵԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆՄՎԱԾ 12 ԱՐՅԱ ՏՂԱՆ ԲԺԵԿՎԵՑ ՎԱՋԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ԱՂՈԹ-ՔՈՎ



- Գիտե՞ս, որ զանգեցին Լենինականից, թե հաշմված երեխան հրաշքով բժշկվել է, ոտքի է կանգնել:

Մեծ երկրաշարժից հետո էր: Վազգեն Վեհափառն ու Արցախի թեմի Առաջնորդ Պարգեի սրբազանը Վեհարանի ընդունարանում էին եւ ահա լուր տվեցին, թե՛ Լենինականից /այժմյան՝ Գյումրի ծնողները իրենց հաշմանդամ երեխային են բերել, որ Վեհափառը ի հայրական աղոթքն անի եւ իր օրհնությունը տա:

-Թող ներս բերեն,- կարգադրեց Կաթողիկոսը:

Մոտ 12 տարեկան տղա էր: Ծնողները երկու թեւերից բռնած ներբերեցին, իսկ պատանու՝ երկրաշարժի ժամանակ հաշմված ոտքեր անզոր քարշ էին գալիս հատակին:

Վեհափառը աղոթք արեց երեխայի համար: Ծնողները շնորհակալություն հայտնեցին, կաթողիկոսական օրհնությունն ստացան եւ երեխայի թեւերն ընկած գնացին:

Մեկ շաբաթ անց, Վազգեն Վեհափառը իր մոտ կանչեց Արցախի թեմի Առաջնորդին եւ մեծ ուրախությամբ, Աստծուն փառաբանելով հայտնեց.

- Գիտենս, որ զանգեցին Լենինականից, թե հաշմված երեխան հրաշքով բժշկվել, ոտքի է կանգնել:

Կաթողիկոսը ճիշտ մի երեխայի նման այնքան էր ուրախացել, որ անզամ շփոթվել էր երջանկությունից:

- Բնականաբար պիտի բժշկեր,- ուրախությամբ պատասխանեց Սրբազանը,- թե ծնողներն էին այդ հավատքով եկել եւ թե Վեհափառ Տեր, Ձեր սիրառատ հավատքով աղոթքն ու օրհնությունը անպայման լսելի պիտի լիներ Աստծուն:

ՕՐ ՀԵՅԱԼ Է ԱՍՏՎԱԾ:

ԱՍՏԾՈՒ ՀՐԱՆՔՈՎ ԲԺՇԿՎԵԼՈՒ ԵՍ

Մարգային գլխավոր բժշկի դուստրը՝ Կարինեն, որ բժշկուհի էր, երկու զավակների մայր եւ ապրում էր Աբովյան քաղաքում, այնքան ծանր հիվանդացավ, որ երեխաների հետ բերեցին Արցախ՝ ծնողների տուն: Գամված էր անկողնուն: Պարգեի սրբազանը այս մասին լսելով, հավատացյալներ ուղարկեց երիտասարդ կնոջ մոտ, որ Ավետարանը քարոզեն եւ նրա միտքն ուղղեն Աստծո եւ նրա ամենագործության վրա: Կարինեն Ավետարանը սիրով ընդունեց: Եվ երբ հոգեբանորեն պատրաստ էր արդեն մկրտության, Առաջնորդն ուղարկեց



Իր աղոթքին ի պատասխան, երազում հայտնվել է մի հոգեւորայր եւ ասել. «Աղջիկս, դու Աստծո հրաշքով բժշկվելու ես»:

կեց Մկրտիչ քահանային՝ պատվիրելով, թե երբ տեսնես պատրաստ է մկրտիր: Մկրտիչ քահանան մկրտեց Կարինեին: Եվ Առաջնորդը գտավ որ ժամանակն է, որպեսզի նորահավատ հիվանդը Սուրբ Հաղորդություն էլ ընդունի, որ ինչպես գիտենք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս մարմինն ու արյունն է՝ օրհնված հացն է եւ օրհնված գինին, որոնց մասին Տերն ասել է՝ ով որ ուտի եւ խմի, իր մեջ կյանք կունենա... Սրբազանը առաջին անգամ էր տեսնում իր հովանավորյալին: Եվ երբ Կարինեն Սրբազանին տեսավ, շփոթվեց: Հետո պարզվեց, որ մկրտության նախորդ օրը, երբ աղոթում էր, թե՛ Աստված իմ, հնարավոր է, որ բժշկվեմ, իր աղոթքին ի պատասխան, երազում հայտնվել է մի հոգեւոր այր եւ ասել. «Աղջիկա, դու Աստծո հրաշքով բժշկվելու ես»:

Կարինեն ասաց, որ իր երազում տեսած հոգեւորականը Պարզե Սրբազանն էր: Եվ երբ հիվանդը մեղքերը խոստովանեց եւ սուրբ Հաղորդությունն ստացավ, գորություն իջավ նրա մեջ եւ 5 րոպե անց մոր օգնությամբ վեր կացավ, եկավ նստեց Սրբազանի մոտ՝ նրան լսելու: Մի քանի օրից հիվանդը ոտքի կանգնեց, իսկ մոտ երկու ամսից արդեն բակ էր իջնում, ապա, երեք ամիս անց, արդեն առողջացած զգալով՝ վերադարձավ Արուսյան՝ իր տուն:

Եվ ահա Կարինեի հայրը, որ բժիշկ էր, Սրբազանին հանդիպելով գրկեց նրան, ուրախացած շնորհակալություն հայտնեց, թե՛ աղջկա բժշկել էր:

- Ես,- պատասխանեց Սրբազանը,-բժիշկ չեմ, ոչ բժշկությունից եւ ոչ էլ հիվանդություններից բան չեմ հասկանում, ես ինչպես պիտի բժշկեի: Աստված է բժշկել: Ձեր շնորհակալությունը նրան ուղղեք, մատաղ արեք, աղոթք արեք՝ փառաբանելով Աստծուն, որովհետեւ Աստված է բժիշկը:

- Այո, ճշմարիտ եք ասում,- համաձայնեց բժիշկը:

ՓԱՌԱՆԵՂ ՄԻ ՀՐԱՆՔ ՏԻՈՒՐ, ԲԱՅՅԵՒ՝ ԽՐԱՏԱԿԱՆ ԱՎԱՐՏՈՎ

Լինում են դեպքեր էլ, որ Աստված լիառատորեն մեզ կյանքի պարգևներ է տալիս, բայց մենք անկարող ենք լինում պահպանել այդ պարգևները: Այդպիսի մի դեպք է Արցախյան այս հրաշքի պատմությունը: Ստեփանակերտցի մի հիվանդ կար՝ Հեյվազ անունով: Նա



Եվ երբ հավատացյալները մի քանի օր անց նրանց տուն այցելեցին, նրան հարբած գտան:

9 տարի գամված էր անկողնուն, ավելին՝ տեսողությունն էլ էր սկսել խամրել: Եվ ահա Արցախի Առաջնորդը լսելով նրա անմխիթար վիճակի մասին, խղճում է նրան այդ դառը ճակատագրի համար եւ հավատացյալներ է ուղարկում, որ գնան հավատք քարոզեն, մխիթարեն եւ խնամեն, որովհետեւ Հեյվազը միայն մի ծեր մայր ուներ, որ անկարող

էր որդուն պատշաճին հոգ տանել: Եթե հավատա, միգուցե եւ Աստված բժշկի, խորհում էր Առաջնորդը եւ «Գթություն» բարեգործական միութիւնից հաշմանդամի սայլակ էլ բերել տվեց, որ տղային երբեմն դուրս հանեն՝ մաքուր օդի, որ բնության Աստվածային վայելքից գոնե զուրկ չմնա: Եվ ահա եկավ այն բարի օրը, որ հիվանդը հավատաց Աստծուն, հավատաց նրա ամենակարողութեանը, որ կարող է անգամ իր նման հաշմանդամին էլ ակնթարթորեն ոտքի կանգնեցնել: Եվ ահա, երբ սայլակով տարան մկրտելու եւ արարողակարգից հետո կամենում էին կրկին սայլակի մեջ նստեցնել, այդժամ, ի զարմանս ներկաների, հեյվազը մարմնապես լրիվ առողջացած ոտքի կանգնեց: Աստծո փառահեղ, աննման հրաշքը իրականացել էր ահա եւ հեյվազի հավատքը՝ վարձատրվել:

Սակայն, հոգեպես դեռեւս լրիվ դարձ չապրած տղան հենց զգաց, որ հրաշալի առողջութեան տեր է, չմտածեց իր փրկիչ Աստծուն նրա կամքի համեմատ շնորհակալ լինել կամ ծառայել /հիշենք՝ հիսուսի բժշկած տասր բորոտներից միայն մեկը վերադարձավ Տիրոջը շնորհակալ լինելու/: Եվ երբ հավատացյալները մի քանի օր անց նրանց տուն այցելեցին, նրան հարբած գտան: Եվ տղան հարբելու պատճառը բացատրեց յուրովի, թե քանի որ առողջ է, ամիջապես ցանկանում է մի աղջիկ ճարել եւ շտապ ամուսնանալ: Եվ քանի որ չգիտես ինչից անհարմար է զգում որեւէ աղջկա ամուսնութեան առաջարկութիւն անել... վշտից հարբում է: Յավոք հեյվազը, ոչ Առաջնորդի եւ ոչ էլ հավատացյալների հորդորներին ուշք չդրեց, որ հարբելը դադարեցնեն եւ երեք տարի, գրեթե ամեն օր, արցախայան թթի թունդ օղիով հարբեց եւ հարբեցողութեան պատճառով էլ մեռավ:

Տխուր ավարտով այս հրաշքը խրատական մեծ նշանակութիւն ունի. այն, որ անշնորհակալ չլինենք մեր բժշկի՝ հիսուս Քրիստոսի հանդեպ եւ երբ բժշկվենք, ետ դառնանք նրա մոտ նրա Ավետարանական պատգամների սահմաններում միայն արդեն մեր բժշկված կյանքը ապրել շարունակելու համար: հիշենք, որ Սուրբ հայրերը հարբեցողութիւնը մարդասպանութեան կարգի մեղք էին համարում:

ՍՈՒՐԲ ԱՎԱԶԱՆԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՐԲ ԵՒՍ ՄԵԿ ԲԺԵԿՈՒԹՅԱՆ ՀՐԱԵՔ

Հաճախ է պատահում, որ մեր հավատին ու հոգեւոր կյանքին ականատես մեր մերձավորները դժվարութեամբ են խրատվում կամ մնում են թերահավատ ու թերուս՝ իզուր ձգձգելով թե հոգեւոր եւ թե մարմնավոր բժշկութիւններն ու մխիթարութիւնները: Մանավանդ շատ դաժան է, երբ իրենց անհոգութիւնը տարածում են նաեւ իրենց մանկանց վրա:

Պարզեւ քահանայի եղբոր որդին՝ գրեթե մեկ տարեկան Լեւոնիկը մկրտված չէր եւ անընդմեջ հիվանդանում էր. սրտխառնոց, ցերմութեան բաձրացում եւ այլն: Բանն այնտեղ հասավ, որ արդեն ձեռքից կորցնում էին: Քահանան շարունակ եղբորը կշտամբում էր, թե՛ բեր երեխային մկրտենք: Եվ եղբայրն էլ շարունակ աշխարհիկ պատճառաբանութիւններ էր անում, թե՛ մինչեւ քավոր գտնեմ, մինչեւ պատրաստվեմ եւ այլն: Եվ անվերջ այդպես ձգձգում էր: Եվ մի օր էլ, երբ քահանան Էջմիածնից զանգահարեց Երեւան, ասացին, թե երեխայի վիճակը անհամեմատ ավելի վատ է:

-Վերջ արդեն: Վաղը առավոտյան երեխային բերում եք Էջմիածին, պիտի մկրտենք,- հրահանգում է քահանան:

Եվ առավոտյան բարեկամներով հավաքված եկան, իրականացրեցին սուրբ ավագանի մկրտութիւնը: Եվ, փառք Աստծո, երեխայի հիվանդութիւնները դադարեցին, նա առողջացավ եւ դարձավ նորմալ երեխա: Օրհնյալ է Աստված:



Եթե հավատաս, ապա քո խնդրանքով բնության տարրերն էլ կփոփոխի Աստված

ՀԱՅՐԻԿ ԶԱՆ, ԱՍՏՎԱԾ ՈՂՈՐՄԱԾ Է, ԱՂՈՐՔ ԱՐԱ՝ ԱՆՁՐԵՒ ԿՏԱ

 արգելի Սրբազանը նոր էր նշանակվել Արցախի թեմի Առաջնորդ եւ Մայր Աթոռի մի խումբ ճարտարապետների հետ երկրորդ անգամ էր, որ իր թեմն էր այցելում: Ստեփանակերտից երեք կիլոմետր հեռավորության վրա գտնվող Խնածախ գյուղում ճարտարապետները ուսումնասիրում էին սուրբ Աստվածածնի Եկեղեցին, որ նախատեսվում էր բացել: Եկեղեցու արեւելյան պատի դիմաց մի սեփական տուն կար, որի պատշգամբում նստած էին մի տարեց այր եւ երկու տարեց կին: Եկեղեցու բակում հոգեւորականների տեսնելով՝ տարեց այրը կանչեց.

- Ա՛ տե՛ր, ա՛ տե՛ր, էս մեր վիճակն ի՞նչ է լինելու: Երա՛շտ է, անձրեւ չկա:

- Հայրիկ ջան, Աստված ողորմած է, աղոթք արա եւ անձրեւ կտա: Այսօր չէ՛ վաղը, վաղը չլինի՝ մյուս օր: Միեւնույնն է, անպայման կտա, պատասխանեց Պարգեւ Սրբազանը:

- Է, աղոթք արել ենք, բայց օգուտ չկա,- տրտնջաց ծերունին:

- Լավ,-պատասխանեց Առաջնորդը,- դուք շարունակեցեք աղոթել, մենք էլ կմիանանք ձեզ եւ միաբան մեր աղոթքով անպայման անձրեւ կգա, չկասկածեք:- Եվ դառնալով դեպի հայր Միքայելին, ասաց.

- Հայր Միքայել, երաշտ է, մեղք են մարդիկ, եկ հենց այժմ էլ աղոթենք, խնդրենք Աստծուն անձրեւի համար, մինչեւ որ ճարտարապետներն էլ իրենց գործը կավարտեն:

Եվ 4-5 ռուպե, մինչեւ ճարտարապետների գալը, լռելայն, իրենց սրտերում սկսեցին աղոթել, որ Աստված անձրեւ պարգևի: Եվ երբ ճարտարապետների հետ նոր էին մեքենայով հասել Ստեփանակերտի Լարաբաղ հյուրանոցը եւ ճաշարան մտել / Խնածախից մինչեւ այստեղ

ուժ ռուպե հազիվ անցած լինե՛ր/, երբ հայր Միքայելը տեղից բարձրանալով ասաց.

- Պարգեւ Սրբազան, անձրեւն արդեն գալիս է:

Սրբազանը, որ մեջքով դեպի պատուհանն էր նստած, սաստեց հայր Միքայելին, թե՛ տեղդ նստիր եւ լռիր,- կարծելով, թե քահանան իրենց աղոթքի վրա կատակ է անում:

Նույն պահին ճարտարապետ հակոբ Բաբախանյանը տեղից ելնելով, պատուհանը բաց արեց եւ ասաց.

- Չբարկանաս, Պարգեւ Սրբազան, այնուամենայնիվ, անձրեւն արդեն գալիս է:

Եվ ճշմարիտ որ, երբ Սրբազանը ետ շրջվեց, տեսավ որ երկինքը ահռելի ամպերով է լցվել եւ անձրեւ է թափվում: Զարմանալիս այն էր, թե ինչ արագությամբ էր հսկա երկինքն այդքան ահռելի ամպերով լցվել, երբ 7-8 ռուպե առաջ ամենեւին ամպի նշույլ իսկ չկար: Այս ամենը Ֆիզիկայի օրենքների մեջ չէր տեղավորվում: Մինչեւ երեկո անձրեւն իջավ: Քաղցր ու փափուկ մի անձրեւ էր, օրհնարար անձրեւ, օձյալ անձրեւ:

Երեկոյան, սակայն, դժվարություն առաջացավ, քանի որ Երեւանից բազմաթիվ երգիչներ էին ժամանել եւ մարզադաշտում համերգ էին տալու: Համերգը սպասարկող կազմը մտավախություն ուներ, թե անձրեւից էլեկտրական գործիքների մեջ կարճ միացում կառաջանա, եւ հոգեւորականներին հարկ եղավ չնախատեսված անձրեւի մասին նրանց բացատրություն տալուց հետո՝ հանգստացնել, քաջալերել՝ նրանց, ասելով, թե օրհնված անձրեւ է եւ դժբախտ պատահարներ չեն լինի: Եվ մոտ 1 ժամ ուշացումով, այնուամենայնիվ, համերգն առանց պատահարների անձրեւի տակ կայացավ: Ամենայն Փառք մեր երանելի հոգեւորականների աղոթքները լսող եւ մեր կարիքները հոգացող Սուրբ Երրորդությունը: Ամեն:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՁՅՈՒՆ՝ ԽՆՁՈՐԻ ԶԱՓ ՓԱԹԻԼՆԵՐՈՎ

 Աստծո սքանչելի այս այցելությունը տեղի է ունեցել 1990 թվականի Սուրբ Մնդյան գիշերը, ճրագալույծի պատարագի ժամա-



Եկեղեցում ընդամենը երկու լամպ էր վառվում, սակայն ներսի կիսախավարը Առաջնորդի աչքին հանկարծ սկսեց լուսավորվել:

նակ: Առաջին Սուրբ Ծննդյան տոնակատարության արարողությունն էր Արցախի վերաբացված առաջին եկեղեցում՝ Գանձասարում: Ամբողջ երկինքը մռայլ ամպերի մեջ էր, բայց դեռևս մի փաթիլ անգամ ձյուն չէր եկել: Արցախի Առաջնորդ Պարզեի Սրբազանը գավիթի առջև իր աղոթքում խնդրում էր.

- Տեր Հիսուս Քրիստոս, Նոր տարուն ժողովուրդը ձյուն չտեսավ, գոնե Սուրբ Ծննդին ձյուն գա, որ ձյունային ձմեռ սկսվի Արցախ աշխարհում:

Եվ երբ ճրագալույծի արարողությունն սկսվեց, մի զարմանալի փոփոխություն տեղի ունեցավ Առաջնորդի հետ. մանավանդ, երբ սկսեցին Սուրբ Ավետարանը կարդալ, եկեղեցին նրա աչքին սկսեց վայրկյան առ վայրկյան ավելի ու ավելի պայծառանալ: Սքանչելի արարողություն էր: Թե երգչախումբը եւ առավել եւս հոգեւորականները, մեծ ուրախությամբ էին արարողությունը կատարում, որ, անշուշտ, հասկանալի էր, քանի որ պատմական Գանձասարում տասնամյակների դադարից հետո, առաջին Ծննդյան արարողությունն էր մատուցվում մեր Տեր Աստծուն եւ ուխտավորներին:

Եկեղեցում ընդամենը երկու լամպ էր վառվում, սակայն ներսի կիսախավարը Առաջնորդի աչքին հանկարծ սկսեց այնքան լուսավորվել եւ նրա տեսողությունը այնքան հզորանալ, որ անգամ քսան մետր տարածքից պատի վրայի ամենաչնչին փոքր ճեղքն էլ սկսեց տեսնել, մի բան, որ անհնար պիտի լիներ անգամ ցերեկվա առատ լույսի պայմաններում: Այս աներկրային տեսողության մեջ, Սրբազանը համոզված էր, որ կարող է անգամ ճանճի աչքն ու ոտքն էլ տեսնել, այն էլ՝ քսան մետր հեռավորությունից: «Սուրբ-Սուրբ»-ի երգեցողության ժամանակ, եկեղեցին առավել եւս պայծառացավ եւ լցվեց զարմանալի գույներով: Երգչախմբի երեխաները նույնպես զվարթ էին, նայում էին Առաջնորդին ու ժպտում:

- Հետաքրքիր է, նրանք էլ են իմ տեսածը տեսնում,- մտածում էր Առաջնորդը,- անշուշտ, ամենքն էլ տեսնում են, որ եկեղեցին պայծառացել ու լցվել է գույներով:

Հրաշալի, անմոռանալի մի պատարագ կայացավ:

Եվ երբ ամենքով եկեղեցուց դուրս ելան, ասես հայտնվեցին հեքիաթային մի այլ աշխարհում: Գրեթե խնձորի մեծությամբ խոշոր փաթիլներով ձյուն էր գալիս, ի պատասխան Առաջնորդի աղոթքի:

Երկուս ու կես ժամ ձյունը տեղաց եւ մոտ 30-40 սմ. ձյուն դրեց: Իսկական` հեքիաթային, եւ ճշմարիտ որ` իսկական Սուրբ Ծննդյան ձյուն էր: Առաջին Սուրբ Ծննդյան պատարագով եւ սիրառատ Աստծո այդպիսի հրաշալի պատասխանով վերստին նշանավորվեց մեր Պատմական Գանձասարը:

Ապա հետո, երբ քննեցին իրենց տեսած սքանչելիքները, պարզվեց, որ երգչախմբից այլ հրաշքի են ականատես եղել: Առաջնորդը, ինչպես ասացինք, կարծում էր, որ ոչ միայն իր, այլ բոլոր ներկաների համար է եկեղեցին արեւի լուսավորութունից էլ ավելի պայծառացել: Սակայն երգչախմբից Գոհար Մամուլյանը, վկայեց, թե` իրենք այլ բան են տեսել, այն, որ պայծառ Լույսն իջել է միայն Առաջնորդի` Պարգե Սրբազանի վրա, երբ նա կանգնած է եղել հայր Վրթանեսի եւ Տեր Մկրտչի արանքում: Եվ Լույսն իջել է Սրբազանի մեջքի կողմից` ամբողջությամբ ընգրկելով նրա վեղարը եւ Սրբազանի վրա է մնացել 2 եւ կես ժամ անընդմեջ: Այդ հոգեւոր, տեսանելի Լույսն էլ Աստծո սիրո առհավատչյան լինելով, նրա տեսողությունը ողջ պատարագի ընթացքում դարձրել էր այդպես արտասովոր:

ՄԵԿ ՕՐՎԱ ԱՆՁՐԵՒԻ ԴԱԴԱՐ Է ԽՆԴՐՈՒՄ ԵՌՆԵՒԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ

1 993 թ. մայիսի 9-ի հաղթանակի առթիվ նախատեսվում էր հուշարձանների համալիր բացել: Հարկ էր հուշարձան-տանկի դիմացի հրապարակը ասֆալտապատել: Սակայն եղանակները խիստ անձրեւային էին, եւ 30 օր շարունակ անձրեւ էր տեղում: Շուշիի քաղաքապետ Յուրա Ղազարյանը, որ հավատում էր, թե աղոթքով կարելի է անձրեւ բերել կամ անձրեւը դադարեցնել, Մայիսի 8-ի առավոտյան ժամը 7-ին դիմեց հոգեւոր Առաջնորդին. - Սրբազան, այսպես չեղավ մի բան արեք, օգնեք, աղոթք արեք, որ գոնե այսօր ողջ օրը անձրեւը դադարի, որպեսզի վաղվա տոնի նախապատրաստական աշխատանքները հասցնենք ավարտել, ասֆալտը մնաց:

-Մի պայմանով, որ միաբան աղոթենք, դուք` բանվորների հետ, ես` իմ հոգեւորականների,- պատասխանեց Առաջնորդը եւ հոգեւորականներին կանգնեցրեց աղոթքի:

Եվ սկսեցին աղոթել անձրեւի դադարի համար: Վստահ էր, որ

այնտեղ էլ քաղաքապետն է բանվորների հետ աղոթում: Եվ մեկ ժամ անց 30 օր տեղացող անձրեւը կտրվեց: Բանվորները կարողացան ողջ օրն աշխատել, հաջորդ առավոտյան` նույնպես: Սակայն երկար ժամանակով պարզ եղանակը վտանգավոր էր, որովհետեւ ազերիների ինքնաթիռները կարող էին ուժեղանալ: Այդ բանի համար աղոթում էին, թե անձրեւի դադարի եւ թե, որպեսզի Աստված պարզ երկինքը, վտանգի դեպքում կրկին փակի ամպերով: Եվ այդպես էլ եղավ: Անձրեւը դադարեց, մինչեւ որ ասֆալտապատումն ավարտվեց եւ տոնակատարությունը տեղի ունեցավ: Իսկ տոնակատարությունից 30 րոպե հետո եղանակը կրկին փակվեց, ամպամածությունը խտացավ եւ հակառակորդի ինքնաթիռները ուժեղանալու հնարավորություն չունեցան:

Արցախյան այս վկայությունները մեկ անգամ եւս մեզ խրատում են, որ զգոն լինենք Ամենագործի` Աստծո ձեռքով մեր խնդիրները կարգավորելու հարցում, այդպիսով հեռու մնալով մարդկային հպարտության պատճառներից եկող բոլոր դժբախտություններից ու տրտունջներից: Օրհնյալ լինի իր խոստումները մեր աղոթքներով մշտապես հիշող եւ կատարող Ամենակալ Տեր Աստված: Ամեն:

ԱՂՈԹՔՈՎ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑԻՒՆ

1 997 թ. հոկտեմբերի 1-ին շուշեցի Միքայել Խաչատրյանը, որ Ղազանչեցոց եկեղեցու շինարարության պատասխանատուներից էր, գիտենալով, որ մեր Արցախի հոգեւոր հայրերի աղոթքներով սքանչելի վկայություններ են լինում, դիմում է Առաջնորդին` Պարգե Սրբազանին:

-Սրբազան, եթե 45 օր անդադար անձրեւ չլինի, եկեղեցու դրսի աշխատանքները կհասցնենք ավարտել:

-Հունվարի 15-ին նոր ձյուն է գալու,- պատասխանում է Սրբազանը,- Լիուլի աշխատելու ժամանակ կունենաք:

Թեպետ եղանակները բարենպաստ էին, սակայն աշխատանքները երկարեցին: Եվ ահա, երբ 1998-ի հունվարի 15-ին, Առաջնորդը աշխատանքային այցով որոշ ժամանակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում էր գտնվում, առավոտյան ժամը 7-անց 15 րոպեին հեռախոսի զանգն հնչեց: Միքայել Խաչատրյանն էր` Շուշիից:

-Ինչ է, պարոն Խաչատրյան, ձյունն արդեն սկսվեց:

-Այո, ճիշտ կես ժամ առաջ:

-Իսկ գործերն հասցրեցի՞ր ավարտել:
-Հազիվ... երեկ հասցրեցինք:

ԱՆՁՐԵՒԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ Է ԴԻՄՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ

1999թ. հոկտեմբերին ԼՂ-ի հանրապետության վարչապետ Անուշավան Դանիելյանը դիմեց Արցախի հոգևոր Առաջնորդ Պարգե Սրբազանին.

-Սրբազան, ի՞նչ կլինի, աղոթք արեք, որ անձրեւները ուշանան, քանի որ աշնանացանը ուշացրել ենք, իսկ չոր եղանակ եթե լինի կհասցնենք նորմալ ցանքս անել:

-Շատ բարի,- պատասխանում է Սրբազանը:

Ջորավոր էին մեր հոգևորականների աղոթքները, քանի որ անձրեւառատ աշունը ցամաքեց և մինչև դեկտեմբեր անձրեւ չեկավ, և իշխանությունը աշնանացանը հասցրեց կատարել: Արդեն հունվար ամիսն էր, սակայն տեղումներ դեռ չկային: Բնականաբար այս ես անհանգստացրեց Հայոց Արցախի իշխանություններին, և վարչապետը կրկին խնդրանքով դիմեց Առաջնորդին.

-Սրբազան, այժմ էլ ձյուն է պետք, եթե ոչ՝ մեր ցանքսը հաջորդ տարի պտղաբեր չի լինի:

Եվ երբ Առաջնորդը հոգևոր դասի հետ կանգնեց աղոթքի՝ նույն բանը պատվիրելով նաև հավատացյալներին, մեկ օրվա մեջ 70 սմ հաստությամբ ձյուն դրեց Արցախ աշխարհում: Եվ, ընդհանրապես, ձյունառատ ձմեռ եղավ և՛ լավ ձմեռ: Ամենքս էլ լավ գիտենք, որ հայաստանի մի շարք մարզեր, տառացիորեն քրքրվում են բնության տարերբից՝ կարկուտից, երաշտից և այլն: Այս վկայությունը մարզերի իշխանավորների և հոգևորականների համար օրինակ թող լինի: Որովհետև ճշմարիտ որ՝ հավատը առանց գործերի մեռած հավատ է: Մեծարգո իշխանավորներ և հոգևորականներ, մենք ձեզ այսօրինակ կենդանի գործերով հավատի կոչ ենք անում:

Աստծո ձեռքի ակնառու և զարմանալի այլ հրաշքներ

ՔՐԻՍՏՈՍԻՆ ԴԱՐՁԻ ՄԻ ՀՐԱԵՔԻ ՄԱՍԻՆ ԿԱՄ ՏՂԱՅԻ ԱՌՈՂՋ ԶԵՌՔԸ ՀԱՆԿԱՐԾ ՍԿՍԵՑ ԱՐՅՈՒՆԱՀՈՍԵԼ

Երբ Գանձասարի վանքի առաջին տոնակատարությունն ավարտվեց, երգչախումբը իջավ գյուղ վանքի վարորդի տանը գիշերելու, որպեսզի առավոտյան կրկին վանք դառնա այս անգամ արդեն Մեռելոցի պատարագին երգելու: Մոտ 14-15 աղջկաներ էին: Եվ ահա աղջկաները տեղավորվելով վարորդի տանը՝ շարականներ էին երգում: Ներս մտավ հարեւանի տղան և տեսնելով, որ երիտասարդ աղջկաներ են և շարականներ են երգում, ասաց.

- Ինչու՞ եք հոգևոր երգեր երգում, ակորդեոնը բերեմ՝ ուրախ երգեր երգեք:

Երգչախմբի աղջիկները պատասխանեցին.

- Եղբայր ջան, այսօր Սուրբ Հարության տոնն է, Զատիկի տոնը: Պատշաճ է մեզ, որ մոտակա բոլոր օրերին հոգևոր երգերով



փառաբանենք Աստծուն եւ ոչ թե ազգային ուրախ երգեր երգենք:
Տղան՝ թե.

- Ես Աստված, հարություն եւ նման բաների չեմ հավատում:

Եվ խոսքը դեռ չավարտած, երգչախմբի քույրերուց մեկը նայելով տղայի ձեռքին, ասաց.

- Եղբայր, ձեռքիցդ սկսեց արյուն հոսել:

Եվ տղան ապշանքով տեսավ, որ իրավ, ձեռքն սկսել է արյունահոսել թեպետ ոչ վերք ունի, ոչ սպի: Շփոթահար արյունը սրբեց: Զարմացած ինքն իր ձեռքին էր նայում, որ կրկին ահա սկսեց արյունահոսել Այդժամ քույրերից մեկն ասաց.

- Տեսա՛ր, որ վիրավորեցիր Աստվածային տոնը, եղբայր, եւ Աստված քեզ պատժում է:

Տղան տեղի ունեցածից սաստիկ վախեցած՝ փախավ:

Թե արյունը ինչպես դադարեց՝ Աստված գիտի, սակայն երկու- երեք շաբաթ անց այս տղան ամեն կիրակի սկսեց պատարագի գալ: Ապա խնդրեց, որ մկրտեն իրեն, եւ դարձավ հավատացյալ: Եվ իր ձեռքի արյունահոսության նշանի շնորհիվ, որ նրան խրատելու համար տվել ամենագոր հայր Աստված, բռնեց փրկության ճամփան:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԼՈՒՅՍԸ ԳԱՆՁԱՍԱՐԻ ԳՄԲԵԹԻՆ

1 994 թվականի Վարդավառի տոնի գիշերն էր: Գանձասարի վանքում մեր հոգեւորականները գիշերային հսկումը ավարտեցին երկուս անց քսան րոպեին: Այդ մի քանի օրերին եկեղեցական կարգի բոլոր ինն արարողություններն էլ կատարում էին եւ ամենքն էին հոգնել: Խնդրեցին Պարգեւ Սրբազանին, որ մինչեւ առավոտյան պատարագի ժամը, որ պիտի սկսեվեր ժամը հինգին, մոտ երկու ժամ հանգստանան: Սրբազանը համաձայնվելով՝ քաշվեց իր խուցը, որ ինքը եւս հանգիստ առնի: Եվ քիչ անց խցի դռան մոտ աղմուկ սկսվեց, ասես վիճաբանում էին: « Իրենք էին ուզում հանգստանալ, բայց ահա աղմկում են, զարմանալի է... մտածում էր Արցախի Առաջնորդը...

Եվ առավոտյան է միայն պարզվում, թե աղմուկի պատճառը գիշերային հրաշքն է եղել, որ Աստված պարգևել էր մեր հոգեւորականներին ու ուխտավորներին իրենց ջերմեռանդության համար: Եվ ահա Փրկչի պայծառակերպության համաձայն պայծառակերպվել էր եկեղեցու գմբե-



Սրհնյալ է Աստված՝ աստվածապաշտությունը լիառատորեն վարձատրելու:

ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԾՏԵՐ ՀԱՎԱՔՎԵԼ ԵՒ ԶԱՐՄԱՆԱՀՐԱՆ ԵՐԳԵՐՈՎ ՓԱՌԱԲԱՆՈՒՄ ԷՒՆ ՄԵՐ ՓՐԿՉԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1 994 թվականի հարության տոնակատարությունը Գանձասարում սկսվեց թոշունների սքանչելի փառաբանությամբ: Առավոտյան ժամը 4-ից 10 պակաս էր: Մեր հոգեւորականները նախապատրաստվում էին ժամը հինգի ժամերգության կարգը կատարելուն: Դեռեւս ժամանակ կար, եւ Արցախի թեմի Առաջնորդը վանքի պարսպից դուրս եկավ եւ դեպի գյուղ էր նայում: Վանք գյուղն ամբողջովին կաթի պես



Եվ ահա գյուղն ու վանքը բաժանող Խաչենի չորակի մառախուղի միջից չորսից տաս պակաս լավեց թռչունների փառաբանություններն առ Աստված:

սպիտակ մառախուղի մեջ էր: Միայն Գանձասարն էր ազատ մնացել մառախուղից: Եվ ահա գյուղն ու վանքը բաժանող Խաչենի ձորակի մառախուղի միջից չորսից տաս պակաս լավեց թռչունների վարար, հոգու հյուլթերով լեցուն փառաբանություններն առ Աստված՝ Տիեզերքի Փրկչի եւ Տիրոջ հարություն տոնը գովերգելով: Ասես տիեզերական սրանչելի մի սիմֆոնիա լինե՞ր՝ ներդաշնակ, հրաշալի, գեղգեղուն: Երբեք դեռ ծտերը այդ ժամին, այն էլ մառախուղի միջից չէին երգել: Զարմանահրաշ փառաբանության հրաշք էր, որ վայելում էր Սրբազանը, ափսոսալով, որ ձայնագրիչ չունի ձեռքի տակ: Հավաքվեցին նաեւ վանքի հոգեւորականները: Միլիոնավոր ծտերի հրաշալի այս փառաբանությունները երանելի էին ու սրտերը բերկրանքով լցնող: Եվ Վանքի հոգեւորականները այդ ժամ հասկացան սաղմոսի այն խոսքը, որ ասում է. «Այս երկրի վրա՝ տերեւից ու թռչունից սկսած, ամեն բան փառաբանում են Աստծուն»: Մոտ կես ժամ հնչեց թռչունների փառաբանությունը: Նման փառաբանություն մեր հոգեւորականները երբեւէ եւ ոչ մի տեղ չէին լսել: Եվ հետո հիշվեց, թե ամենեւին էլ պատահական չէ, որ մեր հայրերը առավոտյան ժամը երեքից-չորսը ընկած ժամանակում արարողակարգ ունեին, քանի որ վկայություններ կան, թե այդ ժամին են սրբերն ու հրեշտակները երկնային պատարազը կատարում: Եվ ահա Խաչենի ձորի անթիվ թռչնիկները Տիրոջ հարության տոնն էին ազգարարում: Տա՛ Տերը, որ մեր հայրերի հրաշալի այս կարգը՝ սրբերի եւ հրեշտակների պատարագի ժամը, վերստին խնդությունք կյանքի կոչվի մեր տաճարներում՝ առավել Աստվածապաշտության մեջ ամենքիս խորանալու եւ մեր Տիրոջ սիրո ներկայության բերկրանքը առավել վայելելու համար: Ամեն:

ՍՈՒՐԲ ԸՈԳԻՆ ՄԵՐ ԸՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՐԻՆ ԳԵՏՆԻՑ ԿՏՐԵԼՈՎ՝ ՎԵՐ ՀԱՆԵՑ

Շուշիի հովհաննես Մկրտչի Եկեղեցին, որ Կանաչ ժամ է կոչվում, հայտնի է իր զորությունք: Այստեղ է, որ երկու անգամ երեւաց Աստվածամայրը: Եվ այստեղ է, որ առանձին պատարագների ժամանակ Սուրբ Հոգին իջնում, գրկում էր Պարգե Սրբազանին ու Տեր Կորյունին եւ գետնից կտրելով դեպի վեր էր հանում:

Եվ ահա պատարագի ժամանակ, անտես սուրբ զորությունը երբ

Սրբազանին սկսեց ղեպի վեր հանել, Առաջնորդն անակնկալի եկած առաջին պահին վախեցավ, չիմացավ, թե ինչու՝ է գետնից կտրվում Իսկ Տեր Կյուրեղը լայն բաց արած աչքերով զարմացած նայում է գետնից վեր ելնող Սրբազանին:

- Այն պահին, երբ երկյուղ զգացի՝ ամիշապես իջեցրին.- վկայել Սրբազանը:

Մեկ այլ պատարագի ժամանակ նրան Սուրբ Հոգին կրկին գետնից կտրելով՝ վեր հանեց: Նույն կերպ, մեկ այլ պատարագի օր, գետնից կտրելով Աստծո Հոգին վեր հանեց նաև Տեր Կորյունին:

Ջորավոր եկեղեցի է Շուշիի Հովհաննես Մկրտչի եկեղեցին: Օրհնյալ ու օրհնյալ լինես, մեր Տեր Աստված:

ԻՐ ԱՄԲՈՂԶ ՀԱՍԱԿՈՎ ԵՐԵՒԱՅ ԱՍՏԾՈՒ ՀՐԵՆՏԱԿԸ

Աստծո Հրեշտակը երեւաց Գանձասարի վանքում, պատարագի ժամանակ՝ 1995թվականին: Երեւաց եկեղեցու հյուսիսային պատի ողջ երկարությամբ՝ իր ամբողջ հասակով: Աջ թեւը, գետնից մեկ ու կես մետր բարձրությամբ, կաշու էր մկրտության ավազանին իսկ մյուս թեւը գտնվում էր եկեղեցու գմբեթի թմբուկի մեջտեղում 20-25 մետր երկարության թեւեր ունենալով: Ողջ երգչախումբը եւ Կորյուն քահանան, որ կանգնած էր նրանց կողքին, տեսան Հրեշտակին: Մանավանդ երգչախումբն էր զարհուրել իր տեսածից:

Գանձասարում Աստծո Հրեշտակի երեւալը հաստատեց մեր Հայրի ընդհանուր հավատամքը, թե Աստծո Հրեշտակները աներեւույթ կերպով ներկա են լինում պատարագներին: Իսկ մեզ՝ հավատացյալներին, այդ երեւումը ուսուցանում է, որ երկյուղած, անկեղծ ակնածությամբ եւ ամենայն պատշաճությամբ մասնակցենք Մայր եկեղեցու պատարագներին:

ՉՈՐՍ ՕՐ ԱՆԸՆԴՄԵՋ ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ ԵՐԵՒԱՅ ԱՐՅԱՒԻ ԵՐԵՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

1997-ի ամռանը, չորս օր շարունակ Աստվածածինը երեւաց Արցախի երեք եկեղեցիներում: Շուշիի Հովհաննես Մկրտչի եկեղեցու

հոգեւոր ութ սաներ անդադար հերթապահում էին, իսկ երկու հոգի անընդմեջ սաղմոսներ էին կարգում: Այնտեղ էին նաև պահակն ու մոմավաճառը: Նվերիկ անունով սաներից մեկը այդ ժամանակ հատակն էր մաքրում: Մյուսները եկեղեցու բակում էին: Եվ ովքեր բակում էին, եկեղեցու դռնից հանկարծ տեսան, թե ներսում ինչ որ բան սկսեց փայլել, եւ եկեղեցու ներսը արտասովոր մի լույսից լուսավորվեց: Եվ երբ ներս շտապեցին, տեսան, որ խորանը լուսավորվել է խորանի վերնում ուրվագծվել է Սուրբ Հոգու խորհրդանիշ աղավաղ կերպարը, իսկ խորանի մեջտեղում Մարիամ Աստվածածինն էր՝ մանուկ Հիսուսը գրկին: Տեսիլքը մոտ քսան րոպե տևեց: Եվ երբ վերջում ներս մտավ մոմավաճառը՝ տեսիլքը դադարեց: Եվ հաջորդ օրը, երբ նույն ժամին նվերիկը խորանն էր մաքրում, ասաց՝ Տեր, մի՞թե այսօր չենք տեսնելու Աստվածածին: Եվ խոսքը դեռ նոր էր ավարտել, երբ նորից տեսիլքը կրկնվեց եւ նորից եկեղեցու ներսում լույսերի փայլը տեսնելով՝ բակում գտնվողները ներս թափվեցին: Եվ այս տեսիլքն էլ մոտ քսան-քսանմեկ րոպե տևեց եւ կրկին, երբ մոմավաճառը ներս մտավ, տեսիլքը դադարեց:

Նույնանման տեսիլք տեղի ունեցավ նաև Շուշիի Ամենափրկիչ եկեղեցում: Իսկ հետո պարզվեց, որ Շուշիի տեսիլքների նախորդ օրը նման երեւում տեղի է ունեցել Գանձասարի վանքում՝ պատարագի ժամանակ: Այդ օրը խորանի վրա Տեր Հովհաննեսի երկրորդ՝ Արցախ անունով զավակն էր սպասավորում: Նա ահա խորանից եկեղեցու սրահին նայելիս, տեսավ թե ինչպես Աստվածածինը եկեղեցու ամբողջ սրահով մեկ օդի միջով անցավ՝ մանուկ Հիսուսը գրկին եւ արեւմտյան պատից ուղղվեց ղեպի խորան՝ արեւելյան կողմը...

1997 թվականի ամռանը չորս օր անընդմեջ Աստվածածինը երեւաց Արցախի երեք եկեղեցիներում:

ԵՒ ԱՀԱ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՌԻՐԶ, 300 ՄԵՏՐ ԵԱՌ-ԱՎԻՂՈՎ ՄԻ ԳՈՒՆԴ ԲԱՅՎԵՑ

1997 թվականին պիտի Խաչը տեղադրվեր Շուշիի Ամենափրկիչ եկեղեցու գագաթին: Այս սրբազան արարողակարգին, որ սկսվելու էր ժամը 11-ին, ներկա էր լինելու նախագահ Ռոբերտ Քոչարյանը, բարձրաստիճան հյուրեր, Հայաստանից ժամանած լրագրողներ, ուխ-

տավորներ: Բայց ահա նախորդ երեկոյան թանձր մի մառախուղ իջավ Առավոտյան ժամը 10-ն էր, սակայն շրջապատում ոչինչ չէր երևում Եվ Առաջնորդը եւ ներկաներից այլք էլ աղոթում էին իրենց սրտերում, թե՛ Տեր, ի՞նչ ենք անելու, երբ ոչինչ չի երևում, մի՞թե մեզ չե ողորմելու: Ժամը 11-ից 10 պակաս էր. նախագահի գլխավորութեամբ ավտոմեքենաների շարայունք բարձրանում էր Շուշի: Շատերն արդեն մտածում էին, թե արարողակարգը ձախողվեց, որովհետեւ երբ ոչինչ չի երևում, ինչպէս պիտի 40 մետր բարձրութեան վրա Խաչը տեղադրվեր: Սակայն հենց այդ պահին էլ՝ ճիշտ 11-ից 10 պակաս, Աստված իր հրաշքով այցելություն արեց՝ հանկարծ մի գունդ բացվեց եկեղեցու շուրջ, եւ 300 մետր շառավիղով ամեն ինչ պարզութեամբ դարձավ տեսանելի: Իսկ 300 մետր այն կողմ եթե մատդ մտցնեիր մառախուղի մեջ՝ չէիր տեսնի: Եւ հյուրերը, եւ առհասարակ բոլոր ներկաները զարմացած եւ ուրախ էին այս հրաշքին ականատես լինելու համար Փառք Աստծո, այս հրաշքը նկարահանվեց եւ կարելի է հեռուստացուցով ցուցադրել:

Խաչի հաստատումը Ամենափրկիչ Եկեղեցու գմբեթին մեկ ժամ կես տեւեց: Եվ երբ ժողովուրդը նվազով, պար ու երգով, ուրախութեամբ նշեց-ավարտեց Խաչի տեղադրման իր հանդեսը, 10 րոպեն դե նոր էր անցել, երբ մառախուղը կրկին եկավ ու փակեց ամեն բան:

Աստծո ամենայն բարին՝ Արցախյան այս հրաշքների մասին բոլոր ընթերցողներին եւ լսողներին եւ, ընդհանրապես, Քրիստով Ավետարանի համար բոլոր չարչարվողներին, ջանադրողներին եւ բոլոր հետեւորդներին եւ առհասարակ Աստծուն օրհնարար գործերով բոլոր փառաբանողներին: Ամեն:

**ԵՐԿՈՒ ԾԻԱԾԱՆ ՀԱՅՏՆՎԵՅԻՆ ՂԱԶԱՆՉԵՅՈՅ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱ**

1998 թվականի հուլիսի 19-ին, Պայծառակերպման տոնին պիտի վերածովեր Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Եկեղեցին: Նախորդ օրը առավոտյան այս առթիվ Աստված հայտնեց իր բարեհաճությունը խաղաղության ուխտի նշանով, որ, ինչպես ԾՆՆԴՈՅ Գրքից գիտենք ԾԻԱԾԱՆՆ է: Եվ ահա երկու ծիածան հայտնվեցին Եկեղեցու վրա եւ մնացին մոտ երեք ժամ: Երկու ծիածան, որ հին եւ նոր կտակարան

ների երկու ուխտերի, Աստծո հետ խաղաղություն կնքելու խորհուրդն ունեին: Աստծո օրհնությունը իր արժանավոր ծառաներին եւ բոլոր սրբերին: Ամեն:

**«ԵՒ ԵՐԵ ԸՆԿՆԵՍ, ՀՐԵՆՏԱԿՆԵՐԸ
ՊԻՏԻ ՊԱՀԵՆ ՔԵԶ, ՈՐ ՈՏՔԴ
ՔԱՐԻՆ ԶԿՊԶԻ»**

Մեր ժողովրդի մեջ բազմաթիվ վկայություններ կան, որ բարձրությունից ընկած մարդկանց, մանավանդ երեխաներին, ոչինչ չի պատահել, փափուկ վայրէջք են կատարել հրեշտակների թևերին: Բայց, անշուշտ հասկանալի է, որ այս պատահական եւ ոչ թե դիտմամբ ընկնելու մասին է, որովհետեւ ով բարձրությունից դիտմամբ է ընկնում, նա արդեն փորձում է Աստծուն, երբ գրված է թե. «Բո Տեր Աստծուն չպիտի՛ փորձես»: Սա երեք այն փորձություններից մեկն էր, որով սատանան փորձեց հիսուսին եւ պարտվեց՝ լսելով «Բո Տեր Աստծուն չպիտի՛ փորձես» պատասխանը:

Այս վկայությունը եղել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, երբ այժմյան Արցախի Առաջնորդ Պարգե Սրբազանը ձեմարանի ուսանող էր՝ Գուրգեն անունով: Նրա ընկերները, որ այժմյան Հայր Եզրասն է, Զավեն Վարդապետը, Վահան Խաչիկյանն ու Արմեն Գրիգորյանը, նույն դասարանից էին եւ ընդմիջման ժամանակ գնացին Վեհարանի մոտ գտնվող ցայտաղբյուրից ջուր խմելու: Եվ երբ ջուրն արդեն խմել եւ աստիճաններից իջնում էին՝ դասամիջոցին բաժանված թխվածքն ուտելով, Գուրգենը, աստիճաններից իջնելիս թխվածքը ծամելով՝ ձեռքերը գրպանները դրեց: Եվ հանկարծ տեսավ, որ գլխիվայր ընկնում է աստիճաններից եւ որպեսզի աչքերը աստիճաններին խփվելիս չվնասվեն, փակեց: Եվ ահա, զարմանալի բան, սպասված հարվածը տեղի չունեցավ: Փափուկ վայրէջք եղավ, ինչպես սուրբ Գրքի խոստման մեջ է գրված: Բայց առավել զարմանալին այն էր, որ աներեւույթ հրեշտակները օդում ակնթարթորեն շուռ էին տվել պատանուն եւ նա աչքերը բացելով, զարմանքով տեսավ, որ պառկած է ոչ թե գլուխը աստիճանների ներքեւում, այլ՝ վերեւում: Ընկերները անհանգստացած վրա հասան՝ կարծելով, թե մեջքն է կոտրվել, իսկ նա աչքերը բացելով,

ասես թե ոչինչ չի եղել, շարունակեց թխվածքը հանգիստ ծամել:
 -Այ տղա, գուցե մեջքդ է կոտրվել, իսկ դու թխվածք ես ծամում,
 զարմացան ու անհանգստացան նրանք:

Սակայն, որպեսզի չորս ընկերների եւ, այժմ մեզ համար էլ, բոլոր
 հարվածի ուժը վկայութիւնը լիներ, հրեշտակները թույլ տվեցին, որ
 ժամացույցը 7 մասի մասնատվեր: Թեպետեւ, երբ պատանին մասեր
 իրենց տեղում հավաքեց, ժամացույցն սկսեց կրկին աշխատել: Օրհնյա
 է Աստված:

ԱՍՏՎԱԾ ՎԱՐՉԱՏՐՈՒՄ Է ԱՌԱՆՅ ԵՐԿՄՏԱՆՔԻ ՀԱՎԱՏԻ ԴԻՄԱՅ


Արգելի Սրբազանի եղբայրը եկել էր Շուշի: Առաջնորդարանում
 նստած զրուցում էին, երբ եղբոր երեխաներից ամենափոքրը
 Առաջնորդարանի բանալին վերցրեց ու կորցրեց: Այլեւ
 Առաջնորդարանից հեռանալ չէին կարող, որովհետեւ բանալին չկար
 Մոտ տասը հոգի բակով մեկ 2-3 ժամ որոնեցին ու չգտան: Սրբազա
 նն այդժամ հայտնութիւն ունեցավ, թե բանալին Արարատ դպիրը
 վայրկենապէս կգտնի: Եվ դուրս գալով բակ՝ ձայն տվեց դպրին, որ
 հենց պարսպի մոտ էլ բնակվում էր: Դպիրը, որ անտեղյակ էր բանալու
 կորչելու մասին, Առաջնորդի կանչը լսելով՝ դարպասից ներս մտավ և
 դեռ երկու քայլ էլ չէր արել, երբ կռացավ եւ ոտքերի տակից մի բան
 վերցնելով ասաց.

- Այս ինչ է ու... բարձրացրեց Առաջնորդարանի բանալին: Փառ
 մեր Աստծուն եւ հայտնութիւններ բաժանող Սուրբ Հոգուն: Ամեն:

Արթուն եղեք

«ԱՐԹՈՒՆ ԵՂԵՔ» ԿԱՄ ՍՐԲԱՋԱՆԸ ՏԵՍԱՎ ՍԱՏԱՆԱՅԻՆ՝ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀԻՆ

Արգելի Սրբազանը երկար ժամանակ խորհրդածում եւ աղոթում
 էր, իմանալու, թե ինչու՞ կոմունիստների տոները այս կամ այն



Եվ Սրբազանը աղոթում էր, թե՛ Տէր Աստված, մի՞թե
 սրանք ամեն ժամ, ամեն վայրկյան հաշվարկ են անում,
 ի՞նչ ահավոր համակարգ ունեն, եւ ամենն այդ՝ ճշմար-
 տությանը հակառակ...

օրն են նշանակվել՝ օրինակ՝ մայիսի 1-ը, մարտի 8-ը եւ այլն, կամ ինչու՞ Սումգայիթի ջարդերը սկսվեցին փետրվարի 28-ին: Հայտնի դարձավ, օրինակ, որ փետրվարի 28-ին Թալիաթ փաշան հայերին կոտորելու հրաման տվեց, եւ ահա նույն օրն էլ, 73 տարի անց, ջարդերն սկսվեցին Սումգայիթում:

Հիշենք, որ հավատն հալածողների շատ տոներ ծագել են սուրբ տոներին հակառակելու պատճառով: Սուրբ բաները հակառակ շուտ տալը, հակառակ շրջելը սատանայապաշտների սկզբունքն է, ինչպես որ նրանք շրջված պատարագներ են անում, նույնպես էլ սուրբ տոներն են շրջում: Օրինակ, եթե սեպտեմբերի 8-ը, որ Մարիամ Աստվածածնի ծննդյան տոնն է, 6 ամսով շրջում են՝ ստանում են՝ մարտի 8-ը, այսինքն՝ ի հակառակ տոն Աստվածածնի: Մայիսի 1-ը, որ բոլոր աշխատավորների տոնն էին հայտարարել, եթե նրանց 6 ամսով շրջածը ուղղենք, կտեսնենք, որ բոլոր սրբերի տոնն է, եւ այսպես շարունակ:

Եվ երբ Սրբազանը աղոթում էր, թե՛ Տեր Աստված, մի՞թե սրանք ամեն ժամ, ամեն վայրկյան հաշվարկ են անում, ինչ ահավոր համակարգ ունեն, եւ ամենն այդ՝ ճշմարտությանը հակառակ... Աստված իմ, ինչ եղանակով են սրանք աշխատում: Եվ այդ պահին Տերը մեկ վայրկյանի չափ Սրբազանի առջեւ բացում է այս իրողությունը. մեջքի կողմից նստած էր սատանան մի սեղանի առջեւ, իսկ սեղանին ողջ երկրագնդի քարտեզն էր, որտեղ փոքրիկ լույսեր էին վառվում եւ նշված էին օրեր, ժամեր, վայրկյաններ, անուններ, կետեր ... Սատանան նստած այդ հսկա քարտեզի առաջ՝ աշխատանք էր տանում:

...Եվ, բնականաբար, այս վկայությունը եւս ավելի է հաստատում Ավետարանական «Արթուն մնալու, միաբան լինելու խորհուրդը», քանի որ «Սատանան քնած չէ եւ աշխատում է անընդհատ՝ ի հակառակ եւ ի վնաս մեզ, թե էլ ո՞ւմ կարող է խարդախել ու կուլ տալ»: Եվ հարկ է բոլոր քրիստոնյաներիս արթուն մնալ նրա մեքենայությունների հանդեպ: Քրիստոնյաների համար պատգամ ու հրահանգ է հոգով մշտապես արթուն լինելը պահքով, աղոթքով, սրբազան բարեգործություններով:

Օրհնյալ է սրբությանը հետամուտ մարդկանց Սուրբ Հոգով միաբանող Տեր Աստված: Ամեն:



Արցախի թեմի առաջնորդ
Պարգև Արքեպիսկոպոս Մարտիրոսյան

ԼԻՆԵՆ-Ք ՉԱՐԱՀԱՂԹ. ԱՅՍ Է ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, -ԱՍՈՒՄ Է ՊԱՐԳԵՒ ՍՐԲԱԶԱՆԸ

2 Եր ներքին զգացողությունն ինչ է ասել. դարաբաղյան պատե-
րագմի ժամանակ Աստծո օրհնությունը եղել է մեզ վրա:

-Ոչ միայն օրհնությունն է եղել: Այս տարիների ընթացքին ուղ-
ղակի տեսնում ենք, թե ինչպես Աստծո Զորավոր Աջը մեր կողքին
գործում է մեզ հետ: Մեզ ոգևորում է ու զորացնում:

-Եվ՝ նկատելի՞ ...

-Իհարկե: Բազում օրինակներով դա կարող եմ ասել: Դրա մասին
կարող են վկայել շատ զինվորներ, որոնք պատերազմի դաշտում հրաշք-
ները տեսնելով, գալիս ու մկրտվում էին...

-Դարերի ընթացքում մեր ժողովուրդը դժվարությամբ-դժվարու-
թյամբ, մազե կամրջի վրա քայլելով հասել է մեր օրերը, չի վերացել
պատմական թատերաբեմից: Թվում է՝ նախախնամություն կա այս
ամենում: Ինչ եք կարծում՝ Բարձրալի կողմից ինչ առաքելություն է
հատկացված նրան:

-Ամեն մի ազգ ունի իր առաքելությունը, եւ ամեն մի անհատ ունի
իր առաքելությունը: Իսկ ինչպե՞ս հասկանալ առաքելության էությունը:
Դրա համար պետք է բացատրենք նախ եւ առաջ անունը: Մենք հայ
ենք, այսինքն՝ գալիս ենք հայկ նահապետից: Իսկ ո՞վ է հայկ նահա-
պետը: Նա է, ով մերժեց Բաբելոնի աշտարակաշինությունը՝ սատանա-
յի ծրագիրը երկրի վրա եւ քաջարար, իր 300 հարազատներով դուրս
եկավ համաշխարհային կայսրության դեմ, որի գործակատարն էր
Բելը:

Հայկը ոչ միայն մերժեց սատանայի ծրագիրը եւ մնաց հավատա-
րիմ Աստծուն, այլեւ մարտնչեց Բելի դեմ ու հաղթեց, սպանեց նրան:
Այսինքն՝ Հայկը Աստծո մարտիկն ու Աստծո հավատարիմ զինվորն է
եւ չարահաղթ է: Նշանակում է մենք՝ հայերս, պետք է նմանվենք Հայ-
կին՝ լինենք չարահաղթ: Այս է մեր առաքելությունը...

Հ. Գ. Բանաստեղծուհի Գոհար Սարգսյանին՝ Արցախի թեմի առաջնորդ
Պարգե Արքեպիսկոպոս Մարտիրոսյանի տված հարցազրույցից էր այս
հատվածը, որ վերցրել ենք «ՀՀ» օրաթերթից:

ԸՍՏ ՆԱՀՈՒՄՅԱՆՅԻ ՌԱՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՏԵՍԻԼՔԻ

10 Ես տեսիլքը մի նամակից է մեջբերված, որ տպագրված էր «Մոա-
վի ղողանջները» թերթում: Խմբագիրը՝ Կիմ Ղահրամանյանը լսե-
լով, որ գիրք եմ պատրաստում Արցախում եղած հոգևոր հրաշքների
մասին, տվեց թերթի այն համարը, ուր Ռայայի նամակն էր: «Ուզում եմ
պատմել մի անմոռանալի դեպքի մասին: 1983 թվականի սեպտեմբերն
էր: Գիշերը մեր բաղը ջրում էինք: Կինոմեխանիկ հաթմանանց Բորիկի
կին Լյուբան գիշերվա ժամը երկուսին եկավ, խնդրեց, ասաց.

-Երբ վերջացնեք, իմաց կտաք, որ ձեզնից հետո էլ մենք ջրենք մեր
բաղը:

Եվ գրուցելու ժամանակ հանկարծ երկնքին նայեց ու ճչաց՝ վու՛յ,
Մեյլին հարսը, մի երկնքին նայիր, տես ինչ կա:

Երկնքում երկհարկանի գեղեցիկ տներ էին երևում, Մարքսի, Էնգելսի,
Լենինի, Ստալինի գլուխները եւ խոշոր տառերով գրված՝ СССР:

Լյուբան վախեցած փախավ իրենց տուն, մնացինք ես եւ մեր Չեմոն,
որը հետևում էր, որ ջուրը չկտրեն:

Բորիկը եւ Լյուբան, կարծեմ հիմա Չարենցավանում են ապրում,
եթե այս թերթը կհասնի նրան, թող գրի, հետաքրքիր է, հիշում է այդ
հրաշքը»:

Նամակը կրճատված էր: Կիմի մեկնմամբ տեսիլքը զգուշացնում
էր ԽՍՀՄ-ի փլուզման եւ Շահումյանցիների անկման մասին: Երկ-
հարկանի տները խորհրդանշում էր գյուղը: Իսկ նաեւ իմ պարզ
մեկնմամբ՝ Շահումյանի շրջանը Աստվածապաշտության հետեւից չէր,
հավատից հեռացած էր, ինչպես ԽՍՀՄԸ: Այդ պատճառով այդ տեսիլք-
հայտնությունը երեսաց Աստծոն հաճելի այդ մի քանի մարդկանց:
Այնուհետեւ ԽՍՀՄԸ ընկավ, եւ ընկավ նաեւ Շահումյանի շրջանը: Որ
նշան է, թե՛ շահումյանցիները առավել հետեւողական պիտի լինեին
Աստծո պատվիրանների մեջ, որ Աստված էլ սեր ու զորություն տար
պահելու շրջանը: Երբեք ուշ չէ, քանզի գրվածքով ԱՍՏՎԱԾ ասել
է. «Դարձեք ինձ, եւ ես պիտի օրհնեմ ձեզ, ձեզ վերադարձնելով այն
ամենը, ինչ թույլ տվեցի վերցնել ինձնից հեռանալու պատճառով»:
Ամենայն բարին ամենքիս միայն Տեր մեր Աստծով: Ամեն:

Այս վկայությունը ես արդեն կարդացել էի, սակայն, ցավոք, վկայության հերոսի անունը չէր հիշատակվում: «Հայ զինվոր» թերթի աշխատակից, բանաստեղծ-լրագրող Սանդրո Ջուհրայանն ինքն էլ մի քանի խոսքով պատմեց նույն վկայությունը, եւ Սանդրոյից իմացա, որ վկայության հերոսը Ամարասի Արթուրն է, նա, որի մագերին հետագայում անկեղ մորենու կրակն էր բռնկվել: Այսինքն թե՛ Աստծո սիրելիներից մեկն է այս վկայության հերոսը: Լսած-կարդացածներիս հիման վրա ինքս էլ վկայության իմ տարբերակն էի արդեն գրել, երբ ձեռքս ընկավ Գրիգոր Զանիկյանի «Մահապարտները» հրաշալի գիրքը, եւ գրքում քանի որ նույն դեպքի մասին Արթուրն ինքն է պատմում, իմ կազմած վկայությունը ճշտեցի Գրիգորի գրառածով:

Այս վկայությունը Ավետարանական հավատարմության դաս է շատերիս համար, թե «մինչ ի մահ հավատարմությունը անկարելի է, որ չվարձատրի Աստված»: Եթե՛ ոչ, համոթ շատ հավատացյալներիս, Ավետարանում ասվում է, թե փորձություններին ոչ միայն մինչ ի մահ չենք հավատարմում, այլ թեթեւ փորձություններից էլ անմիջապես գայթակղվում ենք՝ խաբվելով անցողիկից եւ փոշմանում ենք միայն այն ժամանակ, երբ արդեն ուշ է լինում: Տա Աստված, որ հայ քրիստոնյաներից ոչ մեկս ուշացած չլինենք եւ երբեւէ փոշմանելու պատճառ չունենանք: Ամեն:

ԽՍՀՄԸ դեռ չէր փլուզվել, երբ արցախցիները տեսնելով, որ դիմումներով, հանրաքվեներով, հանրահավաքներով ոչնչի չեն հասնում, որոշում են զինված պայքար սկսել: Արթուր Ալեքսանյանը, որ այդ ժամանակ նվազախմբի ղեկավար էր, նվազախմբի բոլոր գործիքները վաճառելով, հրագեն է ձեռք բերում եւ կազմում է ինքնապաշտպանական ջոկատ: Խորհրդային անվտանգության ծառայողները Արթուրին ձերբակալում եւ տանում են Շուշիի բանտ: «Հենց ներս մտա,- պատմում է Արթուրը,- հսկիչներն ինձ ստիպեցին հանվել ու վերցրին կտտանքի գործիքները, որ ինձ տանջամահ անեն: Երբ մերկացա, նրանցից մեկը տեսնելով կրծքիս խաչը, ստիպեց, որ հանեմ: Ես հրաժարվեցի: Հարձակվեց, որ պոկի»:

Նույն ակնթարթին Արթուրը հանելով Խաչը, որն Արցախի թեմի առաջնորդ Պարգե Սրբազանն էր նվիրել, ոչ թե տվեց տանջողին



Մասնակցեցի մայր եկեղեցու անդրանիկ պատարագին: Արարողությունից հետո դուրս եկա գավիթ եւ մեկ էլ ինչ տեսնեմ՝ բանտում իմ խաչը պոկել ուզող, տանջամահ անող հսկիչն իր կնոջ ու երեխաների հետ տների արանքով գողեգող փախչում է:

/այն խոսքի համեմատ, թե՛ «Սրբությունը շներին մի տվեք եւ ձեր մարգարիտները խոզերի առաջ մի փոքր, որպեսզի հզորանալով ձեզ չպատառոտեն»/, այլ սուրբ խաչն իսկույն իր բերանը գցեց: Այդ տեսնելով՝ դահիճներից երեք-չորս հոգի եւս վրա գալով, դաժանորեն, մինչ ի մահ ծեծեցին Արթուրին: Ազգերին լինգով փորձեց բացել Արթուրի բերանը, որ մետաղյա, հասարակ խաչը հանի, այդպես փշրեց նրա առամները, բայց, փառք Աստծո, հերոսը տեղի չտվեց: Եվ երբ ուշքի եկավ, արդեն խուց էին տարել ու վրան ջուր էին լցնում, որ ուշքի գա: Առաջին միտքն այն եղավ, որ ստուգի՝ խաչը հանել են, թե ոչ: Ընդարմացած լեզվով ստուգեց. խաչը ուռած, արյունլվիկ թշի տակ էր: Ո՛ր թեպետ անմարդկային կտտանքներից առաջացած ցավերին, գոհ էր, որ խաչը, իր սրբությունը չտվեց շներին: Խաչն իր բերանում անընդհատ զորացնում, հույս ու համբերություն էր տալիս նրան: Խաչով, Խաչյալի չարչարանքները հիշելով՝ ավելի տանելի էին դառնում անմարդկային ծեծերն ու կտտանքները: Ապա արդեն, երբ գալիս էին, որ կրկին տանեն տանջելու, խաչը վերստին դնում էր իր բերանում ու այդպես էր գնում: Արթուրի եւ ազգերի չարչարողների միջեւ յուրօրինակ խաչ-պատերազմի սկսվեց: Եվ խաչով զինված գերին խաչյալի համբերությամբ հաղթում էր իրեն չարչարողներին: Որովհետեւ ոչինչ չի պատմում եւ ոչ մի արձանագրություն չի ստորագրում: Այս օրերին էր, որ Աստծո կամքով Վիկտոր համբարձումյանն ու Զորի Բալայանը մոսկովյան հյուրանոցում հացադուլ են հայտարարում եւ նրանց պահանջներից մեկն էլ Արթուրի ազատումն էր: Իսկ մի քանի ամիս անց Աստված Արթուրի հավատը, հույսն ու համբերությունը առատորեն վարձատրեց: Նրան տեղափոխեցին Երեւան, որ այնտեղից փոխադրեն ռուսական որեւէ բանտ: Երեւանում Արթուրի ընկերները առեւանգեցին ու թաքցրին նրան: Այնուհետեւ սկսվեց Շուշիի համար Խաչ-պատերազմին, երբ մերոնք, ամենքն էլ խաչեր կրելով կամ իրենց հազուստների ու զենքերի վրա խաչ նկարելով, ելան մարտի: Խաչով ելան եւ փառավորապես հաղթեցին: «Առաջիններից մեկը Շուշի մտա,- պատմում է Արթուրը,- եւ մասնակցեցի մայր եկեղեցու Անդրանիկ պատարագին: Արարողությունից հետո դուրս եկա գավիթ եւ մեկ էլ ինչ տեսնեմ՝ բանտում իմ խաչը պոկել ուզող, տանջամահ անող հսկիչն իր կնոջ ու երեխաների հետ տների արանքով գողեգող փախչում է: Ոտքից վիրավոր էր, հավանաբար այդ պատճառով էր ետ մնացել: Ինձ

հետ դեռ այդպիսի բան չէր եղել՝ ամբողջ մարմնով դողում, խոսել անգամ չէի կարողանում: Մարտնկերներս իսկույն զգացին, որ լավ չեմ զգում, հարցրին պատճառը: Ցույց տվեցի հսկիչին, անկապ բառեր կմկմացի: Խաչի պատմությունը գրեթե ամենքը գիտեին. բռնեցին, մոտ բերին եւ ասացին.

- Հիմա ինչ ուզում ես, արա՛ սրան:

- Ոչինչ էլ չեմ ուզում,- ասացի:

Տղաները հետո խոստովանեցին, որ այդ պահին մազերիս մեջ սպիտակ թելեր են հայտնվել:

- Իրա դեմքին էլ չեմ կարողանում նայել, տարեք աչքիս առջեւից, Աստված թող տեսնի դատաստանը: Տարան:

Ակամա հիշում եմ Աստվածաշնչյան այս խոստումը. «Եթե իմ պատվիրանները պահեք եւ դրանք գործի դնեք..., ես ձեր թշնամիներին ձեր ձեռքը կմատնեմ»: Խոստում, որ իրականացված ենք տեսնում թե՛ Արթուրի եւ թե՛ Արցախում տեղի ունեցած մյուս բոլոր վկայություններում: Օրհնյալ է Աստված:

ՀԱՎԱՏԳ, ՀՈՒՑՍԵՎ ՍԵՎ

Գիրք երկրորդ

ԻՆՔ ՏԱՐԻ Ի ՎԵՐ ՑԱՄԱՔԱԾ ԱՂԲՅՈՒՐԸ ՍԿՍԵՑ ԲԽԵԼ

7-8 տարի առաջ Արցախի նախագահ Բաբո Սահակյանն ու Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը միասին այցելեցին Բաբո Սահակյանի ծնողների գյուղը՝ Հաղբուլի շրջան Արփազյադուկ: Կոտորածների պատճառով այս գյուղում միայն մեկ ընտանիք էր մնացել: Գյուղից դուրս գալով, մեր իշխանավորները հանդիպած հովվից մի գառնուկ են գնում եւ մատաղ են անում մոտակա սրբավայրում հանուն Արփազյադուկ գյուղի, որ այդ անմխիթար փճակից՝ Աստծո հոգացությանը վերակենդանանա: Երեք ամիս անց կրկին են գյուղ այցելում, տեսնելու, թե իրենց խնդրանքը լսելի է եղել մեր Աստծուն: Եվ ահա գյուղում ավետիս էր նրանց սպասվում, թե ձեր այցելությունից հետո, նույն օրը՝ ինը տարի ի վեր ցամաքած աղբյուրը սկսեց բխել:

- Դե արի ու ասա, թե զուգահիսություն է եւ ո՛չ թե Աստծո սիրո պատասխանը մեր մատաղով խնդրանքին, - հիացած բացականչեց Բաբո Սահակյանը: Ճշմարիտ որ՝ զորավոր պատասխան է, հայտնատեսական:

Ուխտավորներ կայցելեն աղբյուր, բժշկություններ կլինեն աղբյուրի ջրով եւ գյուղը, որ ինքն էլ լուրջ աղբյուրի է նման օր օրի կկենդանանա: Աստվածճանաչության եւս մի ոսկյա արահետ: Մեր իշխանավորների այս հաղթանակը օրինակը քաջալերանք է մեզ, որ նույն նվիրվածությամբ ու ազնվաբարո՞ սրտերով, մենք էլ հանուն Արցախի եւ Հայաստանի ընծաներ անենք Աստծուն, որ բխեն նաեւ մեր սրտերի փակված աղբյուրներն ու մեր հանգամ քնակավայրերը վերստին կենդանանան եւ քրիստոնեության «միմյանց սիրելու» կենդանի ջուրը հորդի ոտից գլուխ լվանալով, մկրտելով ու բժշկելով մեզ ու մեր Հայրենին: Օրհնյալ լինես Հայր մեր Աստված՝ Քո Որդի եւ մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Կենդանարար Սուրբ Հոգովդ հանդերձ: Ալելուիա: Ամեն:



ՀԻՆ ՀՈՒՆԱՐԵՆԻ ԴԱՍԱԽՈՍ, ԼՐԱԳՐՈՂ ԱԼՎԱՐԻ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՊԱՏԻՆ ՀԱՅՏՆՎԱԾ ՏԻՐԱՄՈՐ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ որ Վազգեն Սարգսյանը մահապարտների գումարտակ հավաքեց, մոտ երեք հարյուր հոգի էին, որ եկան հավաքվեցին նախ Գանձասարի վանքում: Մարտի գնալուց առաջ Պարգե Սրբազանը ամենքին էլ մկրտեց: Եվ երեքհարյուրով ելան երեքհազար ազերիների դեմ եւ նրանց վիթխարի այդ զրոհը կասեցրին: Այս հաղթական դիմակայումից մոտ երկու ամիս էր անցել: Մանր մարտեր էր գնում, եւ ազերիները գրեթե հասել էին Գանձասարի մոտ գտնվող Խաչին Կամրջին: Արդեն անհնար էր թվում, որ Գանձասարը մերոնք կարողանային պահել:

Եվ արդեն իսկ Գանձասարը թողնելու ռազմական հրամանը եղել էր: Սակայն վանքը թողնելուց առաջ Տեր Հովհաննեսը առաջարկում է. -Եկեղեցում վերջին անգամ մեր աղոթքն անենք, ապա նոր վանքը թողնենք:

Եվ մոտ քսան-երեսուն հոգով, որ նրա հետ էին, սկսում են վանքում աղոթել: Եվ ահա աղոթքից հետո, զորություն է իջնում նրանց վրա, ապա ասում են.

-Ձե, մեզ այսպիսի սեր պարզեւող վանքը թողնել չենք կարող, եթե ընկնելու ենք, թող որ մեր վանքի բակում ընկնենք, Աստծո բարեհաճության մեջ: Եվ Աստծո Հոգով զորավորված՝ քսան-երեսուն հոգով ելնում են ազերիների մեծաքանակ ուժերի դեմ եւ նրանց փախուստի են մատնում: Եվ հաջորդ օրը վանքի պատին հրաշքով երեւում են Աստվածամոր եւ Հիսուսի պատկերները, որ մինչեւ այսօր կան:

Որ նշանակում էր թե՛ ահա ձեզ հաղթանակ շնորհողները: Որ նշանակում էր թե՛ մշտապես եւ ամեն օր քաջ եղեք ձեր հավատքի մեջ, որովհետեւ ձեր հաղթանակը ձեր հավատքի միջոցով եղավ: Մի երկմտեք: Եվ ճշմարիտ որ, ու՛մ է պետք անհավատությունը՝ անմխիթար ու անհույս մի բան, մինչդեռ հավատով եւ կյանքը կա, եւ հաղթանակը, եւ հույս-մխիթարությունը, որ թող մշտապես մեր ժողովրդի հետ լինի: Ամեն:



Գանձասարը, որ Հովհաննես Մկրտչի մատուցներն են...

ՓԱՌ-Ք ԱՍՏԾՈՒ, ՍՐԲԱԶԱՆԻՆ ՈՉԻՆՉ ՉԷՐ ԵՂԵԼ, ԵՐԲ ՆՐԱ ՆԻՎԱ ՄԵՔԵՆԱՆ ԶԵՌՔԻ ՄԵՋ ՃՄՐԹԱԾ ԹՂԹԻ ԿՏՈՐԻ ԷՐ ՆՄԱՆ

1 993թ. օգոստոսին, Սեւանի Վազգենյան դպրանոցի սաներին տարանք Ղարաբաղ: Դեռ պատերազմն ավարտված չէր: Գանձասար վանքում սաները պիտի մասնակցեին պատարագի: Պատարագիչը պիտի Պարզե սրբազանը լիներ: Սաները գիշերեցին Շուշիում, սրբազանի մոտ: Վաղ առավոտյան սաների հետ մեկնեցինք Գանձասար, Պարզե սրբազանը պատարագի ժամին պիտի լիներ այնտեղ: Սակայն ահա պատարագի ժամն եկավ, իսկ սրբազանը չկար ու չկար: Մեզ հետ սփյուռքից մի բարձրաստիճան հոգևորական կար, նրա առաջնորդությամբ սաներն սկսեցին պատարագը: Եվ միայն քարոզի հատվածի ժամանակ էր, որ սրբազանը մտավ վանք եւ քարոզն ինքը կարդաց: Եվ երբ պատարագն ավարտվեց, սրբազանը վանքի բակում հյուրասիրեց Սեւանի դպրանոցի սաներին: Բակում էր, որ Պարզե սրբազանի դեմքին մի փոքրիկ քերձվածք նկատեցինք: Հետաքրքրվեցինք՝ սրբազան, ինչ է պատահել: Պատասխանեց, ասաց.

- Լավ, անցած բան է:

- Իսկ ինչու՞ պատարագից ուշացար:

Եվ երբ շատ պնդեցինք, սրբազանը պատմեց, ասաց, որ պատարագին գալու ժամանակ, իր կարմիր Նիվա մակնիշի մեքենան ճանապարհին շրջվել ու ձորն է գլորվել:

- Բայց, փառք Աստծո, ոչ մի բան չի եղել,- հանգստացրեց մեզ Պարզե սրբազանը: Անհանգստանալու ոչինչ չկա:

Սա արդեն երրորդ դեպքն էր: Մեկը հիշենք. երբ Ստեփանակերտի իր բնակարանում աղոթքն ավարտեց եւ դուրս եկավ սենյակից, նույն պահին ազերիների ալազան արկն անցավ սենյակի միջով:

...Ետդարձի ճանապարհին մենք տեսանք կարմիր Նիվան, որ ձորից արդեն հանել էին: Նիվան նման էր թղթի մի կտորի, որ մարդ ձմրթում է ձեռքի մեջ: Ոչ մի կենդանի էակ, առանց Աստծո նախախնամության, անկարելի է, որ այդ մեքենայում կենդանի մնար: Այսպես իր տեսածն ու լսածը մեզ վկայեց հին հունարենի դասախոս, լրագրող Ալվարդ Բարխուդարյանը:

- Եվ մենք էլ Փառք տանք իր նվիրակների փորձության ժամին նրանց ազատող մեր Տեր Աստծուն: Ամեն:

ՄՈՐ ԱՂՈԹՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ Եղնիկ Վաչոյի մասին

Եղնիկ Վաչոյին հանդիպեցի Դոսաֆի գարածում: Ոստիկանության աստիճանավոր էր, «Դուշման» Վարդանի ընկերը: Նրա հետ միասին կույլ էին թե Աղվանստանում, թե Արցախում:

Բանաստեղծի նման «երկինքոտ» մարդ էր Եղնիկ Վաչոն արվեստ սիրող, գիրք ընթերցող, կյանքի խինդ ու սեր կար աչքերում: Եվ ասես միայն նրա հաղթ հասակն էր խոսում Վաչոյի ազատամարտիկ լինելու մասին: Շահումյանի գյուղերից մեկի երեխաներին հիշելիս հուզվում է. «Ինչ ակնածությունք եւ հույսով էին նայում մեզ, որպես հերոսների պատվում. համերգներ էին պատրաստում մեզ համար, գյուղից դուրս ելնելիս ճանապարհում էին, ետ դառնալիս՝ գյուղի ծայրին դիմավորում, կուզենայի որոնել, գտնել նրանց, կարոտել եմ»:

- Ինչու՞ են քեզ Եղնիկ ասում,- հետաքրքրվեցի ես:

- Աղվանստանում տղերքը երկու մեքենաներով ընկան հանկարծակի հայտնված եղնիկների մի մեծ խմբի ետեւից: Տղերքը շարունակ կրակում էին ու վրիպում: Գեղեցիկ արարածներ էին, ես խնդրում էի չկրակել, բայց ինձ վրա ուշադրություն չէին դարձնում, եւ հետապնդումը շարունակվում էր: Երեւի Աստծո կամոք չէր, որովհետեւ քիչ էր մնում մեր մեքենան ձորն ընկներ, ու բոլորս էլ զոհվեինք: Մի կերպ արգելակեցինք: Տղերքն էլի մոլեգնորեն կրակում էին ու վրիպում: Խղճում էի եղնիկներին, բայց իմ չկրակելու խնդրանքներն անտեսում էին ու կրկին վրաս ծիծաղում: Վտանգավոր այդ հետապնդմանը վերջ դնելու համար՝ ինքս կրակեցի: Ես լավ նշանառու եմ եւ՝ եղնիկներից մեկն ընկավ: Այս ինչ արեցի, բայց այլ ճար չկար: Որպեսզի եղնիկներից շատերը փրկվեին, մեկը պիտի զոհվեր, որ հետապնդումն ավարտվեր: Սիրտս ասես լալիս էր, ասես հարազատ մեկի վրա կրակած լինեի եւ ոչ թե կենդանու: Եվ մեքենայից իջա, վազեցի եղնիկի մոտ, գրկեցի գեղեցիկ գլուխը, դեմքս հպեցի դեմքին: Եղնիկի աչքերից արցունքներ էին հոսում: Աստված իմ, ասես մարդկային արցունքներ լինեին: Մի կերպ էի զսպում ինձ, որ ինքս էլ չարտասվեմ, ծաղրանքի առարկա չդառնամ: Ողջ օրն անտրամադիր էի եւ եղնիկի մսից չկերա: Տղերքն այդ ամենը տեսնելով այդ օրվանից ինձ անվանեցին Եղնիկ Վաչո:

...Արցախյան ազատամարտի ժամանակ Աղվանստանում կույլած հայերն առանձին ջոկատ ստեղծեցին ու մեկնեցին ճակատ: Եղնիկ Վաչոն այդ ջոկատում էր: Բազմաթիվ անգամներ վտանգների մեջ ընկավ, բազմաթիվ անգամ-

ներ մահից ազատվեց, այնքան, որ հասկացավ, թե մի ուժ պահպանում է իրեն:

-Ես գիտեի, որ մայրս աղոթում է ինձ համար,- պատմում է Եղնիկ Վաչոն, բայց այն, որ մորաքույրս պատմեց, անսպասելի էր եւ ապշեցրեց ինձ:

-Շատ անգամներ մահից ազատվեցի, հրաշքի նման բաներ էին, թվում էր՝ տրամաբանությունը հակառակ իրավիճակներ, բայց ազատվում էի,- ասացի մորաքրոջս:

-Էլ չազատվեիր, որդի,- պատասխանեց մորաքույրս, որ ապրում է Երեւանի Զրվեժ թաղամասում,- մայրդ քո կյանքը պահպանելու համար թե՛ Աղվանստանում, թե՛ Արցախում կռվածոց ողջ ժամանակամիջոցում հաճախակի ուխտագնացություն էր գալիս Զրվեժի եկեղեցին, աղոթքով, արտասուքով Տիրոջից խնդրում, որ պահպանի քեզ, ազատի վտանգների ժամանակ, փորձանքներից պահպանի: Քանի՜ անգամներ ինքս էլ եմ ընկերակցել այդ ուխտագնացություններին:

-Ահա թե որքան գորավոր է Աստծուն հուսադրած մայրական սերը, մայրական աղոթքն ու մայրական զոհաբերությունը, որ թիկունք է դառնում որդիներին - եզրափակեց Եղնիկ Վաչոն:

ԵՐԿՆՔԻՅ ԻՉԱԾ ԼՈՒՅԱԸ

Արձակագիր Հովիկ Վարդումյանը Եկեղեցական մկրտության կարգով իմ սանիկն է: Հաղթանդամ, ուղղամիտ, արդարասեր: Արցախյան պատերազմի ժամանակ «գրիչը փոխեց սրի» եւ մի շարք շնորհալի գրքեր գրեց ազատամարտի ու հանուն հայրենյայց զոհվածների մասին: Մեր տաղանդաշատ գրողներից ամենքիս սիրելի ու թանկ Հրանտ Մաթևոսյանի ժառանգությունը վատահ եմ, ինչ- որ բանով պակաս պիտի մնար, եթե Հրանտի կյանքի վերջին տարիներին Հովիկը չմտերմանար մեծ գրողի հետ եւ երկնախոս գրույցներ հետը չվարեր ու դրանք չհրատարակեր: Այս գրույցները, որ խորհուրդ կտայի պատանիներին կարդալ, իմաստախոսությամբ՝ Աստծո եւ մարդու կյանքի ըմբռնման երկինքոտ շերտեր են բացում եւ ուսուցողական են, եւ սիրելի:

Հովիկը պապենական ամուր հավատ ունի: Մոտ քսան տարի առաջ էր, լսեցի, որ «մեջքը բռնվել է», «շարժվել չի կարողանում», «քանի օր է՝ պառկած է» եւ զնացի հիվանդին տեսնելու: Գնալուցս առաջ աղոթելով թե՛ Տեր, առողջացրո՛ւ նրան: Հիվանդի անկողնու կողքին նստել, գրուցում էինք, եւ ես շփոթված մտածում էի, թե աղոթքս չի լավել, խնդրել էի ոտքի հանել, բայց

Հովիկն ահա պառկած է: Ոչինչ, երբ ասեմ՝ քեզ համար աղոթել եմ, գուցեեւ այդ մխիթարի՞ նրան, որովհետեւ մտքիս մեջ ասում էի՝ որքան ձանձրալի ու տանջալից պիտի լինի օրեր շարունակ անկողնում անշարժ պառկելը: Գոնե կմխիթարվի: Ասացի՝ Հովիկ ջան, քեզ համար աղոթել եմ, Տիրոջը խնդրել, որ առողջանաս:

- Ինչ,- կենտրոնացավ Հովիկը,- աչքերիս մեջ իր պապենական ամուր հավատով նայելով, ասես ստուգելով թե՛ ճիշտ եմ ասում, ապա հանկարծ թափ տվեց իրեն ու ասաց, «բռնվածություններս անցան», ու... լրիվ առողջացած՝ ոտքի ելավ: Հագնվեց, միասին ճաշեցինք եւ առավոտյան գնաց աշխատանքի: Այսպիսի հավատ ունի մեր Հովիկը, արձակագիր Հովիկ Վարդումյանը: Եվ ահա, երբ այս գրքի առաջին հրատարակությունը կարդաց, Արցախյան մի գեղեցիկ, խորհրդալի վկայություն էլ ինքը պատմեց եւ տեսնելով, որ ինձ համար նշանակալի վկայություն էր, խնամքով գրի առավ ու տվեց ինձ:

ԱՐՁԱԿԱԳԻՐ ՀՈՎԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1994 թվականի գարնանն էր, ավելի ճիշտ՝ ապրիլի վերջերը: Մեր վաշտը մարտեր էր մղում Մարտակերտի շրջանի Կարմրավան գյուղի մատույցներում: Կատաղի մարտերի եւ տեսական անձրեւների պատճառով գինվորները հոգնել ու անմխիթար դրություն մեջ էին: Այդ օրվա մարտն էլ ծանր ընթացավ եւ գիշերվա հրադադարից օգտվելով՝ բոլորս հանգստանում էինք: Ոմանք թաց խրամատներում մի կերպ հարմարվելով՝ արդեն ննջում էին: Ուշ գիշերին, սակայն, անբացատրելի մի հրաշք արթնացրեց բոլորին: Ես չէի էլ քնել, այլ՝ դիրքերով շրջում, գինվորների վիճակն էի ստուգում: Իմ կամքից անկախ, ասես մի անտես դրդումով, հայացքս ուղղեցի Մուավ սարի գագաթին: Նկատեցի, որ երկնքից պայծառ մի աստղ է իջնում: Աստղի լույսը շատ պայծառ էր, եւ ես զարմացած նայում էի, թե ինչ է լինելու: Աստղն իջավ, «նստեց» լեռան գագաթին: Ապա՝ զիզզազ հետագծով սկսեց սահել դեպի ստորոտ: Այնպիսի տպավորություն էր, ասես, լեռնային ոլորապտույտ ճանապարհով, լուսարձակները միացրած մեքենա էր վար իջնում: Ընթացող Լույսը լեռան լանջին կանգ առավ եւ հանկարծ վերածվեց մի գերհզոր լուսարձակի՝ տասնյակ կիլոմետրերով լուսավորելով ամբողջ ռազմաճակատի գիծը: Ասես ցերեկ լիներ: Զինվորները զարմանքի ու ցնծություն ազդակ բարձրացրին: Իրենց դիրքերից թուրքերը եւս աղաղակում էին: Ամենքս



էինք արդարեալ: Գերհզոր Լույսը 10-15 րոպե այգայես լուսավորեց, ապա լուսարձակներն ասես «անջատելով», կրկին պայծառ աստղի պես, եւ նույն հետագծով, որով իջել էր, սկսեց բարձրանալ Մռավ լեռան գագաթը: Մի պահ գագաթին կանգ առավ, ապա շարժվեց դեպի երկինք եւ մի աստղի պես սկսեց փայլել երկնքում:

Լույսի հրաշքին ականատես էին հազարավոր մարդիկ:

Այդ գիշեր եւ հետագա օրերին ոչ մի արտակարգ դեպք տեղի չունեցավ, բացի կնքված հրադադարից:

Հավելում.

Մենք Լույսի Հայտնությունն այս վկայության մեջ տեսնում ենք արդեն հոգնած ու չարչարված զինվորների համար Աստծո ուղարկած մխիթարությունն ու հույսը թե՛ Տիրոջից անտեսված չեք, շուտով ձեզ հանգիստ ու խաղաղություն կլինի, որ ապա արտահայտվել է հրադադարով: Նաեւ թե.

-Երկնքի Աստծո զորությունը անկանխատեսելիորեն մեծ է, հուսացեք նրա աշխարհ ուղարկած Լույսին, որ մեզ համար՝ Քրիստոսն է:

ՀԱՆԿԱՐԾ ԵՐԿՆՔԻՅ ՄԻ ԱՄՊ ԻՋԱՎ

Ասպրամ Մառուկյանին շատերս ենք ճանաչում, քաջ մի հայուհի, որ Պաշտպանության նախարարությունում աշխատելով Արցախյան պատերազմի օրերին եւ այսօր էլ հաճախ է լինում Արցախում եւ բազմաթիվ ոգեկոչ ունեցող հողվածների ու «Մոնթե» վավերական վկայություններ գրքի հեղինակն է: Այս վկայության ոսկին Ասպրամը պատմեց:

-Մարտունիի ռազմական ոստիկանության պետին՝ Ճարտարցի Հովիկին, որ Մոնթեի զինակիցն էր եղել, Դրախտիկ գյուղ հասնելու համար խնդրեցի ինձ ուղեկցող տալ: Տվեց: Երբ արդեն Դրախտիկ գյուղի մոտերքում էինք, երիտասարդ ուղեկիցս, ցույց տալով քար ու փշոտ բաց մի տարածություն, ասաց.

-Ազատամարտի օրերին այստեղ հրաշք եղավ, երկնքից ամպն իջավ եւ մեզ ուղեկցելով ազատեց սպանդից: Մենք թվով շատ քիչ էինք, մի խումբ միայն, հանկարծ պարզվեց, որ հայտնվել ենք թուրքական կանոնավոր բանակի առջև: Ամայի դաշտավայր էր: Բլուրր, որի հետեւում կարող էինք թաքնվել, բավականին հեռու էր: Երկար ժամանակ պետք չէր, որպեսզի հասկանայինք, թե մինչեւ վերջին մարդը ոչ թե պատվով զոհվելու, այլ անիմաստ ջարդվելու ենք: Հույսը միայն Աստված մնաց: Երկինքում, որ պարզ ու մաքուր էր, եւ ամպի մի ծվեն անգամ չկար, փոքրիկ մի ամպ առաջացավ եւ անսովոր

արագություններով, որ հատուկ չէր ամպերի դանդաղ ընթացքին, մանավանդ որ քամի էլ չկար, որ ամպ քշեր, սկսեց արագորեն դեպի մեր կողմն իջնել: Ամպը, հետզհետեւ ավելի ծավալվելով ու մեծանալով՝ եկավ իջավ մեր ու հակառակորդ բանակի միջեւ եւ մեզ ծածկող մի վարագույր դարձավ: Մեզ արդեն տեսնել չէին կարող: Ամպն ապա սկսեց դեպի բլուրն ընթանալ, որի հետեւում երազում էինք թաքնվել, ազատվել կոտորումից: Ամպի հովանու տակ մենք էլ սկսեցինք վազել դեպի բլուրը: Վերջապես հասանք ու թաքնվեցինք: Այդժամ ամպը մեզ թողեց ու կրկին երկինք բարձրանալով՝ անհետացավ: Կրկին երկինքը մաքուր էր, առանց ամպի մի ծվենի:

-Փառք քեզ, Աստված, ասացինք: Դու տեսար մեր անմխիթար վիճակը եւ ամոթով չթողեցիր մեզ:

Այս վկայությունը մեզ հիշեցնում է Աստծո խոստումը թե՛ երբ նեղության ժամիդ աղաղակես, քեզ պիտի ազատես: Իսկ Աստվածաշնչից տեղյակ ենք, որ Հիսուս հրեաներին անապատի միջով առաջնորդում էր՝ ցերեկը ամպի տեսքով, գիշերը՝ լույսի: Եվ Տիրոջ փառքը՝ Բանն Աստծո, Մովսեսին երեւում էր ամպի տեսքով, եւ Տերը Մովսեսի հետ խոսում էր ամպի միջից: Հովիկի պատմածը՝ լույսի, եւ Ասպրամի պատմածը ամպի մասին՝ հաստատում են Աստվածաշնչյան ճշմարտությունները:

Ամպի պատմությունն ինձ հիշեցրեց մի վկայություն էլ, որ մի հայ նախկին բանտարկյալ էր պատմել եւ մամուլն ու հեռուստացույցն արձագանքել էին:

ԽՍՀՄ-ի բանտերից մեկից, բանտ, որ անանցանելի ճահճով էր շրջափակված, մի խումբ բանտարկյալներ են փախչում: Ծներով նրանց հետապնդում են: ՈՒր որ է՝ հասնում են: Ինչ անեն: Ճահճի մտնեն՝ ամենքով էլ կույ կզնան: Հանկարծ մի ամպ է հայտնվում եւ խմբի մեջ բանական ըմբռնում առաջացնում, որ հետեւեն իրեն եւ առաջնորդում է ճահճի միակ նեղ արահետի միջով, որ արտաքուստ ամենեւին չէր երեւում: Խմբից ով կասկածում է ամպի բանական առաջնորդությանը եւ ոտքն այլ տեղ դնում՝ կույ է գնում ճահճին: Ովքեր վստահում են, որ ամպն Աստծուց էր ուղարկված, խոնարհ հետեւում եւ փրկվում են: Այս մարդկանց ճահճից դուրս բերելով ամպն անհետանում է: Հայ բանտարկյալը դառնում է խոր հավատացյալ: Տեղափոխվում Հայաստանի խուլ գյուղերից մեկը, ընտանիք է կազմում եւ որպես Քրիստոսի ոչխար, ապրում ըստ Աստծո Ավետարանի եւ ամենքին վկայում է Հիսուսով իր փրկության մասին: Ահա հանցավոր բանտարկյալը Տիրոջով փրկվեց ու դարձավ խոր հավատացյալ ու ճշմարիտ բարեպաշտ: Մի բան, որով բանտն ու օրենքը չէին կարող նրան հասունացնել: Իսկ նույն փրկությանը անշնորհակալ մարդիկ կան, որ հրեաների նման տարվում են միայն

արտաքին գործերով, գործեր միայն արտաքին փայլով, եւ որոնց միաբանութիւն է ոչխարի: ՈՒստի ոչ թե Օրենքն է փրկություն մարդուն, այլ՝ Կենդանի Աստված, Իր Քրիստոս Որդիով, «ՈւՄ հավատացողը, ում վրա հույս դնողը՝ հավիտյան չի ամաչելու եւ չի կորչելու»:

ՄՈՆԹԵԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Մոնթեի լուսավոր սերը կոչում էր ապաշխարության

Այս վկայությունը նույնպես Ասպրամ Մառուկյանի պատմածն է: «Մոնթե» գիրքը գրելու համար նա հանդիպեց եւ գրուցեց Մոնթեի ամենամոտ ընկերների հետ:

Աստվածարյալ գորավար էր Մոնթեն:

Թշնամու դեմ առյուծի նման պատերազմող մեր հերոսը սակայն արգելում էր անգամ որեւէ վայրի կենդանու սպանել, ասում էր՝ դիրքերում հանդիպած օձերին էլ մի սպանեք՝ Աստծո արարած են: Այսինքն՝ թուրքերն իրենց նենգությունը, օձերից էլ վատն են: Բնականաբար, մարդու սողուն տեսակն ավելի վտանգավոր է, քան իրական սողունը:

...Մոնթեն, երբ նոր էր հասել Արցախ, Մարտունու շրջան, առաջին գործն այն եղավ, որ իր լուսավոր միտք ու սրտով բարոյական կարգապահություն սկսեց սահմանել ոչ միայն գորամասում, այլ ողջ տարածաշրջանի բնակչության մեջ էլ: Ոմանք, որ բարձիթողի վարքի էին սովոր՝ առք ու վաճառք, ավազակություններ, միարան ընդվզեցին առաքինությամբ ապրելու Մոնթեի դրած կարգ ու կանոնի դեմ, նույնիսկ հարձակումից առաջ թափելով թշնամու դեմն առնելու համար զինտեխնիկայի՝ մեծ զժվարություններ գորավարի ձեռք բերած վառելանյութը, որպեսզի գորավարը պարտվեր, խայտառակվեր, հուսահատվեր, հեռանար եւ իրենց բարձիթողի վարքերը չշտկեր: Բայց գորավարի լուսավոր սերն ու ներումն, ի վերջո, ամենքին էլ հաղթեց:

Հերոսի գոհվելուց տարիներ էին անցել:

Նրա մոտ ընկերներից մեկը՝ Հովսեփ Հակոբյանը, գնում էր Մոնթեի աղբյուր: Աղբյուրը յուրօրինակ ուխտավայր էր Աստվածարյալ գորավարի մտերիմների համար: Ով հիշում-կարոտում էր նրան, գնում էր Մոնթեի աղբյուրը, ջուր խմում, նստում աղբյուրի մոտ, մտովի գրուցում գորավարի մեծ սրտի հետ, գորավորվում էր նրա կենդանի անտես ներկայությունից, իմաստուն սիրուց եւ մխիթարված վերագառնում էր: Հովսեփը դեռ աղբյուր չհասած՝ հանկարծ լացի ու աղերսական զղջման խոսքերի ձայներ լսեց: Ավելի մոտ գնաց, այնպես, որ չնկատվի: Եվ ահա, ով Աստծո սիրո փառք, հաղթանակ

գորավարի բանական սիրո եւ ներման իմաստության: Այս հավաքված տղերքը ոչ այլ որ էին, քան նրանք, ովքեր տարածաշրջանում զժվար դաստիարակողների համբավ ունեին եւ սկզբում խանգարում էին Մոնթեի գործին, նրա պարտվելը որոնում, չհասկանալով, որ Մոնթեի պարտությունը իրենց տարածաշրջանի պարտությունն էր նշանակում, իրենց պարտությունը եւ ոչ այլ մի բան: Սակայն Աստվածարյալ հերոսի դաստիարակության դպրոցում սրանք եւս մարդ էին կերտվել, մարդու ձեւ ու կերպ էին ստացել եւ եկել էին ապաշխարելու: Փանք Աստծո: Հերոսի կենացն էին խմում եւ լաց լինելով՝ զղջման խոսքեր ասում, Մոնթեի հոգուց ներում էին խնդրում ու կրկին լաց լինում: Եվ այն ներումից, որ զգում էին հերոսի կենդանի հոգու ներկայությունից, մխիթարվում եւ միմյանց մխիթարում էին:

Աստվածարյալ գորավարի մեծ սիրո հաղթանակներից մեկն էր կատարվում աղբյուրի մոտ: Եվ Աստված այդ աղբյուրը ուխտավայր էր դարձրել՝ որպես խորհրդանշան գորավարի կենդանի եւ կենսատու, անմահ սիրո եւ մեծ հոգու:

ԱՆԵՐԵՒՈՒՅԹ ԻՆՉ- ՈՐ ՄԵԿՆ ԱՐԹՆԱՅՆՈՒՄ Է...

Ատերազմ էր: Մեր պետականությունը նոր էր կազմավորվում: Բանակ դեռ չունեինք: Կովոդները կամավորներ էին: Նրանցից շատերը հենց աշխատանքի տեղից կամ միտինգից մեկնում էին ճակատ: Ոչ սննդամթերք ունեին, ոչ տաք շոր: Ճակատից մի քանիսը, երբ Երեւան են գալիս, հանդիպում են բանաստեղծուհի Մետաքսեին, նրանցից մեկը ցույց է տալիս ոտքի մատները, որ ցրտից սեւացել էին եւ ասում է.

-Եթե մի բան չանեք, մեր ազատամարտիկներից շատերը ցրտից հաշմ կդառնան:

Բանաստեղծուհին երազի մեջ անընդհատ տեսնում է ցրտից սեւացած ձեռքի, ոտքի մատներ: Ապա «աներեւոյթ ինչ» որ մեկն արթնացնում է՝ թե՛ այժմ որոշիր ինչ ես անում:

Բանաստեղծուհին, առանց Գրողների միության նախագահին զգուշացնելու, միտինգում Հայտարարություն է անում, որ ժողովուրդը տաք հագուստներ բերի Գրողների միություն: Հաջորդ օրն իսկ Գրողների տանն արդեն հարյուրավոր մայրեր



Մայր ամուր:

կային, իրենց հետ բերել էին տաք գուլպաներ, հագուստներ, ձեռնոցներ, աննդամթերք, որոնք Մետաքսեն ուղարկում է ճակատ: Այդպես, ամեն օր... Մետաքսեի հայտարարությունն արձագանք է գտնում ողջ Հայաստանով մեկ, հասնում անգամ արտերկիր:

Մեր քահանաներից Տեր Շահեն է մոտենում բանաստեղծուհուն եւ ասում.
-Ես շատ եմ ուզում ազատամարտին օգնել, բայց ցավոք, բացի իմ աղոթքից, այլ բանով չեմ կարող եւ մեկ էլ այսքան դրամ ունեմ եւ տալիս է 100 ռուբլի: Այս դրամն առիթ է դառնում, որ բանաստեղծուհին դրամ եւս հավաքի՝ դրանով օգնելով նախ վիրավորներին: Հարազատ մորից ավելի՝ ամենքին էր ջանում հասնել: Գիշեր-ցերեկ, ողջ պատերազմի ընթացքում: ՌՒՍՏԻ, ամենեւին պատահական չէր, որ օրեր անց բանաստեղծուհուն սկսեցին անվանել. «ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՏԻՐԱՄԱՅԻ»:

Յուրաքանչյուր օգնություն բերողի բանաստեղծուհին ստացական էր տալիս վերջում «ԱՍՏՎԱԾ ՁԵՁ ՕԳՆԱԿԱՆ»- մխիթարիչ, աղոթք- խոսքով:

Իսկ քահանայի օրհնյալ սիրով տված գումարը Մետաքսեի մայրական ձեռքի տակ մեծանում, հասնում է մեկ միլիոնի: Եվ բանաստեղծուհին այդ գումարը հանձնում է նոր կազմավորվող պետությունը... բանակի հոգսերն արդեն պետականորեն հոգալու համար:

Եվ Վազգեն Ջորավարը խիստ զգացված այդ ամենից՝ բանաստեղծուհուն շնորհակալություն է հայտնում ասելով.

-Մետաքսե, ինքզ էլ անհնար է, որ կարողանաս պատկերացնել, թե քո գործերով որքան օգուտ տվեցիր մեր պետությանը:

Անհնար է առանց հուզմունքի կարդալ Մետաքսեի բանաստեղծություններն ուղղված նահատակներին.

«Ձեզ համար տաք գուլպաներ եմ պահել»:

Եվ իր խոսքն ավարտում «Հիսուսի խաչի լույսով»:

Լույս, որ թող տարածվի ողջ Հայաստանի ու Արցախի վրա: Ամեն.
Հավելում.

Գործեր կան, որ խոստովանելը լավ է, եթե կարողանում ենք խոստովանել: Այս վկայության նախօրինակը, որ չորս անգամ ավելի երկար էր, տվեցի, որ Մետաքսեն ծանոթանա: Ասաց՝ այնպես ազդու չես գրել, ինչպես այլոց վկայությունները: Եվ ես հասկացա բանն ինչու՞մն էր: Հարկ էր երեսույթներն ավելի խիտ ներկայացնել: Չէ որ կենդանի գործերն իրենք իրենց մասին ավելի շատ են խոսում, քան շատ ու շատ բառեր:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԵՐԸ ՎԱՋԳԵՆԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՆՃ ԱՋԱՏԵՅ ՏՀԱՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ

Արցախյան շարժումը նոր էր սկսվել: Ես «ՊԻՈՆՏԵՐ» (այժմյան «ԱՂԲՅՈՒՐ») մանկապատանեկան ամսագրում էի աշխատում, որ գտնվում է Երևանի Գրիգոր Լուսավորիչ փողոցի 15 հասցեում: Պոեզիայի եւ արվեստի բաժնի վարիչն էի, բայց աշխատածու տասներկու տարիների ընթացքում, կարճ ժամանակով, երբեմն նաեւ արձակի եւ երբեմն դպրոցական բաժնի աշխատանքներն էլ էի համատեղում: Այդ օրերին նաեւ դպրոցական բաժնի աշխատանքներն էի տնօրինում: Մեր հարկում էր եւ «Գարուն» ամսագիրը: Վազգենն ամսագրի արձակի բաժնի վարիչն էր:

Լսել էի, որ «Գրողների տանը» Սամվել Շահմուրադյանի սենյակում հայերեն գրքեր են հավաքում՝ Արցախ ուղարկելու համար: Սամվելի հետ հեռախոսով խոսեցի, ուրախացավ, երբ ասացի, թե դպրոցների միջոցով կարող եմ գրքեր հավաքել: Եվ արդեն մի շաբաթ դպրոցներ զանգել էի, սիրով ընդառաջել էին: Դպրոցներից մեկն ընդդիմացավ, թե՛ միայն մեր Ժողկրթբաժնի վարիչի թույլտվությամբ: Իսկ վարիչն արդեն լսել եւ արգելել էր, որ աշակերտները գրքեր հավաքեն: Զանգեցի Ժողկրթբաժնի վարիչին: Սա ծայրահեղ կոմունիստ դուրս եկավ եւ սկսեց վիճել, սպառնալ, թե՛ ինձ դատի կտա, միլիցիա կղիմի, թե՛ ինչ իրավունքով եմ այդպիսի պատասխանատու պաշտոնում աշխատում, պիոներներին շեղում եմ նացիոնալիզմով եւ նման անմիտ բաներ: Զանգեց-բողոքեց անգամ մեր խմբագրին՝ նշանավոր գրող Պերճ Զեյթունյանին, որ այդ անհավատ կոմունիստին ասել էր, թե՛ Մաքսիմի արարքի մեջ դատապարտելի բան չեմ գտնում, այլ գովելի, ոչ նկատողություն կտամ եւ ոչ էլ կհեռացնեմ աշխատանքից, իսկ եթե նրա հետ անձնական խնդիր ունեք՝ իրեն էլ դիմեք: Եվ այս Ժողկրթբաժնի վարիչից -տաս րոպեն մեկ ինձ զանգում էր, սպառնում, որովհետեւ ես քաղաքավարությամբ հասկացրել էի, որ հային հայի օգնությունն արգելելը անասնական գաղափարախոսություն է: Եվ նա կատաղել էր, որ. «Կոմունիստական գաղափարախոսությունն եմ անասնական անվանում»:

Մի քանի նախադասություն փոխանակելուց հետո խոսափողը դնում էի եւ նա նորից էր զանգում, որովհետեւ յուրաքանչյուր իմ պատասխանից ավելի էր կատաղում: Այդ օրերին ես ամեն օր Ավետարան եւ Նարեկ էի կարդում, բնականաբար, եւ իմ անսովոր պատասխանները մարդը որպես խոր վիրավորանքներ էր ընդունում: Ինքն իրեն իսպառ կորցրել էր: Հեռախոսային այս պատերազմը մոտ երեք ժամ տեւեց, մինչեւ անհեթեթ այդ վիճակից հոգնած

ու մտամտոր, բավականաչափ ընկճված, գնացի «Գարուն» պոեզիայի ու արձակի բաժնի սենյակը, ուր Ղուկաս Սիրունյանն ու Վազգեն Սարգսյանն էին: Հակոբ Մովսեսն էլ էր այնտեղ, որ այդ օրերին «Գարունի» պատ. քարտուղարն էր: Վազգենի գրասեղանը դռան կողքին էր: Ես չէի էլ կարծում, որ Վազգենը Արցախյան շարժման հետ որեւէ կապ ունենար եւ Հակոբին ու Ղուկասին պատմեցի գլխիս եկածը: Զգիտեին՝ ինչ ասեին: Մի քանի մխիթարական խոսք լսելով ետ դարձաւ: Վազգենի սեղանին հասնելիս, ապշեցի. Վազգենի հայացքն ասես լուսարձակ էր դարձել: Լսում էր մեր խոսակցությունն ու լուռ էր ոչ մի բառով չէր արձագանքում: Հայացքի լույսն այնքան անսովոր էր, որ մտածեցի՝ Տեր Աստված, Վազգենը բանաստեղծ է եղել, իսկ ես կարծել եմ միայն արձակագիր է: Ես բանաստեղծների մեջ էի նման լույս տեսնում, որ Վազգենի մեջ էլ ահա կար՝ անսովոր մի գորուծյամբ: Իսկ երբ նրա սեղանի կողքից էի անցնում, ասաց. «Մաքսիմ, եթե մեկ էլ գանգի ինձ կանչիր»: Ցած ձայնով ասաց, ասես, որ Հակոբն ու Ղուկասը չլսեին: Դուրս եկա սենյակից եւ մտքիս մեջ ասացի՝ ինքս արդեն տհաճ պատմության մեջ եմ ընկել, եղբայր, քեզ ինչու կանչեմ, քեզ համար էլ խնդիրներ առաջանան: Սակայն Վազգենը զգաց, որ իմ բնավորության տեր մարդը կղճվարանա օգնության դիմել, բայց միայնակ էլ կարող է մեծապես տուժել եւ... ինքն եկավ:

Նոր էի իմ սենյակ մտել, երբ հեռախոսի գանգը հնչեց եւ նույն պահին էլ Վազգենը ներս մտավ: Լսափողը վերցրի, ասացի.

-Վազգեն, կատաղած կոմունիստն է:

-Տո՛ւր ես խոսեմ, -ասաց: Եվ աչքերը կրկին լույս էին արձակում: Լույս, որ քիչ անց փոխվեց շանթի: Որովհետեւ երբ լսափողը վերցրեց սենյակումս մի ահռելի ամպրոպ պայթեց. Վազգենի խոսքը միայն խոսք չէր, այլ կենդանի գորություն, որ ասես կարող էր բանակներ շարժել: Ասես մեր պատմության մեծերը միագումարված լինեին նրա ձայնի մեջ: Վազգենը որոտում էր, ոչ թե խոսում: Այնքան վեհ էր նրա բացատրական որոտումները:

Եվ Փտած խորհուրդների դեմ իր ահռելի որոտների խոսքը վերջացրեց այսպես.

-Եթե շարունակես գրքեր հավաքելն արգելել կամ նորից զանգահարել այս մարդուն, կզանք շավարդ կհաննե՞ք՝ գլխիդ կհագցնենք:

Ես ապշել էի: Որովհետեւ դեռ խորհրդային տարիներն էին, եւ ես դեռ զգվախառն համակերպությունը ստիպված քաղաքավարի էի իշխողների հանդեպ, այլ մի ելք չէի էլ տեսնում: Բայց նման սնոտի քաղաքավարությունս ահա անգոր էր փոքր- ինչ արժանապատվորեն գրքեր հավաքելու սուրբ

գործին ծառայեցնել:

Սակայն Վազգենի հզոր ամպրոպն ուրիշ էր: Բանական երկրաշարժ էր: Ահռելի: Այնպիսին, որ մտածեցի, թե երեւի ժողկրթբաժվարը տակը մի լավ թրջած պիտի լիներ:

Եվ ամենազարմանալիս Վազգենի խոսքի ավարտն էր: Որովհետեւ երբ լսափողը դրեց՝ աչքերի մեջ շանթերն անհետացան եւ կրկին սկսեցին լույս արձակել: Հետո հասկացա, որ այդ լույսը նրա «Ընկերոջն իր անձի պես սիրելու, հայրենին իր անձի պես սիրելու» քրիստոնեական լույս էր: Զորեղի լույս էր: Հովանավորողի լույս էր: Մեծի լույս: Այդ լույսն ասում էր. ինչ լավ է, որ գրքեր ես հավաքում Արցախի համար, եղբայր: Մշակույթի ճակատը խիստ կարեւոր է: Եվ Վազգենի հայացքի պայծառ այդ լույսը տեսնելով կրկին մտածեցի. -Վազգենը նաեւ բանաստեղծ է եղել, Տեր, իսկ ես կարծել եմ, թե միայն արձակագիր է:

-Էլ չի զանգահարի,- վստահ ասաց Վազգենը,- գրքերի գործը կարող ես հանգիստ շարունակել: Եվ ժպտալով, գոհ, որ ազատեց ինձ վատթար այդ փորձությունից, ուրախ ժպիտով գնաց իրենց խմբագրություն:

ԵՒ ԱՍՏՎԱԾ ԶՈՐԱՎԱՐԻ ՄՈՏ ՈՒՂԱՐԿԵՑ... ԵՐԵՒԱՅԻ

Վկայության այս ոսկին ինձ պատմեց Խաչիկ Սարգսյանը: Ասաց, որ Ռուբեն Գեւորգյանի «Դատապարտված դավիսիներ» գրքում է կարդացել: Խնդրեցի՞ գիրքը բերեց: Վկայությունն իր բնականությամբ հոգեւոր էր, եւ մենք, բոտ Աստվածաշնչյան ըմբռնման, այդ բնականության մեջ էլ ներկայացնում ենք: Վկայությունը Վազգեն Սարգսյանն ինքն էր պատմել Ռուբենին. «... 1992թվականի...օգոստոսի ութին ընկավ Արծվաշենը: Նա ընկավ, եւ առօրյա մամուլն ու կուսակցական բամբասանքները հարձակվեցին Վազգենի վրա...» - գրում է Գեւորգյանը:



Թշնամու ուժերը խիստ գերակշիռ էին: Ոչ ոք հաշվի չառավ, չզնահատեց, որ Վազգենն այդ իմանալով ժամանակին «Հասցրեց դուրս բերել խաղաղ բնակչությանը, փրկել անողորմ կոտորածից եւ գերության նվաստացումից»:

Նույնիսկ բամբասում էին թե՛ Արծվաշներ վաճառեցին թուրքին... Վիրավորանքը ծանր էր, անտանելի...: Վազգենը փակվել էր իր տան սենյակում, առջևը դրել նահատակված ընկերների լուսանկարները եւ... ատրճանակը: Հասարակության առաջ «Միթե՞ միայն զոհվելով են արդարանում...»: Բանն այն է, որ եթե ինքն Արծվաշնում ընկներ, չէին էլ բամբասի: Բայց եթե ընկներ, ապա ո՞վ պիտի խաղաղ բնակչությանը փրկեր կոտորածից ու գերության նվաստացումից: ՈՒրեմն, երիցս Փառք Աստծո, որ չէր ընկել: Արծվաշների բնակչության կյանքը փրկելու մեջ էլ հաղթանակ կար, որ ոչ միայն չեն արժեքավորում, այլ շարունակ պնդում են, թե Արծվաշներ ծախեցին: Ինքը՝ Վազգենը, թուրքին որեւէ բան պիջի, զարհուրելի է անգամ մտածելը: Իսկ ահա... չարախնդում են...: Դե, ուրեմն. եթե Արծվաշների պարտության դիմաց իր ընկնելն է արդարցման բանալին. թող այդ չարախոսությունների առաջն առնողն իր մահը լինի...

Եվ անտանելիորեն վիրավորված՝ Զորավարը ատրճանակը դնում է քունքին, որովհետեւ հասարակության առաջ, այնուամենայնիվ, խոստացել էր, թե Արծվաշներ կպահի: Իսկ ինքն արժիվ տեսակ է, իր խոսքին տեր: Հավատում էին: Չի՞ կարողացել կյանքն է դնում: Էլ բողոքավորներ չեն լինի: Ստացվում է, որ իր արյամբ է պարտության արդարացումը... այդ են ուզում, խնդրեմ...

Բայց Աստված չկամեցավ, որ իր սիրելիներից մեկն ինքնասպան լինի: Եվ վկայությունն այն մասին է, թե Աստված ինչպես կանխեց զորավոր իր արժիվներից մեկին, որն ահա ինքնասպան լինելու որոշում էր ընդունել...

Հիսուս երեխաների մասին ասում է. «Ուշադիր եղեք, որ այս փոքրիկներից մեկին չարհամարհեք. ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն իմ Հոր, որ երկնքում է. որովհետեւ մարդու Որդին եկավ փրկելու կորածը»: Մատթեոսի Ավետարան:

Եվ Աստված Զորավարի մոտ է ուղարկում երեխայի, որին Վազգենը չէր կարող ընդդիմանալ. երեխայի հրեշտակն ահա Աստծուց հրաման առնելով երեխային առաջնորդում է Զորավարի մոտ:

Եվ իզուր չէ՞ Ռուբենը խոստովանում, թե այս վկայությունը գրի առնելիս. «Գրիչս դողում էր»: Ճշմարիտ. ինքս էլ կարդալիս նույն սրբազան դողն ունեցա:

«Դուան բռնակը ինչ՝ որ մեկը չխշխկացնում էր: Ասես արթնացած՝ նա նորից սեղանին դրեց կրակելու պատրաստ ատրճանակը: Հետո լավեց

դռանը խփվող թույլ քացիների ձայն: Եղբոր որդին էր, նրա փոքրիկ տղան, ում ինքը շատ էր սիրում: «Հոպար,- կանչում էր,- հոպար»: Նա ասես ցնցվեց երեխայի ձայնից, մի երկար ժամանակի չափ թվաց այնքանը, երբ դարակը դրեց ատրճանակը եւ մոտենալով դռանը՝ բացեց ու գրկեց տղային: Աչքերից արցունքի երկու խոշոր կաթիլ գլորվեցին այտերի վրա:

Տղան ասաց.

«Էս ումից ես վախենում, որ դուռդ փակել ես, հոպար»:

Նա տղային լուռ տարավ սեղանի մոտ, կանգնեցրեց սեղանին ու նրա դեմքն առնելով ափերի մեջ փորձեց խոսել: Բայց երեխան չէր հանդարտվում.

«Բա էդ ի՞նչ արցունք է, հոպար,- ասաց ու փոքրիկ մատը տարավ գորավարի այտից գլորվող արցունքին:

Զորավարը համբուրեց տղային, համբուրեց ու խեղդվում էր հուզմունքից:

«Ուրախության լաց է, տղաս, հաղթանակի լաց է, որովհետեւ դու հաղթեցիր...»

...Ի վերջո, մտածեց զորավարը. «Միայն Արծվաշնով չի որոշվում ո՞չ իր եւ ո՞չ էլ ազատագրական պայքարի ճակատագիրը»:

Իսկ այս վկայությունն ավարտենք մեր Տիրոջ խոսքով.

«Եվ մի մանուկ վերցնելով կանգնեցրեց նրանց մեջ և նրան իր գիրկն առնելով՝ նրանց ասաց. «Ով այսպիսի մանուկներից մեկին ընդունում է իմ անունով, ինձ է ընդունում, և ով ինձ է ընդունում, ոչ թե ինձ է ընդունում, այլ նրան, ով ինձ ուղարկեց»: Մարկոսի Ավետարան:

Զորավարը մանկան միջոցով ճանաչեց ու վստահեց Աստծո կամքին: Օրհնյալ է Աստված:

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՆԵԱՆԸ

Մրցախյան ազատամարտի վարագույրից այն կողմ տեղի ունեցած, մեր հասարակությանը քիչ հայտնի մի քանի դրվագների էլ ենք ծանոթանում Ռ. Գեւորգյանի «Դատապարտված դափնիներ» գրքում: Վավերագիր հստակությամբ Հայոց նախագահի, Հայոց սպարապետի հետ ամիջական շփումներով ի հայտ է գալիս մեկ այլ պատկեր, որ միայն գիտուններին էր հայտնի ու խոսվում է ժողովրդի մեջ:

Քչերն են տեղյակ, որ Ռուբեն Գեւորգյանը Արցախյան ազատամարտից հետո Երեւանի իր պարած թաղամասում եկեղեցի կառուցեց: Եկեղեցի կառուցելու նախադրյալներից մեկն էլ, կարծում ենք նաեւ այս վկայությունն է:

Այս վկայության պատմողը Ռ. Գեւորգյանի մերձավորներից Ռուբեն

Հակոբյանն է, որ ճակատամարտի ժամանակ մեծ դժվարություններ հաղթահարելով մոտենում է մեր եկեղեցիներից մեկին, ուր դիրքավորվել էին ազերիները, և Հակոբյանը գերադասում է վիրավորվել կամ զոհվել, քան...եկեղեցու վրա նոնակ նետելով իր անձն ազատել, որովհետև «Եկեղեցին... մեր հաղթանակի նշանն է»,- ասում է նա:

-Այ ախպեր,- ասացի զարմացած,- մոտդ էդքան գրանատ, ու ոչ մեկը գոնե քեզ պաշտպանելու համար էլ չես օգտագործել:

-Ո՛հ,- ասաց թույլ, գունատ ժպիտով:- Եկեղեցու վրա գրանատ գցել: Հետո աչքով արեց.

-Եթե ողջ մնաս, չմոռանաս երեխեքիս կնքել, քավոր...

.... -Զէր կարելի, մեծ ախպեր... շատ մեծ չարչարանքով են մեր պապերը կառուցել այդ եկեղեցին, և հիմա նա ասես աչքի փուշ է ազերիների համար, իսկ մեզ համար մեր հաղթանակի նշանն է, ես ո՞նց պայթեցնեի: Մեր կոփվր կանցնի, մենք էլ կանցնենք, բայց նա /եկեղեցին/ մեր հաղթանակի նշանն է, նա միշտ մնալու է...

...Խաչի ու սրի միասնությունը հավատալ կյանքը նվիրելով ամեն մեկիս տրված չէ: Թերթերում կարգայինք, գուցե դժվար հավատայինք, մտածելինք՝ հեղինակն է որպես խորհրդանիշ ներկայացնում, կատարողը թերեւս այդպես չի մտածել ու ապրել, կամ ժամանակ չի ունեցել այդպես մտածելու ու ապրելու: Հուզմունքով կարկամած համբուրեցի ընկերոջս, եղբորս, հարազատիս ու ինձ համար իմաստունիս: ...Նա ասես իմ աչքի առաջ վերափոխվեց իմ ճանաչած երկրային Ռուբենից ու դարձավ հոգուս մեջ ապրող ոգեղեն ու հարազատ տեսիլք, ում հետ մենանում ես առանց բառի... Բայց դուռը բացվեց, ու ներս մտավ Վազգենը...

Խոսքն անշուշտ մեր սպարապետի մասին է, ում վերջին հրաժեշտն այս աշխարհում տալով մահացել է Ռ. Հակոբյանը:



ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ ՏԻԿՆԱՆՅ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՖԼՈՐԱ ՇԱՀԳՈՒԼՅԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ա/ ԵՌԵՒԻ ՀՅՈՒՐԱՆՈՅՈՒՄ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ԱՅՅԵԼԵՑ ՀՈԳԵԻՈՐ ՄԻ ԱՅՐ



2005 թվականի ամռանն էր: Ֆլորան Արցախ է մեկնում աղանդների դեմ Արցախի տիկնանց օգնությամբ քարոզելու և որդուն, որ Արցախում էր ծառայում, տեսնելու նպատակով: Որոշ ժամանակ հարկ էր, որ ապրեր Արցախում: Սրբազան Հայրը՝ Պարգե արքեպիսկոպոսը, տիկնոջը տեղավորում է Շուշիի թեմի հյուրանոցում:

-Ողջ հյուրանոցում մենակ էի, ուրիշ բնակիչներ չկային,- պատմում է քույր Ֆլորան: Եվ մի օր, հյուրասենյակում նստած գրքեր էի թերթում, հարցեր գրի առնում, նախապատրաստվելով տիկնանց հետ առաջիկա հանդիպմանը, երբ հանկարծ ննջասենյակիս դուռը բացվեց և վե՛հ ու ազնվական դիմագծերով, մինչեւ հատակն հասնող սքեմ հագած բարձրահասակ մի քահանա դուրս եկավ: Ասես սահելով գնար, նուրբ, էլաստիկ ընթացքով, ասես քայլելու ծանրություն կամ առաջ գնալու համար ուժ գործադրելու պետք չունենար: Գնաց դեպի դուռն ու դուրս եկավ: Ահա կենդանի տեսիլքի արժանացրեց ինձ Աստված: Մինչդեռ գոհանում էի այդ տեսիլքի համար, այդժամ, մի պահ թվաց, թե մարդ կա հյուրասրահում, որ չի երևում: Վեր ելա, շուրջս նայեցի: Ոչ ոք չկար: Եվ կենդանի մի գորություն մտավ ա՞յ ձեռքիս մեջ և իմ ձեռքով գրել տվեց բաներ, որ աղանդների դեմ Արցախում իմ կատարած գործի համար քաջալերանք էր: Գրությունից մի բան էլ հասկացա, որ իմ մեջ կարելուվում էր իմ Հոգեկիր լինելը, այն որ խոսելիս բարի, զրական դաշտ էր ստեղծվում իմ շուրջ և քիչ խոսքերով էլ այն փոխանցվում լսողներին, հույս տալիս ու քաջալերում նրանց: Այս գրությունն ասես ինձ ուղղված ոգեւորող մի նամակ լինե՛ր իմ իսկ ձեռքով: Իսկ վերջում ձեռքս ստորագրեց Սահակ Պարթեւ:

-Ես որքան գնացել եմ Արցախ, միշտ էլ լցվել եմ հոգեւոր բարեբար գորութեամբ, որն ակնհայտ արտահայտվել է Հայաստանում կատարած իմ աշխատանքներում էլ: Ասես ծարավ մեկը աղբյուր գնա, ջուր խմի եւ ավելի ժրաջան ու կյանքի սիրով լեցուն դառնա- Վկայեց տիկին Ֆլորան: -Մինչ այդ, տարիներ ի վեր, երբ Արցախում դեռ չէի եղել, երազում, տեսիլքի ձեւով տեսնում էի բնութեան զարմանալի տեսարաններ՝ դաշտեր ու այգիներ, կարծում էի թե Աստված ինձ դրախտն է ցույց տալիս: Սակայն, երբ Արցախում եղա եւ, բնութեան ճիշտ նույն տեսարաններն այնտեղ տեսա, հասկացա, որ տեսիլքի մեջ Արցախն էի տեսնում, Արցախից առնում դրախտի համն ու հոտը:

Վստահ ենք, ով նվիրվում է Աստծուն եւ որքան մաքրասիրտ է, նամակ է ստանում Աստծուց: Ֆլորայի այս վկայությունն ամենքիս է հուշում, որ Աստծո տված մեր շնորհները միմյանց ծառայեցնելու համար է, ոչ թե պահելու, վախով թաքցնելու, դրանց հետ ծուլութեամբ, քնեածութեամբ վերաբերվելու, այլ միմյանց համար գործադրելով մեր հայրենիքի հոգեւոր առողջացման, հոգեւոր շենացման համար են: Ի վերջո, հոգեւոր շնորհներ ծառայեցնելով մերայիններին՝ ինքներս էլ ենք ընթացքում առավել կերտվում եւ առավել ամբողջանում, առավել պայծառանում: Նաեւ հիշեցնում է հավատի ու արթնութեան այն խորհուրդը, որ մենք մենակ չենք, այլ մեզ քաջալերող եւ կենդանի են մեր ազգի սոսկ մարմնապես մահացած նշանավոր մարդիկ եւս: Ապրենք այնպես, որ նրանց քաջալերանքն ու գովեստը լսենք, որպեսզի հետո չամաչենք: Եվ քանի քանիսս եւ քանի-քանի նամակներ կարող ենք ստանալ մեր նշանավոր եւ թանկ մեծերից, եթե ապրենք արժանավայել, ըստ Ավետարանի:

Բանաստեղծ Ռազմիկ Դավոյանն այսպիսի խոսքեր ունի. «Եթե ճանապարհիդ հանդիպես նախապապերիդ, ուրեմն ճիշտ ճանապարհով ես գնում»: Բանաստեղծի շատ բանաստեղծություններ բանաստեղծություն լինելուց ելնում են վեր եւ հայտնատեսություն նշանակություն ստանում, դրանով իսկ դառնալով Աստվածաշնչյան սնունդ: Քույր Ֆլորան այդպիսի հանդիպում էր ունեցել:

Հաջորդ վկայությունը, որ էլի Ֆլորան պատմեց, կրկին անդենայինի առնչություն է, որ խոսում է Աստծո համար անկարելի բան չլինելու եւ մարդու եւ բնութեան տարրերի հանդեպ Աստծո Տեր եւ իշխող լինելու մասին:

Չլինենք թերահավատ: Հիսուս մեռելների կենդանությունը հավատացողի եւ անհավատի համար օրինակ բերեց ասելով. «Եթե մեռյալ մեկն էլ գա ու վկայի հավատացողը կհավատա, անհավատն էլի չի հավատա»: Բնականաբար,

մենք այս գիրքը գրում ենք հավատացողների համար: Որովհետեւ անհավատության մարդն իսկ հանցանք է նախ ինքն իր դեմ:

բ/ ԵՐԵՒՈՒՄՆԵՐ ԱՆԴԵՆԱՅԻՆԻՑ

Անդենային երեւումներից պիտի չվախենալ եւ ոչ էլ դրանք առասպել դիտել: Եվ եթե մենք հավատարմում ենք Քրիստոսին եւ մեր եկեղեցու իմաստուն խորհրդաբանությունը, ապա անպատրաստ չենք մնում, եւ մեզ եղած երեւումները դառնում են իրողություններ, եւ օգնում են ավելի կատարյալ ապրել, խուսափել մանավանդ հոգեւոր սխալներից:

Այս վկայությունը եւս քույր Ֆլորան է պատմել, իսկ նրան՝ Արցախում ծառայած նրա որդին՝ Արթուրը: Ցավոք, չկարողացանք անուններ, ժամանակ ու բնակավայր ճշտել, այդ պատճառով սկզբում էլինք ուզում գրքում ներառել, բայց ավելի ճիշտ գտանք տպագրել, արձագանքողներ կլինեին, եւ այդպես ավելի դյուրին կլինեք անուններ ճշգրտելը: Իսկ եթե չճշգրտվի էլ, հոգ չէ, քանի որ ողջ աշխարհում շրջող պատմություն է եւ ոչ անհիմն:

Անձրեւոտ ու ցուրտ մի օր, մեր բանակի սպաներից մեկը մեքենայով ընթանալիս, ճանապարհին տեսնում է մի կնոջ՝ մանկանը գրկին: Արցախում սովորյալ կա, ճանապարհին մարդ հանդիպելիս, վարորդներն իրենք են կանգնում եւ իրենց ծառայությունն առաջարկում: Սպան այդպես էլ անում է: Հետաքրքրվում, թե ո՞ր է կամենում կինը գնալ: Մոտակա բնակավայր է ահա մեքենան սլանում: Սպան տեսնելով, որ կինը անձրեւից թրջված, մրսում է ու զողում, հանում է իր պիջակն ու ասում.

-Քույր, վրադ գցիր, կտաքանաս:

Կինը սակայն պիջակը վերցնելով՝ երեխային է փաթաթում:

Հասնելով մի տան, կինը խնդրում է, որ սպան պահի մեքենան, արդեն տեղ են հասել:

Իջնում են, եւ սպան շարունակում է իր ճանապարհը: Եվ հանկարծ տեսնում է, որ պիջակը մոռացավ վերցնել: Ետ է վերադառնում, տան դուռը ծեծում: Մի ծեր կին է դուրս գալիս:

-Պիջակս,- ասում է սպան,- Ձեր աղջկա մոտ մնաց, խնդրում եմ, տվեք:

-Ինչ աղջիկ,- զարմանում է ծեր կինը:

Սպան պատմում է եւ նկարագրում մորն ու մանկանը:

-Իմ դուստրն է,- ասում է ծեր կինը,- երեխան էլ, ինքն էլ մահացել են:

Սպան ականջներին դժվարանում է հավատալ եւ խնդրում մոր եւ մանկան

գերեզմանը ցույց տալ: Գնում են գերեզմանոց: Սպայի պիջակը գերեզմանի վրա էր:

Ավետարանից հիշենք, որ Տեր Հիսուսի հարուխյան ժամանակ շատերն հարուխյուն առան եւ մտնելով քաղաք՝ երեւացին իրենց ծանոթ մարդկանց՝ այդ երեւումներով հաստատելով այն ամենը, որ Աստծո Որդին էր ասել: Հայտնի է, որ նման երեւումները պատմվել են ժողովրդի մեջ, որպես ուսուցում այնպիսիներով հոգիների կենդանութեան մասին, որ այս կյանքում մարդիկ Հավիտենութեան սիրտ ետեւից գնան, չզայլանան:

Հարուխյան եւ Համբարձման տոները մեզ հոգեւոր երկնային ոլորտի շատ խորհուրդներ են ուսուցանում: Օրինակ քրիստոնյա ննջեցյալների քառասունքը հիշատակելու խորհուրդը: Այն, որ քրիստոնյա ննջեցյալի հոգին քառասուն օր շրջում է իր ծանոթ վայրերում, մերձավորների շրջանում, ինչպես Հիսուս շրջեց, ապա Համբարձում է ունենում Քրիստոսի մոտ: Եվ նրանցից առավել նախախնամական հասունութեան հոգիները Հիսուսի ներկայութեանն ունենալով՝ երբեմն երեւում են իրենց մերձավորներին: Իհարկե դրանք շատ փոքր երեւումներ են եւ ոչ թե Տիրոջ երեւումների նման կատարյալ, սակայն Քրիստոսի տված խոստման եւ սուրբ սիրտ հաղթանակի վկայութիւններ են:

Ինձ արձակագիր Վալտեր Արամյանը պատմել է իր եղբոր, ճանաչված գրող Ռաֆայել Արամյանի մահից հետո նրա երեւման մասին: Ռաֆիկի մասին պատմում էին, որ առավոտյան տնից դուրս էր գալիս ուրիշների գործերն ու հոգսերն հոգալու, անգամ նրանց, որոնց առաջին անգամ էր տեսնում:

Ռաֆիկը նախապես տեսիլքով խաղաղեցրել է հարազատներին, որպեսզի իր երեւումից չվախենան, ասել է, որ պահարանում, շորերի մեջ կոնյակ ունի թաքցրած, դնեն խոհանոցի սեղանին, ուզում է գալ, ճաշակել եւ որպես վկայութիւն, բաժակն էլ իր հետ տանելու է: Ապա եկել է փակ դռների միջով եւ կոնյակ է ճաշակել ու հեռացել... բաժակն էլ տանելով, որ տնեցիների համար լինի վկայութիւն: -Այդ օրվանից,- պատմում էր Վալտերը,- մեր տանը հավատի խորհրդավոր պաշտամունք է տիրում: Երբեմն անգամ շշուկով էին միմյանց հետ խոսում:

Մեկ վկայութիւն եւս բերենք մարդկանց բարեբարոց, մաքուր հոգիների մարդկանց երեւալու մասին: Ծանաչված գեղանկարիչ Բորիս Եղիազարյանի դստեր մասին է այս վկայութիւնը: Լուսինեն ինքը եւս նկարում էր, նրա նամակները իր ամուսնուն ուղղված նման էին «Երգ երգոցի»: Դրանցից մի քանիսից հատվածներ կարդաց նրա հորաքույրը Գայանեն: Աստվածաշնչ-

յան մեջըրեւումներով եւ հավատը որպես սեր եւ սերն Աստված խոր ըմբռնումով էին: Եվ նամակների այդ խոսքերը, Աստծո Սերը դեռուտի կինը կյանքի էր վերածում. նա հոր հետ միասին ցուցահանդեսներ էր բացում աղքատներին օգնելու, չքավոր հիվանդների համար բժշկումներ կազմակերպելու նպատակով: Երբ Ավտովթարից զոհվեց, առաջիկայում հոր հետ նախատեսել էին աղքատներին օգնելու համար ցուցահանդես բացել: Հայրը միայնակ բացեց ցուցահանդեսը եւ... ցուցասրահում տեսավ դստերը... Լուսինեին: Ակնհայտ երեւաց, լույսերի մեջ, հայրը սրահով վազեց դեպի դուստրը, որ... աներեւոյթ եղավ: Ո՞չ աշուն էր: Ընկերուհին խնձորենու ծառի տակ, երբ մի շարք անգամներ աղոթեց Լուսինեի հոգու համար, մի առավոտ արթնացավ, տեսավ, որ խնձորենին ծաղկել է, միայն այդ խնձորենին:


Ինչքան որ Տիրոջ սիրով ու նրա նման մարդասեր ենք ապրում, Տիրոջ հետ մահից այն կողմ կատարված խորհուրդները մեզ հետ էլ են կատարվում: Տա Աստված, որ նման մարդասիրական վկայութիւնները մեզ հետու պահեն գայլային աշխարհին նմանվելուց, որ մահից հետո դրվում է դաժան դատաստանի տակ, այլ, տա՛ Աստված, լինենք մաքուր, խնկաբույր հոգիներ մարդասեր Աստծուն սիրելիներ:

Գ/ ԱՐԾԱԹՅԱ ԽԱՉԻ ՍՊԱՍՈՒՄ ԷՒՆ ՆԱՆԻ ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Հայ եկեղեցասիրաց տիկնանց պատմամշակութային միութեան նախագահ Ֆլորա Շահգուլյանի եղբայրը՝ Դավիթն, արծաթագործ էր եւ յոթ տասնյակ խաչ պատրաստեց: Ֆլորան Արցախում մոտ 60 արծաթյա խաչեր նվիրեց զինվորներին՝ մի քանիսը պահելով, որպեսզի ետդարձին, եթե զինվոր պատահի նրանց էլ նվեր տա:

Արցախից Հայաստան գալիս ավտոբուսը դադար էր առնում Սյունիքի մարզում, որպեսզի թե վարորդը, թե ուղեւորները հանգստանային: Մի քանի անգամ Արցախ գնալ գալով, Սյունիքի մարզում դադարները նույն խանութի մոտ էին, որի տիրուհու հետ Ֆլորան արդեն ծանոթացել էր եւ դադարների պահին միասին սուրճ էին խմում: Այս անգամ էլ, դադարի ժամին, երբ խանութ մտավ, խանութի տիրուհու կողքին տեսնելով նրա թոռնիկին, հանեց արծաթյա խաչերից մեկն ու նրան նվիրեց:

-Խանութի տիրուհին խիստ վախեցավ, սարսափեց,- պատմում է տիկնանց միութեան նախագահը: Թոռանն ուղարկեց թե՛ գնա շտապ մորդ կանչիր:



Մայրն եկավ:

-Տես, ասաց հարսին,- տեսիլքդ կատարվեց, ահա տիկին Ֆլորան մեր տղային արծաթյա խաչ է նվիրում:

Եվ հարս ու կեսուր պատմեցին, թե մի քանի օր առաջ երեխան ավտոմեքենայի տակ ընկնելուց է փրկվել: Իսկ գիշերը երազում տեսիլքի մեջ մորը հայտնվել է մի տղամարդ ու ասել.

- Երեխայիդ ինքս եմ փրկել: Եվ որպեսզի մանուկը Տիրոջ պահպանության տակ լինի, Արցախից մի կին է գալիս, նա ձեզ մի արծաթյա խաչ կնվիրի, որ կկախեք երեխայի պարանոցին:

Ապա Հարս ու կեսուր ուրախությամբ խաչը կախեցին երեխայի պարանոցին ու փառք տվեցին մարդասեր Աստծուն:

-Ես,- պատմում է քույր Ֆլորան,- իմ մարդկային կարծիքով արծաթյա խաչը պատահական նվիրեցի, բայց պարզվեց, որ պատահական չէր:

Հետետևությունն այն է, որ երբ մենք Աստծո արդարությունն ենք գործում, այդժամ, կամա թե ակամա, արդեն ներազդված ենք լինում Աստծուց և դառնում մեր Տիրոջ գործակիցը:

Բազում բարիքներ կան, իրեր ողջ աշխարհում: Բայց դրանցից շատ քիչն է, որ մենք օրհնյալ ենք համարում: Հիսուս խրատեց նեղ ժամանակներում նախապես օրհնել անգամ այն, ինչ որ ուտում ենք և խմում, որպեսզի քրիստոնյաներս ինչ բարիք որ գործածենք՝ դրանց օրհնված լինելով, այդպես ես հեռու մնանք չարից: Հաճախ որեւէ իր պատրաստողի անձն էլ է կարեւորվում, թե որքանով է նրա պատրաստածը օրհնյալ: «Չար մարդն իր սրտից չար գանձ է հանում տարածում /նաև իր ձեռքի գործերով/, բարին բարի»: Այս ասացինք արծաթագործ Դավիթի մասին մի վկայություն բերելու համար: Երբ Դավիթը մահացավ, ամենից շատ ողբում էր մի ծեր կին, որին ոչ մեկը չէր ճանաչում: Հարցրեցին ո՞վ ես, ասաց իմ որդին էլ է, միայն ձերը չէ: Պարզվեց փողոցն ավլող այս ծեր կնոջը Դավիթն ամեն անագամ հանդիպելիս՝ նրա ձեռքերն էր համբուրում և նրա հանապազորդ կարիքները հոգում:

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՆԻԿՈԼԸ

Մշակույթի առաջին հաղթանակը Շուշիում

Միկոյր, որ հոգևոր նկարիչ է, միայն մեկ օրինակ բերեմ: Ցանկապատ էր նկարել, գյուղական ամենասովորական փայտե ցանկապատ, բայց ուշադիր նայելով, նկարում կարգում էիր մարդկային հոգու տառապանքը

նրան չըմբռնող աշխարհում և թե Հոգին թեպետ տառապում է մարդկանց փրկության համար, սակայն խիզախն ինքն է, հաղթականը, մարդասերն ինքն է և կյանքն իրենով է: Ցանկապատ է, բայց խաչված, չարչարված: Ցանկապատի նիկոյան պատկերը թեպետ քեզ մոտեցնում է արտասվելու չափ դառը տառապանքին ու ցավին, սակայն միեւնույն ժամանակ՝ հույս և հաղթելու, ապրելու կորով է ներագրում՝ ցանկապատով մտահայեցման մեջ պահելով կյանքի գերական՝ երկինք ու երկիր իրար կապող հայտնությունը: Սովորական մի ցանկապատ, որ Նիկոյի ձեռամբ, ասես այլևս ցանկապատ էլ չէ, այլ բանաստեղծական, տանջանքի բովով անցած, աշխարհին հավիտենական կյանքի սերը վկայող, անընկալ աշխարհից չարչարվող անհատի, ժողովրդի մասին մի պատում այլևս, ուր կարգում ես մեր ժամանակների հոգևոր հայտնատեսական իրավիճակներ:

Այս երկնայինի տառապանքները հանուն մարդու պատահական չեն, «իրենք իրենց» չեն նկարվել, սրանք նախապատմություն ունեն: Սաղմոսասած և հրաշալի պատերազմող Դավիթ մարգարեի գրածի նման. Երկար ժամանակ «Տերը /Նիկոյին եւ/ մինչև դժոխքի խորերը իջեցրեց, քայլեցրեց մահվան ստվերների միջով», ապա ի հայտ լինելով, կողքին կանգնեց և նրա ժրաջանությունների միջով տարավ, հստակեցրեց՝ զգվել տալով պատրանքից ու ամեն ստից, ծանոթացրեց տեսիլքն ու իրականը, ակնհայտ հանդիպեցնելով նրան իր սիրած մեծ մարդկանց կենդանի հոգիներին: Այդպես նկարչին նրա երկարատե և սարսուղազու ցավերից Քրիստոս հրաշքներով օրե օր՝ վեր հանեց: Եվ երբ նկարիչը ոտքի ելավ, արդեն հավատացյալ էր: Ոչ թե ըստ մարդկանց վկայությունների կամ միայն ըստ գրքերի էր հավատում, այլ կենդանի Աստծուց, կենդանի նախնի մեծերից իր տեսածների, լսածների և ընդունածների համոզմամբ ու երկյուղածությամբ, որ ցավոք դեռ չունեն «միայն անգիրով» շատ հավատացյալներ: «Պիտի գա ժամանակ,- ասում է Սուրբ Գիրքը, որ պիտի եղբայրն եղբորը այլևս չուսուցանի, որովհետեւ ամենքը Աստծուց ուսանած պիտի լինեն»: Նիկոյի պարագայում Աստվածային այս խոստումն է «իր կարողության չափ» իրականացել, երբ նա դեռ մկրտված էլ չէր: Զարմանալի բաներ չեն Նիկոյի պատմածները Հայոց մեր նախնի մեծերի՝ մեծ մասամբ Սայաթ-Նովայի Նիկոյին այցելության և նրանց՝ ամենքի



Նիկոյ Աղաբաբյան. «Միասնության Շուրջպար»

հետ իմաստուն գրույցներ ունենալու մասին: Որովհետեւ Հովհաննեսը, Պետրոսն ու Անդրեասը տեսան արդեն վաղուց նախնի Մովսեսին ու Եղիային, այդ արդեն Քրիստոսով անկարելի բաները աստվածապաշտի համար այլևս կարելի լինելու հաստատման վստահարաններից են: Եվ Հիսուս աննենգորեն հավատացող Նաթանայելին նրա հավատը զրվատելով ասաց. «Պիտի անգամ տեսնեք երկնքի հրեշտակների բարձրանալն ու իջնելը մարդու Որդու վրա»: Այս խնդրում հավատն է առաջնային:

Մկրտության կողմից իմ սանիկ Անահիտին, որ Բուհ ավարտած եւ լավ կարողացած, կիրթ կին է, մի շարք անգամներ երեւացել է Կոմիտասը, նրա տկարության օրերին հայտնվել եւ գրուցել իմաստուն ու սրբազան բաներ, քաջալերել նրան: Այս նույն Անահիտ քույրը Նորագավիթի Սուրբ Գեորգ եկեղեցում իր մկրտության ժամին տեսավ Սուրբ Հոգու էջքն իր վրա՝ աղավալու տեսքով: Սրանք պատրանքներ կամ առասպելներ չեն, այլ հավատացողի համար՝ իրական բաներ: Թե Նիկոլի եւ թե Անահիտի վկայություններում, փափուկ բազկաթոռին եւ մահճակալի եզրին նստելու հետքը մեկ ըոպեից ավել պահպանվել է: Մեր սրտի մաքրությունից եւ մեր միամիտ հավատից է գալիս թե Աստված որքան ետ կտանի Հայտնատեսություն վարագույրը մեր առաջ: Երբ Հիսուս ավելին էլ է ասում. «Երանի սրտով մաքուրներին, որովհետեւ նրանք Աստծուն պիտի տեսնեն»: Արտասովորն այս ամենը արտասովոր դիտելն է: Այստեղ ոչ թե մեծ գիտություն ունենալ է պետք, այլ մաքուր, սուրբ, աննենգ սրտով հավատ, որ մեր դժվարին պահերին Աստծուց երբեւէ անտեսված չենք:

Եվ Նիկոլը երկարատեւ չարչարանքներից առողջացած ոտքի ելավ ու առաջին գործն այն եղավ, որ ստորագրություններ հավաքեց Նոյեմբերյանի եկեղեցին վերաբացելու համար: Նախ եւ առաջ Մոսկվայից թույլտվություն ստացավ: Եվ այնպիսի ջերմեռանդությամբ կպավ այդ սուրբ գործին, որ Վեհափառ Վազգեն Առաջինը կամեցավ տեսնել նրան: Մեծ Վեհափառը Հիացավ եկեղեցի բացելու համար նկարչի նվիրակ սիրով, ապա առաջարկեց սովորել Մայր Աթոռում եւ իր ջանադրությամբ բաց արած եկեղեցու քահանան դառնալ: Այդպես նաեւ՝ ողջ տարածաշրջանի քահանան:

-Այդ սուրբ գործին դեռ արժանի չեմ,- համեստորեն հրաժարվեց Նիկոլը, -Տերն առայժմ ինձ առաջնորդում է բնության մեջ, սարերի վրա, իր ստեղծած սքանչելիքների մեջ առավել ճանաչելու իրեն եւ իրենից ակնածելու խորհրդին, իսկ այն ինչ նա իմ սրտին հուշի՝ նկարների միջոցով պիտի պատմեմ մեր ժողովրդին, աշխարհին: Այս խոսքերի մի մասը բարձրաձայն, մյուս մասն էլ իր սրտում ասաց գեղանկարիչ Նիկոլը, եւ Վեհափառը ողջագուրվեց

համեստ եւ հանճարով լեցուն հայորդու հետ:

Արցախյան շարժման օրերին, երբ Նոյեմբերյանի շրջանի կոիվները /որոնց մասնակիցն էր Նիկոլը, ոգի ներշնչողներից/ դադարեցին, մի ինքնաշեն ատրճանակ գոտին խրած՝ ոտքով գնում էր Արցախ, պարտավոր էր զգում նկարչությունը ժամանակավորապես թողնել՝ հետեւորդելու հրամայական հայրենականչին:

Երբեմն հանդիպած մերենաներով, բայց հիմնականում ոտքով էր գնում: Հյուսիս-հարավ կողմնորոշելով էր գնում: Երգելով էր գնում.

Տալվորիկի զավակ եմ դորդ,

Քաղքցու պես չեմ թուլամորթ...

Գիշերը մի քանի անգամ թուրքերեն խոսակցություն էլ լսեց, բայց իրեն չնկատեցին: Աստված հետն էր: Շուշին նոր էին ազատագրել: Միայնակ մտավ Շուշի: Ասել էին, որ նկարիչ ընկերներից մեկը՝ Մհերը, Շուշիում է: Հանդիպեցին: Բայց այստեղ Տերն ուրիշ մի այլ ճակատամարտի առաջնորդեց Նիկոլին: Տղերքը, որքան էլ կովեն, պիտի մշակույթի հետ շփվեն, որ զորեղանան, որովհետեւ ազգային խիզախության ոգեշնչողը, հայի կենդանության աղբյուրն առաջին հերթին՝ հոգեւոր հացն է, մեր մշակույթը, մեր ոգեղեն երգը: Հոգեւոր սնունդ է պետք հասցնել տղերքին:

-Գնամ Երեւանից նկարներս բերեմ ցուցահանդես բացելու- ասաց Նիկոլը:

Ղազանչեցոցի քահանան՝ Տեր Գրիգորը, որ այդտեղ էր, իմանալով, թե Նիկոլը դեռ մկրտված չէ, ասաց՝ արի քեզ մկրտենք, նոր գնա:

-Զէ, ասաց Նիկոլը, երբ նկարներս Երեւանից բերեմ, այնժամ միայն արժանի կլինեմ Ղազանչեցոց եկեղեցում մկրտվելու:

-Կարճ օրեր անց, Նիկոլն արդեն Շուշիում էր: Երգի համույթ էլ էր բերել: Երեւանում «Նարեկ» երգչախումբը, երբ լսեց, որ Նիկոլը ազատագրված Շուշիում առաջին ցուցահանդեսն է բացում, միացավ նրան: Իր ցուցահանդեսի բացումից առաջ, նույն օրվա առավոտյան մկրտվեց: Ստեփանակերտից Շուշի ավտոբուսը հերթով հարյուրավոր մարդիկ էր փոխադրում: Մոտակա գորամասերից խմբերով զինվորներ էին գալիս: Հայի իրական ու արդար տեսակն այս է. եթե մի ձեռքիդ գնեք



Նիկոլ Աղաբաբյան. «Ամպերը կուգան ու կերթան»

է, շուրթիդ երգ, ապա մյուս ձեռքիդ մշակույթի հաց պիտի լինի, իսկ մեր մշակույթի հացը նաեւ կենդանի խաչ է: Մեր նշանավոր մշակներն իրենց անձը խաչելով են պտուղներ տվել ու տալիս:

Արցախում մշակույթի ճակատը հաղթական սկիզբ ունեցավ եւ շարունակվեց մեր ազգի արդարասեր այլ այրերի կողմից էլ:

Աստված նորանոր վսեմ գործերով օրհնի նրանց: Ամեն:

Օրեր անց Տերը ոչ միայն Հայաստանի նշանավոր ցուցասրահների, այլ աշխարհի բազմաթիվ երկրների նշանավոր ցուցասրահների դռներն էլ բացեց գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանի աշխատանքների առաջ: Եվ իր այդ շրջագայությունների օրերից մեկում, երբ Փարիզում էր, Նիկոլը այցելեց Ջորավար Անդրանիկի շիրմին: Պատմում է, թե Պեր Լա Շեզի գերեզմանատունն այնքան է մեծ, որ մեկի շիրմը գտնելու համար անհրաժեշտ է օգտվել հատուկ քարտեզ-ցուցատախտակից: Եվ ահա կանգնած հսկա քարտեզի առջև Անդրանիկի անունն է փնտրում, երբ մի անտես ուժ վստահեցրեց, թե կառաջնորդի Ջորավարի շիրմի մոտ առանց քարտեզի եւ մարմնավոր որեւէ ուղեկցողի: Եվ հսկա քարտեզը թողնելով ու «սրտին լսելով» ուղիղ շիրմի մոտ հասավ: Ջորավարն ինքն էր հոգով կամ Աստծո հրեշտակն էր, որ անտեսորեն դիմավորեց ազատամարտիկ նկարչին ու առաջնորդեց հերոսի սուրբ գերեզմանի մոտ: Հայրական այդ ջերմ, սուրբ դիմավորումով ազատամարտիկ նկարչի սիրտը փլվեց, Նիկոլն սկսեց բարձրաձայն արտասվել, Ջորավարի մոտ թվելով իր այն մարտիկ ընկերների անունները, որոնք ընկան մարտում: Նիկոլը վկայում է, թե ինչպես զգաց Ջորավարի հոգին, որ ասես գիրկընդխառն մխիթարում էր իրեն: Իսկ Անդրանիկի շիրմից մեծ ու զորավոր ճառագայթներով ձգողականություն էր տարածվում, եւ այլազգի զրոսաշրջիկները նույնպես, որ թեպետ ըստ քարտեզի այլ շիրմների մոտ էին գնում, սակայն իրենց ճանապարհը թեքելով այդ ձգողականությանը ենթակա՝ մոտենում էին Անդրանիկի գերեզմանին, հարգանք մատուցում: Ապա այլազգի այցելուներից մեկը խոստովանեց Նիկոլին, որ շիրմի կողմից մի մեծ գորություն իրեն եւս ձգում, խոսում էր իր սրտին եւ այդքան գերեզմանների միջից ձգեց ու բերեց այստեղ, ուր կենդանի եկեղեցու նման արդարացնող գորություն եւ օրհնանք կար: Եվ խնդրում է պատմել, թե ով է այս գերեզմանում թաղված:

Նիկոլ Աղաբաբյանն այսօր միջազգային կարգի նկարիչ է, այսօր նրա նկարները դիտարկելով արդեն բազմաթիվ վկայողներ կան:

Նիկոլի նկարները բանավոր փակումներ կամ ընդհատումներ չեն սիրում, փակում կամ ընդհատում, որոնց մեջ մահն է թաքնվում, այլ, մահամերժ

ազատագրումներ են, որպեսզի սիրտն Ստեղծողին ներկրելով աշխատի եւ անմահություն համ տա ու աղբյուր լինի սիրո եւ ակունքի սուրբ ջրով ողողվի հոգին: Նրա բնապատկերներում սիմֆոնիաներ, շարականներ, օրհներգություններ կան: Նիկոլի գյուղապատկերներում գյուղն ասես նախապատրաստական մի սպասման մեջ է տառապած, վաստակած եւ դեպի երկինք հափշտակվելուց առաջ սպասման մեջ է այլեւս:

-Ոմանք, որ ցանկալի արդյունքի չեն հասնում. պատճառն այն է, որ հոգով աշխատասեր չեն, ծուլ են,- ասում է Նիկոլ,- պիտի աշխատասեր լինես, որ Աստված էլ տվածն ավելացնի: Աղբյուր բացի, սիրո խորացումներ, եւ աշխատասիրությունը տեսնելով կրկին առավելով առավելացնի: Եվ հետո հարկ է նկարել հոգեւոր քաղցր բավարարելու, Աստծո հետ երկխոսությունը կայացնելու համար եւ ոչ թե բիզնեսի: Սա առաջնահերթ խնդիր է բոլոր նկարիչներին համար: Նկարչության մեջ բիզնեսի հետեւից ընկնողները մեծապես կորցնում են, արդեն ստեղծելով կեղծ նկարչություն, կեղծիքը որպես գեղեցկություն ներկայացնելով: Պիտի նման բաներից ամենքս էլ զգուշանանք ու ձեռքազատվենք: Կեղծ մշակույթից հեռու փախչող յուրաքանչյուր մշակ էլ այդպես է մտածում կամ այդպես պիտի խորհի:

Այսինքն. նկարել նշանակում է Աստծո Հոգով աղոթել: Իսկ աղոթքը, ինչպես հայրերն են ասում, զրույց է Արարչի հետ: Այս ըմբռնումը նույնն է մշակույթի բոլոր բնագավառներում: Երբ Աստված անվերջ է, նույնպես մշակույթը պիտի սահամանափակումներ չունենա, որ մարդուն դեպի Աստծուն ձգի, այսինքն՝ դեպի սերն ուղղորդի իր գտնված բոլոր աստիճանակարգերում ու տեսակներում: Քանի որ սիրո մեջ մահ ու դժոխք չկա:

Գեղանկարչի աշխատանքներում «Սիրո առաքյալի» Հովհաննեսի Ավետարանի կենդանարար մոտեցումն ու գորությունն է նաև նկատվում, հովվական հաղորդակցություն Աստծո եւ մարդկանց միջեւ վրձնի խոսքով: Մաղթենք առավելը, որ նախաշավիղից առավել հանդիպումն է արդեն բուն էություն հետ:

Մաղթենք և Աստծո ամենայն բարին՝ մեր ողջ մշակույթի համար, սիրելու վեհն ու անմահը: Ամեն:

ԺԱԿ- ՀԱԿՈՒՐԸ ԱՐՅԱՒՅԱՆ ԱՐԱՏԱՄԱՐՏՈՒՄ

Ժառանգավորության հրաչքներ



յս վկայությունը գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանը պատմեց: Ֆրանսիայի Պրովանսում նա ցուցահանդես է բացում: Տեղացի հայ Հով-

հաննես Մենգիլյանը ցուցահանդեսի հայտագիրը փողոցում կարդալով, տեսնելով, որ գեղանկարիչը հայ է, շտապում է հանդիպել, ծանոթանալ: Եվ Նիկոլին պատմում է իր որդու մասին:

Պատմածն, ըստ Աստծո օրենքների՝ ակամա մեղք գործելու պատմություն է: Բայց, որ Աստված Իր մարդասիրությամբ մեր բոլոր մեղքերը, բացի Սուրբ Հոգու դեմ եղածից, ներում եւ Քրիստոսով սքանչելիքներ ու օրհնանք է գործում մեզ համար, այդ մասին է խոսքը: Այսինքն. ոչ թե Օրենքի դատաստանն է հրաշք, այլ Քրիստոս, որ ներում եւ ի բարին է աճեցնում մեզ:

Երիտասարդության տարիներին Հովհաննեսը Փարիզում սիրահարվում է մի ֆրանսուհու: Ապա ինչ որ պատճառով զժտվում են, եւ Հովհաննեսը ֆրանսուհուն թողնելով ամուսնանում է մի հայ աղջկա հետ ու ապրում Պրովանսում, որտեղի ծնունդ էր: Ֆրանսուհուն այլեւս չի հանդիպում: Ֆրանսուհին Հովհաննեսից երեխա է ունենում, անունը դնում Ժակ /Հակոբ/: Հովհաննեսը չի էլ կասկածում թե ֆրանսուհին իրենից հղի էր մնացել:

Մայրն էլ իր հերթին որդուն չի ասում, թե հայրդ հայ է: Սակայն Հայաստանի մեծ երկրաշարժի օրերին Ժակ-Հակոբը, որ արդեն հասուն տղա էր, հանկարծ անսպասելորեն սկսում է հետաքրքրվել Հայաստանով: Այդ հետաքրքրությունն ավելի է մեծանում, երբ սկսվում է Արցախյան շարժումը: Հակոբը հեռուստացույցի եւ ռադիոյի տեղեկատվություններով հեռվից շարունակ հետեւում է, թե ինչեր են կատարվում Հայաստանում եւ Արցախում: Հակոբի մեջ արթնացել էր արյան հիշողությունը, Աստվածային ժառանգավորության սրբազան հրաշքը: Մայրն ի վերջո տեսնելով, որ Հակոբը գլխովին տարված է Հայաստանով ու Արցախով, այլեւս չի դիմանում.

-Որդի,- ասում է,- ես ուզում էի, որ դու ֆրանսիացի մեծանաս, սակայն բան չստացվեց, Աստծո կամքն իրենն անում է: Լավ է այդ կամքին խոնարհվել ու ենթարկվել, քան իզուր հակառակել: Պիտի խոստովանեմ, որ Հայաստանով ու Արցախով հետաքրքրվելը պատահական չէ, որովհետեւ քո հայրը հայ է: Դու հայի որդի ես:

-Որտեղ է ապրում:

-Զգիտեմ: Նա տեղյակ էլ չէ, որ տղա ունի:

- Հորս անպայման կգտնեմ,- խոստանում է Հակոբը,- Բայց քանի որ հայ եմ, այժմ իմ տեղն Արցախում է: Գնում եմ պատերազմ:

Եվ Հակոբը գալիս է Արցախ: Չորս տարի պատերազմում: Ապա արցախցի մի աղջկա սիրահարվելով ամուսնանում է, կնոջն իր հետ տանում Փարիզ: Արդեն երկու դստրիկ ունի: Տարվա մի մասը Փարիզում են ապրում, մյուս

մասը՝ Արցախում:

Հակոբը որոնում եւ իր հայր Հովհաննեսին էլ է գտնում, Հովհաննեսին, որ Հայաստանում դեռ չէր եղել:

-Մի երիտասարդ զանգեց, ասաց հայ է, ուզում է հանդիպել: Հանդիպեցինք: Արցախի բարբառով էր խոսում: Ասաց.- Ես քո սիրո պտուղն եմ, հայր: Իմանալով, որ հայ եմ, զնացի Արցախ, պատերազմեցի եւ հաղթանակած, ահա վերադարձել եմ:

-Քո որդին Արցախյան պատերազմի հաղթող, Արցախի փեսա, մի՞թե ամոթ չէ, որ Հայաստանն էլ դեռ չես տեսել,- հանդիմանում է գեղանկարիչը Հովհաննեսին:

Եվ Հովհաննես Մենգիլյանն ու նրա եղբայր Էդուարդ Մենգիլյանը՝ Հակոբ Մենգիլյանի մեջ արթնացած Աստծո ժառանգավորության հրաշքի շնորհիվ իրենց ընտանիքներով գալիս են Հայաստան: Գալիս են արդեն որպես ազատամարտում հաղթանակողի մերձավորներ: Տեսնում են սրբազան հայրենիքը եւ...շարունակում առավել հաճախակի գալ:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՈՐԴԻՆԵՐԻՑ

Գատերի նման ինքս էլ բազմիցս քննել եւ եկել եմ այն եզրահանգման, որ հայրենասիրությունն սկսվում Աստվածսիրությունից եւ ամբողջանում է Աստվածպաշտությամբ: Եվ ովքեր հայրենասեր են ու կարծում են, թե առանց Աստծո են հայրենասեր, պարզապես նրանք, ցավոք, դեռ չեն ճանաչում այդ իրողությունը: Ինչպես Տրդատ արքան, հզոր ուժի տեր լինելով, մինչեւ ճշմարտությունն իմանալը, սխալմամբ կարծում էր, որ իր գործությունը կուժքերից են, անլեզու, անկենդան արձաններից եւ ոչ թե կենդանի Արարչից, որով բնությունն է, մարդն ու կյանքը:

Կյանքը ողջ Տիեզերքի: Հավերժը:

Իզուր չէ, որ մեր ազգի համար պարծանք դարձած ֆիդայիները նաեւ Աստվածսիրության նշանավոր օրինակներ են, որ պահել են անգամ «Նահատակվելով էլ հաղթելու» Վարդանանց սրբազան ուխտը:

Այդ ուխտի զինվորներից էր Սամվել Գեորգյանը:

Այս ֆիդային միայնակ ելնում է տանկերի դեմ շունենալով հակատանկային զենք:



Հակառակ դեպքում, եթե չեկներ... տանկերից եւ դրանց ետեւից եկող թուրքերի մեծաթիվ ուժերից մեր «Նաիրի» ջոկատի տղերքը կարող էին ջարդվել: Եթե ոչ «Սասնա ծռեր» իր ջոկատի տղերքն արդեն նահանջել եւ դիրքավորվել են ապահով վայրում: Սամվելը կարող էր իր տղերքի մոտ գնալ եւ վերջ... սակայն չկարողացավ Նաիրցիներին վտանգի մեջ թողնել: Եվ Սամվել Գեւորգյանը Նաիրցիների «ՈՒագիկ» մեքենայով սլանում է դեպի հակառակորդի տանկերը: Ապա, կանգնեցնել է տալիս մեքենան եւ ցած է իջնցնում Նաիրցի վարորդին ու երկու զինվորներին: Ավելորդ զոհեր պետք չեն: Եթե կարողանա միայնակ թուրքերի տանկերին զբաղեցնել... Ջոկատը կհասցնի շուրջկալից դուրս գալ: Այս տղերքն էլ կհասցնեն նահանջել:

ՈՒագիկ մեքենան ասես խոյահարելու է ելել թուրքական երեք տանկերի: Տանկերին իրենով զբաղեցնել, փրկության հինգ-տաս րոպե, գուցե եւ ավելի ժամանակ շահել. այս է միակ նպատակը: Մի քանի րոպեն իսկ Նաիրցիների կյանքի գինն արժե: Բնականաբար իր կյանքի գնով: Մեքենայի դուռը բաց է սլանում...: Ապա՛ ինքը դուրս է նետվում սլացող մեքենայից: Արկերն ընկնում են մեքենայի չորս կողմը, մեքենայի վրա: Վիրավորվում է Վարդանանց որդին: Ոչ թե նահանջում, այլ շարժվում է ճակատային գծով: Ավտոմատի մինչեւ վերջին փամփուշտն արդեն կրակել է: Չորս կողմն արկեր են պայթում, գնդացիներից անընդմեջ կրակ է տեղում հրամանատարի վրա եւ բզկտում Սամվել Գեւորգյան հերոսի, բանաստեղծի մարմինը: Եվ բոլոր ձանաչողները, որ լսում են Սամվելը նահատակվեց, հառաչում են ու ասում ափսոս, ընտիր հայ էր:

Արծալի քայլ է նաեւ այս պատմության շարունակությունը: Նույն գիշերը Սամվելի եղբայր Ռուբեն Գեւորգյանը մի քանի մարտիկներով, անցնում է թուրքական դիրքերը, այսինքն. հակառակորդի թիկունքը: Հասնում Սամվելի նահատակված վայրը, եղբոր ոսկյա խաչից ու կոշիկներից ճանաչում նրան եւ մոխրացած մասունքները լցնելով մի արկի մեջ բերում է տուն:

Եվ Սամվելի հայրը Հայկ Նահապետի ժառանգի, քրիստոնյային արժան խոսքեր է ասում իր նահատակված որդու համար.

-Երջանիկ եմ, սիրելի ժողովուրդ... որդիս ծերությանս հասակում կյանքս իմաստավոր դարձրեց:

Նյուխը քաղեցինք Ռ. Գեւորգյանի «Դատապարտված դափնիներ» գրքից: Աստված թող օրհնելով օրհնի Վարդանանց ուխտի բոլոր ժառանգորդներին եւ բոլոր ժամանակներում: Ամեն:

ԱՐՅԱՆՅԱՆ ԳԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԳԻՐԸ

Մտավորականներին հայտնի բան եմ ասում, որ յուրաքանչյուր ժողովրդի մշակույթ, անգամ վայրենիներինը, Աստծուն մոտենալու յուրօրինակ գրսետրում է՝ ըստ նրանց կշռի, հավատի կամ բանական լույսով առաջնորդվելու չափ:

Հիմնականում այդպես է նաեւ անհատների կյանքում: Եթե մանկուց Աստծո հետ հարաբերվելով ես աճում, մեծանում, ապա անկարելի է, որ մի օր Հայրենիքի վտանգի պահին՝ վտանգը քո անձնական խնդիրը չզիտես կամ շատերին օգտակար, օրհնված գործերով մարդ չդառնաս:

Մանկուց Աստծո պահպանությունը հանձնված Հովհաննեսը եւս մասնակցեց արցախյան պատերազմին, սակայն նրա զենքը... լուսանկարչական ապարատն էր: Ինչպես մեր քրիստոնեական վարդապետության մեջ է ասվում թե. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՐ ՇՆՈՐՀՆԵՐՈՎ ԾԱՌԱՅԻ ՄՅՈՒՍՆԵՐԻՆ: Այդպես է ամբողջանում մարդը, ընտանիքը, ազգն ու ժողովուրդը: Եվ վերջապես՝ Եկեղեցին: Սիրեցեք միմյանց,- ասաց Քրիստոս: Այս սերը եթե չարտահայտվի մեր շնորհներով միմյանց օգուտ տալու, ծառայելու մեջ, նման սերը սնամիտ կամ հիվանդ կլինի: Անառողջ հոգու գրսետրում:

...Հովհաննես Արմենակյանի մեծ եղբայրը, երբ մահացել է, մայրը ուխտ է արել Աստծո հետ, որ երբ Աստված պահպանի իր նոր մանկանը, ապա տղայի 6-րդ դասարանից սկսած ուխտի պիտի գնա Ղալթախչիի Սուրբ Հովհաննես: Ասում եւ տղայի անունը մահացած եղբոր անունով Հովհաննես է դնում: Խոստանում եւ 15 տարի շարունակ որդուն առած ուխտի է գնում Սուրբ Հովհաննես: Ծնորհակալության համար մատաղ է անում, բաժանում ժողովրդին: Եվ ուխտագնացությունը դադարեցնում է որդու խնդրանքով միայն: Թե մեծ եմ արդեն, մայր, ինձ համար լի ու բավական են ուխտագնացությունները, այժմ մյուս զավակներիդ համար արա:

Երբ արցախյան պատերազմը սկսվեց, Հովհաննեսն այդ ժամանակ աշխատում էր «Ավանգարդ» թերթի խմբագրությունում: Հովհաննեսն եւս ուխտագնաց դարձավ: Ուխտագնաց ճակատային գծի ողջ տարածքով: Գնում էր դիրքերը, լուսանկարում, բերում խմբագրություն ու կրկին մեկնում ճակատ:



Առանց որեւէ մեկի հանձնարարութեան էր անում: Աստծո ներքին գրգռմամբ: Ինքնակամ: Միակն էր Հովհաննէսը, որ իր լուսանկարներով պատերազմի տաք ընթացքը առավել լիարժեք, առավել բազմակողմանի եւ բազմաբովանդակ ներկայացրեց մեր ժողովրդին: Նրա մասին ասում են. «Արցախում այդ խիստ տարիներին, չկար թուփ ու ծառ, որ Հովհաննէսը լուսանկարած չլիներ»: Զորի Բալայանը Հովհաննէսին իրավամբ անվանեց. «Արցախյան պատերազմի առաջին տարեգիր»:

Մի անգամ զորամասից հեռացավ եւ հայտնվեց շրջափակման մեջ: -Մտա մոլլախի մեջիտը, -պատմում է Հովիկը: -Մտածում էի միթե ամեն ինչ ինձ համար արդեն վերջացավ: Բայց քրիստոնյա հայի համար ամոթ է հույսը կորցնել եւ կանչեցի Աստծուն: Ասացի, Սուրբ Հովհաննէս, իմ պահապան Սուրբ, հասիր ինձ օգնության: Եվ ժամ ու կես հետո, մերոնք տեսնելով, թե իրենց մեջ չեմ, ետ վերադարձան ու փրկեցին ինձ: Աստված լսեց աղոթքս, հիշեց մորս կատարած ուխտագնացությունները:

Հովհաննէսը մոտ է եղել Մոնթին, նրան բազմաթիվ անգամներ լուսնկարել, վայելել նրա ընկերակցությունը, նրա հետ մասնակցել հարսանիքի:

- Հարսանիքին ես ու Մոնթեն մի դուլ թան խմեցինք,-ասում է Հովիկը: -Երկուսս էլ ուտելու կամ ոգելից խմելու մեջ շատ զուսպ էինք: Զորավարը գիտեր, որ իր զուսպ ապրելակերպով շատերի ճակատագրի պատասխանատուն է մնում: Ես էլ, որովհետեւ հոգուս հուշումով այսօր այստեղ էի, վաղը այլ տեղ: Երջում եւ լուսանկարում էի ճակատային գծով մեկ:

- Հաղթանակից հետո սպարապետ Վազգեն Սարգսյանը մի հոգեւոր պատմական նախաձեռնություն իրականացրեց: Հաղթեցինք,- ասաց,- այժմ հարկ է, որ շնորհակալ լինենք հաղթանակի մեր Աստծուն: Մեծ մատաղ անենք ի հիշատակ հերոսաբար ընկածների եւ ի գոհություն հաղթանակած ապրողների: Թող որ բոլոր ծնողներն ու հարազատները մասնակցեն այդ արարողությանը: Ավտոբուսների մի մեծ շարայունով գնացինք Սուրբ Գեղարդ: Մոտ երեք հազար մարդ էր հավաքվել: Յուրաքանչյուր սեղանի երկարությունը քառասուն մետր կլիներ: Այդ մեծ օրը բազմաթիվ հուզիչ լուսանկարներ արեցի:

Զորի Բալայանն ու Սերժ Սարգսյանը որոշեցին իմ հազարավոր լուսանկարներից հիշատակի մի ալբոմ տպագրել: Այն ժամանակ «Ավանգարդում» էի աշխատում: Սերժը մեկ միլիոն դրամ փոխանցեց խմբագրությանը: Պատմել էր Վազգենի Սարգսյանին, Վազգենը կանչեց ինձ: Ասացի, որ թուղթն արդեն գնել է Սամվել Անտոնյանը՝ Դսեղ գյուղից: Միայն կոշտ կազմն է մնացել: Վազգենը կազմի համար ինձ ուղարկեց Հրաչյա Թամրազյանի մոտ:

Այնուհետեւ Վահան Քոչարի հետ վեց ամիս աշխատեցինք եւ արդյունքում ծնվեց հիշատակի այս ալբոմը. «Ես մի զարկն եմ քո կովի» վերնագրով: 1994 թվականից արդեն «Հայ գինվոր» թերթի լուսանկարիչ Հովհաննէս Արմենակյանը հանրապետության նախագահի կողմից պարգևատրվեց «Մարտական գործողություններին մասնակից» մեդալով: Ապա Արցախի մայրերի կողմից. «Արցախի մայրերի երախտագիտություն» մեդալով եւ այլ պարգևներ էլ ստացավ:

Աստված օրհնի ուխտագնաց Հովհաննէս Արմենակյանին եւ բոլոր հայ ուխտագնացներին, որոնք Տիրոջ տված շնորհներով են իրենց ուխտն իրականացնում հանուն Աստծո եւ հայրենյաց:

ՄԵՐ ՊԱՊԵՐԻ ՆՄԱՆ

Ռամոն պապի վկայությունը



Ոսաֆի պահակներից մեկի անուն ազգանունը՝ Ռամոն Միրզոյան է: Բարեպաշտ մի մարդ: Երեսուն տարի է Դոսաֆում է աշխատում: Տարբեր պաշտոններ է վարել. Տեխնիկական դպրոցում դասավանդել է Հիմունքային էլեկտրականություն, ավտոմեքենաների շարժիչների կառուցվածքը: Եղել է ուսման վարպետ, սպառազինությունների պետ, ավտոծառայության պետ: Այժմ պահակ է:

Աշխատողներն իրենց փչացած ժամացույցները կամ շարքից վաղուց դուրս եկած էլեկտրական որեւէ սարք բերում են եւ Ռամոն պապը անվարձահատույց սարքում է: «Ժամանակս ձանձրալի չի անցնում», - ասում է նա:

- Ինչ նոր սարք էլ լինի, եթե ուշադիր դիտես, ուսումնասիրես, Աստծո իմաստությունը կհասկացնի քեզ, թե ինչ պիտի անել: Այդպես եմ սարքում:

Ռամոն պապի հետ հաղթանակի օրերին կամ նշանակալից որեւէ տոնի մի մի գավաթ խմում ենք՝ մաղթելով ամենայն բարին մեր Հայրենիքին, ամենքին: Պատահում է, երբ հանապազորդ հացի դրամ չեմ ունենում, ամիջապես հիշում եմ նրան, որովհետեւ օրհնելով է պարտք տալիս, խնդրությամբ եւ որեւէ բանով չի նսեմացնում աղքատությանդ արքայությունը, ինչպես ոմանք: Երբ զրուցում ես պապի հետ, նրա ներքին, երկնային խնդրությունը քաջալերում է քեզ, թե՛ մի վախեցիր, հոգան ի՛նչ է որ, կհաղթահարես: Եվ այդպես էլ լինում է. քաջալերվում ես եւ հաղթում: Եթե մեկը հիվանդ է, քաջալերում է նրան, երբ հուսալքված հիվանդ է, ամոթանք է տալիս, մատնանշում կյանքի պայծառությունը.

- Մարդ պիտի հավատ ու հույս ունենա, կյանքը սիրի, որ ապրի: Հուսալքվածը քառասուն անգամ ինքն իր վիճակն է վատացնում:

Երբ իմացա, որ Արցախի Հաղրութի շրջանից է, շատ ուրախացա: Ասացի «Արցախյան Վկայությունների» երկրորդ գիրքն եմ տպագրելու: Հոգեւոր գիրք է: Ինչ կպատմեիր:

-Պապա Համբարձումը, խոր հավատացյալ մարդ էր,- պատմում է նա: Երբեւէ առանց աղոթքի հացի չէինք նստում: Սպասում էինք, մինչեւ պապը գար, օրհներ սեղանը, ապա նոր էինք ճաշակում: Պապս տաս տղա է ունեցել: Առաջնեկը երբ ողբերգական մահով մեռավ, պապս, որ մի հին գիրք ուներ Էփեմերդի, որ ժողովրդի մեջ Եփրեմ Վերդի են ասում, որոշեց իր որդիներին՝ Վերդի անվան առաջին տառով անուններ կնքել: Որպեսզի այդ գիրքը գրող հոգեւորականը այնկողմնայինից գորակցեր իր որդիներին եւ նրանք ոչ միայն ապրեին, այլ նաեւ շնորհալի լինեին: Եվ այդպես, Աստծո սիրուն հուսադրած, հետագայում ծնված իր բոլոր ինը որդիների անունները Վ տառով կնքեց: Եվ ճշմարիտ որ, նրա բոլոր ինը որդիներն էլ դարձան նշանավոր մարդիկ կամ հարգված, որոնված արհեստավորներ: Հորեղբայրներիցս Վոամը գեներալ էր: Վաղարշակը՝ ողջ Ադրբեյջանի դեղատների վարչության պետն էր: Հայրս՝ Վահանը, Հաղրութի շրջկոմի քարտուղարներից էր:

1943 թն 44 թվերին մեծ երաշտ եղավ: Բերք չէր լինի, եւ սով կսկսվեր: Հաղրութում ժողովուրդն անհանգստացել էր: Այդժամ հաղրութցիները ասացին.- Մեր ղեկավարները չեն հավատում Աստծուն, սակայն Աստված է, որ անձրեւ է տալիս: Եկեք մեր ղեկավարությունից գաղտնի պահելով, մեր պապերի նման մենք էլ դիմենք մեր Աստծուն: Ապա գառներ տարան Վանք գյուղի եկեղեցի, մատաղ արեցին եւ դաշտում միասին աղոթքով ու անձրեւի մաղթանքով սեղան նստեցին: Հաջորդ օրն իսկ վարար անձրեւ եկավ եւ փրկվեցինք երաշտից: Այդ սքանչելի հրաշքից հետո մեր երիտասարդներից շատերը հավատացին Աստծուն:

Հովհաննեսի եւ Ռամոն պապի վկայությունների համար մեկ կարեւոր, միմյանց նման բան կա. Հին ու Նոր կտակների միասին հանդես գալու մասին է խոսքը: Երկու դեպքում էլ կարող էր մատաղը չլինել, որ որքան էլ գոհարանական, այնուամենայնիվ հին կտակն է հիշեցնում: Խնդրողին ողորմություն եմ կամենում տալ, փոխարենը գոհաբերում չեմ ուզում,- ասել է Հիսուս: Այսինքն. միայն սրտանց խնդրելով էլ Աստված թե՛ երեխային կպահպաներ, եւ թե՛ անձրեւ կտար: Սակայն գոհաբանական մատաղի այս մոտեցումը, կարելի է ասել, ժողովրդական, ընդունելի՝ հավատ է: Երբ կատարյալ չի լինում մարդու հավատն առ Քրիստոսի Ջոհագործումը, այդժամ նաեւ ժողովուրդը մատաղի խոստումներ է տալիս, որ աղքատներին բաժանելով, մարդասիրությամբ իր խնդրածի հավատը ամրացնի:

Հոգեբանորեն այդպես էլ լինում է: Որովհետեւ, ի վերջո, հավատով պիտի խնդրես, որ Աստծո ողորմածությունը արժանանաս: Հապա որքան զորավոր, սուրբ եւ երկնածին գործեր կլինեն Հայաստանում եւ Արցախում, երբ մեր ՀԱՎԱՏՆ ԱՌՔՐԻՍՏՈՍԻ ՋՈՀԱԳՈՐԾՈՒՄԸ առավել լիարժեք դառնա: Այդ բանի համար բարի մշակների հավելումներ են պետք: Եվ աղոթենք, որ Աստված նրանց բարձրացնի մեր ժողովրդի, մեր ամենքի համար: Ամեն:

ԵՒ ԲՈՒՈՐԻՍ ԷԼ ՄՈՐԹՈՏԱԾ ԿԼԻՆԵԻՆ, ԵԹԵ ՏԵՐ ԱՍՏՎԱԾ ՄԵԶԱՆԻՅ ՄԵԿԻՆ ՆՈՒՅՆ ՊԱՀԻՆ ԶԱՐԹՆԱՅՆԵՐ

Հայտնի ակորդեոնահար Ալֆրեդի հետ նույն բակում էինք ապրում: Երկուսս էլ վարձով: Մի օր հրավիրեց թե՛ գնանք իր հայրական տուն եւ ծանոթացրեց եղբայրների հետ: Հինգ եղբայրներն էլ նվիրյալ հավատացյալներ էին: Մանավանդ մեծ եղբայրը, որ սուրբ կյանքով էր ապրում կարատեի ուսուցիչ էր եւ երգահան: Շատերս, ցավոք, դեռ հեռու էինք Աստվածսիրության նման վարք դրսևորելու մեջ: Ալֆրեդի որդին, որ Արցախյան ճակատից մի քանի օրով արձակուրդ էր եկել, պատմեց իրենց վաշտում ծառայող աղանդավոր մի զինվորի մասին:

-Գիշերը նրան դեռ նշանակեցինք ու քնեցինք, գիտեինք, որ գենք չի կամենում վերցնել, այդ պատճառով էլ նրան ասացինք. «Եթե տեսնես, որ թուրքերը մոտենում են, գոնե օդի մեջ կրակիր, որ արթնանանք»: Շատ հոգնած էինք եւ խոր քուն մտանք: Ահա թուրքերի մի ջոկատ գողեզող մոտենում է մեր բանակատեղիին: Այս աղանդավոր ընկերը, որ ընդհանրապես լավ տղա է, շշմում-մնում է: Եվ չի կրակում ո՛չ հակառակորդի վրա եւ ո՛չ էլ օդի մեջ: Եվ բոլորիս էլ մորթոտած կամ գնդակահարած կլինեին, եթե Աստված, փա՛նք Քրիստոսին, մեզանից մեկին նույն պահին չարթնացներ, եւ նա միայնակ չմտներ մարտի մեջ: Կրակոցների ձայներից մենք էլ արթնացանք եւ թշնամու այս նենգ գրոհը եւս ետ մղեցինք: Տղերքը սաստիկ բարկացել էին, եւ թեպետ սիրուն էին աղանդավորին մարդկային այլեւայլ լավ հատկանիշների համար, բայց մարտից



Երևանի սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին այգարացից առաջ:

հետո մի լավ ծեծեցին: Լավ, հակառակորդիդ վրա չես կրակում, գոնե օդի մեջ կրակեիր, միթե մեր ամենքի եւ քո մահն էիր որոնում: Բայց աղանդավոր է, խեղաթյուրված անձ, եւ նրա մտածողությունն ի վերջո, այդ աստիճան ապականված է: Ասես մարդ չէ այլեւ: Որովհետեւ եթե որպես ազգակից, բարեկամ, լավ ընկեր վստահես, չգիտես գլխիդ ինչ խայտառակություն եւ փորձանք կրերի: Աչալուրջ չեղար, սատանայից խարված մարդը կյանքդ էլ կորցնել կտա»:

ԱՅՈՒ, ԳՐՎԱԾ Է՝ ՄԻ ՍՊԱՆԻՐ,

ՍԱԿԱՅՆ ԵՐԲ ԳԱԶԱՆՆ Է ՀԱՐԶԱԿՈՒՄ ԵՂԲՈՐԴ ՎՐԱ

Մեկը Հիսուսին հարցնում է. «Վարդապետ, գրված է մի սպանիր, հապա երբ վայրի գազանը ահա ուր որ է թռչում է եղբորս վրա, եւ գենքն էլ ձեռքիս է, եւ ինչ անեն» /Հին մատյաններից/: Հիսուս նրան պատասխանում է. «Սպանիր գազանին եւ ազատիր քո եղբորը, որովհետեւ Աստված մարդուն տվեց իշխանություն ողջ բնության եւ կենդանական աշխարհի վրա եւ ոչ հակառակը»: Հիշենք այս, որ Աստված մարդուն է իշխանություն տվել անասունների եւ գազանների վրա եւ ոչ թե գազաններին մարդկանց: Իսկ մարդկային տեսքի մեջ շատ-շատերը կան, որ միայն տեսքով են նման մարդկանց, սակայն իրենց էությունը, շարժմունքով եւ գործերով գազաններ են, սողուններ, ինչպես Հովհաննես Մկրտչին էր ասում «Իժերի ծնունդներ», կամ ինչպես առաքյալ Հովհաննեսն է Հայտնության Գրքում խոսում Երկու գազանների մասին, որոնք մարդկային թագավորությունների միաբանություն են, սակայն սատանայից գրգռված, կորցրած այլեւ իրենց մարդկային ամեն բան, դարձել են մարդակույ գազաններ եւ Աստծուց դատապարտվում են կործանման: Հին ուխտում եւս մարդակերպ նման չար վիժվածքների մասին է Աստծո խոսքն ասում. «Երանի նրան, ով Բարեկոնի դատեր գլուխը կթախթախի քարերի վրա»: Խոսքն իհարկե, Պոռնիկ Բարեկոնի մասին է, որ այսօր ապականության օրենքներով ջանում է մարդկությունը համախմբել կործանարար իր իշխանության ներքո: Այսինքն, մեզ համարակալողներ աշխատողներն ու կյանքն անապատ դարձնող, մարդասպան օրենքներով Համաշխարհային Գազանի ապականության ներքո ներքաշողներն ու գայթակղողները՝ դերաքրիստոսից են, սուտ քրիստոսից եւ ոչ թե մեր Տեր Աստծուց: Ճշմարիտ որ, եթե չես կարողանում եկած հակառակորդիդ վրա գենք, այստեղ՝ նախ եւ առաջ ԽՈՍԻՔ, ԽՈՍԻՔԻ սուր բանեցնել, գոնե օդի մեջ կրակիր, որ հանգստացող ընկերները արթնանան, ընկերներդ, որ կոչված են: Այսինքն՝ գոնե բարձրաձայն խոսիր այդ թեմաներից, համաձայն մի եղիր, Սուրբ Գրքից իմացածիդ ճիշտը նախ քեզ վկայիր, նախ դու շտկվիր: Մի թաքցրու: Դա էլ մի բան է եւ շատ քիչ բան չէ քեզ համար: Մինչեւ ընկեր-

ներդ, Գառան պատերազմի ճշմարիտ կոչվածները, ընտիր քարոզիչներն ու խոսքի ու զենքի վկաները Տիրոջով փառավորապես շահեն:

ԶԳԱՅԻ, ՈՐ ԴԱՆԴԱՂՈՐԵՆ ԴԵՊԻ ԵՐԿԻՆՔ ԵՄ ԵԼՆՈՒՄ...



ատմարան, քաղաքական գործիչ, բազմաթիվ գրքերի հեղինակ, «Նախիջևան» թերթի խմբագիր, նժդեհագետ Ռաֆայել Համբարձումյանի վկայությունն է, որ պատմելու ենք: Նշենք, որ Ռաֆայելը նժդեհագետներից առաջինն էր, որ վկայեց եւ փաստեց իմաստասերի նվիրյալ քրիստոնյա լինելու մասին եւ այն քաջալերողներից մեկն էր, որոնց շնորհիվ «Հոգեւոր Նժդեհը» գիրքը գրեցի:

Երբ «Արցախյան վկայություններ»-ի առաջին գիրքը նվիրեցի Ռաֆիկին, օրեր անց եկավ: Նախախնամության հետ կենդանի շփում ինքն էլ էր ունեցել, եւ այդ հանկարծակիի էր բերել նրան.

- Այն, ինչի մասին պատմելու եմ, ոչ մեկին չեմ ասել, որովհետեւ կարծում էի՝ ոչ մեկը չէր հավատա, գուցե խելագար էլ համարեին: Բայց երբ նվիրածդ գրքի մեջ կարդացի, թե նույն բանը եղել է մեր քահանաների, անգամ Արցախի նվիրյալ առաջնորդ Պարգե Սրբազանի հետ, որոշեցի, որ կարելի է պատմել: Պատմեց: Խնդրեցի թույլ տալ վկայությունը տպագրել «Արցախյան Վկայությունների» երկրորդ գրքում: -Անունս նշել անհրաժեշտ չէ,-ասաց,- որովհետեւ Հայրերի մատյաններից ինձ հայտնի է, որ նման վկայությունները, երբ թանկ են քեզ համար, այլոց չեն պատմում: Սակայն երբ իմացավ, որ յուրաքանչյուր վկայություն գորավոր է առավել եւ մարդկանց դարձին օգտակար, երբ վկայողի անունը նշվում է, այդժամ միայն համաձայնեց անունը հիշատակել:

Բնականաբար, մենք այդ մասին գիտեինք, որ վկայություններ կան, երբ ժամանակից շուտ են պատմվում, մարդն ասես կարող է գաղտնախորհուրդ մի բան կորցնել, որն իր հոգու աճման համար էր ու հատկական, որովհետեւ գրվածքն ասում է. «Յուրաքանչյուրին տրվեց Հոգու հայտնություն հատկապես այդ մարդու օգուտի համար»: Ո՛րեմն, անհատական վկայություններ կան, որ հասարակայնացնել հարկ չէ կամ ժամանակը դեռ չէ: Որովհետեւ շատ մարդիկ ի օգուտի շատ բաներ կուռք դարձնելու սովորույթ ունեն: Սակայն միեւնույն ժամանակ եկեք հիշենք, որ հոգեւոր ողջ գրականությունը վկայություններից է կազմված՝ Հայտնատեսական վկայություններ, Աստծո մարդասիրության մասին վկայություններ, գիտահոգեւոր վկայություններ,

բժշկութեան վկայութիւններ, հոգեւոր բարեկաման վկայութիւններ, սրբերի վարքերի վկայութիւններ, մարգարեական վկայութիւններ եւ այլն: Այլոց հետ կատարված վկայութիւնների ամենապարզ եղանակով մեր հավատն ավելի է հաստատվում, նրանց վկայութիւնների երկնային խորհուրդներով հարստանում ենք նաեւ մենք: Ճշմարիտ վկայութիւնները, մանավանդ ճանաչված մարդկանց հետ կատարվածները մեր սրտին հենարան եւ, ինչու չէ, սնունդ են դառնում, մեր հոգուն հավատարմութիւն եւ գործնական հավատի կյանք են ներշնչում եւ չեն թողնում մեզ մեռած, կոապաշտութեան նման սնտոի մեր վիճակների մեջ: Սակայն, ինչպես ասում են՝ ամեն բան իր տեղում է ճիշտ եւ արդար:

- Ինձ համար Եկեղեցական համագգային ամենամեծ տոնը՝ Սուրբ Ծննդյան տոնն է, - պատմեց Ռաֆայելը: Եվ այդ մեծ տոնին մշտական ավանդույթ ունեն Մայր Տաճարում մասնակցել պատարագին: Իջման սեղանի մոտ էի. եւ երբ «Տեր ողորմեան» սկսվեց, հանկարծ ինձանից անկախ ձեռքերս վեր, դեպի երկինք պարզեցի: Ընդհանրապես այդպիսի սովորույթ չունեմ: Միշտ բանականորեն ինձ զսպել եմ ծիսական առումով հավատացյալի ամիջական վարք դրսևորել: Մտածել եմ, որ մտավորականի համար առավել զուսպ լինելն է պատշաճը: Ինքս էլ իմ վրա զարմացա, երբ ակամա ձեռքերս դեպի երկինք պարզեցի: Եվ հանկարծ զգացի, որ ոտքերս գետնից կտրվեցին ու իմ ողջ մարմնով, դանդաղորեն դեպի երկինք եմ ելնում: Եվ այն վախից, թե Աստված վերցնում տանում է ինձ, ձեռքերս ամիջապես վայր կախեցի ու ոտքերս արդեն տաճարի ամուր հատակին իջան: Ամիսներ շարունակ անհանգստութեամբ քննում էի, թե ի՞նչ բան էր, որ եղավ ինձ հետ եւ ինչու՞ ինձ հետ: Եվ առավել հանգստացա, երբ նվիրած «Արցախյան վկայութիւններում»- ում կարդացի, որ մեր հոգեւոր հայրերի հետ էլ է նույն բանը եղել: Եվ որ՝ Աստուծո մերձավորութեան վկայութիւն է կայացել ինձ հետ էլ:

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ՏԵՍԻԼ-ՔԸ, ՈՐ ՊԱՏՄՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԻ ԵՒ ԱՐՅԱՒՅԻ ՄԱՅՐԵՐԻՆ

Արձակագրուհի Աշխեն Արագյանի վկայութիւնը

Երեսունվեց կանայք՝ Հայաստանից ու Արցախից, Բուդապեշտ գնալով, լսեցին ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ տեսիլքի պատմութիւնը, որ աղաչեց տեսնել ԱՍՏՎԱԾԱՄՈՐԸ՝ Հայոց ազգի վերաբերյալ հարց տալու: Տեսավ, եւ իր հարցի պատասխանը լսեց.

«Քո ազգը ծնվել է Աստուծո ստեղծած աշխարհի հետ եւ կրայի այդ աշխարհում միշտ եւ հավիտյան... Սրբի արցունքդ, գոտեպնդվիր, որ գոտեպնդես»
-Ասաց Տիրամայրը այս մեծ հային:

Վկայութիւնը քաղել ենք մամուլից:

Մենք նրան տեսանք Բուդապեշտի հայոց եկեղեցում: Ու նայեցինք իրար. մենք՝ հայ կանանց պատվիրակութեան անդամներս, ու նա՝ մեր Տիրամայրը: Նայեցինք իրար ու մենք արտասովեցինք (հայ կնոջ լացը ափի մեջ է, ով չգիտի): Գրիգորիս սրբազանը փորձեց չնկատելու տալ եւ փակեց աչքերը:

-Դստրիկներս, հայրենաշունչ իմ դստրիկներս, հիմա միասին, կծնկենք ու կաղոթենք Հայոց Աստվածամոր առաջ, միասին կխնդրենք, միասին՝ մի-անցում...

-ՄԻՎ-ՅՈՒՄ...

-Նորից խնդրենք՝ ՄԻՎ-ՅՈՒՄ...

-ՄԻՎ-ՅՈՒՄ...

-Հիմա կաղոթենք: Բառերը կրկնում եք ինձ հետ:

Երեսունվեց կանայք՝ աղետի գոտուց ու Արցախից, մայրաքաղաքից ու շրջաններից ծնկաչոք ու կիսախուփ աչքերով, հետեւեցինք 87-ամյա սրբազանի շարժումներին ու խոսքերին, կրկնելով յուրաքանչյուր բառը, ասես մեր ժողովրդի բախտը կապված էր այդ պահից եւ մեր աղոթքից:

-Դստրիկներս,- ավարտելով աղոթքը նորից է աշխուժանում սրբազանը,- Աստվածամայրը մեզ լսեց, նա մեզ հետ է, նա կկատարի մեր խնդրանքը: Հավատացե՛ք: Գիտե՛ք, թե եղեռնից հետո, մի անգամ ինչ է պատահել Արշակ Չոպանյանի հետ...

Սրբազանը ժպտում է՝ բարի-բարի: Նրա հավատը մեզ էլ է համակում:

-Եղեռնից հետո էր, Արշակ Չոպանյանը մոլորված պտտվելով աշխարհի ճամփերով, մի անգամ էլ հայտնվեց այստեղ՝ մեր եկեղեցում: Ամբողջ օրը աղոթում էինք: Երեկոյան աղոթքից հետո, երբ աղոթարանից դուրս էինք գնում, Արշակ Չոպանյանն ասաց. «Այս գիշերն Աստվածամոր հայացքի հանդեպ պետք է լուսացնեմ: Ես պետք է տեսնեմ Աստվածամորը: Ես նրա



Հինգ իմաստուն կույսերի նմանութեամբ: Նկարաչար

ոտքերի տակ կծնկեմ ու կաղաչեմ... կաղաչեմ այնքան, որ նա գթա ինձ ու հայտնվի: Ես հավատում եմ՝ նա կհայտնվի... նա պետք է լսի ինձ»: Մենք լուռ ու գլխիկոր դուրս եկանք՝ թողնելով Արշակ Չոպանյանին այստեղ՝ Աստվածամոր պատկերի առջ ծնկած, արցունքն աչքերին: Ամբողջ գիշեր նա աղաչել էր՝ «Աստվածամայր, խնդրում եմ, հայտնվիր մի ակնթարթով, մի թուուցիկ պահով, մի թափանցիկ պահով, աղաչում եմ, հայտնվիր: Ես այսպես ծնկած կմնամ բազում ցերեկներ ու գիշերներ, չեմ հեռանա, մինչև չհայտնվես ու լսես ինձ, մինչև քո շուրթերով չպատասխանես դժբախտ զավակիդ: Աստվածամայր, Աստվածամայր...»:

Ամբողջ գիշեր կանչել է Արշակ Չոպանյանը՝ աչքերը փակ, ձեռքերը Աստվածամոր պատկերին կարկառած: Եվ գիտե՞ք ինչ, դատրիկներս, հետո ինքը՝ Արշակ Չոպանյանն է մեզ պատմել. աղամամուծին, երբ դրսում խավարր դեռ թանձրացած էր, իսկ այստեղ մուծն ավելի էր խտացել, հայտնվել է Աստվածամայրը. «Ես եկա,- ասել է,- եկա, զավակս: Բաց աչքերդ ու տես, որ եկա, քո գլխավերեւում եմ...»: Արշակ Չոպանյանը բացել է աչքերը, որոնք անմիջապես արցունքի մշուշից պայծառացել են... Աստվածամայրը չի թողել նրան բերանը բացել: Հանդարտ ասել է. «Զավակս, ես գիտեմ ի՞նչ ես խնդրում, ես քո երկու խնդրանքը գիտեմ... իմացիր՝ գիտեմ... Քո ազգը ծնվել է Աստծո ստեղծած աշխարհի հետ եւ կբայլի այդ աշխարհում միշտ եւ հավիտյան... Սրբիւր արցունքդ, գոտեպնդվիր, որ գոտեպնդես ազգիդ: Աստվածամայրը ձեզ հետ է»:

Սրբազանը սրբում է արցունքները: Մենք հերթով խոնարհվում, համբուրում ենք նրա արցունքոտ ձեռքերը:

Բուդապեշտ, նոյեմբեր, 1989 թ.

ԴԵՒԸ ՎԱՍԵՆՈՒՄ Է ԱՆԳԱՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ ԶԳԵՍՏԻՅ

2005 թ. մարտի 19-ինն էր: Դրսում ձյուն էր նստած: Մառախուղ էր: Մուծն արդեն ընկնում էր: Ղազանչեցոց սուրբ եկեղեցում Ժամերգությունն ավարտվել էր, եւ քահանան ու հավատացյալները գնացել էին տուն: Եկեղեցում մնացել էին 10-րդ դասարանցիներ Լեւոն Երինջակյանը, նրա համադասարանցին ու Սիփանը, որ տարիքով նրանցից ավելի փոքր էր: Եվ Սիփանի մայրը, որ այդ օրը, նախախնամության կամոք, աղոթում ու խորհրդածում էր, թվում է՝ տուն գնալու մասին չէր էլ մտածում:

Տղաները երեքն էլ Եկեղեցու երիտասարդաց հոգևոր խմբի անդամներ

էին եւ պատարագներին ու ժամերգություններին սպիտակ շապիկ հագնելով սաղմոսներ էին երգում ու սպասավորություն անում: Ապա օրվա ավարտին, նրանցից ով այդ օրվա հերթապահն էր, անջատում էր եկեղեցու լույսերը, մոմերը հանգցնում, դուռը փակում ու միասին՝ ամենավերջինն էին տուն գնում:

Այդ օրը Լեւոնն էր հերթապահում:

Սպասելով թե Սիփանի մայրն երբ աղոթքը կավարտի, որ լույսերն անջատեն եւ միասին տուն գնան, տղաները գրուցում էին հոգևոր տարբեր հարցերից ու երեւոյթներից:


Լեւոնի համադասարանցին հանկարծ սկսեց կասկածներ հայտնել Աստծո գոյության մասին: Լեւոնն ու Սիփանը փորձում էին վկայություններով համոզել, բացատրել, բայց նա իրենն էր պնդում:

- Կասկածում եմ թե Աստված կա,- ասում էր եւ Լեւոնի բացատրությունների դեմ շարունակ տարբեր, անհիմն պատճառաբանություններ բերում: Եվ վերջապես հայտարարեց.- Ինչպե՞ս կարելի է Աստծո ներկայությունն զգալ, ու՞ր է Աստված: Որ լինե՞ր ինքս էլ պիտի զգայի: Ու՞ր է...

Համադասարանցի սպասավորին անհավատ անվանել չէր կարելի, եթե ոչ՝ ինչու պիտի Եկեղեցում ինքնակամ սպասավորություն անե՞ր եւ այս դեպքից հետո էլ իր սպասավորությունը շարունակե՞ր...

Եվ իզուր կամ պատահական չեն մեր եկեղեցական զգեստները. նրանք նաեւ դիվական ուժերին վանելու դեր ունեն: Եկեղեցական տարբեր աստիճանակարգի զգեստները իրենց յուրահատուկ տեսքով, գույներով ու նշաններով, ըստ Աստծո օրենքի են պատրաստված, սուրբ այրերի հայտնության ցուցումներով, եւ Տիրոջով եւ առաքյալներով օրհնյալ են: Համադասարանցին սպասավորի իր շապիկը հանել էր եւ թերեւս այդ էլ պատճառներից մեկն եղավ, որ դեւր նրա տկար կամքն ու անպատրաստ միտքը կարողացել էր գողանալ, որսալ ու վրան իշխել:

Եվ պատանու դիվական խոսքի այն պահին թե՛ Ու՞ր է Աստված..., խոսքը դեռ բերանում՝ հանկարծ կծկվեց, ջղաձգվեց ու ընկավ մկրտության սուրբ ավազանի վրա: Ապա սկսեց անասնական ձայներ հանել, խոխոալ ու տանջալից թավալ տալ: Լեւոնը գիտե-



նալով, որ համադասարանցին սրտի առողջության խնդիրներ ունի, ուզեց վագել Գուր բերելու, սակայն Սիփանի մայրն ասաց, որ սրտի խնդիր չկա, տղան Եկեղեցում Աստծո ղեմ խոսելու եւ թերահավատության պատճառով իր մեջ տեղ է տվել զեւին եւ դիվահարվել է: Այս օրինակի մեջ էլ ենք տեսնում, որ չարը մարդուն նսեմացնելն է որոնում, նրան անասունների կարգին իջեցնելը, սպանելը, իսկ Տերը որոնում է փրկությունն իրեն հավատացողի:

Համադասարանցի սպասավորը, որ արդեն քայլել էլ չէր կարողանում, արդեն չորեքթաթ անելով հասել էր խորանի ներքեւը՝ Ատյան եւ անմտորեն փորձում էր քանդակված խաչը պոկել: Իմացական մտքի նշույններն ասես թե լրիվ անհետացել էին նրանից: Եվ կրկին կծկվում, թավալվում, խոնչում եւ նույն անասնական ձայներն էր հանում՝ արդեն խորանի առաջ: Եվ թվում է՝ վիճակն ավելի վատ էր, քան սկզբում, երբ դիվահարվեց: Սիփանի մայրը հավատացյալի արժանապատվությամբ այդժամ բարձրաձայն կարգալ սկսեց Նարեկացու աղոթքներից, Գերմեոանդ եւ վստահ հույսով էր աղոթում, ինչպես իր որդու համար կաղոթեր: Եվ աղոթքները հրաշալի ներգործություն ունեցան: Դիվահարը աղոթքների ներազդումից թուլացավ, ջղաձգություններն անցան, դեւը նրան թողեց: Եվ նա ընկած տեղից ելավ, եկավ նստեց ու սկսեց արտասվել: Վախի եւ զեւի առաջացրած չար չարչարանքներից ազատվելու արցունքներ էին այլես դրանք: Մարդկային լեզուն էլ բացվեց, եւ առաջին խոսքերն այն եղան, որ սկսեց իր մեղքերը հիշել ու պատմել: -Իմ մեղքերի պատճառով Աստված ինձ պատժում է,-ասաց նա: Մորս վիրավորեցի, հորս վատ բան ասացի, դպրոցում այս եւ այս վատ բաններն ինքս արեցի ու չխոստովանեցի: Եկեղեցում էլ՝ Աստծո ղեմ խոսեցի... Հիշում էր, արտասվելով պատմում ու խոստովանում իր մեղքերը: Լեւոնը ջանում էր դասընկերոջը մխիթարել:

- Մի հուսահատվիր,- ասում էր,- Պետրոս առաքյալը երեք անգամ ուրացավ ու ներում գտավ: Ամեն մարդ իր ներումն ունի Աստծուց, այդքան մի վհատվիր: Վերցրու այս մոմը, վառիր ու ներում խնդրիր:

Դասընկեր սպասավորը մի փոքր հանգստացավ, սակայն ղեւ ապաշխարելիք ուներ, որովհետեւ երբ նորից կասկածեց, թե այս ամենն Աստծուց էր՝ եւ նրան հակառակելու պատճառով, այսինքն. երբ նորից փորձեց Աստծու իրեն ազատող գործությունը, դեւը կրկին հարվածեց նրան, ու նա կրկին սկսեց ջղաձգվել, թավալ տալ սրահի հատակին, խոխոլ ու խոնչալ:

Այսինքն թե՛ առանց Աստծո մարդն անասունի պես մի բան է մնում անբանական ու անմիտ՝ իր բոլոր արարքներում: Դեմ մի խոսիր, որ Աստված քեզանից չհեռանա եւ չընկնես ղեւերի ճանկը: Դեւերը գթություն չունեն:

Անասունի կվերածեն, կստորացնեն եւ կսպանեն քեզ, եթե մեղայականով ժամանակին ետ չդառնաս կամ քեզ համար աղոթելով չհարածեն ղեւերին:

Համադասարանցին մի քանի անգամ էլ անասնական ձայներ հանելով փորձեց հարձակվել Լեւոնի վրա, բնականաբար, դեւը համադասարանցու միջոցով: Բայց հենց մոտենում էր, աչքն առնում պատանու եկեղեցական զգեստին՝ վախեցած ետ-ետ էր գնում: Աստծուն փորձելու պատճառով դասընկերոջը տիրած ղեւն ակնհայտորեն վախենում էր անգամ եկեղեցու սպասավորի զգեստից: Ինչպես ասացինք, պատանի սպասավորը եկեղեցական իր շապիկը հանել էր, իսկ Լեւոնն ու Սիփանը ղեւ եկեղեցական սպիտակ շապիկներով էին:

Սիփանը, որ տարիքով փոքր էր՝ դիվազարության այս տեսարանից վախեցավ ու սկսեց լաց լինել: Այլ ելք չգտան, քան վագելը Տեր Անդրեասենց տուն: Լեւոնը վկայում է, թե երբ Տեր Անդրեասենց տուն գնալու համար եկեղեցական շապիկս հանեցի՝ այդժամ միայն ինքս էլ վախ զգացի, ուրեմն եկեղեցական շապիկս ինձ պահպանում էր դիվական վտանգներից:

Քահանան շտապ եկավ, մեղքերի թողության կարգը կարդաց, սպասավորը հանգստացավ եւ քահանան տուն գնաց:

Եկեղեցու լույսերն անջատեցին, մոմերը հանգցրեցին ու սպասում էին, թե Սիփանի մայրը երբ իր աղոթքը կավարտի, որ միասին գնան:

Սակայն Աստված, որ այդ օրը Սիփանի մոր միջոցով, մայրական հոգատարությամբ հասվեհաս էր դիվահարին, այս անգամ էլ որպես մխիթարություն նրանց՝ իր օրհնասեր ձգողությունը հավատացյալ կնոջը ղեւ պահում էր եկեղեցում:

Սիփանի մայրը խորանի առաջ նստել, գլուխը վար խոնարհած՝ աղոթում էր: Լեւոնն ու Սիփանը կանգնած նայում էին խորանին: Զէին կամենում ընդհատել մոր աղոթքը, թե տուն գնանք: Հանկարծ մութ խորանում սպիտակ մի սավան հայտնվեց, որ սահելով խորանի մի ծայրից մյուսն անցավ ու անհետացավ: Ապշած նայում էին, երբ մի սպիտակ սավան եւս հայտնվեց եւ կրկին խորանով սահելով անցավ ու անհետացավ: Սիփանն իր տեսածից զգացվել, բարձ-



բաձայն արտասպում էր: Ակնհայտ հրաշք էին տեսնում... առաջին անգամ: Միմյանց հարցրեցին. նախախնամության հայտնությունը երկուսն էլ տեսել էին: Սպիտակ երկու սավան՝ մեր եկեղեցական երկու ընտիր պատանիների անմեղության խորհրդանշաններն Աստծո առաջ: Որ նաև Աստծո գոհունակության, մերձավորության արտահայտությունն էր իր պատանի երկու սպասավորներին թե՛ հավանում եմ ձեր հավատարմությունն ու վկայությունները եւ սիրում եմ ձեզ....


Այդ օրը պատանիները եկեղեցուց դուրս եկան սրբազան ու մեծ երկյուղի մի նոր զգացումով, որ առաջ այդչափ չունեին: Նախախնամության Հայտնությանն էին առնչվել ու առավել լրջացել, մեծացել:

Ջորավոր, սուրբ եւ ամենազոր է նա, ում առաջ կանչվեցին սպասավորելու:

Վկայողի՝ Լեւոնը /Այսօր՝ 2005թ. Սեկտեմբեր, Մայր Աթոռի ճեմարանում է սովորում:

Եվ թող Տեր Աստված ամենայնժամ առաջնորդի, օգնի եւ պահպանի իր պատանի բոլոր սպասավորներին եւ դուստրերին՝ Արցախում, Հայոց աշխարհում եւ ամենուր: Եվ մեր որդիներին եւս արժանավորի Իր առջև միամիտ եւ իմաստուն, հեզ սրտով սպասավորներ լինելու: Այս երկու հավատարիմ եւ ընկերասեր պատանիների օրհնյալ օրինակումն եւս մեզ համար որպես դաս եւ հավելյալ մի խրատ է, որ ընդունելի լինի Հայաստանի ամեն կողմերում: Ամեն:

Օրհնյալ լինի Տերն Աստված, եւ օրհնյալ լինի բանիմաց բարի մշակության հետետորդ մեր հոգեւոր դասը Հայոց եւ մեր պատանիների ակնածելի նվիրվածությունը, որ մեր Արցախի արժանավոր քահանաների սիրով են հունդավորվել: Ամեն:



Օրհնբրդողները:

Շահումյանցի պատմաբան, քաղաքագետ, «Մուսլի ղողանջներ» թերթի խմբագիր Կիմ Ղահրամանյանի պատմած վկայություններից

ա/ ՍՊԱՐԱՊԵՏԸ ԴԻՄՈՒՄ Է ԱՍԾՈՒ ՕԳՆՈՒԹՅԱՆԸ

1 991 թ. գարնանն էր: Սկսվել էր տխրահռչակ «Օղակ» գործողությունը: Գետաշենն արդեն հայաթափել էին:

Վազգեն Սարգսյանն այդժամ գտնվում էր Շահումյանում եւ ստույգ տեղեկություն ուներ, որ հաջորդ առավոտյան Շահումյանի վրա հարձակում է լինելու: Խորհրդային բանակն իր տանկերով, հզոր ռազմատեխնիկայով եւ լավ զինված ադրբեջանական Օմոնր գալիս են Շահումյանի վրա: Եվ ետևից էլ թուրք թալանչիների, ավերող-ասպատակողների խուժանն է գալիս:

Մեր մի քանի ռազմական նոր կազմավորվող խմբավորումները, բնականաբար, անկարող էին դիմազրավել այն փիթխարի ուժին, որ գալիս էր: Ոչ կկարողանային դիմադրել, եւ ոչ էլ խաղաղ բնակչությանը փրկել:

Բնակչության անվտանգ հեռանալու համար ժամանակ էր պետք, որը չկար:

Անելանելի վիճակում հայտնված Վազգեն Սարգսյանը Շահեն Մեղրյանի հետ միասին գնում է Վերին Շեն՝ անբացատրելի ընդունակության տեր Սվետա Վերդյանի մոտ:

- Սվետա՛ ջան, խնդրում եմ,- ասում է սպարապետը,- աղոթիր, աղաչիր Աստծուն: Ինչ հնարավոր է, ամեն ջանք արա, որ Շահումյանի վրա առավոտյան կայանալիք հարձակումը չկատարվի, այլ խափանվի:

Ամբողջ այդ օրն ու գիշերը Սվետան աղոթում, արտասովելով խնդրում-աղաչում էր Աստծուն: Վազգենն ու Շահենն էլ իրենց հերթին, իրենց սրտում Աստված կանչում եւ հույսով ու հավատով ակնկալում էին, որ Աստված է միայն ի գորու այդ հզոր հարձակումը կանխել եւ բնակչությանն անվտանգ հեռացնելու ժամանակ տալ:

Եվ հրաշքն, ինչպես խնդրել էին, իսկապես կատարվեց:

Լույսը բացվեց, եւ... հակառակորդի ծրագրած, լավ նախապատրաստած հարձակումը չկայացավ:

Հաջորդ օրն էլ հարձակում չեղավ: Եվ ժամանակ շահեցին, ինչպես խնդրել էին:

Վազգեն Սարգսյանը զարմացել էր, ուրախացել, փառք տվեց Աստծուն թե՛ ճշմարիտ որ՝ աղոթքով փրկվեցինք:

Վերջում ասաց.

- Այսպիսի բան ես միայն հնազանդներից էի լսել, բայց ահա ինքս էլ ականատես եմ մասնակից եղա...

Հավատքով փրկության այս կենդանի դրվագին ծանոթանալով՝ ականատես հիշում ես մեր Փրկչի խոստումը:

«Դարձյալ ձեզ ասում եմ. եթե ձեզնից երկուսը միաբանվեն երկրի վրա որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կր կատարվի նրանց համար իմ Հոր կողմից, որ երկնքում է. որովհետև ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մեջ»: Մատթեոսի Ավետարան:

ՈՒստի, հավատքն առասպել չէ, այլ կենդանի վստահություն, կենդանի հարաբերում կենդանի Աստծուն: Քանի լինենք ուրեմն, ոչ միայն հավատալ, այլ մեր ազգի ամենայն նեղության պահերի նաեւ աղոթքով խնդրել էլ: Միաբան խնդրել: Ժամանակին խնդրել եւ ոչ ուշացած: Եվ երանի նրան, ում ձայնը լսում է Աստված:

Բ/ ԷՐՔԵՋՑԻ ԳԱՌՆԻԿԻ ՀԱՅՐԸ

Երբ ընդհանուր Գառնիկ Եսայանին թուրքերը գերի վերցրին: Հայրը՝ Սարգիսը, որ չորս աղջիկ եւ միայն մեկ տղա ուներ եւ գիտեր գերիների հանդեպ թուրքերի վայրագությունները, չմտածեց այլ բան խնդրել, քան այն, որ՝ Աստված փրկի իր որդուն, թեկուզեւ փոխարենն իր կյանքը վերցնելով:

Այդպես էլ կատարվեց.

Գառնիկը գերությունից ազատվեց, իսկ հայրը մի քանի օրից հետո անսպասելիորեն հանկարծամահ եղավ...

Կիմ Ղահրամանյանի Արցախյան կյանքից բերած այս վկայության շուրջ մենք երկար խորհեցինք:

Սուրբ Գիրքն ասում է. «Աստված չի փորձում եւ ոչ մեկին, այլ մենք՝ մարդիկ ենք մեր ցանկությունների պատճառով ընկնում փորձության մեջ»: Այսինքն թե՛ որդու փրկության փոխարեն Աստված հոր գոհ լինելը չէր կամենում, չէր պահանջում, այլ առանց գոհի, միայն հոր խնդրանքի, ճգնության

համաձայն պիտի որդուն ազատեր: Սակայն նման պահի այս լավ մարդը, մարդկային ընտիր տեսակ լինելով, ԽՍՀՄԻ բռնատիրությունից պատճառով, երբ անարգվում ու մերժվում էր հոգեւոր գիտությունը, անպատրաստ է եղել միայն աղոթքով ազատել իր որդուն ինքն էլ կենդանի մնալով: Նման մի դրվագ կա սուրբ Սարգիս գործավարի վարքում: Նրա որդուն եւս գերի են վերցնում: Զորավարը լսելով մի քանի օր ծոմապահության է դիմում եւ աղոթում: Այդ ժամ մեծ փորձանքներ են սկսվում հակառակորդի բանակում, եւ հասկանում են, որ փորձանքները գերի երեխայի պատճառով է: Եվ ձայն են լսում. «Եթե այդ երեխային հորը չվերադարձնեք, ավելի վատ պիտի լինի ձեզ համար»: Ահաբեկված հակառակորդները պատվով եւ հարգանքով երեխային բերում եւ հորն են հանձնում: Այս է Քրիստոնեականի առավել կատարյալը:

Այս առումով նաեւ Քրիստոսի խոսքը ունենք թե՛. «Տերը ողորմություն է կամենում մարդկանցս համար անել, փոխարենը գոհեր չպահանջելով»: ՈՒստի եւ ճշմարտության մասին գիտելիքի պակասն է շատերիս խանգարում մեզ սիրող Աստծո այս լուսավոր, լիարժեք խոստումներից ժամանակին եւ առավել օգտվել:

Պոստովանենք, սակայն որ հոր գոհարեւելը հանուն որդու այստեղ եւս գեղեցիկ, շատ գեղեցիկ է, կասե՛ի սքանչելի: Որովհետեւ իր չիմացածից իմացած հնարավորն է անում: Եվ ըստ մեր Արժվանի Վարդապետության, Քրիստոսին արժանի հավատալով, վստահ ես, որ ինքն իրեն որդու համար գոհարեւելու ընդունակ այս ընտիր հայրը կարող էր նաեւ սուրբ Սարգիս նման ծոմապահությամբ համբերատար ու աղոթքով հաղթանակ էլ տանել, եթե հոգեւոր գիտելիքները բավարար լինեին: Ծա Աստված, Հայաստանում հոգեւոր գիտելիքները առավել ջերմությամբ տարածվելու ժամանակաշրջան սկսվի, եւ մենք ազգովի պիտի շահենք՝ ազնվական մարդկանց քիչ կորստով: Որովհետեւ Քրիստոս մեր մեղք ու պակասների փոխարեն Ինքը գոհվեց, որպեսզի մենք գոհեր տալու փոխարեն, եթե հավատում ենք Աստծո Զոհին, գոհանանք Նրա շնորհած, ձրի բերած փրկությամբ: Մեր այդ գոհությունն է Աստված որոնում, որպես մեզ ամենասիրող Հայր: Բայց Աստված նաեւ չի մերժում, երբ հանուն մերձավորի սիրո մեր կյանքն ենք զնում: Հիսուս նույնպես իր կյանքը դրեց հանուն թեպետ մեղավոր, բայց նվիրակ, շնորհակիր, հանիրավի ճնշված, մաք-



րասիրտ մարդկանց՝ իր մերձավորների համար: Այնպես որ, Գառնիկի հոր այս զոհաբերումը թեպետ Հիսուսով կարող էր չլինել, սակայն եղածն իսկ որքան գիտելիքի պակասի պատճառով տխրեցնող, նաև գեղեցիկ եւ վեհ է Աստծով հաղթանակ չարի ու անարգի հանդեպ:

Տա՛ Աստված մեզ, ամենքիս էլ առավել լիարժեք հավատք Քրիստոսի հանդեպ եւ մեր փորձություններն ու կորուստներն առավել պակասած պիտի տեսնենք:

Գ/ ԵՐԱՆՏԸ ԴԱԴԱՐԵՅ, ԵՐԲ ԵՍԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆՎԻՐԱԾ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԸ ԳՅՈՒՂ ՎԵՐԱԴԱՐՁՐԻՆ

Գահուցանի Գյուլիստան /Վարդնուտ/ գյուղում մի անգամ ուժեղ երաշտ է սկսվում:

-Տարօրինակ բան. մոտակա գյուղերում առատ, բերքատու անձրեւներ, մեր գյուղում երաշտ: Աստված ինչու՞ հավասարաչափ խնամարկու աչքով չի նայում իրենց գյուղին էլ: -Մտածում էր գյուղի կոլտնտեսության նախագահ Վարդգես Հովասափյանը եւ մի գիշեր իր հարցերի պատասխանը տեսնում է երազում:

Ահա գյուղի տարածքներից դուրս բոլոր կողմերում համատարած անձրեւ է, գյուղի սահմանից ներս անձրեւը կտրվում է:

Վարդգես Հովասափյանը շփոթված նայում էր այս զարմանալի երեւույթին, երբ տեսնում է սպիտակահեր մի ծերունու: Վարդգեսը նրան հարցնում է. «Այս ի՞նչ զարմանալի բան է, միշտ մեր սարերում առատ անձրեւներ են եկել, իսկ հիմա անձրեւները միայն մյուս գյուղերի վրա են իջնում, գալիս, հասնում են մեր սահմանին ու կտրվում են. մեր հողերը մնում են պապակ»:

Սպիտակահեր Ծերունին պատասխանում է. «Ջարմանալի ոչինչ չկա. որդի, ձեր գյուղի բաժին անձրեւը դուք կողքի գյուղերին եք տվել»:

Ինչպես են տվել, ի՞նչ են տվել. բնական է Աստծո բարեհաճության հետ կապված խնդիր է: Եվ նախագահը հիշում է, որ իրենց գյուղի եկեղեցու զանգը շրջկենտրոնի թանգարանին են նվիրել: Եկան-խնդրեցին, տվեցինք:

Եվ Վարդգես Հովասափյանը Հաջորդ օրը շտապում է շրջկենտրոն, թանգարանից ետ վերցնում իրենց զանգը, բերում Գյուլիստան /Վարդնուտ/:

Երբ գյուղամիջում կանգնեցնում է մեքենան, զանգը գրկած իջնում, բոլորը հավաքվում են:

Շատերը կարոտով համբուրում են զանգը: Իրենց գերի տարված հաջողությունը, իրենց սրբությունը ետ բերեցին: Օրհնյալ լինի:

Տարեց Խոսրով Սեփյանը զանգի պատմությունն է պատմում հավաքվածներին, որ դա գյուղի եկեղեցու 2-րդ զանգն է, եւ նվեր է Եսայի կաթողիկոսի կողմից: Եվ Հավաքվածները կարգում են զանգի եզրերով գրված կաթողիկոսի ընծայագիրն ու Սեփյանի ասածները հաստատում: Իրավ է. զանգը կաթողիկոսական ընծայագրով է:

Ջանգը գյուղ վերադարձվելուց հետո Վարդնուտում երաշտը դադարեց: Աստծուց տրված գյուղի բաժին անձրեւները կրկին գյուղ վերադարձան:

Կիմի պատմած այս վկայությունը միայն եղելությունից վերածվում է պարզ, հասկանալի եւ օգտակար մի խորհրդի. հաճախ չե՞նք մենք էլ մեր կարճատեւ կյանքերի ընթացքում մեզ համար թանկ մի բան, մեր սրբությունը, մեր «եկեղեցու զանգը» նվիրում այլոց, ինքներս գրկելով մեզ նախախնամության անձրեւներից: Ո՞րտի, բաներ կան կյանքում, որ Աստծով քոնն են, քո գյուղի՞նը, քո հայրենիքի՞նը եւ այլոց մեռյալ թանգարաններին տալ չի կարելի:

Դ/ ՆԱԽԱԽՆԱՄԱԿԱՆ ՀԱՅՏԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղափսու նման միամիտ մարդկանց
Հոգածուն ո՞վ է, եթե ոչ... Աստված...

Դրվագ ա

ՈՐԴՅԱ՛Կ, ՄԻ՛ ՏՐՏՄԻՐ,
ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՑ
ՀԱՅՐԴ ՏՈՒՆ ԿԳԱ

Սուսուցիչ զոզանյանը» թերթի խմբագիր, Շահուցանցի Կիմ Ղահրամանյանին հանդիպեց թերթի ընթերցողներից ութսունամյա մի պապիկ Թալինում ծնված, Արցախի փեսա, Երեւանաբնակ Վոլոդյա Աբրա-



համյանը:

Տեսա՛վ Կիմին եւ ապշեց.

- Իսկը քո կերպարն ուներ: Դեմքը շատ լավ եմ հիշում:

Ո՛՛հ մասին է խոսքը,- հետաքրքրվեց Կիմը: -Աստված, իր սրբերից մեկի միջոցով երեք անգամ ինձ օգնության է եկել, մարդու տեսքով, քո կերպարով ու քո նմանությամբ երեւալով: Նույն սպիտակ մազերը, նույն հայացքը, նույն դեմքը:

Ե՛վ պատմեց.

- Երբ մանուկ տղա էի, հորս սեւ թուղթն ստացանք, եւ մեր տանը սուգ սկսվեց: Մանր էլ ապրում էինք, եւ հորս կորուստը մեր ընտանիքի համար ոչնչով չէր փարատվում: Այդ գիշեր անհանգիստ քնեցի: Հանկարծ երազիս մեջ այեզարդ անծանոթն երեւաց եւ ասաց.

- Մի տրտմիր, որդյակ, այլ ուրախացիր, քանի որ հայրդ չի մեռել եւ շատ շուտով տուն պիտի գա:

Առավոտյան տնեցիներին պատմեցի: Չհավատացին: Ասացին՝ երեխա է, էլի, մտքերի մեջ ընկել քնել է, երազ է եկել:

Մի քանի օր անց, ճշմարիտ որ, հայրս տուն եկավ: Իսկ Աստծո պատգամաբեր այեզարդ մարդու դեմքն իմ հիշողության մեջ անջնջելի մնաց, ասես աներեսութորեն միշտ կողքիս լիներ:

Դրվագ Բ

ՏՂԱՍ, ՄԻ՛ ՏՐՏՄԻՐ, ԷԼԵԿՏՐԱՍՅԱՆ ՏԱԿ ԴՐԱՄ ԿԱ

Այս օրհնարեր հայտնությունից տասնհինգ-քսան տարի էր անցել: Արդեն բանակ գնացել եկել, ինստիտուտն ավարտել էի: Ինձ Բաշկիրիայի ՈՒՓա քաղաքն ուղարկեցին՝ մասնագիտական որակավորումս բարձրացնելու: Ապրում էի բանվորական հանրակացարանում, չնչին թոշակս հագիվ էր սննդի բավականացնում: Այդ օրերին Թալինի մեր գյուղից բարեկամներս ՈւՓա եկան թե՛ ձերոնք նեղության մեջ են, հոգեպահուստ փող կունենաս, տուր, ձերոնց տանենք:

Մտածում էի ծնողներիս միամտության մասին. չգիտեին, թե ունեցած-չունեցածս չնչին թոշակս էր: Բայց Աստծո վրա էին հույս դրել, եւ հետո պարզվեց, որ ինձ մոտ մարդ ուղարկելով իրենք էին ճիշտ վարվել:

Գիշերը, ծնողներիս նեղության համար մտահոգ, մի կերպ քնեցի:

Նույն այեզարդ մարդն երազիս եկավ, որ 1945 թվականին հորս ողջ եւ առողջ տուն դառնալու ավետիսն էր բերել.

- Որդյակ, մի տրտմիր, վեր կաց, գնա՛ հանրակացարանին մոտիկ գտնվող այսինչ շենքի մոտ, էլեկտրական այսինչերորդ սյան տակ դրամ կա, վերցրու, ձերոնց ուղարկիր: Արթնացա, տարօրինակ երազ էր, ասացի,- ու էլի քուն մտա:

Կրկին երազիս եկավ. -Դեռ այստեղ ես,- ասաց,- վեր կաց, ուշ է: Վաղը բարեկամներդ տուն են դառնում:

Արթնացա, զգուշորեն հագնվեցի, որ սենյակի ընկերակիցներին չարթնացնեմ: Ինչ բացատրություն պիտի տայի, եթե արթնանային ու հարցնեին, թե ո՞ր եմ գնում:

Դրսում, մինչեւ գոտկատեղ հասնող ձյուն էր: Մութ էր ու ցուրտ: Դժվարությամբ հասա այեզարդ մարդու նկարագրած շենքի մոտ, գտա էլեկտրական լապտերի սյունը: Սյան լապտերը վառվում էր, մինչդեռ մոտակա սյուներինը հանգած էին: Լապտերի տակ կանացի մի դրամապանակ կար, մեջը լիքր փող: Աչքերիս չէի հավատում: Դարձա հանրակացարան: Գիշերվա ժամը երեքը կլիներ: Դրամապանակը դրեցի ուղեպայուսակիս մեջ ու քնեցի: Առավոտյան արթնացա: Հիշեցի փողը: Ասացի երազի մեջ եմ եղել, երազիս շարունակությունն եմ հիշում: Բացեցի ուղեպայուսակս: Կանացի դրամապանակն այնտեղ էր: Երազ չէր ուրեմն: Դրամապանակը բացեցի: Դրամն էլ կար:

Հաջորդ օրը դրամն ուղարկեցի ծնողներիս, մի քիչ էլ, սնվելու նպատակով ինձ համար պահեցի:

Իսկապես որ, միամիտ հավատը, նահապետական անշահ մաքրությունը, նախախնամության սիրո եւ հոգածության դուռն է բացում: Այս դրվագը մի՞թե չի հիշեցնում Հիսուսի խոսքը Պետրոսին թե՛ գնա ծով, մի ձուկ կբռնես, այդ ձկան բերանում ոսկեդրամ կա, կրերես եւ իմ ու քո փոխարեն թագավորի հարկը կվճարես: Որովհետեւ, ըստ Արքայորդի լինելու՝ թեպետ իրենք են պարտ մեզ վճարել, բայց որպեսզի գայթակղության պատճառ չլինի, մենք վճարենք:



Դրվագ գ

ՈՐԴԻ, ՄԻ՛ ՏՐՏՄԻՐ, ԸՆԿԵՐԴ ԿԼԱՎԱՆԱ

Երրորդ հանդիպումն Աստծո պատգամաբերի հետ կատարվեց նախորդից մոտ 25 տարի անց: Այս հանդիպումն արդեն ապշեցրեց, որովհետև օրը ցերեկով եղավ եւ տեսանելի, եւ ոչ թե երազում:

Իմ աշխատանքային ղեկավարներից մեկը, ում հետ նաև ընկերներ էինք, մեռնում էր: Բժիշկներն ասել էին բուժում չկա: Աշխատանքային ընկերներս գնում էին նրա տուն, վերջին անգամ տեսնելու, վերջին հրաժեշտը տալու: Ասացի՜ ես էլ գնամ: Տրամվայ նստեցի: Պոռոչյան փողոցով բարձրանալիս, երբ հասանք Սուրբ Հովհաննես եկեղեցուն, անսովոր մի բան զգացի: Եվ երբ տրամվայը կանգառ արեց, առջևի դռնից մտավ իմ պատգամաբեր ալեգարդ մարդը: Դեմքը գիտակցությանս մեջ մեխված էր: Չէի կարող սխալվել: Եվ ճշմարիտ որ. ուղիղ մոտեցավ ինձ ու ասաց.

-Վոլոդյա՛, որդի՛, մի տրտմիր, ընկերոջդ սխալ բուժում են անում, ինչ որ պատվիրեմ քեզ, եթե անի՛ կլավանա:

Եվ բացատրելուց հետո, թե ընկերս ինչ է անելու, գնաց, իջավ ետեւի դռնից:

Հասա ընկերոջս տուն: Ապշած նստել ու ձայն չէի հանում: Տեսքս երեւի շատ տարօրինակ էր, ընկերս նկատեց. -Ինչ որ բան է քեզ պատահել...

Այդ ժամանակ ես նրան ամեն ինչ պատմեցի: Փա՛ռք Աստծո, հավատաց: Հավատաց պատգամաբերիս: Նրա ասածներն արեց եւ շուտով առողջացած ոտքի ելավ:



«ԴՈՒՇՄԱՆ» ՎԱՐԴԱՆ «Դուշմանը» ապրեց քսանվեց գարուն

«Մեր դուշմանների դուշման Վարդան...»

Արամայիս Սահակյան

Վկայությունների այս շարքը գրելու համար խորին շնորհակալություն Վարդան Ստեփանյանի մորը՝ գրադարանավարուհի տիկին Զարիկին եւ Վարդա-

նի ընկեր՝ արձակագիր Գագիկ Մախսուդյանին: Աստված թող օրհնի նրանց: Ամեն:


Այս վկայություններում, թվում է, հրաշքներ չկան, բայց կա հասուն մարդ լինելու հրաշքը, բանական Վարդ լինելու եւ երկնքի որդիներին հատուկ մահի այն կողմից էլ կենդանի սեր ճառագայթելու հրաշքը, բնատուր հավատ ունեցող մի մարդու հրաշքը, որ ընդամենն ապրել է... քսանվեց գարուն: Աղոթենք՝ Աստված արժանավոր մարդկանց համախմբով օրհնություններ հիշի Վարդանին, նրա մերձավորներին առավել եւս մխիթարելով, Վարդանի մեծ սիրով եւս կերտելով ու վավերագրելով Հայոց Սուրբ Վարդանանց սիրո տեսակը, որոնք նահատակվելով էլ են հաղթում՝ մտնելով հավիտենություն:

ա/ ՏԱՆՈՒԹ ՕՐՈՒՄ ՏԱՆՈՒԹ ԿՅԱՆՔԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Մեծ երկրաշարժից առաջ Վարդանը Մոսկվայում, մտավորական շրջաններում, Արցախյան հարցի բացատրական աշխատանքով էր զբաղված: Եվ երբ մեծ աղետն եղավ, Մոսկվայից Երեւան գալով՝ տուն էլ չմտավ, ամիջապես գնաց Լեւինական: Մոսկվայան մի շարք թերթեր գրեցին Վարդանի լեւինականյան օրերի մասին: Տասնութ օրում Վարդանը փլատակներից հանեց տասնութ մարդ: Տասնութ հոգի վերստին կյանք ստացան, որոնցից մեկը հղի կին էր, որ ուր որ է՝ ծննդաբերելու էր: Ուղարկեցին Վանաձորի ծննդատուն: Տուն գալով մորը պատմում էր սարսուղի բաներ, որ որոնման աշխատանքների ժամանակ էին կատարվել: Առավել շատ նրան ազդել էր, երբ փլատակները քանդելիս նոր տարվա պատրաստություն տեսած ուտելիքներ, միրգ ու աղանդեղեն էր թափվում: Մարդիկ միամտորեն պատրաստվում էին տոնի, չիմանալով, որ առջեւում մահացու աղետն է սպասվում:

Մի գիշեր շատ հոգնած էր, որոշեց մի քիչ հանգստանալ: Քնելու տեղ չկար, մտավ մի դազաղի մեջ, կափարիչը ծածկեց, որ տաք լինի ու քնեց: Առավոտյան դազաղը վերցրին, որ տանեն թաղելու. ներսից ձայն տվեց.

-Կենդանի եմ, սպասեցեք...



Մարդիկ ասես վայրենացել էին: Հոգեւոր որեւէ երևույթ, մշակույթ, գիրք՝ արդեն օտար էր դարձել նրանց: Ահա մի տեղ խարույկ էին արել, գրքեր էլ էին վառում: Նկատեց հայկական ճարտարապետական մի հիւն, արժեքավոր գիրք: Նման բանը չէր կարելի տաքանալու համար կրակին տալ: Գուրգուրանքով վերցրեց, շուրջ գիրքը, ապա դրեց մոտիկ ծառի ճյուղերի արանքում եւ գնաց իր գործին: Երբ ետ դարձավ, որ մի փոքր հանգիստ առնի, գիրքը կրկին խարույկի կողքին՝ ցեխի մեջ ընկած էր: Այս անտարբերացած մարդկանց համար վառելանյութ էր միայն: Վերցրեց, սրբեց, կրկին դրեց ծառին եւ հաջորդ դարձին, երբ կրկին եկավ մի փոքր հանգստանալու՝ գիրքն արդեն ...վառել էին: Վշտացել էր, դառնացել՝ չկարողացավ արժեքավոր գիրքը փրկել:

Երբ մայրը ցույց տվեց այն թերթերը, որ պատմում էին Լենինականում Վարդանի կատարած որոնման աշխատանքների մասին եւ պատվոգրերը, որ նրա մորն էին հանձնել, ասաց.

-Մամ, ինդրում եմ, ո՛չ մեկին ցույց չտաս, ամոթ է: Թող որ պարծանք չհամարեն այն, ինչ իմ պարտավորությունն է եղել:

Ոչ ճիշտ եղած գովեստների վտանգը նկատի ունենալով՝ Հիսուս առաքյալներին աշխարհ ուղարկելիս, գործ անելու մեծ գովեստների վտանգին՝ պատվիրեց այսպես դիմագրավել. «Պատասխանեցեք այսպես. -Ծառաներ ենք Աստծո, ինչ որ արեցինք՝ պարտավոր էինք անել»:

Եթե այդպես է, հապա ինչու՞ ենք մենք եւս Վարդանի արժանավոր գործերի մասին գրում, հիշատակում: Այդ էլ մեր պարտավորությունն է: Բանն այն է, որ Վարդանի եւ մյուս արժանավոր մարդկանց բարի գործերի վկայությունները սերունդներ են դաստիարակում: Նման գրքեր կարողալով, կինոնկարներ դիտելով՝ մենք զարգացնում ենք արժանավոր մեր շնորհները, ոգեւորվում մարդասիրության հատկանիշներով, եւ այդպես սկսում ենք մերժել շրջապատի անհոգի բացասումները, որպեսզի շնորհներով աճենք ու քաջալերվենք բարի բաներում: Հին իմաստությունն ասում է. «Մարդը հակված է առավել օրինակների հետեւորդել, քան ճշմարտությանը»: Ուստի իմաստուն եւ բարի է մարդկանց ներկայացնել այնպիսի վկայության օրինակներ, որ ճշմարտությունից են եւ բարին են քաջալերում մեր մեջ:



բ/ ԽՈՆԱՐՀՈՒՄ ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ԱՌԱՋ

Գահույժանի անկումից հետո, Դուշման Վարդանը ընկերոջ հետ գիշերով թաքուն վերադառնում է Շահույժան: Ուզում էր ստուգել՝ թուրքերը գերեզմանները հո չեն պղծել:

Գերեզմաններում քրիստոնյա մեռյալները, ինչպես գիտենք, հոգով կենդանի են եւ տեղյակ թե՛ ինչեր եղան իրենց շրջանի բնակչության ու մերձավորների հետ: Կենդանի հոգիներ, որ թեպետ գերեզմաններում այժմ գերություն մեջ էին հայտնվել: Վարդանը, որ պայծառատեսության պահեր էր ունենում, հոգով նրանց ապրումները տեսնելով՝ ահա գիշերով ետ էր եկել եւ ընկերոջ՝ Կառլենի հետ անկում ապրած գյուղերից մեկի գերեզմանոցում է:

Լուռ ու գլխիկոր մոտենում է խաչքարին, աղոթում, ապա ննջեցյալների խոովված հոգիներին դիմելով՝ ասում է.

-Մեր պապեր, ներեցե՛ք ձեր անառակ որդիներին, մենք դեռ ետ կգանք եւ կազատագրենք ձեզ գերությունից:

գ/ ԴՈՒՇՄԱՆ ՎԱՐԴԱՆԻ ԵՒ ԲԵԿՈՐ ԱՆՈՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՓՈՂՈՑՆԵՐ ԵՈՒՇԵՌՈՒՄ

Վարդանը, երբ Աղվանական պատերազմից վերադարձավ, մկրտվեց, մինչ այդ մայրն այսպես էր մաղթել. «Ես քեզ Աստծուն եմ հանձնում, բոլորի նման ծառայիր, բոլորից լավ ու տղամարդու պես տուն դարձիր»: Վերադարձավ բազմաթիվ շքանշաններով:

Երբ եւս Վարդանի մորը՝ տիկին Զարիկին հիշեցրի Շուշիի գրավումը, երբ հայ զինվորները խաչեր կրելով հարձակվեցին, մայրն ասաց. -Վարդանն իր սրտում արդեն այդ խաչն ուներ, նա առաջիններից, Բեկոր Աշոտի հետ միասին, պարանների օգնությամբ Շուշի ժայռերն ի վեր մագլցելով մտավ Շուշի եւ երկու ընկերների առաջին գործն այն եղավ, որ բանտի դռները ջարդեցին ու հայ գերիներին ազատեցին: Այն վայրում, որտեղ Վարդանն ու Բեկոր Աշոտը պարանների միջոցով Շուշի մտան, նրանց անուններով երախտագետ շուշեցիներն այսօր փողոցներ ունեն:

Եվ դեռ 1988 թվին էր հայտարարել թե՛ Շուշի է մտնելու:

ՈՒրիշ տեսակ էր ասում, հավատով:

1988-ին ընկերները խելագար էին անվանում Վարդանի այդ հայտարարությունը եւ կամ խորհուրդ տալիս, թե ուրիշի չասի: Բայց հոգու հայտնությունն Աստված Ինքն է տալիս, եւ Ինքն էլ առաջնորդում իրականացնել:

Հիսուս հավատով խոսքի մասին գիտություն բանալի է տվել. «Ով որ հավատով այս լեռանն ասի՝ վեր եւ ծովն ընկիր, նրա ասածը կկատարվի»:

Վարդանը հավատով ասաց և առաջիններից էր, որ մտավ Շուշի:

դ/ ԵԿԵՂԵՑԻ ՄՈՐ ԵՒ ԶԱՎԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Եստերն են վկայել, որ Ղազանչեցոց եկեղեցին գործությամբ օգնում էր հայ մարտիկներին: Հայտնությամբ, երազով երեւում, գորավիզում նրանց: Վարդանին նույնպես: Ասացինք, որ Վարդանը ոչ միայն խիզախ էր, նաև պայծառատես, ինչպես մայրն էր ասում խաչն իր սրտում: Եվ մեծ խոնարհում ուներ մեր մեծ սրբավայրերի ու հայ քրիստոնյա շիրիմ հիշատակների հանդեպ: Նրա համար գերեզմաններում հանգչող հայերը, ինչպես որ կարգն է քրիստոնյաներիս, հոգով կենդանի էին և կարող լսել հասկանալ: Եվ ահա, երբ Շուշին ազատագրեցին, Վարդանը Ղազանչեցոց եկեղեցու շուրջ, ինչպես կարգն էր, ուխտի եկողների պատվեց, բայց յուրովի էր Վարդանի ուխտն ու պտույտը. մեծ հավատի մարդկանց, մեծ սիրո մարդկանց հատուկ երկյուղածությամբ ու ակնածությամբ էր: Եկեղեցի-Մոր և նրան կարոտած որդու տուն վերագարձի հանդիպում էր:

Եկեղեցու դուռը համբուրելով, Եկեղեցու շուրջ հանդիպած հարյուրավոր քարերը համբուրելով Վարդանն այդպես իր ուխտն իրականացրեց՝ իր սերն ու ակնածությունը պաշտամունքային խոնարհությամբ մատուցելով գերությունից ազատագրված մեր սուրբ տաճարին, որ Մայրն է իր Քրիստոս Որդու զավակների:

ե/ «ՄԵ՛Ր ՊԱՊԵՐ, ԵՌԻՆԻՆ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ Է, ՀԱՆԳՍԱՑԵ՛Ք»



Եուշին արդեն գրավված էր: Ամենքը եկեղեցու մեջ էին կամ բակում: Աղոթում էին, ուրախությունից արտասվում, փառաբանում Աստծուն: Հաղթանակի տոն էր: Մեծ տոն: Հանկարծ Վարդանի ընկերներն անհանգստացան: Վարդանը չկար: Անհանգստանալն իդուր չէր, որովհետև թուրքերը Դուշման Վարդանի համար գլխազին էին նշանակել: Բան պատահած չլինի: Իսկ որտեղ էր Վարդանը:

Իր ակնածությունը Աստծոն և նրա տաճարին մատուցելուց հետո, Վարդանը մի շիշ Շամպայն ձեռքին, գնացել էր գերեզմանոց: Եվ շամպայնից կաթիլներ կաթեցնելով հայկական գերեզմանների վրա՝ բարձր գոռում էր.

-Մեր պապեր, Շուշին ազատագրված է, հանգստացե՛ք:

Տղերքը, ճանաչելով Վարդանին, նրան գտան գերեզմանոցում հաղթանակի ավետիսը ննջեցյալներին հայտնելիս: Օրհնյալ լինես, եղբայր Վարդան: Թող մի օր էլ մի հայրդի քո երազանքի կատարումը՝ Էրզրի գրավումը քեզ ու քո նահատակ ընկերներին, եղբայրներին ավետիս բերի՝ նույն խոսքերով.


-Մեր պապեր, Էրզիրն ազատագրված է, հանգստացե՛ք:

զ/ «ԱՍՏՎԱԾ ՊԱՇԻ ՔՈ ՈՐԴԻՆ, Ո՛ՆՑ ԷՐ ՀԱՄԸ ԻՄ ԶԱԳԻ»

Զեռքիս Վարդանի ուսուցչուհու հուշերն են. «Երեխա էր, բայց իմաստուն բաներից պիտի հետը խոսելիք: Այնքան ինձ զարմացրեց, որ եկա, ծանոթացա նրա մոր հետ»: Ես էլ ծանոթացա Վարդանի մոր հետ՝ Վարդանի մասին Գազիկի գիրքը կարդալով, բայց... Վարդանի պատարագվելուց շատ տարիներ հետո: Մանավանդ փշաքաղվեցի, երբ մայրը մի մատյան տվեց, ուր Վարդանի դպրոցի դասարանները գերազանցությամբ ավարտելու դիմաց տրված փաստաթղթերն էին, բազմաթիվ շնորհակալագրերը: Վարդանը գերազանց էր սովորել դպրոցում: Արցախ էր գնացել Համալսարանի Իրավաբանական ֆակուլտետի 4-րդ կուրսից՝ ուսումը թողնելով: Այսինքն թե՛ լեգենդար Դուշման Վարդանն այլ մեկը չէր, եթե ոչ մեր Հայրենիքի վաղվա լուրջ մտավորականներից: Իսկ որ սուրբ էր Վարդանը մյուս դրվագների հետ՝ այս դրվագից էլ ենք տեսնում:

-Իմ պատերազմում մայրեր և երեխաներ չեն սպանվելու,- հայտարարել էր նա:

Խոթալուն, երբ գրավեցին, ձմեռ էր, հունվար ամիսը: Ազերի մայրերն իրենց բարուրներով անտառ էին մտել: Ցրտին և սովին չէին դիմանալու: Վարդանը գնաց անտառ, որոնեց-գտավ նրանց, բերեց: Սկսեց խնամել: Նախ երեխաների համար «խտացրած կաթ» ցրով բացեց, տաքացրեց, լցրեց շիշը, մի ծծակ գտավ, ամրացրեց և սկսեց կերակրել:



Ղազանչեցոց եկեղեցին

Ապա «աղեայր» կտրտեց ու բաժանեց մայրերին, որ իրենց սառած ոտքերը փաթաթեցին: Եվ հոգս էր անում, վշտանում թե՛ այս կանանց ոտքերը երեւի բժիշկները կտրեն, որովհետեւ արդեն, ասես թե ցրտահարված լինեն: Ընկերներն անգամ որոշ ժամանակ նեղացան Վարդանից, որովհետեւ սնունդը քիչ էր, ամենքին չէր հերիքում, իսկ Վարդանն իրենց հասանելիք սննդով կերակրում էր ազերի գերի մայրերին, թշնամիներին: Ապա ավտորուսով ամենքին էլ ճանապարհեց մինչեւ այնտեղ, որտեղից կարողանային անվտանգ անցնել յուրայինների մոտ:

Բայց որքան են քրիստոնյա իշխանությունները տարբեր մահմեդականներին: Բոլոր այն ազերիների անունները, որ հայեր էին փրկել, մերոնք ցուցակներով փակեցնում էին պատերին, նրանց մասին շնորհակալությամբ պատմում ուղիղով եւ հեռուստատեսությամբ, մամուլով, իսկ մեր իշխանությունները, չլսեցինք, որ արգելեին: Սակայն ազերի այս մայրերը հասնելով յուրայիններին, ըստ իրենց թելադրած ազերի իշխանավորների, նրանց սպառնալիքի տակ, Մոսկովյան հեռուստատեսությամբ բողոքել էին թե՛ հայերը լավ չեն վարվել իրենց հետ: Որքան դառն ու տղեղ է սուտը՝ ամեն դեպքում: Երիտասարդությունն տարիներին ամենմեծ լսածս անհեթեթությունն այն էր թե՛ ազերիները ակադեմիա ունեն: Տեր Աստված, ասում էի, այ քեզ զավեշտ: Չէ որ ակադեմիա իմաստն իսկ ճշմարտության վավերացման համար է: Իսկ իր բնակիչներին ստել ստիպող, ստերով կերակրող պետությունն ինչ կապ ունի ակադեմիա իմաստի հետ:

Է/ ՀՈՒԶՎԱԾ ԾԵՐՈՒՆԻ ԱԶԵՐԻՆ ԳԱՀ ՏՎԱԾ ԶԵՆՔԵՐԸ ՏՎԵՅ ՎԱՐԴԱՆԻՆ

Մապոյեռնն ասել է. «Ես ու Ալեքսանդրը /Մակեդոնացին/ պարտվեցինք, որովհետեւ մեր հույսը դրեցինք ուժի վրա, բայց Քրիստոս երեկ հաղթեց, այսօր հաղթում է եւ վսիղն էլ է հաղթելու, որովհետեւ իր թագավորությունն հիմնեց սիրո վրա»:

Քրիստոնյայի հաղթական սիրո մասին է այս դրվագը, սեր, որ միայն հոգով գորեղները կարող են դրսեւորել:

Ազերի մի աղջկա, Վարդանի վրա կրակելիս մեր տղերքից մեկը աղջկան սպանում է, թեպետ Վարդանը գոռում էր. -Կին է, չսպանեք դրան: Եվ Վարդանը աղջկա դիակը ձեռքերին առած մտնում է ազերիների տուն: Սրանք սովի են մատնված: Վարդանը քաղցից ճշացող երեխայի շուրթերին շոկոլադ է քսում, որովհետեւ այնքան փոքր էր, որ ուտել չէր կարող, համբուրում է

երեխային, որ հանդարտվի, ապա մորն է տալիս փրտամինների տուփը թե՛ կեր, որ կարողանաս կաթ տալ: Մոր երեսին զարմանք ու ժպիտ է առաջանում: Աչքերին չի հավատում: Այ քեզ տարօրինակ թշնամի, ում գորեղության մասին լեզվեղներ են պատմում, բայց եղբոր նման վարվեց:

- Այս մանկանը,- ասաց Վարդանը,- կարգին մարդ զաստիարակեք, որ չհարձակվի մեր երկրի վրա, եթե ոչ, մինչույնն է, իմ երեխան կհասցնի նրա դեմ պայքարել ու հաղթանակ տանել: Մեր հողը մի ցանկացեք գրավել, մեր հողն Աստծով մեզ է պատկանում:

Ասելիքն ավարտելով Վարդանն ուզում էր հեռանալ, երբ ծերունին՝ տան պապը, կանչեց.

- Տղա՛, տղա՛, տղա՛...

Եվ խնդրեց, որ Վարդանն իր հետ իջնի նկուղ, նվեր ունի նրան տալու: Այնտեղ ծերունին գենքեր ուներ պահած, որոնք հանձնեց Վարդանին ու սասց.

- Տղա, քո մարդասիրությունն Աստվածային է, վերմարդկային, դու ես ճշմարիտը: Այս գենքերը ոչ թե մերոնց, որ ձեր հայրենի հողն են ուզում խլել, այլ՝ ձեզ է արժան ունենալ:

Ը/ «ՈՒՐԻՇԻ ԵՐԵՒԱ ԶԿԱ, ԲՈՂՈՐՆ ԷԼ ՔՈ՛ ԵՐԵՒԱՆԵՐՆ ԵՆ»

«Ով որ չթողնի իր հորն ու իր մորը, իր որդիներին, իր կնոջն անգամ եւ իմ հետեւից չգա, ինձ արժանի չէ»- Ասել էր Հիսուս: Եվ յուրաքանչյուրն այս կարգախոսին հետևում է իր բմբռնման չափ, իր կարողության, իր չափանիշերի կշռով: Վարդանը լրիվ թողեց իր անձնականը՝ Աստծոն հետևորդելը տեսնելով հայկական արդար հաղթանակների մեջ:

Արդեն հայտնի էր, որ ազերիները նրա գլխի համար գլխազին էին սահմանել, եւ մայրն ասում էր թե՛ շարունակ այս աղոթքն էր անում. «Աստված Զան, ինձ այլ բան հարկավոր չէ միայն հաղթանակ եւ երկու մետր հող՝ ննջելու, միայն թե մի թող, որ ազերիների ձեռքն ընկնեմ»:

Մայրն այնուամենայնիվ պնդում էր.

- Ամուսնացիր, որ տանը երեխա լինի:

Սակայն Վարդանը, ինչպես ֆիդայական կարգն է արդեն ամուսնացել էր... գենքի հետ՝ ըստ Աստծո պատվերի իր անձնականը փոխարինելով Հայրենիքին ծառայությամբ:

Մի օր էլ, երբ պատերազմից կարճ ժամանակով տուն էր եկել, եւ մայրը նույնն էր պնդում թե՛ ամուսնացիր, տանը երեխա լինի, Վարդանը մոր թեւից բռնած տարավ պատուհանի մոտ եւ ցույց տալով բակում խաղացող բազմաթիվ երեխաներին, ասաց.

- Ուրիշի երեխա չկա, սրանք բոլորն էլ քո՛ երեխաներն են: Ես անգամ թուրքի երեխաներ եմ թուրքի ձեռքից փրկել: Ուրեմն՝ ուրիշի երեխա չկա...

- Ուրիշի երեխաներ չկան,- ասում է Վարդանի մայրը՝ տիկին Զարիկը,- բոլորն էլ՝ մեր երեխաներն են: Վարդանն այնպիսի ընկերներ ունի, որ այսօր ինձ համար որդիներ են:

...Ուրիշի երեխա չկա: Աստվածամայրն, օրինակ, մայրն է բոլոր քրիստոնյաների, ինչ ազգից էլ նրանք լինեն: Եվ քրիստոնյաները նրան ավելի են սիրում, նրանից ակնածում, նրանից բարերարություն ակնկալում, քան մեզ յույս աշխարհ բերած մայրերից: Բարին՝ Աստծուց: Ամեն:

Թ/ - ՕՐԵՐՍ ՎԱՐԴԱՆԻՍ ԸՆԿԵՐՆ ԷՐ ԵԿԵԼ՝ ԳԵՆԵՐԱԼԸ, ՄԵՐ ԿՈՄԱՆԴՈՍԸ

Վարդանի տուն- թանգարանում եմ: Մայրական հոգատար ձեռքի ներկայությունն այստեղ ամենուր է զգացվում: Երբ գրուցեք Զարիկ մայրիկի հետ, պիտի մտածեք, որ այլ կերպ չէր էլ կարող լինել:

Գրադարակներին Վարդանի մասին պատմող գրքեր են, ամսագրեր, թերթեր, Նժդեհի նկարը: Իսկ դիմացի պատին Վարդանի մեծադիր լուսանկարն է՝ ազնվական- մտավորականի դիմային շեշտերով եւ քարակոփ հայացքով, որ հուշում է Նժդեհյան մտավորականի տեսակի մասին՝ մինչ ի մահ հայրենադավան: Արցախյան շարժման սկզբից Վարդանը մշակույթի գործչի փաստաթղթերով պարտիզանական ջոկատներ էր պատրաստում Արցախում, զենք տեղափոխում: Իսկ պատերազմի ժամանակ, անգամ անվանի մարդիկ են Վարդանից պատերազմելու դասընթացներ անցել: Որոշել էր մինչեւ վերջ նվիրվել: Կիսատ սիրով արված գործը կիսատ էլ արդյունք է տալիս: Ընկերներից մեկը նրան ասում է. «Պատերազմը վերջանա, կապրենք Արցախում, ես՝ արեւելագիտական, դու՝ իրավաբանական ֆակուլտետում դասախոս կաշխատենք»: Վարդանը նայել է ընկերոջն ու ասել. «Ինչ միամիտն ես, չգիտես, որ իմպեսները չեն վերադառնում, նահատակվում են»:

Մայրը պատմում է.

- Օրերս Վարդանիս ընկերն էր եկել՝ իմ որդի



Արկաղիկը՝ մեր Կոմանդոսը: Կանգնեց նույն քարտեզի առաջ, որ հիմա դու ես կանգնել: Նայեց ու... աչքերը լցվեցին: Ասաց.

- Զարիկ մայրիկ, էնքան էինք բացել ու ծայել այս քարտեզը, որ քրքրվել էր: Գրոհների մեծ մասը Վարդանն ինքն էր պլանավորում ու հանձնում ինձ:

Արկաղիկը մեծարում էր Վարդանիս: Վարդանս էլ, երբ տուն էր գալիս, Արկաղիկին էր մեծարում, ասում էր՝ մեր Կոմանդոսը: Արկաղիկն էլ է իմ որդին:

Ժ/ «ԴԵՌ ՄԱՆԿՈՒՅ ՄՈՐԹՎԵԼ ՈՒ ՀՈՇՈՏՎԵԼ Է ԻՄ ՀՈԳԻՆ»

«Մարդացել եմ շատ պատմավեպեր, վիպակներ: Գրքերի օգնությամբ մասնակից եմ եղել Ավարայրի ճակատամարտին: Շիրազի օգնությամբ՝ Դանթեի սարսափելի դժոխքն եմ տեսել իմ տառապյալ հոգում: Դեռ մանկուց մորթվել ու հոշոտվել է իմ հոգին: Այժմ էլ՝ Կոմիտասի ճիչն է լսվում իմ ականջներում: Չի լռի երբեք «Անլույսի զանգակատունը» և այն ամենը, որ հայի մեջ անմար է պահում անցյալը: Անցյալով է հայը ստեղծում իր ապագան: Եվ կստեղծի, քանի ղեռ կենդանի մեկ հայ կա»:

Վարդան Ստեփանյան, 1986թ.

Վարդանի այս խոսքերը ոչ թե հավուր պատշաճի եւ գեղեցիկ հնչելու համար են, այլ՝ Հայրենադավանություն: Խորհրդային տարիներին մեր միտքը փչացրել էին՝ չըմբռնել կամ սակավ ըմբռնել այն, ինչ կարողում էինք: Բայց «Գրքերի օգնությամբ մասնակից եմ եղել Ավարայրի ճակատամարտին» եւ «մեր ազգի հետ պատահած բոլոր ծանր դիպվածներին» խոսքն արդեն հոգեոր ընթրնում է: Երբ արժանավոր նախնիներիդ սիրելով տեխափոխվում ես ժամանակների մեջ, ազգիդ հետ ապրելով նրա ապրածները, երևույթ, որ քեզ իմաստություն է բերում՝ ժառանգավորի հավատարիմ սիրով սիրելու ժողովրդիդ եւ Տիրոջ աջակցությամբ շարունակելու քո ժամանակում:

Վարդանի նման հավատարիմները իրենց գործերով կենդանի են, եւ Աստվածային իրենց սրտերով սրբության ըմբռնում են ներազդում աշխարհ եկող սերունդներին: Այսօր ննջում է նրանց մարմինը՝ մինչեւ օրն ու ժամը Տիրոջով Հարություն:

Ոմանք կարծում են թե՛ լավ քրիստոնյան նա է, ով Սուրբ Գրքից շատ հատվածներ անգիր գիտի, մոռանալով, որ սատանան մեզանից էլ առավել շատ անգիրներ գիտի: Ուստի՝ լավ քրիստոնյա



լինելն այն է, երբ ապրածդ կյանքը վերածում ես վարքի: Քսանվեց գարուն ապրեց Վարդանը, սակայն հասցրեց իր կյանքն ապրել որպես վարք:

Եվ ժամանակն է, որ մեր եկեղեցին նոր սրբադասումներ անի՝ սրբերի կարգը դասելով Անդրանիկին, Նժդեհին, Աղբյուր Սերոբին, անվանի ֆիդայիներին: Այսօր էլ՝ այսօրվա արժանավորներին եւ Վարդանին՝ այդ խմբի մեջ: Յուրաքանչյուրին՝ ըստ իր արժանիքների: Ինչպես առաքելական կարգերն են պատվիրել՝ հանուն Քրիստոսի նահատակվածների հիշատակները կատարելով շարաթ օրերին: Այս առավել մեզ համար է պետք. նախ արժանավորների հանդեպ մեր պարտավորության կատարմամբ, ապա նրանց գործունեությամբ անարատ հավատով քաջալերվելու եւ ինչու չէ, նաեւ՝ մեր հոգեկան անհավատության խախտումներից բժշկվելու համար, որովհետեւ «Սրբերի բարեխոսությունը» նրանց գործերով ժառանգավորներիս թեւակից է լինում: Իսկ արժանավորների վարքերը ո՞վ կարող է առավել խնամքով պահել, հարգանքի ու սիրո արժանացնել եւ մատուցել երեխաներին, եթե ոչ միայն մեր Մայր Եկեղեցին:

ԺԱ/ ՎԱՐԴԱՆԸ ԵՒ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

Վարդանի մասին գրելիս նաեւ հասկացա, որ Վարդանին արժանավորապես, համազգային ըմբռնմամբ զեռ չեն գնահատում նրա կուսակցական լինելու պատճառով: Հիշենք որ Հայոց մեծերը, ինչպես նաեւ Նժդեհն ու Անդրանիկը մերժեցին կուսակցությունը, իրենք եւս ինչ որ ժամանակ կուսակցական լինելով: Քանի որ Վարդանը Նժդեհատիպ մտավորականի տեսակ է եւ ընդամենն ապրեց 26 գարուն, վստահ ենք, որ թե ապրեր, ինքն էլ պիտի ամեն տեսակ կուսակցություն մերժեր, ինչպես իր սիրելի մեծերը: Ինչպես Նժդեհը, որ նախ մերժեց հայի կուսակցական լինելու խնդիրն, ասելով.

-Հասկանանք, որ հայր պատճառ չունի կուսակցականանալու: Իսկ մեր ժողովրդի թվական տկարությունը, մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը եւ երեկվա մեր Եղեռնը կը բավեն գիտակցելու, որ հայր կուսակցականանալու նաեւ իրավունք չունի:

(Նժդեհ. հտ. 1, Երեւան 2002):

Վարդանի Հայրենասիրությունն ու հոգեւոր հասունությունն այն է ցույց տալիս, որ վաղ թե ուշ, իր Ուսուցչի՝ Քրիստոսի խոսքը, որ վերաբերվում է նաեւ կուսակցություններին, վերհիշելով պիտի մերժեր ամեն տեսակի կուսակցություն, ինչպես մեծերին է հատուկ, քանի որ Հայրենի Տունն է

կարևոր:


«ԵԹԵ ՄԻ ՏՈՒՆ ԻՆՔՆ ԻՐ ՄԵՋ Է ԲԱԺԱՆՎՈՒՄ, ՆՄԱՆ ՏՈՒՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԱՆ ԳՈՒՆ ՄՆԱԼ»- բացատրել է Հիսուս: Իսկ կուսակցություններն

այսպես թե այնպես՝ տարաբաժանված են փոքր մեր ազգի մեջ: Այսինքն թե, թեպետ հայրենակցական են, բայց փոքր մի ազգ են տարաբաժանում միմյանց դարձնելով թշնամի ու հակառակորդ: Եվ այդ, Հայոց Տան մի փոքր ժողովրդի համար, ինչպիսին մերն է, առկա վտանգ է դառնում: Օտար ուժերը, որ մեր ժողովրդի քայքայումն են հետապնդում, ուրախանում են մեր երկրում կուսակցությունների ավելանալով, դրանք ներքին պառակտումներով իրենց ազգը կքայքայեն, ասելով, ե մենք դյուրին կտիրենք դրանց: Անկարելի է, որ Վարդանը եւս մի օր այդ չտեսներ՝ Անդրանիկի նման հայտարարելով. «ԻՄ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԻՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ Է»:

Վստահ ենք. Վարդանի տեսակն այդ պիտի ասեր, քանի որ իր գործերով ու վարքով արդեն իսկ ասել էր:

Եվ հետո, Վարդանը Եկեղեցապաշտ լինելով, ինչպես իր նախնի մեծերը՝ Սուրբ Վարդանանք. /«Գրքերի օգնությամբ մասնակից եմ եղել Ավարայրի ճակատամարտին»- գրում է Վարդանը/. իր բարձր հայեցի հոգով, Եկեղեցապահ Վարդանանց հետ Ավարայրի ճակատամարտում եւս «մտովի» մարտնչողը, որ Վարդանի հոգու մեծության եւ հայրենիքի հարազատ որդի լինելու մասին է խոսում, կրկին պիտի մերժեր կուսակցությունը, ըստ Նժդեհի ուսուցման թե.

«Կեղծ եկրոպականության գերի հայ կուսակցությունները կրոնական պաղոթյուն մտցրին մեր ժողովրդի մեջ: Մարդկության թշնամի է ամեն «գիտնական», որ թուխակում է. «գիտությունը ոչ կրոն ունի, ոչ էլ հայրենիք»: Մեր երկրագնդի վրա անհայրենիք, անցեղ եւ անաստված է մարդկային տկարությունը՝ ստորությունը միայն»: (Նժդեհ. հտ. 1, Երեւան 2002):



Ինձ համար ոչ միայն Վարդանը, այլև, այլևայլ կուսակցությունների անդամագրված բոլոր հերոսներն ու նահատակները որպես կուսակցական չեն դիտվում, այլ համազգային, բնորոյալ որդիների տեսակ, ինչպես Նժդեհն է այդ մասին ուսուցանում.

«Նահատակները...

...Չկան կուսակցական նահատակներ ու հերոսներ, կա ու կմնա ազգային մարտիրոսագրությունը եւ հերոսականը:

Սակայն այդպէս է հասկացել մեր ժողովուրդը, ո՛չ, դժբախտաբար:

Հետեւանք: Մեր նկուն ու ողբալի վիճակը:

Պատճառը: Կույր եւ բարբարոս կուսակցամոլությունը- մի զարհուրելի ախտ, որ պիտի թուլանա, որ ուժեղանանք ազգովին:

Այս ուղղությամբ պիտ աշխատեն դպրոցը, մամուլը եւ ինքր՝ ժողովուրդը»:

(ՆԺԴԵՀ. Էջեր իմ օրագրէն, Պաշտամունքը մեծ մեռելների):

Նժդեհի այս խոսքերով պիտի լուսավորվենք, որպեսզի մեր հոգեւոր եւ Հայրենական ներուժը իր տարաբաժանումներից օրրստօրե ետ դառնա եւ միաբան եւ մեկ ոգիով հզորանա: Որպեսզի նաեւ արժանիորեն, համազգային ոգիով պատիվ մատուցենք մեր մեծերին և նահատակներին:

ԺԲ/ ՎԱՐԴԱՆԻ ՀԱՌՆՈՒՄԸ

" Եթե ցորենի հատիկը հողին մեջ ընկնելով չմեռնի, ինքը միայն կմնա, բայց եթե մեռնի, շատ պտուղ կբերի": -Ասել է Լուսի Վարդապետը Հիսուս:

Եվ ահա, Դուշման Վարդանի նահատակվելուց շատ տարիներ անց, հեռու-տացույցով հաղորդում էր նրա մասին: Արժանավոր երգիչների ու երգահանների ընտիր երգերով ուղեկցվող հաղորդում էր:

Եվ ահա, հաղորդումը մերթ ընդ մերթ ընդմիջվում էր մանուկ ու պատանի բազմաթիվ Վարդանների խոսքերով.

- Ես Վարդան Դավիթի Ամայանն եմ, մականունս՝ Դուշման:

- Ես Վարդան Լեւոնի Խաչատրյանն եմ, մականունս՝ Դուշման:

Ներկայացան բազմաթիվ մանուկ ու պատանի Վարդաններ, որ իրենց մականունը Դուշման էին դրել:

Եվ ահա Դուշման Վարդանը Հայրենիի համար զոհվելով սկսել էր Լուսի Վարդապետի ասածի նման հառնել բազում պտուղներով, բազում Վարդաններով: Ճիշտ որ փշաքաղվել կարելի է:

Եվ Դուշման Վարդանին ավելի նման լինելու համար, հարկ է, որ նրա նման գերագանց սովորենք ու մեր հոգևոր պատմությունը քաջ իմանանք:

Ճշմարիտ եմ ասում, պատանեկան գեղարվեստին այնքան էլ վատ ծանոթ չեմ: Մանավանդ պատանեկան ամսագրում տասներկու տարի հետեւել եմ Հայաստանում աճող գրական սերունդի աճին: Բայց երբ հաղորդման ժամանակ ընթերցեցին Դուշման Վարդանի 10-րդ դասարանի շարադրությունը, զարմանքով եւ հիացքով էի լսում նաեւ՝ ափսոսանքով: Վստահ էի, որ Վարդանը կարող էր նաեւ հայ նշանավոր գրող դառնալ: Այս ինչու՞ եմ ասում, որպեսզի մեր պատանի Վարդանները ոչ միայն Վարդանի հերոսությամբ լիցքավորվեն, այլ հավելյալ նաեւ նրա բարոյական խոշոր անհատ լինելու կերտվածքը եւս Աստծով ձգտեն ունենալ, մինչև որ ընթերցեն արդեն Բանականության Գուլի, մեզնից մարդ կերտող՝ Քրիստոսի Ավետարանը:

Ավարտեցինք Դուշման Վարդանի վարքը: Աստծո օրհնությունը Վարդանին եւ բոլոր օրերի Վարդանանց: Չեզ և մեզ էլ: Ամեն:

ՉԱՐՈՒԹՅՈՒՆԻՅ ԴԱՐՁՈՂԻՆ ՆԵՐՈՒՄ Է ԱՍՏՎԱԾ

Մշակութաբանության պրոֆեսոր, բանաստեղծ Ռոմանոս Սահակյանի պատմած վկայությունը

Ռոմանոսին այս վկայությունը պատմել է Արցախի Թալիշ գյուղի Կատերինան /Եկատերինան/, որ ապրել է 112 տարի: Կատերինան պատմական մի հուշ էլ ուներ իր մասին, որ նրա դիրքը բարձրացնում էր գյուղի եւ շատ հայ կանանց հանդեպ: Կատերինայի հարսանիքին ներկա է եղել ինքր՝ հայ նշանավոր գրող Բաբ-ֆին եւ համբուրել է հարս Կատերինայի ձեռքը: Այդ այն շրջանն էր, երբ մեծ գրողը շրջագայում էր Արցախ աշխարհում եւ նյութեր էր հավաքում գրելու «Խամսայի մեկըությունները»



աշխատությունը:

Իսկ այս վկայությունը Ռոմանոսենց գերդաստանի հարսերից մեկի Անինկա Սահակյանի մասին է:

1954 թվականին Անինկան, որ Հայրենական պատերազմում կորցրել էր ամուսնուն ու տան տղամարդու գործերն էլ էր ինքն անում, իր ունեցած ցորենը տանում է իրենց գյուղի ջրաղացներում աղալու: Բայց ահա բոլոր ջրաղացներն զբաղված են, իսկ տանը կտոր հաց չկա: Անինկան ստիպված ցորենը հասցնում է հարեւան Մատաղիս գյուղ եւ այնտեղ աղում: Բնական է, բեռը ծանր, չարչարվելով է ետ բերում: Իր այս չարչարանքի համար դժգոհ խոսքեր ասելով տուն է դառնում Անինկան: Գյուղի եկեղեցու կողքից անցնելիս, էլ չի դիմանում եւ սկսում է անեծքի վատ խոսքեր ասել Աստծուն էլ: Եվ դեռ իր անեծքի խոսքը կիսատ հանկարծ մեր Անինկայի դեմքը ծովում է: Անցնում է մի քանի ամիս, սակայն Անինկայի դեմքը չի ուղղվում: Եղելությունից անհանգստացած ընկերուհիները, հարեւանները եւ Կատերինան, որ հստակատես, խելացի ու իմաստուն կին էր, գալիս են տեսություն:

- Անինկա քույր,-խրատում է Կատերինան: -Աստծուն վատ խոսքեր ասացիր, պատժվեցիր, բայց Աստված ներող է: Վեր կաց, գնանք Հոռեկա վանք, այնտեղ մեղա արի, Տերը կների եւ դեմքը կուղղվի:

Եվ ամենքն էլ Կատերինայի ասածն են հաստատում:

-Այո, Անինկա քույր, միակ ղեղղ այն կլինի, որ մեղա գաս Աստծո առաջ: Կատերինան Աստծո Խոսքով աճած, պատվարժան կին էր եւ գյուղի կանայք ամենքն էլ նրան հարգում ու հաճախ էին նրա խորհրդով ու իմաստությունը շարժվում: Եվ Կատերինան Անինկային տանում է Հոռեկա վանք, որ Թալիշի հին գյուղատեղին էր: Այս վանքը կառուցվել էր 4-րդ դարում, ունենալով Գլխո վանք անունը եւ այստեղ եւս, բացի Ամարասից, Մեսրոպ Մաշտոցը դպրոց էր բացել իր ժամանակին: Հետագայում վանքի ավերակների վրա 1276 թվականին նոր վանք է կառուցվել, արդեն իր նոր անվամբ՝ Հոռեկա, որ գյուղի անունից է: Հոռեկ գյուղ, այսինքն Ուռենու գյուղ կամ Ուռենիների գյուղ: Հոռեկա վանք, այսինքն Ուռենու կամ Ուռենիների գյուղի վանք:

Կատերինան ու Անինկան մի քանի գիշեր մնում են Հոռեկա վանքում: Անինկան ներում է խնդրում Աստծուց, ապաշխարում իր տգեղ խոսքերի համար եւ վերջին օրը դեմքն ուղղվում է: Աստված ներում է Անինկային:



ԿԱՆՉԵՑԻ ԱՍՏԾՈՒՆ ԵՎ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՀՐԱՆՔՈՎ ԲԺՇԿՎԵՑԻ

Վկայում է մանկագիր Ռաֆայել Հայրապետյանը



Ռաֆայել ԼՂՀ-ի Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ գյուղից է, երկու ժողովածուի հեղինակ եւ տնօրենն իրենց գյուղի դպրոցի: Ռաֆայելի մասին Գուրգեն Լոռեցին պատմեց եւ ասաց.- Աստծուն է կանչել եւ հրաշքով բժշկվել, չէիր կամենա «Արցախյան վկայությունների» մեջ հիշատակել: Մնացածը Ռաֆայելի պատմածով:

- Ընդհանրապես Աստծուն հավատում եմ: Գրելու ժամանակ զգում եմ, որ մի հզոր ուժ հովանի է լինում, ներշնչում: Իսկ զարմանալի իմ բժշկությունը 2006 թվականի գարնանը եղավ: Հիվանդացել էի գրիպով, որ հետո բարդացավ, պատճառ դառնալով գլխիս ուժեղ ցավերին: Արդեն ամիս ու կես է տառապում էի այդ ցավերից, որ քանի գնում, այնքան սաստկանում էին: Գլխիս ցավի հետ ականջս էլ սկսեց սաստիկ ցավել: Արդեն անտանելի էր: Ցավից արթնանում էի ու մտածում: Ուրիշ ելք չէի տեսնում, քան Երեւան գալ, բժշկվելու: Ի վերջո ցավին չդիմացա եւ կանչեցի Աստծուն: Ասացի,- Աստված, փրկիր ինձ այս ցավից:

Լուսադեմին երբ բակ դուրս եկա, հանկարծ ինչ- որ բան սկսեց եռալ, շարժվել քունքիս տակ: Ապա թթիցս զարշահոտ մի զանգված դուրս ժայթքեց, եւ բոլոր տառապանքներս անցան:

Փափք տանք Աստծուն: Ամեն:

ՄԱՐԻԱՄԱՂՈՐԵՑԻ ԱՐՏՅՈՄԸ



Ղիսատանքը գիշերային էր, տեսում էր մինչեւ գիշերվա 1- 3-ը, պատահում էր մինչեւ լուսաբաց: Մի քանի սրբազրիչներ էինք, մի քանիսն էլ արճիճից տառեր շարող: Այս շարողների մեջ կարճ հասակով մի տղա՝ Արտյոմը, որ չգիտես ինչու, էջերը երբ տանում էի, որ ուղղումները վերաշարեր, անընդհատ դժգոհում էր: Բնական է, գիշեր էր, եւ մանավանդ ձմեռները ամենքն աշխատում էին ժամ առաջ գործն ավարտել ու տուն գնալ: Չորս կողմից նեղում էին մեր Արտյոմին, շտապեցնում: Հետո այդ բաները, թվում է, հասկացա: Իսկ այդ ժամանակ ինքս իմ մեջ բարկանում էի, թե դիտմամբ ու անտեղի է ինձնից դժգոհում, երբ իմ պարտավոր գործն եմ անում, ինքն էլ իր: Եվ մի անգամ երբ մոտեցա Արտյոմին ոչ բարյացակամ վերաբերմունքս արտահայտեմ: Վե՛ճ, որ կարող էր կովի վերածվել, որ պատշաճ բան

չէր: Բայց, այնուամենայնիվ, երբ բարկացած մոտեցա Արտյոմին, անակնկալից ապշեցի. Արտյոմի գլխավերեւում, մոտ երկու մետր բարձրության վրա հանկարծ կոոր, լուսավոր մի շրջանակ հայտնվեց /մոտ յոթանասուն սմ. շառավիղով շրջանակ էր/ եւ շրջանակի մեջ՝ Աստվածամայրը, նկարի նման էր, բայց՝ կենդանի /միայն գլխի մասն էր/: Եվ, ղեռ երեք մետրի չափ կար, որ Արտյոմին հասնէի, բայց տեսիլքը տեսնելով, բայց ամենեւին տեսիլքից չզարմանալով եւ ինչ- որ տեղ էլ գոհ, որ Աստվածամայրն իր երեւալով մեզ հետու պահեց անիմաստ վեճ ու կովից, ետ դարձա: Եվ ասում էի. «Երանի քեզ, Արտյոմ, երեւի տեղյակ էլ չես, որ Աստվածածինը քեզ սիրում է եւ իր երեւալով ինձ է հանդիմանում»: Այս տեսարանը տարբեր օրերի կրկնվեց երեք անգամ: Բարկանում, գնում էի Արտյոմի հետ վեճ ու կովի, եւ Տիրամայրն էր որպէս ինձ նախատինք ու հանդիմանանք երեւում: Երրորդ անգամ Տիրամայրը խոսեց. «Անարդար ես Արտյոմի հարցում: Նրա հոգին չես ճանաչում: Ինքն արդար է: Համբերիր: Միասին ինձ համար գործ եք անելու»: Այդպէս Աստվածամայրը նախ ինձ ազատեց անհեթեթ վեճ ու աշխարհիկ կովից: Իսկ թե վեճ լինէր, ինձ աշխատանքից գուցե հեռացնէին, որովհետեւ քաղաքական թերթի համար այնքան էլ լավ սրբագրիչ չէի, միտքս միշտ ուրիշ տեղ, իմ գրելիք նյութերի հետ էր: Հաճախակի նկատողություններ էի ստանում եւ, եթե վեճ էլ լինէր, հետեւանքները չէին ուշանա: Վարձով եւ գրողներով ապրող մարդու համար այդ չար ելք կլինէր: Սակայն Տիրամոր հանդիմանությունն ինձ փրկեց: Զանազի ընդհանրապէս համբերատար լինել: Երբ իմ էջում սխալներ էր գնում, հույսս Աստծո վրա էր, որ աշխատանքից չհեռացնեն: Մինչեւ որ խմբագիրը՝ Այդին Մորիկյանը, որ հավատացյալ մարդ էր, հոգեւոր էջեր էլ օրրստօրե վստահեց ինձ, ապա իմ առաջարկով շաբաթական հոգեւոր առանձին մեկ էջ էլ բացեց՝ «ԽՈՒՄԱՆԸ»: Ապա խնդրեցի գործս փոխել եւ «Հոգեւոր մեկնաբանի» հաստիք ստեղծեց եւ ազատվեցի սրբագրությունից: Եվ տեսնելով, որ աշխատատեղում, աթոռների վրա եմ քնում, իր հանգստյան սենյակն էլ տվեց, որ այնտեղ ապրեմ: Հետո առանձին սենյակ էլ տվեց: Եվ խմբագրությունում այդպէս ապրեցի յոթ տարի: Թեպետ խմբագիրները փոխվեցին, բայց Աստծո շնորհիվ թողեցին, որ խմբագրությունում ապրեմ: Եվ այդ ամենն եղավ Աստվածամոր բարեխոսությանը, որովհետեւ լրագրողներից մեկը Այդին Մորիկյանի հոգեւոր այս գործի մասին տեսիլք տեսավ ու պատմեց: Այդպէս, անցման այդ տարիներին, կառավարական թերթում Այդին Մորիկյանի հետ մի փոքր քարոզություն արեցինք: Այդինը նաեւ համաձայնվեց, որ հոգեւոր էջերով համարներից հիսուն թե հարյուր օրինակ նվիրենք բանտարկյալներին:

Իսկ Արտյոմի հետ կապված տեսիլքի մասին մտածում էի.- Տեր Աստված,- ահա որքան տարբեր են Քո շավիղները, բայց դու ահա սրտերն ես քննում: Տեսրով հավատը մի բան չէ՝ Քեզ համար, այլ մարդու տեսակը, այլ՝ ներքին հավատը, որի մասին այս մարդը գոնե մեկ բառ չասաց: Այս տեսիլքն ինձ համար միշտ թանկ, հրաշալի հուշ մնաց եւ ինձ համար, անհամբեր պահերի համբերության կոչող, սուրբ հանդիմանանքով հանդիմանող կենդանի մի խրատ: Ես տեսիլքի մասին ոչ որի չպատմեցի, Արտյոմին էլ չպատմեցի: Կարծեցի՝ չի հավատա: Բայց մեծս զարմանք եւ ակնածություն առաջացավ Արտյոմի հանդեպ: Աստված հունդ ուներ մեր մեջ եւ կերտում էր մեզ, ամեն մեկիս առանձին, բայց ըստ Իրեն: Պիտի կարողանայինք լսել, որ ըստ Իրեն էլ առաջնորդեր:

Եվ տարիներ անցան: Արտյոմը, որ արդեն շարվածքները ոչ թե արճիճի մեքենայով, այլ համակարգիչով էր կատարում, տեղափոխվեց այլ խմբագրություն: Եվ ավելի մտերմացանք, այնքան, որ շատ անգամ իմ հոգսերն իմանալով, իր խնդիրներն էր դրանք համարում եւ հաճախ սրտանց օգնում էր: Եվ ես՝ Աստծո պարգեւած գրեթե եղբոր նման մի ընկեր ունեցա: Իսկ մենք, մարդիկ՝ հաճախ արտաքնապէս ենք դիտում ու դատում, եւ հաճախ էլ մեր փոքր խնդիրներից իզուր բարկանում, դրանք ծայրահեղացնում, անմտորեն միմյանց ատում: Եվ բարկանալով կորցնում շատ եւ շատ կարեւոր, թանկ բաներ, ոսկի բաներ՝ ընկերասիրություն եւ մարդասիրություն:

Աստվածամայրը նախօրոք հայտնեց այն, ինչ հետո պիտի լինէր: Եվ ահա, այնպէս ստացվեց, որ Աստծո կամոք, Աստվածածնի հայկական երեսուցների մասին սկսեցի այս մատյանը պատրաստել, որ Արտյոմն սկսեց շարել: Ամիսներ անց, մատյանի գրեթե կեսին էինք հասել, երբ ես հանկարծ հիշեցի տպարանի ձմեռային գիշերվա մեջ Աստվածածնի հայտնությունը, թե «Միասին ինձ համար գործ եք անելու»: Եվ այդ մատյանն էլ, ուրեմն, ծրագրված էր եղել, որովհետեւ երբեւէ նման ծրագիր հասու չէի իմ առջեւ դնել: Միայն Աստված գիտի, թե մեր մեջ ինչ կա, եւ ապա ինչ է լինելու կամ ինչ գործ ենք անելու: Եվ հասկացա թե՛ առաջնահերթ, ոչ թե՛ մեր ղեռ չնորոգված, չվե-



բաժնված մարդկային կամքը, այլ Աստծուն լսելն է ամենահանգիստն ու ամենախաղաղը, ամենաօրհնյալը եւ ամենաօգտակարը ամենքիս համար էլ:

Եվ մատյանի շարվածքը մոտենում էր ավարտին, երբ այս հայտնությունը պատմեցի Արտյոմին, իսկ նա փոխադարձաբար պատմեց, թե իրենց գյուղի անունը՝ Մարիամաձոր է, /Արցախ, Հաղրութի շրջան/, եւ իր դստրիկի եւ քրոջ դստեր անունները՝ Մարիամ եւ զրեյ: Այդպես. Աստվածամայրն իրենց թե գյուղի, եւ թե տոհմի սրբուհին է:

Ես հոգեւոր մայր ունեմ, որ երկար տարիներ առաջ Նորքի Աստվածամոր եկեղեցում Տիրամորից հայտնություն է ստանում իմ նեղ օրերին ինձ օգնել: Եվ նրա անունն էլ է Մարիամ: Նաեւ Մարիամ եւ բոլոր այն կանայք, ովքեր Աստվածամոր նմանություններն ունեն եւ սրբանվեր են, նրանք ինչ այլ անուններ էլ ունենան, հոգով Մարիամ են: Այս հարցի մասին մի գեղեցիկ վիպակ ունի մեր գրչեղբայրներից Հակոբ Սողոմոնյանը: Պատահական բաներ չեն լինում: Օրհնյալ է Աստված: Ամեն:



«Նորհր առատացավ...»:

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻՎԸ

ԿԱՊԻՏԱՆ ԳՆԵԼ ԾԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ



Վկայությունների այս փունջը ընկերոջս՝ արձակագիր, լրագրող, «Հայ գինվոր» թերթի աշխատակից, կապիտան ԳՆԵԼ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ դեռևս անտիպ «Գիրք սիրո եւ սրի» ժողովածուից է: Գնելը պատերազմի դժվարին օրերին ճակատից ճակատ, զորամասից զորամաս անցնելով գրի է առել հարյուրավոր կենդանի ու հազթ դրվագներ: Խնդրեցի նախախնամություն հետ առնչվող հատվածներից տրամադրել իմ գրառած «Արցախյան վկայությունների»-ի երկրորդ գրքին: Շնորհակալ եմ, Աստված օրհնի կապիտանին, որ խնդրանքիս սիրով ընդառաջեց:

— Այսատանից եկած ֆիդայիներն ինձ ապեր էին ասում, չգիտեին, որ հոգևորական եմ: Դե, մեղք էլ չունեին... ես էլ մորուք ունեի, իրենք էլ...: -Վկայում է Գանձասարի հոգևոր հովիվ Տեր Հովհաննեսը:

Այնպիսի օրեր էին, որ հոգևորականները մի քիչ ֆիդայի, իսկ ֆիդայիները մի քիչ հոգևորական էին, որովհետև յուրաքանչյուր պատերազմի արդար ընթացքն ու ավարտն Աստծուց է:

Այդ օրերին Տեր Հովհաննեսին անվանում էին նաև Տեր Ռեմբո, հայտնի ֆիլմի հերոսի անունով. հիշենք, որ Ռեմբոն միայնակ ելնում էր խարդախ թշնամու մի ողջ բանակի դեմ ու հաղթում: Եվ ճշմարիտ որ, վկայում են, թե մեր քահանան ծանր գնդացիին էր ուսին հենելով, «Ավտոմատի» փոխարեն գործածում: Պատմում են նաև, որ երբ մեքենայի անվաղողը փոխելու հարկ էր լինում եւ համապատասխան սարք չէր գտնվում, Տեր Հովհաննեսն էր իր ծառայությունը առաջարկում: -Տիրոջ շնորհները՝ Տիրոջ հաղթանակի համար,- ասում էր Տեր Հովհաննեսը, ապա թե. -Որդյակ, ինչքան ժամանակում կփոխեք: -Հինգ րոպեում, Տեր Հայր: -Եվ հսկայազարմ քահանան մեքենայի համապատասխան հատվածը կտրում էր գետնից, պահում էր այնքան, մինչև անվաղողը փոխեին: Նաև, պատերազմի թեժ պահին, հանկարծ անհրաժեշտ էր դառնում ծանր ռազմատեխնիկայի ուղղությունը փոխել, ըստ թշնամու հարձակման փոխվող ճակատների: Եվ երբ համապատասխան մեքենաներ չէին լինում, Տեր Հովհաննեսն իր կարճ ու սուրբ աղոթքն էր ասում... եւ մոտենալով՝ միայնակ փոխում էր ծանր ռազմատեխնիկայի ուղղությունները: Բնականաբար, նման զորավոր հովիվ քահանա ունենալով հոտն ավելի հանգիստ ու վստահ է լինում, առավել վայելում Աստծո մոտիկությունն ու արժեվորում սրբությունը, սրբության պահպանությունը:

Այժմ անցնենք մեր կապիտան գրչեղոր գրառումներին՝ հարկ եղած տեղերում մի քանի խոսք հավելելով Կյանքի Աղբյուր Սուրբ Գրքից:

Ես այդ օրերին ապրում էի այս խցում,- Գանձասարի վերանորոգվող արևելահայաց հատվածը ցույց տալով,- պատմեց Տեր Հովհաննեսը: Մահճակալս դրված էր այս պատուհանի մոտ: Դիմացի բարձունքից սկսվեց հերթական, բայց այս անգամ ահեղ մի հրետակոծություն: Հետո սկսեցին ռումբեր նետել ինքնաթիռից: Հիմնական նշանակետը Գանձասարն էր՝ մեր ոգու ամրոցը: Սակայն Աստծո բարեհաճությամբ ոչ մի արկ չէր հասնում նշանակետին: Ես նստած էի մահճակալին: Լսվում էր մոտեցող ինքնաթիռի ձայնը: Հանկարծ մեկն ինձ ասաց. «Դուրս եկ խցից»: Զարմանքով նայեցի շուրջըլուրս, խցում միայն ես էի, դրսում նույնպես մարդ չկար: Նորից լսեցի ձայնը. այս անգամ ավելի ազդու եւ հրամայական. «Շուտ, դուրս եկ»: Լսեցի: Ոտքս շեմքից դուրս դնելուն պես ինքնաթիռից ընկած արկը պայթեց խցի կենտրոնում եւ մահճակալս, որի վրա նստած էի քիչ առաջ, կտորկտոր թռավ պատուհանից... Եվ Տեր Հովհաննեսը ցույց տվեց ինձ քանդված պատերն ու ներքեւում ընկած մահճակալի կտորները...

Հավելում.

Գնելի այս գրառումն ինձ հիշեցրեց ԽՍՀՄ ըմբշամարտի չեմպիոն, «ԶՈՐԱՎԱՐ ԱՆ ԴՐԱՆԻԿ» բարեգործական միության նախագահ Նորայր Մուշեղյանի այս վկայությունը.

ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵԿ ԲՈՊԵ ԿՅԱՆՔԻ ՈՒ ՄԱՀՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

Գատամարտի օրերին Նորայրը հյուր էր Ստեփանակերտում: Տանտիրոջ խոհանոցում սեղան են պատրաստում: Տանտիրուհին սկսում է թախանձել, որ հյուրասենյակ տեղափոխվեն: Ի վերջո, երբ բազմաթիվ չեմ ու չումից հետո, քանի որ չէին կամենում տանտիրուհուն հոգս պատճառել, երբ տեղափոխվում են հյուրասենյակ ու նստում հացի, մեկ րոպե չանցած սկսվում է ռմբակոծությունը: Եվ ռումբը հարվածում է խոհանոցին՝ այնտեղ ամեն ինչ ավերելով ու շինադրի վերածելով: Ամենքն էլ երկյուղած խաչակնքում են, փառք տալիս Աստծուն, որ տանտիրուհու միջոցով փրկեց իրենց կյանքն ակնհայտ մահից: Օրհնյալ է Աստված: Ամեն:

բ/ ՀՐԱՆՔԸ


1 992թ. հոկտեմբերի 26-ին, ժամը 17 անց 17 րոպեին «Նուս» տեսակի հրթիռի երկու արկ դիպավ զանգակատանը: Ես տազնապաժ վազեցի եկեղեցու կողմ ու զարմանքով նկատեցի, որ մի փշուր, մի ծլեպ անգամ չի պոկվել գմբեթից: Արկը դիպչելով գմբեթին փոխել էր իր ուղղությունը ու ընկնելով կողքի երկհարկանի շինության վրա՝ շինությունը հիմնովին փլուզել: Հրաշք էր, կամոքն Աստծո՞ տեսանելի եւ խորախոհուրդ:

Հավելում.

Տեր Հովհաննեսի Գնելին պատմած այս վկայությունն ինձ հիշեցրեց մեծ երկրաշարժի ժամանակ Գյումրի քաղաքի «Յոթվերք» Եկեղեցին: Չորս կողմի բոլոր շինությունները, անգամ մոտակա եկեղեցին, որ թանգարանի էր վերածվել ու գործող չէր, հողին հավասարվեցին, իսկ գործող «Յոթվերքն» եւ արդար իմաստությամբ կառուցված այլ տներ՝ կանգուն մնացին, որպես վկայություն, որ փորձության օրերին, երբ ողջ աշխարհը ճոճվի, այն մարդիկ, որ Աստծուն են, կանգուն են մնալու, որովհետեւ իրենց հիմքն աներեք ժայռի վրա հաստատեցին եւ ոչ թե անկայուն ավազի:

գ/ ԱՂՈՐԲ

Կապիտան Գնել Շահնազարյանի գրառումներից Տեր Հովհաննեսի այս վկայությունը մի փոքր ավելի վկայության մեր պատկերացրած հունով ներկայացնելու համար վերապատմենք:



Ուրքերը մեծաթիվ գորքով մոտեցել էին Գանձասարին: Ընդամենը 6-7 հարյուր մետր էր մնացել, որ թշնամին հասներ վանքին: Վանքում Տեր Հովհաննեսն էր, նրա աները Բենիկը եւ մի քանի հոգի: Մեր մի խումբ տղերքը, որ թուրքերի դեմ դիրքավորված կռվում էին, ռացիայով

տեղեկացնում են մեր քահանային, որ եթե օգնություն չլինի՝ չեն կարող դիմանալ: Տեր Հիսուսին հուսալուց այլ բան չէր մնում եւ Տեր Հովհաննեսն աղոթեց. «Տեր, դու օգնիր քո հավատավոր որդիներին»: Եվ նույն պահին էլ Աստված հուշեց Տեր Հովհաննեսին իր անելիքը. եւ քահանան ռացիայով, ոգևորված, ուրախ ձայնով հաղորդեց. «Չահանջեք, տղերք, 40 հոգի արդեն Հայաստանից եկել են օգնության, շուտով ձեզ մոտ կլինենք»: Եվ քահանան իր մի քանի ընկերակիցներով երբ հասնում է մեր դիրքերին, մերոնք օգնության սպասելիքից քաջալերված, արդեն թշնամու առաջխաղացումը կասեցրել էին: Հրաշքը կայացել էր: Հույսը, ահա թե ինչն էր կարևոր պահպանել մարդու մեջ եւ մնացածն Աստված հազարապատիկ զորությամբ եւ հաջողությամբ կպսակի: Երբ հավատող տկարացել է, պիտի հուսաս Աստծուն: Մեր Տիրոջ քահանայի քաջալերանքով Աստծո անելիքն ույթ եւ հաղթ զորությունները, ինչպես տեսնում ենք, իջան մեր տղերքի մեջ եւ նրանք հակառակորդի հարձակումը կասեցրին:

Եվ քաջ քահանան գնդացիքը, ինչպես թեթեւ մի զենք կրծքին սեղմած, կրակահերթերով առաջ է տանում մեր տղերքին: Թշնամուն այլեւս այլ բան չի մնում, քան խուճապահար փախուստի դիմել:

Ճակատամարտը շահելուց հետո նայեցին, տեսան մերոնցից ոչ մեկը չէր խփվել եւ անգամ վիրավոր չունեին: Ահա այդպիսին է մեր Տեր Աստծո կատարյալ օգնությունը:

- Տեր Հայր,- ճակատամարտը շահելուց հետո հարցնում է մեր տղերքից մեկը, իսկ ուր է Հայաստանից եկած քառասուն մարդկանց օգնությունը:

- Օգնությունն արդեն եղավ, որդիս,- պատասխանում է Տեր Հովհաննեսը: Երկնային օգնություն եղավ... ու հայացքը Գանձասարին ուղղելով ասաց.

- Շնորհակալ եմ, Տեր:

Հավելում.

Կապիտան Գնել Շահնազարյանի այս հրաշալի վկայությունն ինձ հիշեցրեց Աստծո բազմաթիվ նման



գորակցություններից մի քանիսը: Կամսարական իշխանները մոտ մի տասնյակ հեծյալներով շրջափակվեցին պարսկական 20 000-անոց զորքի կողմից: Եվ հավատով, առանց երկմտանքի, Քրիստոսին խնդրեցին: Եվ ինչպես Տեր Հովհաննեսին, նրանց էլ այս միտքը հուշվեց՝ Ինքնեղ հարձակվեք եւ առանց մի քերժվածքի, ճեղքելու եք դրանց բանակն ու անվնաս դուրս եք գալու: Այդպես էլ եղավ: Ապշահար պարսիկները... իրենք պատվիրակ ուղարկելով խնդրանքով դիմեցին Կամսարական իշխանին, որ նա... իրենց զորքերի սպարապետը դառնա եւ ...դարձավ:

Հին Կտակում եւս Աստծո գորակցության այդպիսի մի դրվագ կա Հուդա գորավարի մասին: Իրենցից մեծ թվով գորավոր եւ ահեղ թշնամու դեմ Աստծո իմաստովյամբ նախահարձակ են լինում եւ փառավորապես հաղթում, ապա մոտենում են թշնամու քաղաքին, որ չի հանձնվում. այս քաղաքն էլ գրավելով ստուգում են իրենց շարքերը, տեսնում, որ բոլորն էլ, ինչպես պատերազմի ելնելուց առաջ, կենդանի են ու առույգ: Եվ ոչ մի զոհ չեն տվել:

Մենք փոքր ժողովուրդ ենք, եւ մեզ միայն հաղթանակներ են հարկավոր: Ուստի, մեր բոլոր ճակատամարտերն ու անգամ խաղաղ գործերը Աստծով պիտի վարենք՝ դրանք մշտապես պսակելով սքանչելի հաղթանակներով:

դ/ ԶՈՐԱՎԻԳ ԽԱՉՔԱՐԸ

I 993 թվականն էր: Դիրքերում կռվող տղաներին լուր հասցրին, որ Հայաստանից, Վազգեն Սարգսյանի ծննդավայր Արարատից խաչքար են բերել ու տեղադրել վանքում «Գանձասարի պաշտպաններին» փորագրությամբ: Կռվի դադարների պահերին տղաները հերթով իջնում, նայում, հիանում էին խաչքարով: Տեսնել էր պետք նրանց ոգևորությունը, հուզմունքն ու զարմանքը: Ոչ մեկս չէր սպասում այդպիսի նվերի: Ակնհայտ զգացվում էր, որ նվեր-խաչքարն ինչպես ամրացրեց տղաների ոգին: Ո՛ր նրանք գորավորված, ամրացած ոգով նորից դիրք բարձրացան: Խաչքարի հեղինակը քանդակագործ Արմեն Սարգսյանն է, իսկ մտահղացումը Ռուբիկ Գրիգորյան-Արարատցունը: -Պատմեց Տեր Հովհաննեսը:

Հավելում.

«Ով չվերցնի իր խաչը եւ չգա իմ ետեւից, ինձ արժանի չէ»- ասել է մեր Տեր Հիսուս Քրիստոսը: Խաչը, խաչի պատկերը, խաչքարը մեզ Տերունի նույն խոսքերն են վերհիշեցնում ու Տիրոջ խաչի հաղթովյամբ հանգստացնում է մեր բարի խղճմտանքը: Խաչ վերցնելը պատվարժան ապրելու

զաղտնիքն է, որովհետեւ եթե քո խաչը, որ քո անհատական պարտավորություններն են Աստծո ճշմարտության առաջ չես վերցնում, ուստի, ինչ-որ տեղ արդեն ճշմարտության գիտությունից, կյանքի գիտությունից հեռու ես մնացել, ետ դարձիր: Քո խաչը տանելը երբեք չի խաբի քեզ: Իրենց խաչը չվերցնելուց չէ նաեւ մարդկանց նախանձն այլոց հոգեւոր հաջողությունների հանդեպ: Այդպես է: Մեծ մասշտաբով էլ այդպես չէ՝. խաչը ոմանք փոխարինում են օտարի պիղծ հողմերին ինտեգրվելով, նվաստացուցիչ, ապականող ծրագրերին տեղի տալով կամ դրանք կատարելով: Ինչ է թե՛ դրանց ետեւից կեղծ, արդեն փյւման մեջ գտնվող բարեկեցություն ու դրամապաշտություն է խոստացվում, որի մեջ փտախտ է, անկում, ստամշակույթ, ստահոգի կյանք, սառը մահ: Սիրո սառեցում: Խաչապաշտության տեղ այլանդակ դրամապաշտություն, կաշառասիրություն ու փսիսելի կեղծաստվածություն: Սակայն հայր սիրում է իր խաչը տանել: Եվ ինչպես միշտ կզարթնի մի մանուկ Դավիթ, մի մանուկ Հայկ, մի մանուկ Նոյ եւ խաբողներին նրա ՈԶ ասելուն պես՝ Տիեզերքը հիմնովին շուռ կգա, կզրզո՞ւ երկիրը, բա՛ս Քրիստոսի խաչի ազնիվ արդարությունը կարգավորելով: Եվ վայ կլինի Սուրբ խաչը կեղծավորեցնողներին:

Որովհետեւ ճշմարիտ խաչը կեղծիք չի հանդուրժում, ինչպես եւ ճշմարիտ խաչակիր հայր: Օրհնյալ է մեր ամենագոր Աստված: Ամեն:

ե/ ՆԵՐՒՐ ԻՆՁ, ՏԵՐ

Չ իշերը մոմի լույսի տակ Աստծո խոսքով դիմում էի նոր ժամանած տղաներին, ոմանց մկրտում ու ճանապարհում էի դիրքերը: Խորհրդավոր ու անմոռաց պահեր էին: Գիշերային լուռության մեջ հատուկենտ կրակոցներ էին միայն հիշեցնում պատերազմի մասին, որովհետեւ բոլորս մի տեսակ վերանում, անէանում էինք մի պահ իրական կյանքից: Որպես հոգեւորական, երբ առաջին անգամ մասնակցեցի կռվին, տեսա, թե ինչպես իմ գնդացրի կրակից զոհվեցին թշնամու մի քանի զինվոր: Ես մարդ էի սպանել, եւ մինչեւ օրվա ավարտը, երբ դադարեց մարտը, այդ միտքն ինձ տանջում էր: Հետո երեկոյան, երբ իջնում էի վանք, պարսպի մուտքի մոտ վայր դրեցի զենքս, զինական ողջ հանդերձանքս ու ծնկաչոք ներս մտա վանք: Խաչակնքեցի եւ Գանձասարի մթության մեջ բառերն ինքնաբերաբար դուրս հորդեցին իմ հոգուց. «Աստված, ներիր ինձ, ես մարդ սպանեցի: Ներիր ինձ, Տեր, այլ կերպ հնարավոր չէր, նա գալիս է չար մտադրությամբ՝ քանդելու, այրելու իմ տունը, գալիս է սպանելու իմ զավակներին: Աստված ամենակա-

րող, ներիր իմ մեղքը, եթե չարին, նեոին օպանելը մեղք ես համարում»:

Հավելում.

Տիրոջ պատվիրաններից գիտենք, որ մի սպանիր պատվիրանը քո ազգ ու ժողովրդին բռնատիրելու, պղծելու, բռնաբարելու ու փչացնելու եկած հակա-
ռակորդի համար չէ: Այս նկատի ունենալով հայրերը կանոն սահմանեցին պատերազմի ժամանակ եղած սպանությունից անպարտ ճանաչել քրիստոն-
յաներին: Գիտենալով որ այս հարցը շատերին կարող է հետաքրքրել, Մխի-
թար Գոշի «Դատաստանագրքից» բերում ենք համապատասխան կանոնը.
ԳԼՈՒԽ ԶԷԴ - ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իսկ նրանք, որ պատերազմների ժամանակ մահ են գործում, մեր հայրե-
րը ամենեին սպանություն չհամարեցին: Ըստ որի եւ մեզ եւս հաճելի է այդ
նույն խորհրդին հետեւել: Բայց, որպեսզի /պատերազմից եկած/ ձեռքը սրբ-
վի, բարի է, որ այդպիսիները երեք տարիներ հաղորդությունից հեռու մնան
/ Բարսեղի կանոններ/:

...Եվ միայն ասում է, թե՛ հաղորդությունից հեռու մնան: Սրանից սովորեն
դատավորները եւ չլինի թե վրիժառություն լինի:

Գոշի «Դատաստանագրքից» մի կանոն եւս կարելու է հիշատակել, որ
կապված է պատերազմի Աստվածահաճո ընթացքը մի կարելու կարգով եւս
կարգավորելուն.

ԳԼՈՒԽ ԶԻԳ-ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆՈՐ ԿԻՆ ԱՌՆՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԶԷ ՊԱ-
ՏԵՐԱԶՄ ԳՆԱԼ

Եթե մեկը նոր է ամուսնացել, ապա թող պատերազմի մեջ չմտնի եւ այս
մասին նրանից պարտավորություն չպահանջեն, այլ թող ազատ մնա իր տան
մեջ եւ իր կնոջն ուրախացնի /Բ. Օրենքներ, ԻԴ 5/:



Մարդասեր է Աստված եւ կամենում է, որ չլինի թե պատերազմի մեջ
մարդն ընկնի եւ սուգ լինի տարածամ, այս բանի համար սրանք՝ պատե-
րազմին չմասնակցող նոր ամուսնացողները, անմեղադրելի են միանգամայն
եւ ճշմարիտ չէ ճակատ տալ կամ երկբայել այս պատվերը: Այս իրավունքը
հարկ է պահել զորավարներին իրենց բոլոր զորքերում:

Հավելում-2- Մակաբայեցիների գրքում կա այս պատվերի կատարման
պատմական օրինակը, երբ պատերազմի մեջ մտնելուց առաջ զորավարները
նորապասակներին առանձնացնելով ուղարկում են տուն, ապա նոր են մտնում
մարտի մեջ եւ տանում են սրանչելի հաղթանակ, և ո՛չ մի զոհ չեն տալիս:
Աստված սիրում է իր պատվերները պահողներին եւ առավել եւս է զորավո-
րում ու պահպանում իրեն լսող բանակներին: Աստվածահաճո՞ պատերազ-
մներ եւ առավել հաղթ պտուղներ ունենանք: Ամեն:

Գ/ ԻԱԶԸ ԵՐԿՆԻ ԿԱՊՈՒՅՏՈՒՄ



անհասանի մոտ, անտառի բացատում վիրավոր, արնաքամ ընկել
էի,- պատմել է Մնացական Հարությունյանը: -Անդորր ու նինջ էր
իջել աչքերիս: Արթու՛ն էի, թե քնած չգիտեմ. հանկարծ երկնքի կապուտում
տեսա մի մեծ, հսկա խաչ: Խաչը տեսնելով այնպես
թեթեւ էի ու հանգիստ: Ո՛ր մեկն ինձ ձայն տվեց՝ վեր
կաց: Ես աչքերս բացի ու թվաց թե խոսակցություն
ձայն եմ լսում: Երբ լարեցի ուշադրությունս, զգացի, որ
մոտեցողներն ազերիներ են: Մի կերպ սողեսող թաքն-
վեցի կողքի խիտ թփուտներում: Նրանք մոտեցան, եւ
ես տեսա, թե ինչպես էին քրքրում իմ զոհված ընկեր-
ների գրպաններն ու ստուգում մատները՝ թանկարժեք
մատանի գտնելու հույսով: Հետո նորից կորցրել եմ
գիտակցությունս եւ չգիտեմ որքան ժամանակ էր անցել, երբ նույն երազը
կրկնվեց. երկնականարում նույն հսկա խաչն էր, ու մեկն ինձ ձայն էր տալիս՝
վեր կաց: Ես բացեցի աչքերս ու նորից ականջովս ձայներ ընկան: Զգացի,
որ մոտեցողները հայեր են: Լարելով վերջին ուժերս, դուրս եկա թաքստո-
ցից ու հասա բացատին, որտեղով պիտի անցնեք նրանց
ճանապարհը: Երբ աչքերս բացեցի, արդեն հիվանդանոցում
էի:



Հավելում.

Այս վկայությունը Գնելին պատմել է զինվորական լրագ-
րող, մայր Տիգրան Դերիկյանը: Տիգրանը եղբոր՝ Վարդա-
նի հետ /վերջինս «Էջմիածին» հոգեւոր հանդեսի գլխավոր
խմբագիրն է եղել/ Արցախյան պատերազմի ողջ ընթացքում պայքարեցին
զենքով եւ գրչով:

...Խորհրդային տարիներին ինձ հետ էլ մեծ մի ցնցում եղավ, հանկարծակի
պատուվեց այսկողմնային, սովորույթների որոգայթով պայմանական կյանքի
եւ այնկողմնայինի՝ Քրիստոսով արդարանալու միջև եղած վարագույրը:
Աշխարհում դիմանալու համար ինձ Տիրամայրը պատվիրեց փայտե փոքր մի
խաչ պատրաստել եւ անտանելի պահերին պահել ձախ ձեռքիս փակ ափի
մեջ: Որովհետեւ,- ասաց Գրվածքը հիշեցնող Հոգին,- Տերն իր հավատավորի
աջում է, քեզ մտում է, խաչով պահես այլասերված աշխարհի սովորույթների
մուտքը քո մեջ, դրանք են, որ ձախից կեղծ զգացմունքներով գերավարելով
մարդուն մղում են ձախողությունների եւ փորձանքների, պահեցող չլինելու:

Հավատա՛ եւ կտեսնես, որ հնարավոր է: Եվ փոքրիկ խաչը հրաշքներ էր գործում՝ ձախից ինձ վրա եկող աշխարհի ցանկություններից առաջացած սովորույթները ետ հայածելով: Այնուհետեւ սովորույթ դարձավ փոքրիկ, փայտե խաչեր նվիրել մերձավորներին, ընկերակիցներին: 2005թ. ավտովթարից զոհվեց մեր գրչեղբայրներից մեկը, ամենքիս կողմից հարգված մի անձնավորություն, իսկ կողքին նստած ընկերս՝ Տիգրանը, որ մի քանի քերթվածքներ էր միայն ստացել, վկայել էր, որ փոքրիկ փայտե խաչն իրեն երևաց, ու ինքը փրկվեց: Տիգրանի վկայությունը լսելով՝ ոմանք եկան եւ փայտե խաչեր խնդրեցին: Խաչերը վարպետ Կարապետն էր պատրաստում, քահանային օրհնել տալիս ու բերում: Աստված օրհնելով օրհնի վարպետ Կարապետին, Աստծուն զինվորագրված մեր քահանաներին եւ ամենքին, ովքեր աներկբա հավատում են Քրիստոսին՝ Աստծո Որդուն: Ամեն:

Է/ ՄԱՅՐ ԼԵՌՆ ՈՒ ԱՐԾԻՎԸ

2001 թվական, մարտի 5: Վազգեն Սարգսյանի ծննդյան տարեդարձի օրն էր: Սպարապետի հայրենի գյուղում այդ օրը բացվում էր նաեւ նրա անվան տուն- թանգարանը: Հոծ բազմություն էր հավաքվել: Եկել էին Հայաստանի տարբեր կողմերից, արտերկրից: Երբ բարձրախոսից հնչեց-տարածվեց սպարապետի ձայնը, ձայնագրություն իր ելույթներից, այդժամ, Բիրլիական լեռը պարուրող ամպից մի ծվեն պոկվեց ու եկավ, քարացավ, մնաց հավաքված բազմության ուղիղ գլխավերեւում: Եվ հանկարծ մարդիկ նկատեցին, որ ամպի ծվենը հզոր թևերով մի արծիվ է, որ հանդարտ, վեհոբն սկսեց սավառնել երկնքում: Հզոր թևերը բացել եւ առանց թափահարելու պտույտներ էր գործում: Եվ երբ արարողակարգն ավարտվեց, բարձրաստիճան հյուրերն իրենց խոսքն ասացին, արծիվը նորից հանդարտ թևեց ղեպի Մայր լեռը: Մարդիկ զարմացած ու ապշահար հայացքով ուղեկցում էին նրան, տարբեր մեկնություններ տալիս: Եվ եւ մտաբերեցի Ազաթանգեղոսի խոսքը, որ մեր հերոսները ծնվում են Բիրլիական Արարատ լեռան բարձունքներին:

Հավելում.

Ճշմարիտ որ՝ նախախնամական ներկայության ազդու վկայություն է: Որ արծիվը նախախնամական գործոն է, այդ գիտենք Եզեկիելի մարգարեությունից՝ մարդ, առյուծ, եզ եւ արծիվ: Իսկ Հիսուս Ավետարանում հայտնում է. «Ուր մարմինն է, այնտեղ պիտի հավաքվեն արծիվները»: Գնելի այս ընտիր վկայությունն այն համոզումն է առաջացնում, որ նախախնամական

հայտնությունն է եղել արծիվի տեսքով՝ արժանավոր մարդու անվան արարողության պատվին: Որ նշանակում է նաեւ թե՛ սպարապետն Աստծու սիրելիներից էր:

Ը/ ՄԻԱՅՆԱԿ ԵՒ ՋՈՐԵՂ

Մոմիտասի անվան պանթեոնի կողքով անցնելիս հաճախ ինքնաբերաբար քայլերս ինձ տանում են այնտեղ: Պանթեոն գնում եմ լռելու, խորհելու, երազելու, խոնարհվելու: Այդպես՝ ամեն ինչ լուռությամբ, ինքդ քեզ հետ: Ու մեր մեծերի աղոթքով գորացած, ուժ ու ոգի ստացած դուրս ես գալիս աշխարհ, որտեղ մրցավազք է, հոգեւորի անկում ու նյութականի ձգտում, պայքար...

Այս մասին գուցե չգրեի, եթե պատահաբար զարնանային մի օր այնտեղ չհանդիպեի Արկաղի Տեր-Թադևոսյանին, մեր հարգարժան գեներալին:

Պանթեոն գնում եմ պատահաբար, սակայն հակված եմ այն մտքին, որ պատահականություններ չեն լինում կյանքում... Եվ այս պատմությունն էլ թերեւս դա է հավաստում, որովհետեւ Կոմիտասի անվան պանթեոնում մեր «հանդիպումը» կրկնվեց մի քանի անգամ:

Ինչպե՞ս հուշակոթողից հուշակոթող, տապանաքարից տապանաքար էր նա անցնում, կարդում, մտորում Տերյան, Իսահակյան, Սարյան, Սարոյան, Շիրազ, Շիվանզադե, Կոմիտաս... Պանթեոնում լուռություն էր: Տեսնես ինչ էր խորհում նա: Ինչ սեր է, ինչ ուժ է նրան առաջնորդում Պանթեոն ինքն իր հետ լինելու, մեր մեծերին այցելելու: Լուռությամբ անցնում էր աճյունից աճյուն ու դանդաղ քայլերով դուրս գալիս: Արդյո՞ք դա այն սերը չէ, անտես այն աղոթքը, որից նա զորացավ, դարձավ ժողովրդի սիրելին, Շուշի լեզենդը: Արդյո՞ք այդ սերն այն զրահը չէ, որ նրան միշտ տեսնում ենք իր ժողովրդի



մեջ, իր ժողովրդի հետ, փողոցում քայլելիս, տարրեր առիթներով հանդիպումներին: Արդյո՞ք որդիարար իր մեծերին խոնարհվելը, դա այն սերը չէ, որն անանձնական է, հավերժ, ոչ թե ժամանակավոր կյանքի անցողիկ փառք ու վայելք: Արդյո՞ք դա մեծերի հոգեւոր այն անտեսանելի կապը չէ, որը ձգվում է հազարամյակներ իր այն զավակների հանդեպ, որոնց հոգին փառքի զափնեպսակները չեն աղճատում, չեն ամայացնում, այլ լցնում են հեզոլթյամբ, խոնարհությամբ ու նրանց միայնակ առաջնորդում մեր մեծերի Պանթեոնը: Միայնակ, սակայն զորեղ,- այսպես կիսեց իր խոհերը իմ բարեկամներից մեկը:

Հավելում.

Կապիտան Գնել Շահնազարյանի այս վկայությունը բարի կլիներ ներդնել դպրոցական դասագիրք, որովհետև նման վարքի վկայությունը և՛ խրատական է, և՛ առաքինի կյանքով ապրելու օրինակումի էջ:

Թ/ ՈՒՒՏ ԵՄ ԱՐԵԼ...

◀ աճախ է կրկնվում նույն երազը: Մանկությունն արահետով, ծաղիկ-ծաղկունքի միջով գնում եմ իմ ծննդավայր՝ Բուզուխ գյուղը: Ու երբ մտնում եմ գյուղ, այն կորում է մթնոլթյան մեջ: Գտնում եմ մեր տունը, խարխափելով բացում դուռը: Ոտքս ներս եմ դնում ու լսվում է մայրիկիս ձայնը. «Վառիր տան լույսերը»: Ես վառում եմ լույսերը եւ ո՞վ զարմանք՝ ամբողջ գյուղը լուսավորվում, ողողվում է լույսերով, իսկ մեր տան կողքի դարերով խոնարհված, կիսավեր եկեղեցին երեւում է կանգուն, ողողված լույսերով:

Հաճախակի կրկնվող այս երազը երբ պատմեցի Պարզե արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, սրբազանն այն մեկնեց այսպես. «Փառք Տիրոջը, երկնքում, աստվածային վերին ոլորտներում այդ հարցն արդեն լուծված է եւ այն դանդաղորեն իջնում է երկիր: Պետք է պատրաստ լինենք. վաղ թե ուշ ազատագրվելու են մեր բոլոր գերված ծննդավայրերը:

Հավատում եմ սրբազանի խոսքերին եւ սպասում եմ այն օրվան, երբ այցի պիտի գնամ հարազատներիս շիրիմներին: Ուխտ եմ արել, որ երբ ծննդավայրս ազատագրվի, պիտի կառուցեմ մեր գյուղի կիսավեր եկեղեցին,- այսպես ավարտեց իր պատմությունը ոստիկանության գնդապետ Ալվինա Զաքարյանը:

Ժ/ ՀԱՎԱՏԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Քարվաճառում խողաղ օրեր են: Ազատագրական պայքարին իր մասնակցությունը բերած Գաղիկ Հովհաննիսյանը ծառայություն է անցել նորաստեղծ բանակում: Դեռ 17-ր չէր լրացել, երբ անգամազրվեց Գաղիկի անվան ջոկատին: Մի օր էլ, երբ բարձրացավ մոտակա բարձունքը, աչքին մի քար ընկավ, որի եզրը հողից դուրս էր: Զոդողական, անմեկնելի մի զգացում ապրեց: Սկսեց քարը մարբել հողից: Կամաց-կամաց մարբեց, եւ այն դարձավ նրբահյուս մի խաչքար: Եարունակեց աշխատանքը. արդեն տեսանելի էին սրբատեղիի պատերը: Օր- օրի բացվում էին պատերը, զեղեցիկ խաչքարերը, որոնք, ով գիտի, քանի դար ծածկվել էին հողով: Զգացվում էր, որ դա չար ձեռքի գործ է:

- Հողնություն չէի զգում,- պատմում է Գաղիկը,- աշխատում էի օրերով: Տղաները, զինվորները ուզում էին օգնել, սակայն հրաժարվում էի, ուզում էի միայնակ, իմ ուժերով կատարել աշխատանքը: Այդպես մատուցր մարբեցի, ծածկեցի, խաչքարերը կողքին կանգնեցրի, ու այն դարձավ ուխտատեղի: Վառվող մոմերը, ծխացող խունկը հոգու հանգստություն էին բերում մոռացված մեր նախնիների աճյուններին...

Մի օր էլ դիրքեր բարձրանալիս, զժվարամատչելի բարձունքը հաղթահարելիս արեւից ճաքճաք ժայռի բեկորը մնաց ձեռքիս մեջ, ու ես մոտ երեսուն մետր բարձրությունից ցած ընկա: Ով նայում էր բարձունքին, չէր հավատում, որ այդ բարձունքից ընկնողը կարող է ողջ մնալ: Սակայն դա իրողություն էր, եւ ես չէի զարմանում: Ես հավատում էի հրաչքի, որովհետեւ հողով ծածկված խաչքարի ձգողական ուժն արդեն ինձ համար մեկնելի էր: Եվ մատուցում վառվող իմ մոմերն իրենց մեջն այդ հավատն ունեին, հավատ, որն ամեն պահ կարող է հրաչքներ արարել...

Կապիտան Գնել Շահնազարյանի
վկայությունները այստեղ ավարտվում են



ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՐԴԻՆԵՐԸ

«Ոգևոր վերին ոլորտների վկայությունն է մեր «Սասունցի Դավիթ» էպոսը: Շատերս ենք վկայում, որ հիվանդ ժամանակ էպոսը վերակարդացել եւ առողջացել ենք, հրաշքով նորից վերածնվել: Ինչպես խորհրդանշանակ էպոսից գիտենք, Սանասարը ծովի հատակում տեսավ Աստվածածինն եւ նրա խորհրդին հետեւելով մկրտվեց: Մկրտվեց եւ դարձավ յոթնապատիկ անգամ ավելի հսկա եւ գորավոր: ԵՎ ԽԱՁ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ Սանասարի միջոցով Ֆիդայի սասունցին է, որ ստացավ Աստվածածնից:

ՄԱՅՐ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԷԿԱՒ ԷՐԱԶ, ԱՍԱՅ.:

«-ՀԷՅ, ՍԱՆԱՍԱՐ., ԷԼԻ ՎԵՐ.:

ԽԱՁ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԿՕ ԷՍՏԵՂ Է.

ԷԼԻ, ԵՕԹ ԾՈՒՆՐ ԱՂՕԹՔ ԱՌՋԵՒ ԱՐԱ.,

ԱՐԺԱՆ ԸԼՆԻՍ, ՔԵՋ ԿԸ ՀԱՄՆԻ.,

ԴՆԵՍ ՎԵՐ ՔՈ ԱՋ ԹԵՒԻՆ., ՈՐ ԴԱՐԲ ՉԱՌՆԻ...»::

Աստծուն լսող Սանասարի արժանավորությունն է Տիրոջով պահում սասունցի Ֆիդային:

Այդ բազմիցս երեւաց Արցախյան պատերազմում, ոչ միայն սասունցի, այլ նաեւ մեր մյուս նշանավոր հայորդիների եւ նրանց ջոկատների միջոցով:

ՆՐԱՆՅ ԽՈՍՔՆ ՈՒ ՔԱՐՈՋԸ ԻՐԵՆՅ ԿԵՆԴԱՆԻ ԳՈՐԾԵՐՆ ԵՆ


«Վայրենասիրությունը Աստծո ամենակարեւոր երկու պատվիրաններից երկրորդ մեծ պատվիրանն է, թե «Սիրիր ընկերոջդ անձիդ պես»: Հայդուկներն են, որ իրենց հայրենակիցներին սիրեցին իրենց անձի պես: Այս բանում է, որ որեւէ երկմտություն չկա: Որովհետեւ, ասում է Սուրբ Գրքը. «ԵՐԲ ԸՆԿԵՐՈՋԴ, ՈՒՄ ՏԵՄՆՈՒՄ ՈՒ ՉԵՍ ՍԻՐՈՒՄ, ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԵՍ ՕԳՆՈՒՄ, ՀԱՎԱՍՏԻ ՉԷ ԱՐԴԵՆ, ՈՐ ԱՍՏԾՈՒՆ, ՈՐԻՆ ՉԵՍ ՏԵՄՆՈՒՄ, ՍԻՐՈՒՄ ԵՍ»: Այս առանձնահատուկ մարդ տեսակին հայդուկին ոչ մեկը հրամանով չտարավ կռվի: Այլ իրենք, Աստծուց ներշնչված ելան: Իրենց հոգևոր արդարության համաձայն ելան: «ԶԿԱ ԱՌԱՎԵԼ ՄԵՇ ՍԵՐ, ՔԱՆ ԱՅՆ, ԵՐԲ ՄԵԿՆ ԻՐ ԿՅԱՆՔԸ ԴՆՈՒՄ Է ԻՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ: ԴՈՒՔ ԻՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ԵՔ...»- ԱՍԵԼ Է

ՀԻՍՈՒՍ: ԵՎ Ֆիդայիները Աստծո բարեկամներն են: Նրանք սովորական հավատավորներ չեն, այլ իրենց կյանքով են վկայում: ԵՎ նրանց խոսքն ու բարոզը իրենց կենդանի գործերն են:

ՖԻԴԱՅԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Ա.Ֆոյի օրագրից

«Ներխաժր իրականություն դարձավ, երբ իմ բարեկամներ Գրիգոր Գրիգորյանի եւ Ժուլվեռնի հետ գնացինք մեր գյուղ (Լեոնաբոտ)՝ Գլինգուզանցի Արշակի օրհնությունն ստանալու: Հանդիպումը կարճ էր եւ հավերժ:



Հորս օրհնանքից հետո փորձում էինք գնալ, երբ տեսանք թաղարի մոտ, հողի վրա հայրս գենքը ձեռքին ծունկի է եկել: Հայրս գենքը համբուրելով ասաց. -Քնջ գենք է: Թշնամին թիկունքդ չտեսնի: Ես նույնպես ծնկի եկա, համբուրեցի գենքը, եւ հեռացանք: Մինչեւ Երեւան հասնելը մենք ցնցված էինք հորս նախախնամական օրհնանքից, որ եղավ Աստծո առջեւ երկրպագմամբ, եւ, ոչ մի բառ բարձրաձայն չկարողացանք փոխանակել: Այդպես Գեներալ Գրիգորյանը մկրտվեց որպես «Սասունցիներ» ջոկատի զինվոր եւ հոգով ու սրտով մնաց մեզ հետ մինչեւ օրս»:

Նարեկացին ասում է. «Որքան երկնային բանական ոլորտի մեջ ենք խորանում, բառերն այնքան սակավանում են, որովհետեւ հոգու ըմբռնումն է գորանում, իսկ առավել վեր ոլորտներում, բառեր արդեն պետք չեն, որովհետեւ խոսում են արդեն միայն ըմբռնումներով»: Ա.Ֆոյի հոր օրհնանքի մեջ սովորական մարդկայինից վեհ ու վեր ըմբռնումների ոլորտն է: Զորավոր, նախախնամության ներկայությամբ:

Ավետարանիչներն օրինակ, ձկնորսներ էին, սակայն նրանց յուրաքանչյուր խոսքի մեջ կենդանի հաղթողի ներկայությունը կա: ԵՎ մարդը կյանքի ինչ շերտում էլ լինի, Ավետարանը նրան ավելի վեր, բանական հաղթանակի ոլորտ է բարձրացնում իր նույն խոսքով: ԵՎ հայ ֆիդային ոչ թե սուրբ Գրքի անգիրով է շարժվում, այլ Գրքի խորհուրդն ունի իր մեջ որպես կենդանի կյանք: Այս է վերին ոլորտից առաջնորդվող մարդ լինելը, որի մասին Գիրքն ասում է. «ՊԻՏԻ ԵՂԲԱՅԲԸ ԵՂԲՈՐԸ ԱՅԼԵՒ ՉՈՒՍՈՒՑԱՆԻ, ՈՐՈՎՀԵՏԵԻ ԱՄԵՆՔՆ ԷԼ Ի ՎԵՐՆ ԱՍՏԾՈՒՅ ՊԻՏԻ ԳԻՏԵՆԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՅ»:

ՆՎԵՐ ՍՈՒՐԲ ԶՈՐԱՎԱՐԻՆ

Աֆոյի օրագրից

«**Մ**ԹՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀՆՉԵՑ ԻՄ ՏՂԱՆԵՐԻ ԵՐԳԻ ԶԱՅՆԸ ԵՒ ԴՂԲԱՅ ՍԱՄԱ ՔՈԶԱՐԻՆ, ՈՐ ԴԱՐՉԱՎ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՍԿԻՋԲԸ: ՍՈՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆ ՄԵՆՔ ԲՈԼՈՐ ՄԱՐՏԵՐԻՅ ԱՌԱՋ ԵՐԳՈՒՄ ԷԻՆՔ ԵՒ ՊԱՐՈՒՄ ՀԱՂԹԱԿԱՆ ՔՈԶԱՐԻՆ: ...ՄԱՐՏԸ ԴԱԺԱՆ ԷՐ ԵՒ ՇՔԵՂ: ԹՈՒՐՔԸ ԾՆԿԻ ԵԿԱՎ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԸ ՅՈՒԹԻՆ»:

Թուրքերի համախմբի ամենադաժան կետերից մեկը, որ լուրջ վտանգ էր Խոջալուն էր: ԵՎ Սասունցիների ջոկատը որոշեց Խոջալուն գրավել փետրվարի քսանհինգին Անդրանիկ Զորավարի ծննդյան օրը՝ պատշաճ նվեր Սուրբ Զորավարին:

Աֆոյի օրագրից.

«1992 ԹՎԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ, ԶՈՐԱՎԱՐ ԱՆ ԴՐԱՆԻԿԻ ԾՆՆԵԴՅԱՆ ՕՐԸ, ԵԿԱՎ ՄԵՐ ԱՍՏԵՂԱՅԻՆ ԺԱՄԸ: ՀՐԱՄԱՆ ՀՆՉԵՑ ԳՐԱՎԵԼ ԹՈՒՐՔԵՐԻ ՈՐՋԸ՝ ԽՈՋԱԼՈՒՆ... ԳԻՇԵՐՎԱ ԺԱՄԸ ՏԱՍՆՄԵԿԱՆՑ ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԻՆ ՍԿՍՎԵՑ ՄԱՆՐԱԿՐԿԻՏ ԾՐԱԳՐԱՎՈՐՎԱԾ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ: ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԸ ՅՈՒԹԻՆ ՄԻ ԱՓ ՀՈՂ ՆՈՒՅՆՊԵՍ ՀԱՅԱՑԱՎ»:



ՖԻԴԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԿԵՐԱԿԻ ՄԱՐԴ Է

«**Ֆ**իդային կյանքի զարկերակի մարդ է: Մինչդեռ եթե մեկը բազում ծրագրերի մեջ կարող է տարուրերվել, ֆիդային գտնում է ամենակարճ մոտեցումն ու ամենահատուն: Այդ պատճառով ֆիդայու կյանքը կենդանարար է իր շրջապատի համար: Նա ոչ միայն արժվենի պատերազմող է, այլ նաև ժողովրդի բարեկեցությունն է հոգում, ինչպես անում էր Մոնթեն, ինչպես անում էին «Սասունցիներ» ջոկատի հայդուկները: Զորավար Անդրանիկը Արեւմտահայաստանի գրաված լեռներից, թուրք ու քուրդ գյուղերից հավաքել տվեց 50 000 ոչխար եւ բաժանեց վանքերին, որբանոցներին, հիվանդանոցներին: Նման մի զրվագ ենք տեսնում նաև «Սասունցիներ» ջոկատի վարքում էլ:

Աֆոյի օրագրից

«1989ԹՎԻ ՀՈՒԼԻՍԻ ՍԿՋԲՆԵՐԻՆ, ՍԱՍՈՒՆՅԻՆԵՐԻ ԶՈԿԱՏԸ /100-110 ՄԱՐՏԻԿՆԵՐ/ ՄԵԿՆԵՑ ԶԱՆԳԵԶՈՒՐ: ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԼՍԵԼՈՎ, ՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹՈՒՐՔԵՐԸ ՀԱՐՉԱԿՎԵԼ ԵՆ ՎԱՅՔԻ ՇՐՋԱՆԻ ԽՆՉՈՐՈՒՏ ԵՒ ԳՅՈՒԼՍԱՆ ԳՅՈՒՂՆԵՐԻ ՎՐԱ ԵՒ ԳԵՐԵՎԱՐԵԼ ՈԶԽԱՐԻ ՄԻ ՀՈՏ, ՏՂԱՆԵՐԸ ՄԵԿՆԵՑԻՆ ԴԵՊՔԻ ՎԱՅՐ, ԵՒ ԵՏ ԲԵՐԵՑԻՆ ԿՈՐՑՐԱԾ ՄԵՐ ՀՈՏՆ ՈՒ ՄԻ ՀՈՏ ԷԼ ԱՎԵԼԻՆ 227 ՈԶԽԱՐՆԵՐՈՎ ՈՒ ԹՈՒՐՔ ՀՈՎԻՎՈՎ»:

ՆՅՈՒՎԱԴԻԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Աֆոյի օրագրից

«**Ն**ախապես պլանավորված էր, որ ՄՀՈՒՋ-ի հետ պիտի սկսեինք Նյուվադիի գրավումը: Սակայն այդ օրը ՄՀՈՒՋ-ը նոր էր դուրս եկել Ղափանից, եւ հապաղելը պարտություն էր: Ռացիայով կապվեցի բոլոր դիրքերի հետ եւ հրամայեցի առանց հապաղելու սկսել հարձակումը: Տարածայնություն եղավ, թե հարկ է սպասել ՄՀՈՒՋ-ին: Հաշվի չառնելով ոչ մեկի կարծիքը՝ իմ ջոկատի բոլոր տղաների հետ գառիթափով միարժեպի նյուվադիի գերեզմանոցի կողմից: Դեռ ռուսները թուրքերի հետ չէին հասցրել դուրս գալ գյուղից, մենք արդեն գյուղի կենտրոնում էինք: ...Ջոկատի յուրաքանչյուր անդամ գիշերելու համար հարմար տուն ընտրեց: Գրիգորյանն ու ես... բաց երկնքի տակ գիշերեցինք ազատագրված՝ մեր

հողում: Հույս ունենք, որ այդպիսի ազատագրված գիշերներ, եթե ոչ մենք, ապա մեր սերունդները դեռ շատ կտեսնեն:

Եթե ուզում ես իմանալ, որ դա քո հայրենի հողն է, թե օտարի, մի գիշեր քնիր այդ հողի վրա...»:

Է՛Ղ Ի՛ՆՁ Ե՛Ք ԱՆՈՒՄ, ՆԱԿԱԼՆԵ՛Ր...

Բանաստեղծ բարեկամիս՝ Սարգիս Կարեյանի եզրոր՝ ազատամարտիկ Յուրա Կարեյանի բժշկման վկայությունը


Ս աղմուսներում հաճախակի է կրկնվում հետևյալ խրատ պատվերը, թե՛ խոստովանեցեք, որ նշանակում է՝ պատմեք, վկայեք, գոհություն հայտնեք, թե այս կամ այն սքանչելի գործը, ազատումը, բժշկությունը, հաջողությունը, կյանքի ի բարին փոփոխությունը Աստված կատարեց: Ե՛՛ իրավ է՝ ճշմարտությունը խոստովանել-պատմել-վկայելով, միշտ մեր հոգին առավել է կապված մնում այն կենսական Աղբյուրին, որ մեզ համար այդ սքանչելի բարիքները Քրիստոս Հոգևոր Թագավորով Աստված մեզ շնորհեց: Իզուր չէ, որ Քրիստոսի Անվան համար նահատակվողները վկաներ են կոչվում: Նրանք նյութապաշտ և կոսապաշտ մարդկանց մահվան սպառնալիքով էլ չուրացան Աստծո սերը և մինչ ի մահ վկայեցին, որ. «Սկզբից էր Բանը... և Բանը Աստված էր: Ամենայն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղել է»: Վկայելով Աստծո սքանչելիքները, այդպես իսկ՝ Աստծո գորավոր ձեռքը միշտ մեզ հետ է լինում և օրրատօրե ավելացնում իր կենսական, գորավոր կենդանությունն ու առողջարեք ներկայությունը մեզ վրա: Այդպես իսկ մենք նաև կարողանում ենք հեռու մնալ մոլորություններից, որ վիստում են այսօր ամենուր՝ շատերիս բանական առողջությունը փչացնելով ու ապականելով: Այս նախաբանը հենարան դարձրեցի, որ վկայության մի ոսկի ձեզ պատմեմ, վստահ, որ այդ ոսկին պիտի ուրախացնի բոլոր նրանց, ովքեր, որ Քրիստոսով են Աստծո վրա հույս դրել, որովհետև Աստված Նրանով գործեց ճշմարտությանը հավատացող մարդկության մեջ:

Այս տարի ծննդյան տոնին բանաստեղծ ընկերոջս ու բարեկամիս՝ Սարգիս Կարեյանենց տանն էի: Տոնական սեղանի շուրջ զրուցում էինք մեր Փրկչի մասին, պատմում վկայություններ: Սարգսի եղբայրներից ազատամարտիկ Յուրան, որ քիչ առաջ էր ներս մտել, լսելով մեզ՝ մի սքանչելի խոստովանություն արեց Աստծո գորավոր բժշկության մասին, որ լսելով փառաբանեցի Տիրոջը և վստահ եմ, որ ընթերցողների մեջ ևս փառաբանողներ կլինեն, քանի որ գրված է, թե. «Ճշմարտությունն արդարացվում է իր որդիների կողմից»:

Ազատամարտի ժամանակ Յուրան վիրավորվում է և երկար տարիներ տառապում ուժեղ գլխացավով: Եվ ահա, սուրբ Զատիկի օրերին հեռուստա ցույցով Հիսուսի մասին ֆիլմ է դիտում: Յուրան ոչ Ավետարանն էր կարդացել, ոչ էլ մեր Տիրոջ մասին շատ բան գիտեր: Այժմ ֆիլմայի Յուրայի խոսքերով էլ վկայությունը շարունակեմ. «Նայում եմ, տեսնեմ, Հիսուսը այդքան մարդկանց բժշկեց. կադին քայլեցնում էր, բորոտին մաքրում, միայն հրաշալի, բարի գործեր անում, բայց ահա բռնել, ծեծում են ու խաչում: Այստեղ չդիմացա, տեղիցս վեր թռա ու աղաղակեցի՝ էդ ի՞նչ եք անում, շակալներ: Ու լալիս եմ, այսքան էլ անարդար բան: Անտանելի էր, թե ինչ էին անում: Ե՛՛ հանկարծ զգացի, որ արցունքներիս հետ գլխացավերս նվազեցին ու լրիվ անհետացան: ՈՒ՛ղեղս պայծառացավ: Հիսուս ինձ էլ, այդպես՝ միանգամից բժշկեց: 1998 թվականի այդ օրվանից մինչև այսօր չի եղել մի օր, որ գլխացավերս կրկնվեն: Աստծո ներկայությունն եմ զգում իմ կյանքում և Աստծո ամեն օր իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Նրան: Այդ օրվանից ամեն օր, երբ զարթնում եմ, տնից դուրս գալուց առաջ՝ փառաբանում եմ Աստծուն այն ամենի համար, որ ինձ համար արեց»:

Այսօր, երբ ողջ աշխարհով մեկ Քրիստոսին իրենց ներսում կրող բազմաթիվ քրիստոնյաների են մատնում դառն աղքատության, ծաղրանքի, պոռնոգրաֆիա են ցուցադրում, որ այլասերեն, միասեռականության՝ ըստ Տիրոջ օրենքի մահապատժի արժանին են լկտիորեն օրենսդրում, և համարակալում են, որ բռնատերերին մատնվեն, դառնան ու մեզ էլ ձգտեն դարձնել իրենց նման խամաճիկ, երբագահություններով, ճարպկորդիների խարդախությունների թուլլտվություններով քրիստոնյաներիս ղնում են ստորակա վիճակների մեջ, արդյո՞ք՝ ազնվասիրտ ֆիլմայի Յուրա Կարեյանի նման շատերը կան, որ չդիմանալով վեր թռնեն իրենց տեղից ու ազնվական լացով աղաղակեն, որոտան. «Է՛՛դ ի՞նչ եք անում, շակալներ, քրիստոնյաներին հալածելով Քրիստոսին եք կրկին հալածում»:

Պիտի մի օր, այսօր էլ՝ վեր ելնեն հոգով ֆիլմայիները, պիտի առաջ գան ու լինեն, որ ազգային, համամարդկային



Մեծիկայի Սրբազան զեմքի նկարը: Համակարգչային մշակում:

ղժրախտություններ և հիվանդություններ, Զորավոր և Զորավար մեր Տեր Աստուծո՛վ բժշկվեն՝ մեր այդ հիվանդություններից հետք անգամ չթողնելով: Աստծո առաջ հավատով ասենք՝ թող լինի, լինի:

ԵՍ ՀՈԳՈՎ ՍԿՍԵՅԻ ՀԱՅՏՆՎԵԼ ԱՂՎԱՆՍԱՆՈՒՄ

Արձակագիր Գագիկ Մախատոյանի մոր՝ տիկին Ամալյա Սարգսյանի վկայությունը

Տարիներ առաջ լույս տեսավ. «Վարձկանուհին և զենեքայր» սրտառույզ վիպակը, որ նվիրված էր Արցախյան ազատամարտին: Հեղինակը երիտասարդ արձակագիր Գագիկ Մախատոյանն է: Վիպակը նման է արձակ պոեմի, սիրո և հայրենասիրության սիմֆոնիայի: Այս գեղեցիկ ու յուրօրինակ ստեղծագործությունը նվիրված էր «Դուշման» Վարդանին՝ և ուրախ ենք, որ շատերը սիրեցին և մրցանակի էլ արժանացավ:

«Տիրամայրն է շրջում» մատյանը, որ իր ակնառու նկարներով զարդարել էր Նիկոն Նիկոյայ Մանուկյանը, ընթերցելուց հետո, լսելով, որ Տիրամոր մասին նոր վկայությունների մատյան էմ կազմում, հավատացյալ եղբայրներից մեկն ինձ մի տեսաժապավեն նվիրեց՝ «Մարիամ Աստվածածնի երևումները 20-րդ դարում»: Եվ երբ ես մարդկայնորեն տարակուսած ուզում էի հրաժարվել, թե՛ ինչպե՛ս գիտեմ, երբ տեսասարք չունեմ, եղբայրը հանդիմանանքով հիշեցրեց, թե՛ երբ Աստված կամեցել է, որ այս ժապավենը քեզ նվիրեմ, մնացածն էլ Ինքը պիտի կարգավորի, դու ինչո՞ւ ես հոգս անում:

Այդպես էլ եղավ: Երբ ժապավենի մասին պատմեցի արձակագիր Գագիկ Մախատոյանին, ասաց, որ կարող ենք ժապավենն իրենց տանը միասին գիտել: Մեր գիտմանը մասնակցեց և արձակագրի մայրը՝ տիկին Ամալյա Սարգսյանը և նրա մի քանի կարճ արտահայտություններից հասկացա, որ աներկրա հավատով է գիտում, և ակամա մտածում էի, թե մեր ժողովրդի մեջ հավատի գանձեր ունեցողներ որքան մարդիկ կան, իսկ շատերս անտեղյակ ենք: Եվ երբ ժապավենը ավարտվեց, Գագիկի մայրն այդժամ ասաց.

- Ինչ որ պատմում եմ, առաջին անգամ եմ պատմում, և մինչև այսօր ոչ ոքի չեմ պատմել, անգամ Գագիկս էլ այսօր է լսում:

Այդժամ հասկացա, որ տիկին Ամալյայի սրբորեն պահած վկայության գաղտնիքը Խորհրդային անհավատության պատճառով, նման վկայություններ գիտելուց հետո միայն պիտի վստահություն ստանար և ի հայտ գար: Քանի

որ տեսավ, թե՛ ահա, երբ աշխարհով մեկ ֆիլմերով վկայում են Աստվածամոր երևումները, ինքն ինչո՞ւ՝ իր վկայությունը թաքցնի և չպատմի:

- Երբ Գագիկին տարան Աղվանական պատերազմին, պատմեց տիկին Ամալյան,- այնքան մտահոգ էի ու անհանգիստ, որ Աստված զթաց ինձ և ես երազում հայտնվեցի մի տեսիլքային իրավիճակում: Քայում էի ինչ- որ բնակավայրում, մոտեցա մի տան, որի առջև սև հագուստներով մի կին էր կանգնած: Միանձնուհի էր: Ասես, թե մեկին կամ հենց ինձ էր սպասում: Միանձնուհին ինձ ներս առաջնորդեց: Սենյակում Աստվածամայրն էր թագուհու նման նստած գահաթոռին, և շքեղ լույս էր նրա գլխի շուրջ, և նրա շորս կողմ երեխաներ կային ու հրեշտակներ:

- Ինչ ես որոնում,- հարցրեց Տիրամայրը:

Ես ուզում էի ասել, թե Գագիկիս պահպանությունն եմ որոնում, խնդրում եմ, որ Աստված պատերազմում պահպանի որդուս կյանքը, և երբ դեռ առաջին՝ Աղվանստան բառը նոր էի բարձրաձայն ասել, Տիրամայրը Աջ ձեռքը վեր բարձրացրեց, որ էլ չշարունակեմ, այսինքն թե՛ բավական է, խնդիրքդ ամբողջությամբ պարզ է, ինքն արդեն ամեն բան գիտի և կարիք չկա բարձրաձայն շարունակել, ապա այսպես պատասխանեց.

- Գնա՛, մի բան կանենք որդուդ համար:


Եվ սև հագուստով միանձնուհին ինձ կրկին սենյակից դուրս ուղեկցեց:

Այդ օրվանից հետո ես հոգով հայտնվում էի Աղվանստանում, լինում այն բոլոր վայրերում, ուր Գագիկս էր: Եվ այն վայրերն ու զեպքերը, որ նա հետո տուն վերադառնալով նկարագրում էր կամ պատմում, ինձ արդեն քաջ ծանոթ էին: Ես հոգով նրա կողքին լինելով, տեսա նաև, թե կողքին ինչպես ումը պայթեց և Աստվածամոր բարեխոսությամբ որդիս ինչպես հրաշքով անվնաս մնաց: Եվ տեսիլքում մի սուրբ այր էլ տեսա, որ ասաց.

- Որդուդ համար հանգիստ եղիր, չարին կպատժեմ, թե նրան կպչի:

Ճշմարիտ որ մանկական, ամիջական հավատ: Բայց սքանչելի հավատ, Աստված:

Հետո պարզվեց, որ մոր տեսիլքը տեսած օրերին, Գագիկը ներքին մի մղումով գնել է Աստվածամոր սրբապատկերը ու կախել պարանոցից: Ժամանակ անց անհավատ հրամանատարը կոպտորեն խլել է սրբապատկերը: Գագիկն այդժամ Տիրամոր նկարն է պահել գրպանում սրտին մոտ: Անհավատ հրամանատարի այն հարցին, թե այս ի՞նչ նկար է, որ պահում ես քո գրպանում, խոստովանել է, թե՛ Մորս նկարն է: Եվ չի ստել, քանի որ հավատացյալներիս հոգևոր Մորն է նկատի ունեցել:



Այս վկայությունը գրի առնելիս մի պահ ապշեցի Աստծո կատարած նախապատրաստական աշխատանքից: Որովհետև հաճախ մեզ թվում է, թե այս կամ այն աշխատանքը կատարեցինք մեզ որպես պատիվ և պարծանք, սակայն պարզվում է, որ Աստված Ինքը ամեն ինչ կազմակերպեց, տարավ, ուղեկցեց, պատվեց, իր շնորհներով գործել տվեց, և մեր դերը միայն նրա հայտնությունը չմերժելն էր, նրան ականջ դնելը, պատվիրանապահ ապրելը: Եվ ցավ ու ափսոսանք է, թե որքան անզամներ սատանայից խարված լինելով ականջ չենք դրել, չենք դիմել Արեգակ աղբյուրին՝ Քրիստոսին և մարդկանց ամենաարժանավոր կնոջն ու Մորը՝ Սրբուհի Աստվածածնի բարեխոսությունը ու տուժել ենք չարաչար: Տա՛ Աստված՝ անհավատ ու ծույլ չլինենք: Եվ դուրս գալով Գազիկենց տնից, փառք տվեցի Աստծուն՝ այս վկայության պարզ ու արժեքավոր նշխարի համար:

Ազատամարտիկ բանաստեղծուհի Հասմիկ Ղարեյանի «Վիրավոր ազգային» ժողովածուի մեջ Տիրամորն ուղղված այս տողերի նման բազմաթիվ այլ ըմբռնումներ կան.

«Դու իմ սերն ես հրակեց,
Միայն Քեզ եմ հավատում...
Տեր եղիր իմ որդուն հեզ,
Որ Քեզ պաշտեմ իմ սրտում...»:
Ե՛Ւ կամ.

«...Որդուս պահիր թևիդ տակ...
Հոգիս մատաղ կանեմ Քեզ,
Թե որ նրան տաք շունչ տաս...»:

Այստեղ հավատի ու հասունացող հոգու ըմբռնումն է կարևորն ու առաջնահերթը, որովհետև բանաստեղծուհու այս աղաչանքն իր որդու համար որդու նահատակվելուց հետո է, հոգու կենդանություն, արքայություն հանդեպ հույսի, որին թերահավատները դեռ հասու չեն: Որովհետև, ցավոք, շատերը միայն այս աշխարհում ապրողներին են կենդանի համարում, երբ նրանց մի մասը քայլող մեռելներ են, իսկ բարեպաշտ ապրած մահացածների, հայրենյաց ու մերձավորների հանուն նահատակվածների կենդանի հոգիների համար էլ է անհրաժեշտ աղոթել: Հավատի այս առավելությունը բանաստեղծուհու տողերի մեջ և նրա հետ զրուցելիս տեսնելով՝ նրան առավել բարձր ու վեհ կերպարի մեջ ըմբռնեցի և նրա ազատամարտիկ դառնալը ավելի ևս արժեքավորեցի: -Ամեն առավոտ եմ աղոթում,- խոստովանեց բանաստեղծուհին:

Բանաստեղծուհու որդին՝ քսանհինգամյա Արթուրը, որ «դրսում» լավ կրթություն էր ստացել՝ հայրենակիցներին ծառայեցնելու, Արցախյան շարժման ժամանակ, ամեն բան թողած սկսեց զենք ներկրել, որ հայրենակիցները նախապատրաստվեն եկող փոթորիկներին: ԽՍՀՄ-ը ազերիների կողմը բռնելով, տխրահոշակ գեներալ Սաֆոնովի ղեկավարությամբ, Արցախում ձեռնարկեց «Օղակ» օպերացիան: Անձնագրային խիստ ստուգումների նպատակն էր՝ ճնշել, տկարացնել Արցախն ու նրա միաբանությունը: Շատ բնորոշ հայրողիների հետ Սաֆոնովի զինվորները մատնություններ ձեռնարկեցին նաև տիկին Հասմիկի որդուն՝ Արթուրին ու նրան չարաչարելով սպանեցին: Սուս մայրիկի նման, քաջասիրտ ու հաստատակամ այս մայրն իր որդու գործը կիսատ չթողեց, զենք վերցրեց ու զարձակ ազատամարտիկ: Ազատամարտից հետո, հայրենասեր, սքանչելի ու վեհ արժանիքներով այս

բույրը արժանացավ մի շարք պատվավոր շքանշանների: Իսկ գրել սկսեց որդուն կորցնելուց հետո: Բանաստեղծություններ գրելը, Աստված, որպես մխիթարություն շնորհ տվեց նրան: Մխիթարություն՝ ո՛չ միայն իր որդու, այլ ուրիշների համար էլ:

...Նայե՛ք սար ու սահմանիս, մարտիկներ իմ հայկազուն,

Տեսե՛ք, ազատ են նրանք, և հայրենիքն է կանգուն,

Ձեր գլխից վեր, սիրելիք, հայոց երկինքն է լազուր,

Քնե՛ք հանգիստ, զի հայոց հողի սրտում եք հանգչում:

Այսօր բանաստեղծուհին արդեն ութ ժողովածուների հեղինակ է, ՀԳՄ անդամ: «Սոսեական ոգին բանաստեղծուհուն մղեց ի մարտ՝ հարազատ զավակի անավարտ կոնվեր շարունակելու: Կովեց և նրա հացարույր ձեռքերը վառողի ծխով ու հոտով օժվեցին»- նրա մասին գրեց բանաստեղծ Հակոբ Արապյանը:

ԱՊԱՆԵԱՐՈՒԹՅԱՄԲ ԲԺԵԿՈՒԹՅՈՒՆ

Անաստեղծ, երգիծաբան, ծագրանկարիչ Գուրգեն Լոռեցին, ում ապուպապերի արմատները Արցախից են սերում, 2011թ. Մեծ պահքի ավարտին մի գեղեցիկ վկայություն պատմեց. Աստծո ձեռքով իր թողան աչքերի բժշկության մասին էր: Ութ տարեկան թողարարող մի քանի տարի էր՝ ակնոց էր կրում: Փեսան՝ Հակոբը, տեսիլք է տեսնում, և Աստված նրան ասում է. «Մեղքեր ունես, որդյակ, երեք օր աղոթելով ապաշխարիր ու տղայիդ աչքերը կլավանան»: Հակոբը երեք օր շարունակ իր մեղքերի թողության համար աղոթքներով դիմում է Աստծուն: Երեք օր անց, որպես թե պատահաբար, ութամյա Ռուբենի ակնոցները ընկնում են ու կոտրվում: Ծնողները՝ Հակոբն ու Կարինեն, երեխային տանում են ակնաբույժի մոտ՝ մի նոր ակնոց պատվիրելու: Ակնաբույժը փոքրիկի աչքերը ստուգելով հայտնում է. «Այս երեխայի աչքերը լրիվ առողջ են, այլևս ակնոցի կարիք չունի»:

Ինչ իմանանք մեր երեխաները մեր ո՞ր մեղքերի համար են այս կամ այն հիվանդություններով տառապում: Եվ դրանք երևացող հիվանդություններ են, թե չերևացող, ակնհայտ, թե դեռ զաղտնի, Աստված գիտի: Սակայն դեղը ամենքի համար էլ նույնն է՝ ապաշխարանքի աղոթքներ: Ապաշխարանք մեր մեղքերը, որ հոգևոր շնորհ կլինի մեզ, իսկ մեր զավակների հոգևոր ու մարմնավոր առողջության համար՝ երկնային զեղ: Հավատացե՛ք, սիրելիներ,

մեր բժշկությունները որոնենք մեր ապաշխարությունների մեջ: 2013-ին ճիշտ նման հրաշք ինձ հետ եղավ: «Պատկերագարդ Աստվածաշնչի» խմբագրական աշխատանքներն էի կատարում, հասել էի «Նոր Կտակարանի» կեսերին, երբ ակնոցս շարքից գուրս եկավ: Եվ ձայն լսեցի, որ ասաց. «Դու արդեն առանց ակնոցի կարող ես կարդալ»: Տեսա, որ, իսկապես, աչքերս բժշկվել էին: Օրհնյալ է Աստված:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԵՐԸ ՎՐԵԺ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՆՉ ԱՋԱՏԵՑ ԶԱՐԻ ՍԱՐՔԱԾ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԻՑ

Արձակագիր գրչեղորս հիշատակին

Խորհրդային տարիներին էր, Ղարաբաղյան շարժումից 3-4 տարի առաջ: Վրեժ Իսրայելյանը, Սպարտակ Ղարաբաղցյանը, ես և էլի մի քանի հոգի գնացինք Ղարաբաղ՝ մեր հանդեսների համար նյութեր բերելու: Մեր խմբագիրը ղեկավարությամբ համաձայնեց, որ գնամ, քանի որ, - ասում էր, - Ղարաբաղի թուրքամետ իշխանությունը, մանավանդ լրագրողներին՝ բարեհաճ չէր ընդունի: Այդպես էլ կար: Երբեմն արգելում էին լուսանկարել, իսկ երբ հայկական գորգերի գործարան փորձեցինք մտնել, - ասացին՝ միայն Բաքվից եկած հատուկ թույլտվությամբ: Մեր խմբին հայազգի մի թուրքամետ գործակալ էին կցորդել, որ մեր ամեն մի քայլի մասին գեկուցում էր «վերևներին»:

Մի քանի օր էլ շրջում էինք Ղարաբաղով մեկ: Եվ երբ այցելեցինք Արվեստի դպրոց, ես հիացած աշակերտների աշխատանքներով, առաջարկեցի նկարները Երևան տանեմ՝ ցուցահանդես բացելու: Արվեստի դպրոցի ղիրեկատորն ու ուսուցիչները ասացին. «Գրեթե անկարելի բան ես առաջարկում, որովհետև մշակույթի գործիչներս այստեղ հայածանքի տակ ենք, նաև քեզ թույլ չեն տա, որ նկարները տանես, մեզ էլ հետո դառր պատասխանատվության կենթարկեն»: Մանավանդ, ասացին՝ ձեզ ուղեկցողն էլ հայահալած, բազում վատ գործերի հեղինակ է, զգույշ եղեք:

- Լավ,- ասացի,- գիշերը տաս անց կես- տասնմեկին, աշխատանքները մի քանի կապոցներով հյուրանոց կրեքեք, մատնիչ- գործակալը արդեն գնացած կլինի:

Մեր այս գրույցի ժամանակ, Վրեժն ու Սպարտակը զբաղեցնում էին դրան (գործակալին), որ չկարողանար մեր գրույցին խանդարել:

Երեկոյան մատնիչ- գործակալը, ինչ արեցինք, հյուրանոցից տուն չէր գնում:

- Թուղթ խաղանք, եթե տարվես՝ գնալու ես, որովհետև ուզում ենք քնել,- առաջարկեց Վրեժը: Մի շարք անգամներ գործակալը թուղթ ու շախմատ տարվեց, բայց չգնաց: -Սա ինչ որ բանի հոտ է առել,- փափսացինք իրար ականջի: Ի վերջո, Վրեժ Իսրայելյանը չդիմացավ:

- Մտրդ եղիր,- պոթիկաց նա,- գնա, որ մենք էլ հանգստանանք:
Ո՛չ վիրավորվելու նշան ցույց տվեց և ո՛չ էլ պատասխանեց: Սպասում էր:

Եվ ահա ժամը տաս անց կես- տասնեկին, Արվեստի դպրոցի ուսուցիչներին մեկը, առանց դուռը թակելու, ինչպես որ պայմանավորվել էինք, նկարների փաթեթավորված կապոցով ներս մտավ: Ես գլխով ցույց տվեցի, թե կապոցը կողքի սենյակում դիր: Դրեց ու առանց որևէ խոսք ասելու գնաց: Տեսավ, որ փտանգավոր մարդը դեռ մեզ հետ է: Մատնիչը գուցե չտեսավ, որովհետև շախմատ էր խաղում: Քիչ անց մյուս ուսուցիչը ներս մտավ և նույնն արեց: Որքան էլ փորձեցինք մատնիչի տեսողաշարը փակել, այս անգամ չստացվեց, տեսնով:

- Այդպես էլ գիտեի, գաղտնի բաներ եք տանում- բերում, կազմակերպում, նախապատրաստում- հեղնանքով նետեց գործակալը:

- Երեխաների նկարներ են,- առաջ եկա ես, -տանում եմ Երևան՝ ցուցահանդես բացելու:

- Ո՛ր է հեռախոսը,- ասաց գործակալը, և ապա տեսնելով հեռախոսը՝ ձեռքը զցեց խոսափողին:

Այդ պահին նշանավոր արձակագիր Վրեժ Իսրայելյանը, որ Աստծո հրեշտակի պես մի շարք անգամներ ազատել էր ինձ խիստ տհաճ իրավիճակներից, արդեն Ֆիդայի Վրեժ Իսրայելյանն էր:

- Կա՛ց,- որոտաց Ֆիդայի Վրեժը և Խորհրդային տարիների ծանր ջրամանր, որ գրաֆին էինք ասում, հայտնվեց Վրեժի ձեռքում:

- Եթե ձեռքդ հեռախոսից ետ չքաշես, գլուխդ կջարդեն: Մի քանի վայրկյան ունես:

Մատնիչ- գործակալը սփրթնեց, խիստ վախեցավ և ձեռքն արագ հեռախոսից ետ քաշեց:

- Միթե այդքան անասուն ես, միթե հայկական մի պտղունց, ազնիվ մի բան դեռ չի մնացել քո մեջ, միթե ազգությունդ լրիվ ուրացար. մի քանի օր մեզ հետ շրջեցիր, ուր գնացինք, պատվավոր հյուրի պես բեզ էլ ընդունեցին, մեզ հետ կերար- խմեցիր, որ հիմա մեզ

մատնես, քո ազգակիցներին- որոտալով հանդիմանում- խրատում էր Վրեժ Իսրայելյանը:

- Բա ի՞նչ անեմ,- արդարանում էր գործակալը,- եթե չմատնեմ, իմ վերջը կտան: Միայն Մարսիմը կմնա, պատասխան կտա, իսկ դուք վաղը կարող եք գնալ Երևան:

- Չէ,- ասաց Վրեժը,- խմբով եկել ենք, նույն խմբով էլ պիտի գնանք: Մենք չորս- հինգ հոգի ենք, նախապես կարո՞ղ ենք, չէ՞ քո վերջը տալ, ձերոնցից առաջ:

- Կարող եք,- կմկմաց գործակալը, որ Վրեժ Իսրայելյանից ակնհայտ վախենում էր ու սարսափով էր նրա կողմ նայում, սարսափով նրան լսում: Որովհետև Վրեժը Աստծուց կոչված քաջ հովիվ էր, գերբնտիր ընկեր, գառ իր բարությունը, բայց հարկ եղած պահին վերափոխվում էր առյուծի, որպեսզի մեզանից մեկն ու մեկին վնաս չկարողանան տալ: Իր անձն անգամ ամեն պահ պատրաստ էր դնել իր բարեկամների համար:

- Լավ, էլ ինձնից վտանգ մի սպասեք,- խնդրեց գործակալը,- բաց թողեք, որ գնամ:

- Ո՛չ,- որոտաց Վրեժը,- մինչև Մարսիմից ներողություն չխնդրես, չես կարող գնալ:

- Կներես,- ասաց ինձ գործակալը:



- Մեզանից էլ պիտի ներողություն խնդրես, որովհետև նույնն է, որ մեզ՝ բոլորին ես վիրավորել- շարունակեց խրատել Վրեժը: Եվ Արվեստի դպրոցի ուսուցիչներին էլ, խոստացիր, որ չես մատնի, եթե ոչ՝ բթիցդ կրերենք:

Խոստացավ, ներողություն խնդրեց ու գնաց:

Վրեժ Իսրայելյանի խրատական, առողջ քարոզից, գուցե մարդկային մի բան առաջացավ գործակալի մեջ: Վախենալն էլ էլի մի բան էր, կարևոր բան:

Երևանում նկարների կապոցները հանձնեցի «Ծիծեռնակ» ամսագրի շքեղաշուք նկարիչ Անդրանիկ Կիլիկյանին: Եվ նա հիանալով- հրճվելով Արցախի երեխաների նկարներով խմբագրության միջանցքում ցուցահանդես բացեց: Ցուցահանդես, որ գործեց մի քանի տարի: Ղարաբաղյան շարժման ժամանակ էլ ցուցահանդեսը դեռ կար: Նկարներից հրատարակվեցին թե՛ «Պիոներ» և թե՛ «Ծիծեռնակ» ամսագրերում:

Բայց նկարները, և նաև ես, Երևան հասանք նշանավոր արձակագիր ավագ եղբորս (տարիքով ինձնից ավագ էր, բայց ծնունդով էր ավագ՝ իրենից տարիքով շատերի համար էլ) Վրեժ Իսրայելյանի քաջության շնորհիվ:



ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԿԱՐԻՉ- ՄԱՆԿԱՎԱՐԺ ԵՎ ԼՐԱԳՐՈՂ ԿՈԼՅԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԸ ԹՔԵՑ ՀԱՅԱԿԵՐ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴԻ ՄԵԾԱԴԻՐ ՆԿԱՐԻՆ

Այս պատմությունը ժամանակին մամուլում հրատարակվել էր հումորի լեզվով: Ես պատմության մեջ նախախնամական բաներ նկատելով, ճշտելու համար հանդիպեցի Կոլյա Վարդազարյանին և ավելի մանրամասն տեղեկություններ էլ գրառեցի: Եվ պարզվեց, որ Կոլյան մեր նահատակների կենդանի հոգիների ձայնն էր լսել, մեր շարչարված պապերի ձայնը, և նրանց կողմից էր թքել հրեշի հիշատակ նկարի վրա: Նման վկայություն օրինակները գոտեպնդում են երիտասարդությունը՝ Աստծով ավելի խիզախ ապրել:

Այժմ անցնենք բուն պատմությանը:
1977 թվականն էր: ԽՍՀՄ 15 հանրապետություններից զբոսաշրջիկներ են մեկնում Թուրքիա՝ յուրաքանչյուր հանրապետությունից 12 հոգի: Նրանց մեջ էր Կոլյա Վարդազարյանը, որ սովորական մարդկանցս համեմատ հսկա է, և հսկա արժանավորներին հատուկ համեստ ու քշախոս, արդարասեր ու ամիջական: Բնականաբար, ինչպես ամեն տեղ է ընդունված, յուրաքանչյուր երկիր իր այցելուներին սկսում է ցույց տալ իր պատմության ոսկե էջերը, ինչ արժեքավոր բան որ ունի: Եվ ահա զբոսաշրջիկների խմբին ուղեկցում են ազգային պատկերասրահի այն սրահը, որ լի էր թուրք առաջնորդների նկարներով, իսկ կենտրոնում սուլթան Համիդի մեծազիր նկարն է: Կոլյան հայակեր Համիդ հրեշի նկարը, որպես ազգային արժեք ներկայացված տեսնելով, ապշում է: Ինչպես է, որ այս ժողովուրդը չի ամաչում, և հայակեր հրեշի պատկերը, որ իրենց ազգային ամոթներից մեկն է, որպես արժեք է ցուցադրել:

- Այդ պահին ձայն լսեցի, -ասաց Կոլյան: -Միայն ինձ լսելի ձայն: Այս աշխարհի այն կողմից եկող, հոգով կենդանի մեր նահատակների ձայնն էր, ֆիդայի սրբերի ձայնը:

- Կոլյա, այս շան լակոտի նկարն ինչո՞ւ է այստեղ: Մոտեցիր և թքիր վրան:

Կոլյան ավելի մոտեցավ նկարին և... թքեց, զորավոր թքեց: Ասես ո՞չ թե մի մարդ, այլ ո՞ղջ մի ժողովուրդ թքած լինեք, որովհետև երբ թքեց, թուրք Համիդի դեմքի վերից վար սկսեց ծորալ՝ միակ արժանի ու արդար օժումով օժելով հրեշի դիմանկարը:

Զբոսաշրջիկների ողջ խումբը քարացավ: Ամենքը սարսափի մեջ էին:

Ո՞վ կհամարձակվեր այդ բանն անել, եթե ոչ Աստծով գորավորված սիրտ ունեցողը: Թուրք գիղն էլ գույնը գցեց և բավական ժամանակ վախից ձայն չէր հանում, ապա ասաց.

- Հայերն արած կլինեն:

Երևի թքողներ էլի էին եղել:

Իսկ թե ինչո՞ւ: Այդ մասին գիղը գերադասեց լռել:
Թուրքն, այնուամենայնիվ, ոչ ոք չսրբեց. և մնաց իր արժանվույն տեղում:

Այդ դիմանկարի համար, գուցե սովորական բան էր:
ԽՍՀՄ-ի տարիներին զբոսաշրջիկներին հսկում էին ՊԱԿ-ի գործակալները: Սակայն սրանց մեջ կային, որ արդարասեր էին, կամ այդպիսին էին թվում, ինչպես Վարդանովը, որ այս խմբին էր հսկում:

- Չանհանգստանաս,- ասաց Վարդանովը Կոլյային:- ՊԱԿ-ն այս մասին չեմ պատմի:

Փանք Քրիստոսին. անմաս հայրենիք դարձան:

Սակայն պարզվեց, որ Պակ-ը եղելովյանն արդեն տեղյակ էր, և շատերն էին դեպքի մասին պատմում: Այդ օրերին Կոլյան կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվելու դիմում էր տվել: Եվ ակնկալվում էր, որ այս փառահեղ դեպքի պատճառով դիմումը պիտի մերժվեր: Բնականաբար, ո՞չ միշտ էին կոմունիստները հայրենասեր: Սակայն կուսակցական ժողովում ամենքն էլ զրվատեցին Կոլյայի արարքը, շնորհակալություն հայտնեցին հայակեր Համիդ հրեշի դեմքին ընտիր և սրտանց թքելու համար և մեր հսկային առանց քննության, պատվով և գովեստի խոսքեր ասելով՝ ընդունեցին կուսակցության շարքերը: Այն տարիներին հայ կոմունիստների մեջ, Փանք Աստծո, կային, որ ավելի հայրենասեր էին, քան կուսակցական:

Կոլյա Վարդազարյանի քաջությունը ինձ հիշեցրեց Հայոց նշանավորներից Կոստան Զարյանին, որ արտերկրի մի սրճարանում ապտակում է պրոլետարիատի առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինին՝ Հայոց մեր ազգին հայհոյարանելու համար:

- Մասնագիտությամբ ինչ ուզում ես, եղիր, սակայն ինչպես Գարեգին Նժդեհն է ասել, մարդու համար լավագույն, առաջահանրած, արմատական կարգախոսը պիտի լինի.

«Աստված և Հայրենիք»:

Աստված, որով իմաստնանաս, բարոյականը առավելացնես ու պահպանես և Հայրենիք, որի համար քո խիզախությունը, իմաստությունը և առաքինությունը բարի և օգտակար գործերի մեջ ծառայեցնես:

ԵՒ ԵՐԵՒԱՆԵՐՍ ՀՐԵՏԱԿՆԵՐԻ ՀԵՏ ՍԿՍԵՅԻՆ ԵՐԳԵԼ ՀԱՂԹԱԿԱՆ ՄԻ ԵՐԳ

Այս աշխարհի կարգերը իսկապես որ ախտ են, անհեթեթություն, անիմաստ չարչարանք ու տառապանք մարդու համար: Եվ ճշմարիտ ու ճշմարիտ որ, առանց Քրիստոսի սիրո ու լույսի, առանց Աստծո ճշմարտության, առանց Աստվածամոր, Սուրբ Հոգու Մայրության՝ ամեն ինչ է խարեական, ունայն ու անհեթեթ:

Բաժանվել էինք: Կինս երեխաներիս հետ մեկ տարի է իր հայրական տանն էր:

Առանց երեխաների դժվար էր, անհնար, գնացի նրանց տեսնելու, եւ ահա բերում էի Երևան: Հնդամներ մեկ տարի էր անցել, իսկ փոքրիկների դեմքերին, մանավանդ տղայիս, այնպիսի տառապանք կար, որ անհնար էր նկարագրել:


Մի քանի ժամ ուղևորներով լի ավտոբուսի մեջ ամենեւին ձայն չէին հանում: Լուռ էին ու լուրջ, ասես երեխաներ չլինեին. անգամ միմյանց հետ չէին խոսում, ավելին՝ այդ դառնությունը մեր մեղքերի եւ այս աշխարհի պատճառով էր ու ինչպիսի դառնությունը էին երեխաներն այդ տանում: Մտանք Երևան: Ավտոբուսն արդեն մոտենում էր սուրբ Սարգիս եկեղեցուն, սակայն ղեռ եկեղեցին չէր երևում, բայց ես զգացի, որ մտանք արդեն եկեղեցու հոգևոր դաշտի մեջ, որն ահա որպես իր զավակների դիմավորում էր մեզ, արդեն նրա սրբառատ ճառագայթների շառավիղում էինք: Սուրբ Սարգիսն իմ ապաշխարության եկեղեցին էր: Ապաշխարության առաջին ներումը, երկնային եւ ոչ թե մարդկային՝ այստեղ եմ ստացել: Եվ ահա եկեղեցու հոգևոր դաշտը, որ մոտ մեկ կիլոմետր շառավիղ էր ինձ համար, ինձ դիմավորեց, եւ հրաշքը տեղի ունեցավ: Մինչ այժմ լուսկյաց երեխաներս, առանց միմյանց հետ պայմանավորվելու, առանց միմյանց նայելու, հանկարծ դեմքերը մի փոքր վեր թեքեցին եւ վերնային Շնորհի հրամանով սկսեցին բարձրաձայն երգել հաղթական մի մեղեդի: Առանց խոսքերի: Այնքան բարձրաձայն, որ շատերին անհարմար թվաց: Վախենում էի, թե հոգնած ու նիրհի մեջ ընկած ուղևորները կսկսեն ահա բողոքել, հանդիմանել, հայհոյել: Իսկապես, ավտոբուսում իրար անցան: Երգն առանց խոսքերի էր, ուրիշիկ, երանական, հաղթական, հոգևոր, շնորհալի, միաբան եւ լուրջ: Ուղղակի ակնհայտ, կենդանի՝ հրաշք էր: Վստահ եմ, երեխաներս հրեշտակների հետ էին երգում: Եկեղեցին երկնային մոր պես, որպես իր ընտանիքի հոգևոր անդամներին՝ այդպես դիմավորեց երեխաներիս վերադարձը: Եվ երեխաներս

վերին ներշնչումով հրեշտակների հետ միաբան՝ փառաբանում էին Սիրո, Կյանքի եւ Աստծո Բանի հաղթանակը, որ ահա իրենց ծնողների հետ են, եկեղեցու եւ Աստծո հովանու տակ: Եվ որ Աստծու կամքն այս էր, իրենց ծնողների միաբանությունը: Ավտոբուսում գտնվողները, քանի որ մենք ամենավերջում էինք նստած, զարմացած շուտ էին գալիս ու ասում.

-Ճանապարհին ոչ մի բառ չխոսեցին, այնքան ամաչկոտ էին երևում, հանկարծ այս ինչ պատահեց սրանց հետ, միանգամից սկսեցին բարձրաձայն երգել, այն էլ առանց որևէ մեկիցս քաշվելու: Կինս էլ էր նույնն ասում:

Սակայն այս եկեղեցին, որ մոտ էր իմ աշխատավայրին, իմ հիմնական աղոթատեղին էր, սրբարանը, իմ խոստովարանք: Եվ ես այս վկայությունը գրառելիս հիշեցի Քրիստոս Աստվածորդու Խոսքը թե. «Երեխաների հրեշտակները ամեն օր երկնքում հանդիպում եւ տեսնում են Աստծուն»: Այդ պահին Ավետարանական այդպիսի մի հանդիպում էր: Իսկ մի քանի տարի անց կինս ու երեխաներս հենց այս եկեղեցում էլ մկրտվեցին՝ հանուն Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու:

Մենք ամենքս մեղավոր, հանցավոր մարդիկ ենք, սակայն տա Աստված, որ ջանանք մեր հանցանքները չտարածել մեր երեխաների վրա, այլ մտքով դրանք առավել շուտ խոստովանենք Աստծուն, ապաշխարության ուղին մեր ընտրելով, քան դրանք կսկսեն ընկճել մեր մանկանց: Եվ եթե մեր հանցանքները այնպիսին են, որ որպես մարդ ամաչում ենք դրանք մարդկանց կամ քահանային խոստովանել, ապա հիշենք, որ հոգևոր գործերով ապաշխարությունը հաճելի է Աստծուն, որ դառնում է նաև թե՛ մխիթարություն, թե՛ խոստովանություն, թե՛ կյանք: Որովհետեւ, ճշմարիտ որ / այդպես էլ գրված է/, թե. «Առանց գործերի հավատը մեռած մի բան է»: Ամեն օր ջանանք բարի և օգտակար մի բան անել մեր հոգևոր մերձավորների, մեր հոգևոր հայրենիքի համար, և եթե ոչինչ էլ չենք կարող՝ աղոթքով կամենանք այդ ամենը, և Աստված բարի մեր կամեցողությունները կենդանի գործերի կվերածի: Ամեն:





**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
ՓՐԿԱՎԵՏ ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՎԱՂ ՏԱՐԻ-ՔՈՒՄ ՄԱՆԿԱՆՑ ՄԿԻՏՈՒԹՅԱՆ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՒ ԱՋԳԱՅԻՆ ՕԳՈՒՏԻ ՄԱՍԻՆ**

ՈՒԹՕՐԵԿԱՆ ՄԱՆԿԱՆՑ ՄԿԻՏՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ԲԱՆԱԼԻՆ,
 Եւ մեր երկրում կունենանք հանճարների, պայծառատեսների, սքանչելի
 շնորհակիրների գորավոր ու հաղթ սերունդ

Որ թյաատումը փոխվեց մկրտության, այդ մասին սուրբ Գրիգոր Նարեկացին իր Մատյանում գրում է, «Եվ պիտի լրվեր թյաատությունը, որ մկրտությանը մտնենք շնորհի ողորմության մեջ (Բան-Ղգ)»: Ղուկաս Ավետարանչի «Առաքելական կանոնների» ԺԳ գլխում, մկրտության մասին այս արմատական բացատրությունն ու պատվերն ենք կարգում, թե՛ օրենքի թյաատումը փոխվեց մկրտության գերազանցով, և. «քահանայության կարգով ութ օրեկանում մկրտված մանուկները լինում են Քրիստոս հազնվածներ և վկաներ...»: Այսինքն, ստացվում է, երբ Հայաստանով մեկ ութօրեկան մանկանց մկրտության կարգը պահենք, ապա Հայաստանով մեկ էլ՝ կունենանք «Քրիստոս հազնվածների և վկաների», որն իր հերթին նշանակում է ունենալ շնորհներով լեցուն որդիների, դուստրների նոր սերունդ, աստվածազարմերի հաղթահանողես, որ կյցնեն մեր երկիրը ազգրնտիր գործերով և երկնային օրհնություններով:

Հին օրենքով ութօրեկանի թյաատման և Նոր Կտակի շնորհի գերազանցով ութօրեկանի մկրտության ժամանակային կարգը նույնն է մնացել. Հովհաննես Մկրտչի ծնողները նրան ութ օրեկանում թյաատեցին, չասացին, թե՛ սպասենք մանուկը մեծանա, տեսնենք կուզենա՞ թյաատվել: Եվ Մարիամն ու Հովսեփը թյաատման օրենքը կատարեցին Մանուկ մեր Տիրոջ համար, չասացին թե՛ սպասենք, Երեխան չափահաս դառնա, ինքը որոշի: Այսինքն, թե՛ մեր Տիրոջ. «Ով հավատա և մկրտվի, նա պիտի փրկվի» խոսքը ո՛չ թե՛ մանկանց, այլ միայն մեծահասակներին է վերաբերվում, երբ թյաատվում էին բոլոր տարիքներում, և մկրտվում են՝ բոլոր տարիքներում: Եվ, բնականաբար, երեխան թյաատվում էր ծնողների հավատքով: Եվ իզուր են այդ հարցով աղանդները մեր Մայր եկեղեցուն մանկանց մկրտության խնդրով բամբասում՝ իրենց իսկ թերրնթերցման պատճառով: Եվ նրանք, ովքեր իրենց ծնողների հոգածությունը՝ ժամանակին չեն մկրտվել լավագույն՝ ութօրեկան մկրտությամբ կամ, գոնե՝ երեխայության հասակում, ապա, արդեն, և՛ բնականաբար, իրենք են իրենց մկրտության մասին հոգալու՝ գիմելով հոգևորականին, երբ էլ որ հավատան: Եվ Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի խոսքը այդ մասին է:

Իսկ ինչու՞ է ութօրեկանը լավագույնը համարվում թե՛ հին, և թե՛ Նոր կտակարաններով: Աստված Ադամին ու իր կնոջը ստեղծեց արարչագործության վեցերորդ օրը (բստ մարդկանցս թվային տարիների՝ վեցերորդ հազարամյակում): Սակայն Ադամն ու իր կինը՝ օձից խաբվելով՝ նույն օրն իսկ (նույն՝ վեցերորդ

հազարամյակում) մեզքով ընկան: Յոթերորդ օրը Աստծո հանգստյան օրն է, արարչագործության շաբաթի ավարտով: Իր հանգստյան օրվա ավարտից հետո, այսինքն՝ ութերորդ օրից է Աստված սկսում Ադամի ու նրա կնոջ, նրանց սերունդների, մարդ արարածի փրկագործությունը: Հնով թլպատման ուխտով, Նորով՝ մկրտության պայմանով, որով Սուրբ Հոգին է սկսում ներգործել մանկան վրա՝ նրան շնորհազարգելով ու առաջնորդելով: Ութերորդ օրը նաև հաջորդ շաբաթվա առաջին օրն է՝ կիրակին, որ ամբողջությամբ փրկագործության խորհուրդն ունի՝ մեռելներից հարության խոստմամբ:

Մկրտության մասին առաքյալների հրահանգը այսպես է ավարտվում. «Եվ Տերը Վերնատան մեջ լվանալով մեր ոտքերը, ջրի մկրտությամբ մեզ զորացնելով՝ անմեղացրեց ավագանի սրբությանը ու աշխարհի համար մեզ թողեց որպես օրինակ, և մենք ասում ենք, որ քահանայության կարգով ութ օրեկանում մկրտված մանուկները լինում են Քրիստոս հազնվածներ և վկաներ, իսկ ուրիշներ, որ ջրի մկրտություն չունեն, նրանք իրենք իրենց իսկ արյամբ պիտի փրկվեն»:

Վերջին խոսքերը, թե. «իսկ ուրիշներ, որ ջրի մկրտություն չունեն, նրանք իրենք իրենց իսկ արյամբ պիտի փրկվեն», հուշում է մեզ, թե ջրի մկրտություն չունենալը (մանկանց համար մաքրության, մեծերի համար՝ ապաշխարության) վտանգավոր է և փորձանք է կանխատեսում: Ուրեմն, կարևոր է լիարժեք մկրտությունը, որպես կյանքի և առողջության ապահովագրություն, քանի որ մկրտությունը լվանում, սրբում է մեզ ժառանգական մահացու ախտերից, որոնք իսկ են մատնում մեզ ձախորդությունների, ծանր հիվանդությունների և դառն մահերի: Մկրտվել կարելի է բոլոր տարիքներում էլ, և Տիրոջով մկրտվելը բոլոր տարիքներում է փրկարար, սակայն, ինչպես առաքելական կանոնից գիտենք, լավագույնը եղել ու մնում է վաղ տարիքի մկրտությունը, մանկան ութ օրեկանում, երբ մանուկը դեռ չհասցնելով աշխարհից և ժառանգական ներազդներից փնասվել՝ առավել է պատրաստ լցվելու Աստվածային Սուրբ Հոգով և Աստվածային պարգևներով.

«Քահանայության կարգով ութ օրեկանում մկրտված մանուկները առավել են լինում Քրիստոս հազնվածներ և վկաներ»:

Ես ներկա ու վկա եմ եղել մի շաբթ ծանր հիվանդ երեխաների մկրտությամբ բժշկություններին, խորհում եմ, որ այդ հիվանդություններն էլ կկանխարգելվեն կամ ծանր չէին արտահայտվի, եթե այդ մանուկները ութ օրեկանում մկրտված լինեին, և դրան զուգրեթե առավել խոստումն էլ կա, այն, որ ութ օրեկանում մկրտվածները առավել պարգևներով լեցուն լինելով մեր ազգության մեջ առատացնում և առատացնելու են բարի մշակների թիվն ու որակը:

Քրիստոսը լման պահեց օրենքը. նախ ծնողների հավատով թլպատվեց ութ օրեկանում, սակայն մեզ՝ Նոր Ուխտի ժառանգորդներիս համար թլպատման օրենքը փոխեց մեծագույն Ենթահի և ողորմածության գերազանցով: Որ ծնողներս էլ մեր երեխաներին ութ օրեկանում մկրտենք:

Հայոց մեր Առաքելական եկեղեցում մանուկները մկրտվում ու կնքվում են լավագույնը՝ ութօրեկանում, և մկրտությունը կատարվում է մանկանց ծնողների, եկեղեցու հավատավորների և քավորի կամ նրանցից անգամ մեկի հավատով: «Մանկանց մկրտում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ՝ Նրա Մահվան և Հարության կնիքով կնքում, և մեր մանկունք լցվում են Տիրոջ Ենթահների պարգևներով»- Այդ է կատարյալ Աստվածային կամեցողությունն ու խրատը մեզ:

Այսինքն թե՛ Աստծո հետ ուխտը թե՛ հում և թե՛ Նորում, տարիքային առումով նույնն է, լավագույն ութօրեկանից սկսած՝ ներառյալ բոլոր տարիքներում էլ, սակայն քրիստոնյաներիս համար արդեն, թլպատման փոխարեն մկրտության գերազանցով:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Պչերը գիտեն, որ հայտնի բանաստեղծ Արամայիս Սահակյանը մասնագիտությամբ պատմաբան էր: Նա մի օր պատմեց ինձ, վկայեց, թե ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԿԱՅԱՅԱՎ ԱՍՏԾՈՒ ՀՐԱՄԱՆՆԵՐԻՑ ՎԱՍԵՑԱԾ ՍՍԱԼԻՆԻ ԿԱՐՃՎԱՄԱՆԱԿՅԱ ԴԱՐՉՈՎ»:

Իմ խնդրանքով բանաստեղծը մի շաբթ գրքեր բերեց, դրանք ուսերեն լեզվով հին հրատարակություններ էին. (Ռազմիսկի- էջ 505 - 506: «Ստալինն ասաց»- էջ 351: Յուրի Բորև «Ստալինի ազգ»- էջ 224): Այդ վավերագիր գրություններում վկայվում, պատմվում էր, թե 1942թ.

Լիբիայի հոգևոր առաջնորդը՝ Եղիա անունով, ազգությամբ ասորի, ծոմապահությանը և աղոթքներով փակվում է քարե նկուղում և խնդրում Տիրամոր բարեխոսությունը՝ Ռուսաստանի հաղթանակի համար: Աղոթքի երրորդ օրը, Տիրամայրը տեսիլքի մեջ երևում է նրան և թելադրում Հիսուս Քրիստոսի հրամանները՝ ուղղված Ստալինին, որպեսզի նա բանտերից ազատի հոգևորականներին, իսկ բռնատիրված եկեղեցիները նորոգելով՝ վերադարձնի նրանց, ապա Ռուսաստանը կսկսի հաղթել: Եղիան Տիրոջ հրամանները նամակով հայտնում է ռուս հոգևոր առաջնորդներին, իսկ նրանք էլ՝ նամակը փոխանցում են եկեղեցահալած ղեկավարին: Վախեցած Ստալինը ողջ երկ-



Երբ Տերն սկսեց իր երեքամյա քարոզչական և բժշկությունների գործունեությունը, նույն ժամանակում Եղևսիայի Հայոց թագավոր Արգարը հիվանդ էր բորոտությունից, հիվանդություն, որ ստացել էր իր հաղթական արշավանքներից մեկի ժամանակ: Եվ երբ արքան լսեց, որ Հիսուս կույրերին տեսնելու շնորհ է պարգևում, բժշկում կաղերին, անդամալույծներին ոտքի է հանում, անգամ կենդանացնում մեռելներին, և առհասարակ, առանց ղեղերի բժշկում է բոլոր հիվանդությունները, նամակ գրեց նրան, որ գա Եղևսիա և իրեն ևս բժշկի և ապրի Եղևսիայում, որպեսզի ազատվի հրեաների հալածանքներից, քանի որ լսել էր, թե հրեաները ուզում են Հիսուսին սպանել:

-Ես մի փոքր ու գեղեցիկ քաղաք ունեմ,- գրում է արքան,- երկուսիս էլ կրավարարի:

Այդ օրերին աշխարհում չի եղել որևէ թագավորի կողմից Աստծուն հավատալու նման փառավոր ընդունում և հստակ դիրքորոշում, որ մեր Արգար արքան ուներ:

Ինչպես Խորենացին է վկայում, Փրկիչը Արգարի նամակին պատասխանում է. «Երանելի է նա, ով ինձ ղեռ չտեսած է հավատում...սակայն ես այժմ գալ չեմ կարող, որովհետև պիտի կատարեմ այն ամենը, ինչ մարգարեների կողմից և սաղմոսներում գրված է իմ մասին: Եվ երբ մեռելներից հարություն առնեմ, կուղարկեմ իմ այս աշակերտներից մեկին, որ կբժշկի քեզ և կուսուցանի Լուսի Վարդապետությունը»:

Հեռատես էր Արգար արքան, քանի որ սիրտն էլ վկայում էր նման մի պատասխան, ապա նախօրոք էլ, իր ճամփած պատվիրակության կազմում ընդգրկեց պալատական իր նկարիչ՝ Անանին, որպեսզի երբ Հիսուսը հնարավորություն չունենա Եղևսիա գալ, գոնե Անանը նրա դեմքը նկարի ու բերի արքային, և արքան նկարին նայելով մխիթարություն գտնի: Գիտնական Անջելո Սերրատին պատմում է Արգարի քարտուղար՝ Լարուրնիայի հիշատակարանի մասին, որի տարրեր լեզուներով թարգմանությունները գտնվել և պահվում են աշխարհի ամենահռչակավոր գրապալատներում: Ըստ հիշատակարանի՝ Անանը վրձնում և իր արքային է բերում Փրկչի դիմանկարը: Այս դրվագի մասին հետագա դարերի այլազգի պատմիչներ էլ են գրել, իբր Անանը չէր կարողանում Տիրոջը նկարել և Հիսուս տեսնելով նրա տառապանքները, կտավր նրա ձեռքից վերցնում ու ղեմքին հպելով ետ է վերադարձնում: Կտավի վրա պատկերվում է Սրբազան Դեմքի գծերը Աստվածային ներազդող կնիքով: Ճշմարտությունն այս հարցում միայն Աստծուն է հայտնի: Փրկչի համար բնական էր և չէր զարմացնում նման հրաշքը, սակայն հարկ է նաև հաշի նստենք Արգարի քարտուղար Լարուրնիայի հիշատակարանի հետ, ուր ասվում է, թե Անանը նկարեց Տիրոջ դիմանկարն ու բերեց իր արքային: Մեր համոզմամբ, ժամանակակցի վկայությունն ավելի է ճշմարիտ, քան հետագա դարերի այլազգի պատմիչներինը: Ըստ հին այդ պատմիչների վկայության էլ, թե կտավը Տերն իր ղեմքին հպելով վերադարձրեց

Անանին, և դիմանկարը տպվեց կտավին, տասներորդ դարում բյուզանդացիների կողմից կառուցվել է նկարի շրջանակը, որի վրա նկարների մի ամբողջ շարք է և ամեն մի դրվագում պատմվում է, թե ինչպես Անանը անկարող եղավ նկարել և Տերն ինչպես կտավը վերցնելով հպեց իր ղեմքին ու վերադարձրեց Անանին: Այնուամենայնիվ, հարկ է մեզ հիշատակել Անջելո Սերրատի խոսքը, թե. «Նկարի վրա նկատելի են վրձնի նուրբ հետքեր», այդպես ավելի շեշտելով համաքրիստոնեական այս մասունքի հայկական ձեռակերտ ծագումը:

Եվ երբ Փրկիչն իր հարությունից հետո, ինչպես խոստացել էր, Հայոց աշխարհ ուղարկեց իր առաքյալներից Թադեոսին, սուրբ առաքյալը հասնելով Եղևսիա՝ բժշկեց թե Արգարին, թե հիվանդ եղևսիացիներին և քարոզեց Լուսի Վարդապետությունը: Ապա կառուցեց Եկեղեցի, և Եղևսիայի հայկական առաջին այս Եկեղեցու բեմում գրեց Փրկչի Սրբազան Դիմանկարը:

Արգարի մահից հետո, երբ նրան հաջորդող Սանատրուկը մեծ հալածանք սկսեց սուրբ քրիստոնեությունից դեմ, քանի որ դիվապաշտ և նույնն է թե կռապաշտ մարդ էր, վիժվածքի մի տեսակ, որ իր մանկամարդ գատերն էլ սպանել տվեց, երբ իմացավ, որ դուստրը աշակերտում է Թադեոս առաքյալին: Այնուհետ կեղծ այս թագավորը նահատակեց նաև Հայոց սրբալույս առաքյալին Սուրբ Թադեոսին: Այսօր եղևսիացի քրիստոնյաները Փրկչի Սրբազան Դիմանկարը շարեցին մի սյունի մեջ, որպեսզի կռապաշտ արքան և նրա չարասեր հետևորդները այն չպղծեին: Սանատրուկի պատճառով Եղևսիան իր Աստվածապաշտության Լույսը կորցրեց և շարունակ սկսեց մատնվել տարատեսակ աղետների՝ թե բնության կողմից երաշտի, որի պատճառով էլ սովեր և բազմաքանակ մահեր, համաճարակներ, և թե տարբեր արքաների կողմից՝ հարձակումներ և սրածուծներ եղան:

545 թվականին Պարսկաստանի Խոսրով թագավորն էլ իր հերթին, Միջագետքի վրա հարձակումից հետո գալիս պաշարում է Եղևսիան: Քաղաքն այլևս դիմադրավել չէր կարող և միակ խելամիտ էլքը, որով կարող էին սովամահությունից ազատվել, այն էր մնացել, որ արդեն հանձնվեր: Եղևսիայի Եվլալիոս սուրբ եպիսկոպոսը պահք ու աղոթքով աղաչեց Աստվածածնի միջնորդությունը Հոգիների Արքայի՝ Հիսուսի առաջ: Եվ ի պատասխան նրա խնդրանքի երազում Աստվածածինը երևաց, խոսեց նրա հետ և ասաց, թե՝ քաղաքի այսինչ սյունի մեջ է շարված Սրբազան Դեմքի Նկարը և պատվիրեց, քանզի սյունի շարվածքը, հանել Սուրբ Դեմքի Նկարը և առավոտյան բարձրացնելով քաղաքի պարսպի վրա՝ ցուցադրել թշնամու բանակին: Եվ թշնամին պիտի թողնի պաշարումն ու խուճապահար փախչի: Եվ Եվլալիոս եպիսկոպոսը արթնանալով, առանց պահի կորցնելու՝ Մայր Աստվածածնի պատվիրածի պես էլ անում է: Եվ երբ սյան միջից հանելով Սուրբ Պատկերը բարձրացրին պարսպի վրա, Սուրբ Պատկերից ճառագայթներ առաջացան ղեպի թշնամին: Եվ հանկարծահաս խուճապ ընկավ պաշարող բանակի մեջ

և բանակը պաշարումը թողած, թողած իրենց վրաններն ու սննդի ամենայն պաշար՝ վայնաստունով փախուստի գիմեց: Եվ Եղևսիան այսպես, Աստվածածնի միջնորդությամբ սրանչևիտրեն ազատվեց բնաջնջման ակնհայտ վտանգից: Ավելացնենք միայն, որ Եղևսիայի Սուրբ Դեմքի Պատկերը այսօր էլ կա:

... 944թ, եղեսացիները նկարը փոխանակեցին 200 բանտարկյալների, 1200 արծաթ դրամի և այն խոստման դիմաց, որ՝ բյուզանդացիները քաղաքի վրա չեն հարձակվի: Նկարը Բյուզանդիայի կայսերական պալատում մնաց գրեթե 400 տարի: Այնուհետև ձեռնվացի գորավար Լեոնարդո Մոնտալդոն Բյուզանդիայի որոշ բնակավայրերից վնդեց թուրքերին և փոխարեն այս ծառայության, Հովհաննես 5-րդ պապը նկարը նվիրեց նրան: Լեոնարդո Մոնտալդոն Սրբազան դեմքը տեղադրեց ձեռնվացի Ս. Բարդուղիմեոս հայկական եկեղեցում, որտեղ որ մինչև այժմ է: Յուցադրվում է տարին միայն մեկ անգամ հոգեզայտյան շարավիճակ օրերին:

ԿԱՅԵՆ- ԵՀՈՎԱ ԵՂԵԱՅՐԱՊԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Աստվածաշնչում յահվեն՝ «Եհովան», հատուկ անուն չէ և բնագրում միայն «լինել» է նշանակում, և թարգմանելի բառ է, հատկանիշ, և ո՛չ թե անուն: Որպես անուն աշխարհում տարածվեց 13-րդ դարից սկսած՝ անգլերեն լեզվով մի շեղ թարգմանություն («Փայլեր մեր մեջ», Երևան- 1995):

Հոգևոր գիտության մեջ, բոտ Հովհաննես Ավետարանիչի պարականոն «Փաղտնիքների գրքի», Կայեն անունը նույնացվում է Եհովայի հետ: Գրքում Հիսուս Հովհաննեսին հայտնում է, որ Աստված անուն չունի, քանի որ մեկը չկա Նրան հավասար, որ Նրան անունով կոչի, նաև թե՛ «Յահվեն» (Եհովան) սատանայի որդու անունն է, և որ սատանաորդի «Յահվեն» եղբայրասպան է, սպանեց իր եղբորը, ինչպես Կայենը Աբելին: Ավելին, որ Կայենի եղբայրասպանությունը նույն Եհովայի եղբայրասպանության մասին է: Եվ բնականաբար, եթե մարդ արարածներիս մեջ է ամոթալի, երբ մեկն իր հորը անունով կանչի, դիմի, ապա որքան առավել ևս անպատշաճություն, մեծամտություն, կայենություն, մոլորվածություն և դատարկամիտ հպարտություն է Հայր Աստծուն անունով դիմելու նեխած նախանձը, թե «Արարաիչ Հոր հետ «վկաներս» անունով ենք խոսում», որն էլ ի վերջո պարզվում է, Սատանայի որդու անունն է: Իսկ սերունդե՛ սերունդ մեծ իմաստուններն ու հզորագոր սրբերը մեզ խրատել են, որ չգայթակղվենք չարի անունը տալ, քանի որ իր անունը լսելով չարն իր տխեղծությունը փասաներ է բերում: Հիշենք, որ Աստծո Որդին Արարիչ Հորը միայն Հայր անվանեց, դրանով իր Որդիական խոնարհությունը հայտնելով, որը մեզ համար ամենակատարյալ ու ճշմարիտ, օրհնարեր օրինակումն է:

Այս ամենը հաստատող կարևոր մի բան էլ հավելենք. Սողոմոն Իմաստունը ինչ որ մի ժամանակ չարին հարեց և ապա ապաշխարեց, և չարի ուժերին գիտեր անուն

առ անուն: Նա իր «Վեցհազարյակում», վկայում է, թե՛ «Դևերի իշխանի անունն է Եհովա»: Իսկ դևերի իշխան՝ միայն սատանաորդին կարող էր լինել: Այսինքն թե, աշխարհի գրեթե բոլոր եկեղեցիները 13-րդ դարից սկսած՝ խարվելով, ցավոք, սկսեցին դևերի իշխանին, պիղծ սատանայի եղբայրասպան որդուն կանչել՝ որպես «Հայր Աստված», բացի Հայոց Առաքելական ավանդապահ և սուրբ եկեղեցուց: Մեր մեծանուն թարգմանիչները լավագույն գիտելիքներ ունենալով՝ գրաբար թարգմանություն մեջ «լինել» բառ հատկանիշը հատակեցված, ճշտագրված են թարգմանել, որից էլ թարգմանվել է արևելահայերեն Աստվածաշունչը: Հրեաներն ևս «Եհովա» բառը կարգալիս՝ մեծ փոստեղ և չար բան էին նախազգում: Սուրբ Գրոց բառարանում (Երևան 1992թ., «Ապոլոն»), կարդում ենք. «Հրեաները այս բառ՝ անունը բերան չէին առնում, և երբ սուրբ գրվածքներում հանդիպում էին, փոխանակ այդ բառի կարգում էին Ադոնայի (Տէր) կամ Էլոհիմ (Աստված)»: Իսկ «լինել» իմաստով բառը որպես Աստծո անուն կարող էին խարվել՝ կարգալի, քանի որ բնագրի ողջ տեքստը գլխատառերով էր:

Այս բանական լույսի տակ դիտենք «հավերժ անրնկճելի» Եհովայական Մ. Բարաջանյանի դիվագար աղանդը, որ Վասուլային (հույն կեղծ մարգարեուհի) հայերիս գլխին որպես մարգարեուհի է փորձում «սարքել» ու պնդել, տեղավորել: «Կին է բերում մեր եկեղեցու վրա»: Այս կնոջ պատրանքները անվանելով «Տիրոջ պատգամները», երբ Վասուլան իր գրքերում գրում է, թե՛ «Եհովան է իր առաջնորդը և հրամայողը», այսինքն՝ սատանաորդին: Եվ երբ այն օրերում ենք ապրում, երբ սպասվում է, որ նույն Եհովա՝ սատանաորդին, դևերի իշխանը մարդու մեջ մարմնավորվելով պիտի մտնի եկեղեցի, նստի Աստծո գահին, որպես Նեոն ու Դերաքրիստոսը: Եվ ում, մեր Տեր Հիսուս Քրիստոսը պիտի սատակեցնի Երկրորդ Իր Գալուստյամբ, որ քրիստոնյաներս սուրբ գրվածքներից գիտենք: Ամեն: Սուրբ Գիրք խցկած այս արատ՝ խարդավանքը, թե իրր «Աստծո անունը Եհովա է», հիշեցնում է առաքելական այն խոսքը, թե. «սատանան էլ է կերպարանավորվում որպես լույսի հրեշտակ, իսկ նրա պաշտոնյաներն էլ կերպարանավորվում են որպես արդարության պաշտոնյաներ» (Բ Կորնթ. 11):

ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ, ՄԱԳԴԱՂԵՆԱՅԻՆ ՉԷՐ, ՈՐ ՏԻՐՈՋ ՈՏՔԵՐԸ ՕԾԵՅ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՅՈՒՂՈՎ

Ձաճախ Մարիամ Բեթանացու փոխարեն Ավետարանի «մեղավոր կինը» անվանում ենք Մարիամ Մագդաղենեցուն: Շփոթում ենք հոգևոր ուսուցից, ցավոք, թերագետ գրողներ, նկարիչներ, քարոզիչներ, գիտնականներ, քահանաներ, շատ շատերս: Կեղծ մարգարեուհի Վասուլան իր գրքերում նույն շփոթն է տարածում՝ խառնելով Մարիամ Բեթանացուն Մարիամ Մագդաղենացու հետ, որից կրկին է երևում, որ սատանայից խարված մի բիզնեսմեն է և ո՛չ

երբեք Տիրոջից: Մերժելի և դատապարտելի է այն միտքը, որ Աստված իր կարող է Իր տված Ավետարանը չփոխել, ինչպես կեղծ մարգարեներն ու կեղծ մարգարեուհիներն են փորձում մեզ համոզել:

Հովհաննես սուրբ առաքյալի ավետարանում մասնավորեցվում է, թե ով էր Ավետարանի ՄՆՂԱՎՈՐ ԿԻՆԸ. «Եվ մի հիվանդ կար, Ղազարոս անունով, Բեթանիայից՝ Մարիամի և նրա քույր Մարթայի գյուղից: Սա այն Մարիամն էր, որ յուզով օժեց Տիրոջը և իր մագերով սրբեց նրա ոտքերը» (Գլուխ Ժա12): Ուրեմն մեղավոր կինը Ղազարոսի ու Մարթայի քույրն էր և Բեթանիայից էր, ոչ թե Մազգաղենայից: Սակայն մենք մեր կարդացածներին անուշադիր, Բեթանացի և Մազգաղենացի Մարիամներին շփոթում ենք այն պատճառով, որ Հիսուս Մարիամ Մազգաղենացուց յոթ դե էր հանել: Ուրեմն,- ասում ենք,- որքան է մեղավոր, որ նրա մեջ յոթ դե է եղել: Եվ դրանից էլ եզրակացնում, իբրև թե՝ Մազգաղենացին է Ավետարանի մեղավոր կինը եղել, և իբրև թե՝ Մազգաղենացին է, որ Հիսուսի ոտքերը թանկարժեք յուզով օժեց: Բայց դիվահարությունը ծանր հիվանդությունների մասին է խոսում և ոչ թե անառակության, որից ապաշխարում էր Հիսուսի ոտքերը օժող Մարիամ Բեթանացին և, բնականաբար, ոչ թե Մարիամ Մազգաղենացին: Իսկ Մարիամ Մազգաղենացին ոչ թե անառակ, այլ բարեպաշտ կին էր և բավականին ունևոր: Ըստ Ղուկասի Ավետարանի Ը գլխի, դեռից արդեն ազատագրված Մարիամ Մազգաղենացին իր ինչքերով ծառայում էր Հիսուսին և Նրա աշակերտներին. «Հիսուս շրջում էր քաղաքներն ու գյուղերը և ավետարանում էր Աստծո արքայությունը և տասներկուսն էլ Նրա հետ էին, ինչպես նաև մի քանի կանայք, որոնք բժշկվել էին չար դեերից ու հիվանդություններից. Մարիամը, որ Մազգաղենացի էր կոչվում, որից յոթ դե էր դուրս եկել, և Հովհաննան, Հելովդեսի մատակարարի՝ Քուդայի կինը և Շուշանը և ուրիշ շատեր, որ իրենց ինչքերով հոգում էին նրանց պետքերը»: Մարիամ Մազգաղենացին, որ միշտ պատվարժան, առաքինի կանանց հետ էր, նաև ուսյալ էր: 20-րդ դարում գտնվեց նաև Մարիամ Մազգաղենացու պարականոն Ավետարանը, որից սակավ, սակայն ճանաչողության տեսակետից՝ արժեքավոր, իմաստասիրական էջեր են պահպանվել:

ՄԻԱՍԵՌԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՋՐԵԼԻ ՀԱՆՅԱՆՔԻ ԵՒ ԱՍՏԾՈՒ ՍԱՀՄԱՆԱԾ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«**Մ**վ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց: Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը, տիրեցեք դրան, իշխեցեք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրում սողացող բոլոր սողունների վրա»: Մինդոց 1:26-31:

Ինչպես տեսնում ենք, մարդն արու և էգ ստեղծարանվեց Աստծո կամքով

ու ճարտարապետությամբ, և յուրաքանչյուրն իր կառուցվածքով, թե ճայնով, թե մտածելակերպով ու բնույթով, թե մարմնի անդամների տարրորոշումով, թե հակառակ սեռի հանդեպ ունեցած բնական սիրով և հակումով իր սեռը գիտի և, ի բնե գիտի: Եվ ոչ միայն մարդիկ, անգամ անասուններն էլ այդ ամենը լավ գիտեն, ըստ Աստծո արու և էգի նախասահմանման: Երկու- երեք տարեկան աղջնակն արդեն՝ տիկնիկներ է գրկում, օրոր ասելով «քնեցնում», իսկ տղան խաղում է աշխատանքային գործիք- խաղալիքներով, գենք խաղալիքներով, և ի բնե են այս մղումները, որպեսզի երբ մեծանան, աղջիկը ամուսնանա- մարդու գնա, մայր դառնա, տղան ամուսնանա, կին բերի, հայր դառնա և իր կնոջն ու երեխաներին իր աշխատանքով պահի, իր ուժով ու զորությամբ պատսպարի- պահպանի, տեր կանգնի:

Մարդն ո՞վ է, ստեղծարանված արարած, որ իրավունք ունենա իր սեռը ինքը որոշել՝ այդպես այլանդակություն մտցնելով նախապես սահմանված իր բնության մեջ, որն ամեն խախտող, ի վերջո՝ դատապարտվում է ոչնչացման:

Հին Կտակում, Ղևտացիների գրքում (ԺԸ-22-30) Աստված այս ամենի մասին խրատում, զգուշացնում, և ապա, շտղներին սպառնում է ոչնչացման մասին.

«Այր մարդու հետ չպառկես, ինչպես պառկում ես կնոջ հետ, որովհետև դա պղծություն է: Ոչ մի անասունի հետ չխառնակվես՝ պղծվելով նրա հետ: Կինը որևէ անասունի առաջ չկանգնի՝ նրա հետ մերձենալու մտադրությամբ. դա զարշելի է:

Այս ամեն տեսակ անմաքուր արարքներով մի պղծվեք, որովհետև նման արարքներով պղծված ժողովուրդներին ես ձեր առջևից պիտի վանեմ- վտարեմ: Նրանց պատճառով երկիրը զարշելի դարձավ, Ես վեր հանեցի նրա անօրենությունները, և երկիրը զգվեց իր բնակիչներից: Պահպանեցեք Իմ օրենքներն ու Իմ բոլոր պատգամները: Ոչ տեղաբնակը, ոչ դրսից եկած ու ձեր մեջ բնակություն հաստատած պանդուխտը այդ պղծությունները երբևէ չգործի, որովհետև այդ պղծությունները կատարեցին ձեզից առաջ այստեղ ապրած մարդիկ, և երկիրը պղծվեց: Խուսափեցեք նմանների կատարած պիղծ արարքներից, որպեսզի երկիրը ձեր գործած արարքների համար ձեզից նողկանք չզգա, ինչպես որ նողկանք զգաց ձեզից առաջ այստեղ ապրած սերունդներից: Ով որ կատարի նման պիղծ արարքներ, նա պիտի վերանա՝ իր ժողովրդի միջից: («Պիտի վերանա» արտահայտությունը այդ անձի, անձանց մահապատժի, բնաջնջման մասին է խոսում, քանի որ զբարարով բառացի է այդպես. «Ջի ամենայն մարդ՝ որ արասցէ յամենայն պղծութեանցն այնոցիկ, սատակեացին անձինքն՝ որ առնիցեն զայն ի միջոյ ժողովրդեան իրեանց»: «Յուրաքանչյուրը, ով կատարի այդ պղծություններից որևէ մեկը, պիտի նմանները մարմնապես սպանվեն, (պատիժն) ստանալով իրենց ժողովրդից»: Այստեղից է նաև Աստծո օրենքի քարկոծումով սպանումը, որ ժողովուրդն էր ըստ օրենքի իրագործում: Մ.Ո.): Կատարեցեք Իմ պահանջները, որպեսզի

չկատարեք այն բոլոր օրինազանցությունները, որ ձեզինքն առաջ կատարվել են, և մի պղծվեք դրանցով, քանզի Ես եմ ձեր Տեր Աստվածը»:

Որպեսզի միասեռականության գայթակղություն ընդհանրապես չլինի Աստծո ժողովրդի մեջ և մարդը ընդհանրապես հեռու մնա այդ ախտի սովորից անգամ, կանխագետն Աստված ժողովրդին զգվել է տալիս նույնիսկ անմեղ թվացող մի քանից հակառակ սեռի հագուստ հագնելուց.

«ՉԼԻՆԻ, ՈՐ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԶԱԳՈՒՍՏԸ ԿՆՈՋ ԶԱԳՈՒՍՏՈՎ ՓՈԽԱՐԻՆՎԻ: ԿԻՆԸ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԶԱԳՈՒՍՏ ՉԶԱԳՆԻ ԵՒ ՈՉ ԷԼ ՏՂԱՄԱՐԴԸ ԿՆՈՋ, ՈՐՈՎՉԵՏԵՒ ՆՄԱՆ ԿԵՐՊ ԶԱԳՆՎԵԼԸ ՊԻՂԾ Է ՔՈ ՏԵՐ ԱՍԾՈՒ ԱՌՋԵՒ»: (Բ ՕՐԵՆՔՆԵՐ):

Իսկ Լեոնան քարոզում, առաջնահերթությամբ՝ նաև նման հանցանքների խնդիրները նկատի ունենալով է Քրիստոս ասում.

«ԹԵ ԱՉՔԻՔԵՋ ԶԱՆՅԱՆՔԻՆ Է ԳԱՅԹԱԿՂՈՒՄ, ԶԱՆԿԻ ԱՅՆ ԵՒ ԴԵՆ ԳՅԻՐ ՔԵՋՆԻՑ, ԹԵ ՉԵՌՔԻՔԵՋ ԶԱՆՅԱՆՔԻՆ Է ԳԱՅԹԱԿՂՈՒՄ ԿՏՐԿԻ: ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՔՈ ԱՆԴԱՄՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԿՈՐՉԻ, ՔԱՆ ԱՄԲՈՂՋ ՄԱՐՄՆՈՎ ԸՆԿՆԵՍ ԳԵՉԵՆ»: (Մատթևոսի Ավետարան, «Լեոնան քարոզը»): Այս խոսքերի մեջ մահացու հանցանքը անմեղադրելի դիտելու նշույլ անգամ չկա: Այլ, ինչպես տեսնում ենք, ինքնադատաստան անելով փրկվելու խրատ կա: Հոգևոր ուժեղը հոգևոր հատումով (պահեցողությամբ և աղոթքներով, խոստովանություն-հեծեծանքներով, մեղք ու հանցանքից ապաշխարություններով), առավել դեռ մարմնավորը՝ մարմնական հատումով: Պողոս առաքյալը նման պղծագործների մասին ասում է, «ԼՅՎԱԾ ԵՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՆԻՐԱՎՈՒԹՅԱՄԲ, ԱՆՋԳԱՄՈՒԹՅԱՄԲ, ԱԳԱՆՈՒԹՅԱՄԲ, ԿԱՏԱՐՅԱԼ ՆԱԽԱՆՉՈՎ, ՍՊԱՆՈՒԹՅԱՄԲ»: Նման պղծագործություն կատարողները դառնում են «ԲԱՆՍԱՐԿՈՒԻ, ՉԱՐԱԽՈՄ, ՆԱԽԱՏՈՂ, ՀՊԱՐՏ, ԱՄԲԱՐՏԱՎԱՆ, ՊՈՒՈՏԱԽՈՄ, ՉԱՐԱՀՆԱՐ, ԱՆՄԻՏ, ՈՒՏԱՍԱԴՐՈՒԹ, ԱՆԱԳՈՐՈՒՅՆ, ԱՆԳՈՒԹ, ԱՆՈՂՈՐՄ» (Հոռմեացիներ 1:18-32): Այսինքն թե. ահա ինչպիսի զազրելի պղծություններ են որպես թե «եվրոպական արժեքներ» ոմանք բերում մեր ժողովրդի մեջ սերմնացանելու: Եվ բնական է, նմաններին իրավունքներ տվողները կամաակամա դառնում են նման վայրագ մարդանմաններին, անասուններից իսկ ցած գտնվողներին, դեռի ենթականերին հանցակիցներ:

Նույն այս չար պտուղների մասին է վկայվում Սողոմ և Գոմոր պիղծ քաղաքների բնակիչների մասին. նրանք իրենց պիղծ ցանկությունը կատարելու համար անզգամ էին, անգութ, անողորմ և չարահնար:

Նմանները, բնականաբար, Աստծով երբևէ չեն ներվել և երբևէ չեն ներվելու: Եվ Տիրոջ ահեղ դատաստաններից չեն ազատվելու, եթե ժամանակին խոր ապաշխարության չդիմեն, եթե ուշանան: Քանի որ՝ անգետ չեն:

«ՆՐԱՆՔ (միասեռականները և այլ պղծագործներ...) ԳԻՏԵԿՆ ԱՍԾՈՒ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆԸ, ԹԵ ԱՅԴՊԻՍԻ ԲԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐԸ ՄԱՀՎԱՆ ԵՆ

ԱՐԺԱՆԻ ԵՒ ՈՉ ՄԻԱՅՆ ՆՐԱՆՔ, ՈՐ ԱՆՈՒՄ ԵՆ, ԱՅԼ ՆԱԵՒ ՆՐԱՆՔ, ՈՐ ԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԶԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏԱԼԻՍ»:- Ասում է Պողոս առաքյալը (Նույն տեղում՝ Հոռմեացիներ 1:18-32):

Կարևոր շեշտն այստեղ է, որ վերաբերվում է ամեն մի իշխանության, բոլոր երկրների պատգամավորներին, Սահմանադրական դատարաններին, մարդու իրավունքների պաշտպաններին, բարին գործելու ի գորու բոլոր մարդկանց: Որովհետև ովքեր միասեռականներին իրավունքներ են տալիս, նրանք Աստծուց դատվելու են որպես միասեռականներ, քանի որ, կրկնենք, Աստվածային կամքը արդեն այդ իսկ օրինականությունն է նախապես սահմանել. «...ԱՅԴՊԻՍԻ ԲԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐԸ ՄԱՀՎԱՆ ԵՆ ԱՐԺԱՆԻ, ԵՒ ՈՉ ՄԻԱՅՆ ՆՐԱՆՔ, ՈՐ ԱՆՈՒՄ ԵՆ, ԱՅԼ ՆԱԵՒ ՆՐԱՆՔ, ՈՐ ԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԶԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏԱԼԻՍ»:

Անգամ ոչխարն էլ կհասկանա, որ միասեռականներին իրավունքներ տալը գայթակղություն զցելը թշնամի մարդ է արել, որ գայթակղություն զցի մատաղ սերնդի մեջ, երեխաների մեջ, մեր բանակի մեջ: Իսկ բանակների հաղթանակները Աստված մշտապես հավատով և առաքինությամբ է պայմանավորել ու պայմանավորում և ո՛չ թե թվաքանակով կամ զենքի շատությամբ: Այսինքն. նաև ռազմավարական տեսակետից է պղծերին իրավունքներ տալը թշնամություն մեր ժողովրդին:

Իսկ նման զազրանքներին գայթակղություն դնողների համար Հիսուս Քրիստոս՝ Թագավորը թագավորների, նախապես է Աստծո Դատաստանը նրանց ներկայացրել. «Եվ ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար լավ կլինի, որ նրա պարանոցից էլի երկանաքար կախվի, և նա սուզվի ծովի խորքը: Վայ աշխարհին՝ գայթակղությունների պատճառով. գայթակղություններ պիտի գան, բայց վայ այն մարդուն, որի միջոցով կը գա գայթակղությունը: Եթե քո ձեռքը կամ ոտքը քեզ գայթակղեցնում է, կտրիր այն և դեռ զցիր քեզինք. լավ է, որ դու մեկ ձեռքով կամ կազ մտնես կյանք, քան երկու ձեռք ու երկու ոտք ունենաս և հավիտենական կրակի մեջ ընկնես: Եվ եթե քո աչքն է գայթակղեցնում քեզ, հանիր այն և դեռ զցիր քեզինք. լավ է, որ դու միակտի մտնես կյանք, քան երկու աչք ունենաս և ընկնես գեհենի կրակը»: Մատթևոս 18:6-9:

Վախ ունենանք Աստծուց, որպեսզի Նրա դեմ չապստամբենք՝ անտեսելով կամ ոտքի տակ տալով Նրա, մեզ սրբացնող կարգերն ու օրենքները: Ինչպես իմաստուններն են նախապես խրատել և Սաղմոսարանում էլ կա. «Իմաստության սկիզբը Աստծուց վախ ունենալն է»:

Այսօր ողջ աշխարհով մեկ են պղծագործները մոլորեցնում, խաբում, թե իբր խառնակ մնալով կամ խառնակություն անելով էլ կփրկվեն, երբ Քրիստոս նման խոստում երբևէ չէր կարող ունենալ: «Եթե աչքը քեզ գայթակղում է, հանիր» ասողը, բնականաբար, իր ժամանակին կոտորման աղետի և դժոխքի ձեռքը կտա թե միասեռականներին, և թե բոլոր նրանց, ովքեր Աստծո դեմ

պիղծ իրավունքներ սահմանելով ապստամբեցին, եթե նրանք ժամանակին չապաշխարեն:

«ԶԳԻՏԵՔ, ՈՐ ԱՆԻՐԱՎՆԵՐՆ ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՆ ԺԱՌԱՆ ԳԵԼՈՒ ՄԻ ԽԱԲՎԵՔ. ՈՉ ՊՈՌՆԻԿՆԵՐ, ՈՉ ԿՈՒՊԱՇՏՆԵՐ, ՈՉ ՇՆԱՅՈՂՆԵՐ, ՈՉ ԻԳԱՅՈՂՆԵՐ, ՈՉ ԱՐՎԱՄՈՂՆԵՐ, ՈՉ ԳՈՂԵՐ, ՈՉ ԱԳԱՀՆԵՐ, ՈՉ ՀԱՐԲԵՑՈՂՆԵՐ, ՈՉ ԲԱՄԲԱՍՈՂՆԵՐ, ՈՉ ԷԼ ՀԱՓՇՏԱԿՈՂՆԵՐ ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՆ ԺԱՌԱՆ ԳԵԼՈՒ: ԵՎ ԴՈՒՔ, ԳՈՆԵ ՈՄԱՆՔ, ԱՅԴՊԻՍԻՆ ԷԻՔ, ԲԱՅՑ ԼՎԱՑՎԵՑԻՔ, ՄԱՔՐՎԵՑԻՔ, ԱՐԴԱՐԱՑՎԵՑԻՔ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԵՐ ԱՍՏԾՈ ՀՈԳՈՎ», - Հայտնում է Պողոս սուրբ առաքյալը (Ա, Կորնթացիներ):

Ինչպես տեսնում ենք, Աստված պղծագործներին կամ նույն սեռով խառնակվողներին կամ իրենց սեռը փոխողներին փրկելու խոստում երբևէ չունի և երբևէ չի ունեցել, նրանք քրիստոնյա իրենց կեղծեն, թե աշխարհիկ լինեն: Սակայն փրկում է այդ մահացու հանցանքներից մինչև մահ ապաշխարողներին, մինչև վերջ մաքրվողներին, մինչև վերջ ետ դարձողներին, այդ ախտերից լվացվողներին, ինչպես առաքյալն է ասում:

Ծագումնաբանական

ՀԱՅՈՑ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ ՀԵԹԱՆՈՍ ԵՐԲԵՎԷ ՉԵՆ ԵՂԵԼ

Հայտնի է, որ Բաբելոնում, լեզուների խառնակման ժամանակ, ովքեր միմյանց նման խոսեցին, իրենց տոհմերով միասին էլ հեռացան տարբեր ուղղություններով: Սակայն երբ միայն Հայկն իր տոհմով վերադարձավ Արարատի բնակավայր, ուր Նոյն էր մնացել, ապա այս հուշում է, թե նրա ու իր տոհմի լեզուն Աստված չէր խառնակել, այլ Նոյի նույն լեզուն էր մնացել, որ ազամյան լեզուն է, այդ պատճառով էլ վերադարձավ իր տոհմի նման խոսողների մոտ, Նոյի մոտ, որ աշտարակաշինությունը չէր մասնակցում և չէր հեռացել Արարատի շրջակայքից: Իսկ այդ ժամանակ Նոյը դեռ կենդանի էր, որովհետև Բաբելոնյան աշտարակաշինությունը հաշվվում է 114-200 թվականներին ջրհեղեղից հետո, իսկ Նոյը, ըստ Մենդոց Գրքի, ջրհեղեղից հետո ապրեց ևս 350 տարի: Եվ երբ Աստված չարիք գործողների ամենքի լեզուն էլ խառնակեց, բայց Հայկինը՝ ոչ, ապա կարելի է եզրահանգել, թե Հայկը իր տոհմով չար չէր և իր տոհմով համաձայն չէր բաբելոնյան ապստամբների և գոռոզացածների հետ: Ուստիև Հայկը մերձ էր Արարիչ Աստծուն, ինչպես Նոյ Նահապետը և իր հայր Թորգոմը, այդ պատճառով էլ Հայկին չէր կարող հաճո լինել Արարչի դեմ Բեյ-Նեբրովթի ապստամբությունը: Իսկ որ Հայկի հայր Թորգոմը մոտ էր ու սիրելի Արարիչ Աստծուն, այդ Սուրբ Գրքից գիտենք: Եզեկիելի մարգ., 38:6-

7-ում կարդում ենք. «Գոմերը և Թորգոմա տունը՝ հյուսիսի կողմերից, ու բոլոր նրանք, որ նրա շուրջն են, բազմաթիվ ազգերի էլ՝ քեզ հետ: Պատրաստվիր, պատրաստ եղիք դու և քեզ մոտ հավաքված ամբողջ բազմությունը: Որովհետև դու Ինձ համար առաջապահ ես լինելու»:

Մանավանդ որ «Դու ինձ համար առաջապահ ես լինելու» Աստծո խոսած խոսքի համաձայն, մեր Հայկ Նահապետը, Թորգոմի ամենասիրելի որդին լինելով, ճշմարիտ որ՝ «Աստծո առաջապահ» եղավ վերջ տալով ինքնակոչ ու բռնատեր Բելին, որ ի բնե ծառա լինելու էր կոչված, բայց ակնհայտությամբ՝ ինքնակոչ ու սուտ թագավոր էր: Արդյո՞ք այս ամենին լրացնող գրավոր այլ աղբյուր կա Հայկ Նահապետի՝ բուն Արարչին դավանելու մասին:

1981 թվականին, Երևանի համալսարանի հրատարակչությունը աղբյուրագիտական արժեքավոր մի գիրք հրատարակեց՝ «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (հնագույն ժամանակներից մինչև 9-րդ դարի կեսերը)» վերտառությունը: Այս հատորում սկզբնաղբյուրներ են օտար պատմիչների, տարեգիրքների կողմից վկայություններ և հիշատակումներ հայ ժողովրդի մասին: Ժողովածուի մեջ էջեր կան վրացական «Քարթլիի Յիսուրբերա» մատյանից՝ Հայկ Նահապետի և նրա յոթ եղբայրների մասին:

Խորենացին չի հիշատակում, թե Բաբելոնում լեզուների խառնակումից հետո Թորգոմն իր տոհմով եկավ Արարատի գոգահովիտը, այլ ասում է. «Հայկն իր տոհմով եկավ»: Ըստ վրացական մայր մատյանի Բաբելոնից աստվածաշնչյան Թորգոմն է իր տոհմով գալիս Արարատի գոգահովիտ, բնականաբար՝ Հայկն էլ նրա հետ. «Թարգամոսը (տեղեկացնում է մատյանը) քաջ մարդ էր ու ապրեց 600 տարի: Նրա որդիներից 8 մարդ հայտնի դարձան. առաջինը կոչվում էր Հայոս (Հայկ)... Թարգամոսը բաժանեց իր երկիրն այս ութ հսկաների միջև և լավագույն կեսը տվեց Հայոսին (Հայկին), իսկ մյուս յոթին տվեց իրենց բաժինը՝ ըստ նրանց արժանիքների... Հայոսը բնակություն հաստատեց իր հոր Թարգամոսի բնակավայրում»: ԱՀԱ ԹԵ ԻՆՉՈՒ Է ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ԱՆՎԱՆՎՈՒՄ ՆԱԵՎ «ԹՈՐԳՈՄԻ ՏՈՒՆ»:

«Բաբելոնի դեմ կանչեցեք Արարատյան թագավորությանն ու Ասքանազյան գնդին»,- մեր ազգի մասին Աստծո կոչն է գրում Երեմիա մարգարեն արդեն այլ Բաբելոն ու բաբելոնների նկատի ունենալով էլ: Առաջին Բաբելոնի Բելին հաղթած Հայկի գորավոր ազգին է Աստված կոչ անում մյուս բոլոր բաբելոնների դեմ, և բնականաբար, նաև «Մեծ Բաբելոնի», որը Հիշատակվում է Հովհաննեսի Հայտնությունից Գրքում: Այսինքն թե մեր ազգը արարչականը պատվեր ու գորավոր ժառանգավորություն ունի Տիրոջ կամքը ապստամբ բաբելոնների դեմ գեղեցիկ հաղթանակներով իրագործելու, ժառանգավորություն, որ ունենք մեր աստվածագարմ նախնի հսկաներից, լուսավոր և երկարակյաց մեծերից: Եվ որ մինչ Տիրոջ Երկրորդ գալուստը այդ հաղթության ոգին արժանահավատորեն ի հայտ է լինելու մեր ազգի մեջ, այդ տեսնում ենք սուրբ Սահակ Պարթևի հայտնի տեսիլքի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիրք առաջին

ավարտում (Սուրբ Սահակ Պարթևը տեսիլք տեսավ մինչև Քրիստոսի Երկրորդ գալուստը Հայաստանում տիրող հոգևոր և պատմական իրադարձությունների մասին, որ հայերը գեղեցիկ հաղթանակ են տանելու «անօրենություն մարդու», դերաբրիստու- Նեոի դեմ (սուրբ Սահակ Պարթևի տեսիլքը. Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն»): «Յոթ հսկա եղբայրները,- պատմում է վրացական մատյանը,- ենթակա էին Հայկին (Հայոսին), ով նրանց կառավարիչն ու տերն էր: Եվ այս բոլոր ութ հսկաները միասին ծառայում էին Ներրովթ (Բել) հսկային, ով ողջ աշխարհի առաջին թագավորն էր»: Եվ երբ Ներրովթ- Բել անօրեն թագավորը հարկ պահանջեց Հայկից ու նրա եղբայրներից, Հայկը, կանչելով իր յոթ հսկայազարմ եղբայրներին, նրանց այս խոսքերն ասաց. «ԲԱՋՄՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՏՈՂՄԻՆ, ԱՐԴ, ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԱՐԱՐԶԻ, ՉԼԻՆԵՆՔ (ԱՅԼԵՎՍ) ՈՉ ՌՔԻ ԾԱՌԱ ԵՎ ՈՉ ՌՔԻ ԶԾԱՌԱՅԵՆՔ, ԲԱ ՅԻ ԱՐԱՐԻՉ ԱՍՏՈՒՑ»:

Եվ երբ Ներրովթ- Բելը իր ողջ զորությամբ եկավ Հայկի ու նրա եղբայրների վրա, «այնժամ,- վկայում է վրաց մատյանը,- հաղթեցին թարգամոսյանները և կոտորեցին Ներրովթի վաթսուն հսկաներին ու նրանց զորքերին: Ապա թարգամոսյան յոթ հսկաները, որ ողջ մնացին, իրենց հաղթանակի համար փառաբանում էին Աստծուն»: Վրաց մատյանում մանրամասնորեն նկարագրվում է նաև, թե ինչպես է Հայկը Բելին նետահարելով սպանում, ապա. «...Եվ բռնատիրությունից ձերբազատվեցին թարգամոսյան տոհմերը: Այնժամ Հայոսը իրեն արքա հռչակեց իր եղբայրների և մերձակա սահմանակից տոհմերի (ցեղերի) վրա, իսկ յոթ հսկաները՝ յուրաքանչյուրը գնաց իր երկիրը և հպատակ էին Հայոսին (Հայկին)»: «Ութ եղբայրների մասին» վկայաբանությունը իր նուրբ գազաթնակետ անցումներով, լեզվով, շնչով առավել աստվածաշնչյան և սուրբ բխում ունի և Խորենացու Մատյանին իր վեհությունը լրացնելով, պատմում է աստվածապաշտությունը անհաղթ բազուկ ունեցող, փառավոր ու երկարակյաց մեր նախնիների մասին:

Ինչպես տեսնում ենք, մեր երկարակյաց նախահայրերը ոչ միայն հեթանոսներ չէին կարող լինել, այլ այնքան պատվական էին Արարիչ Աստծո առաջ, որ ծառայել են նրան որպես առաջապահներ, չարահաղթներ կամ բարեխոնահաղթներ՝ այդ շնորհների համար հիշատակվելով Աստվածաշնչում: Իսկ հեթանոսությունը մեր ազգի մեջ և ողջ աշխարհում առաջացավ միայն աստվածճանաչումից հեռանալու, Սուրբ Հոգուց օտարանալու, բանականությունից վայրենանալու կամ վայրենությունը տեղ տալու պատճառով: Սակայն մեր նախնի լուսավոր հայրերի Աստվածապաշտությունը 2000 և ավելի տարիներ ի վեր նորոգվում է Աստծո Որդի Քրիստոսով, նրա Խաչելություն Արյան աներեր հաղթանակով, որ «հաշտեցնում է հայրերին ու որդիներին», մեզ և մեր նախահայրերին՝ միասնաբար կանգնեցնելով նույն ու Միակ Արարիչ Աստծո առաջ: Որ մենք մեր երկարակյաց նահապետների նման ճանաչենք մեզ զորակցող ու պահպանող, կենսատու Աստծուն՝ Խաղաղության ամենահաղթ թագավոր Քրիստոսով, որ օրհնյալ է հավիտյանս. ամէն:

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ----- էջ -3
ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ ՏԵՍԻԼՔՈՎ ՀԱՅՏՆՈՒՄ Է ԱՐՅԱԽ ԱՇԽԱՐՀԻ ԱԶԱՏԱ
ԳՐՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԵՎ ԳՈՒՐԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳԻ
ԱՐՅԱԽԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ----- -5
-ԹՈՂ ՏԻՐԱՄԱՅԻՐԸ ԼԻՆԻ ՄԵՐ ԱՐՅԱԽ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՇՏՊԱՆԸ
-ԱՍԱՅ ՎԵՏԱՓԱՌԸ ----- -7
ՏԵՐ ԱՍՏՎԱԾ, ԻՆՉ ԿԼԻՆԻ՝ 25-30 ԸՈՊԵ ԺԱՄԱՆԱԿ ՏՈՒՐ-----9
ԽԱՉ ՊԱՏԵՐԱԶՄԻ-----10
ՔԱՀԱՆԱՅԻ ԶԱՐՄ ԳԵՆԵՐԱԼ ՄԱՅՈՐ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ- ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ
ԽԱՉԻ ՆՇԱՆՈՎ ՏԱՆՈՒՄ Է ՍՔԱՆՉԵԼԻ ՀԱՂԹԱՆԱԿ-----13
ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ՇՈՒՇԻ, ԸՍՏ ՖԻԴԱՅԻՆԵՐԻ-----16
ԼԵԳԵՆ ԴԱՐ ԿՈՄԱՆ ԴՈՍԻ ԵՎ ՇՈՒՇԻՈՒ ՈՒԽՏԱԳՆԱՅԻ
ՀԱՆ ԴԻ ՊՈՒՄԸ -----22
ԵՎ ԱՄԱՐԱՍԻ ԱՐԹՈՒՐԻ ԳԼԽԻՆ ԱՆԿԵՋ ՄՈՐԵՆՈՒ
ԿՐԱԿՆ ԷՐ ԲՈՆԿՎԵԼ -----23
ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ՕՐՎԱ ՀՐԱՇՔԸ-----24
ՃՇՄԱՐԻՑ ՈՐ՝ ԱՐՅԱԽԻ ՊԱՇՏՊԱՆԸ ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ Է-----24
ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ ԵՐԵՎՈՒՄ Է ՀԱՅ ՋԻՆՎՈՐՆԵՐԻՆ-----27
ՄԱՀԻՑ ՓՐԿՎԵՑ ՍՈՒՐԲ ԱՎԱԶԱՆԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՄԲ-----28
ԵՐԵՆԱՅԻ ԼԵՋՈՒՆ ԲԱՅՎԵՑ ԵՎ ՈՏՔԵՐՆ ԱՄՐԱՅԱՆ-----29
ՄԵԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՇՄՎԱԾ 12 ԱՄՅԱ ՏՂԱՆ
ԲԺՇԿՎԵՑ ՎԱՋԳԵՆ ՎԵՏԱՓԱՌԻ ԱՂՈՔՈՎ-----31
ԱՍՏՈՒ ՀՐԱՇՔՈՎ ԲԺՇԿՎԵԼՈՒ ԵՍ-----32
ՓԱՌԱՀԵՂ ՄԻ ՀՐԱՇՔ, ԲԱՅՑ ՏԽՈՒՐ ՈՒ ԽՐԱՏԱԿԱՆ
ԱՎԱՐՏՈՎ-----34
ՍՈՒՐԲ ԱՎԱԶԱՆԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՄԲ ԵՎՍ ՄԵԿ
ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՇՔ-----37
ՀԱՅՐԻԿ ԶԱՆ, ԱՍՏՎԱԾ ՈՂՈՐՄԱԾ Է, ԱՂՈՔ ԱՐԱ՝
ԱՆՉՐԵՎ ԿՏԱ-----38
ՍՈՒՐԲ ԾՆԻ ԴՅԱՆ ՕՐՎԱ ՊԱՅԾԱՌԱԿԵՐ ՊՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ
ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՉՅՈՒՆ՝ ԽՆՉՈՐԻ ԶԱՓ ՓԱԹԻԼՆԵՐՈՎ-----39
ՄԵԿ ՕՐՎԱ ԱՆՉՐԵՎԻ ԴԱԴԱՐ Է ԽՆ ԴՐՈՒՄ ՇՈՒՇԻՈՒ
ՔԱՂԱՔԱՊԵՏԸ-----42
ԱՂՈՔՈՎ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑԻՆ-----43
ԱՆՉՐԵՎԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԽՆ ԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ Է ԴԻՄՈՒՄ
ԱՐՅԱԽԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ-----44

«ԲՐԻՍՏՈՍԻՆ ԴԱՐՁԻ ՄԻ ՀՐԱՇՔԻ ՄԱՍԻՆ ԿԱՄ՝	
ՏՂԱՅԻ ԱՌՈՂՋ ՁԵՌՔԸ ՀԱՆԿԱՐԾ ՍԿՍԵՅ ԱՐՅՈՒՆԱՀՈՍԵԼ	45
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԼՈՒՅՍԸ ԳԱՆՁԱՍԱՐԻ ԳՄԲԵԹԻՆ	46
ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԾՏԵՐ ՀԱՎԱՔՎԵԼ ԵՒ ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ	
ԵՐԳԵՐՈՎ ՓԱՌԱԲԱՆՈՒՄ ԷԻՆ ՄԵՐ ՓՐԿՉԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ	47
ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՐԻՆ ՕԴ ԷՐ ԲԱՐՁՐԱՅՆՈՒՄ	49
ԻՐ ԱՄԲՈՂՋ ՀԱՍԱԿՈՎ ԵՐԵՎԱՅ ԱՍՏԾՈ ՀՐԵՇՏԱԿԸ	50
ՉՈՐՍ ՕՐ ԱՆԸՆԴՄԵՋ ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ ԵՐԵՎԱՅ	
ԱՐՅԱԽԻ ԵՐԵՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ	50
ԵՎ ԱՀԱ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՒՐՋ, 300 ՄԵՏԻ ՇԱՌԱՎԻՂՈՎ	
ՄԻ ԳՈՒՆԴ ԲԱՅՎԵՅ	51
ԵՐԿՈՒ ԾԻԱԾԱՆ ՀԱՅՏՆՎԵՑԻՆ ՂԱԶԱՆՉԵՑՈՅ	
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱ	52
«ԵՎ ԵԹԵ ԸՆԿՆԵՍ, ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ՊԻՏԻ ՊԱՀԵՆ ՔԵՋ,	
ՈՐ ՈՏՔԴ ՔԱՐԻՆ ՉԿՊՉԻ	53
ՀԱՎԱՏՆ ԱՌԱՆՅ ԵՐԿՄՏԱՆՔԻ, ՎԱՐՁԱՏՐՈՒՄ Է ԱՍՏՎԱԾ	54
«ԱՐԹՈՒՆ ԵՂԵՔ» ԿԱՄ ՍՐԲԱԶԱՆԸ ՏԵՍԱՎ ՍԱՏԱՆԱՅԻՆ՝	
ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀԻՆ	54
ԼԻՆԵՆՔ ՉԱՐԱՀԱՂԹ. ԱՅՍ Է ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	58
ԸՍՏ ՇԱՀՈՒՄՅԱՆՅԻ ՌԱՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՏԵՍԻԼՔԻ	59
ԽԱՉԸ	60

Գիրք երկրորդ

ԻՆԸ ՏԱՐԻ Ի ՎԵՐ ՑԱՄԱՔԱԾ ԱՂԲՅՈՒՐԸ ՍԿՍԵՅ ԲԽԵԼ	64
ԳԱՆՁԱՍԱՐԻ ՊԱՏԻՆ ՀԱՅՏՆՎԱԾ ՏԻՐԱՄՈՐ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ	65
ՓԱՌՔ ԱՍՏԾՈ, ՍՐԲԱԶԱՆԻՆ ՈՉԻՆՉ ՉԷՐ ԵՂԵԼ	66
ՄՈՐ ԱՂՈՒՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ	67
ԵՐԿՆՔԻՅ ԻՋԱԾ ԼՈՒՅՍԸ	68
ԱՐՁԱԿԱԳԻՐ ՀՈՎԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	69
ՀԱՆԿԱՐԾ ԵՐԿՆՔԻՅ ՄԻ ԱՄՊ ԻՋԱՎ	70
ՄՈՆԹԵԻ ԱՂԲՅՈՒՐԸ	72
ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԻՆՉ ՈՐ ՄԵԿՆ ԱՐԹՆԱՅՆՈՒՄ Է...	73
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԵՐԸ ՎԱԶԳԵՆԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՆՉ ԱԶԱՏԵՅ	
ՄԵԾ ՏՀԱՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ	75
ԵՎ ԱՍՏՎԱԾ ԶՈՐԱՎԱՐԻ ՄՈՏ ՈՒՂԱՐԿԵՅ... ԵՐԵԽԱՅԻ	77
ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՆՇԱՆԸ	79
ՇՈՒՇԻԻ ՀՅՈՒՐԱՆՈՅՈՒՄ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՅ ԱՅՅԵԼԵՅ	
ՀՈԳԵՎՈՐ ՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐ	81
ԵՐԵՎՈՒՄՆԵՐ ԱՆԴԵՆԱՅԻՆԻՅ	83
ԱՐԾԱԹՅԱ ԽԱՉԻ ՍՊԱՍՈՒՄ ԷԻՆ	85

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՆԻԿՈՒԸ	86
ԺԱԿ- ՀԱԿՈՐԸ ԱՐՅԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ	91
ՎԱՐԴԱՆԱՆՅ ՈՐԴԻՆԵՐԻՅ	93
ԱՐՅԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԳԻՐԸ	95
ՄԵՐ ՊԱՊԵՐԻ ՆՄԱՆ	97
ԵՎ ԲՈՂՈՐԻՍ ԷԼ ՄՈՐԹՈՏԱԾ ԿԼԻՆԵԻՆ, ԵԹԵ ԱՍՏՎԱԾ ՄԵՋԱՆԻՅ	
ՄԵԿԻՆ ՆՈՒՅՆ ՊԱՀԻՆ ՉԱՐԹՆԱՅՆԵՐ	99
ԶԳԱՅԻ, ՈՐ ԴԱՆԴԱՂՈՐԵՆ ԴԵՊԻ ԵՐԿԻՆՔ ԵՄ ԵԼՆՈՒՄ	101
ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ՏԵՍԻԼՔԸ	102
ԴԵՎԸ ՎԱԽԵՆՈՒՄ Է ԱՆԳԱՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ ԶԳԵՍՏԻՅ	104
ՍՊԱՐԱՊԵՏԸ ԴԻՄՈՒՄ Է ԱՍՏԾՈ ՕԳՆՈՒԹՅԱՆԸ	109
ԷՐՔԵՋՅԻ ԳԱՌԵԻԿԻ ՀԱՅՐԸ	110
ԵՐԱՇՏԸ ԴԱԴԱՐԵՅ, ԵՐԲ ԵՍԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆՎԻՐԱԾ	
ԶԱՆԳԸ ԳՅՈՒՂ ՎԵՐԱԴԱՐՁՐԻՆ	112
ՄԻ ՏՐՏՄԻՐ	113
ՏՂԱՍ, ՄԻ ՏՐՏՄԻՐ, ԷԼԵԿՏՐԱՍՅԱՆ ՏԱԿ ԴՐԱՄ ԿԱ	114
ՈՐԴԻ, ՄԻ ՏՐՏՄԻՐ, ԸՆԿԵՐԴ ԿԼԱՎԱՆԱ	116
«ԴՈՒՇՄԱՆ» ՎԱՐԴԱՆ	116
ՉԱՐՈՒԹՅՈՒՆԻՅ ԴԱՐՉՈՂԻՆ ՆԵՐՈՒՄ Է ԱՍՏՎԱԾ	129
ԿԱՆՉԵՑԻ ԱՍՏԾՈՒՆ ԵՎ ԱՌԱՎՈՅՑԱՆ ՀՐԱՇՔՈՎ ԲԺՇԿՎԵՑԻ	131
ՄԱՐԻԱՄԱՉՈՐԵՑԻ ԱՐՏՅՈՒՐԸ	131
ԳԱՆՁԱՍԱՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎԸ	
«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ» ԹԵՐԹԻ ԱՇԽԱՏԱԿԻՅ, ԿԱՊԻՏԱՆ ԳՆԵԼ	
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ	135
ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՐԴԻՆԵՐԸ ԿԱՄ ԱՅՈՅԻ ՕՐԱԳՐԻՅ	148
ԷԴ ԻՆՉ ԵՔ ԱՆՈՒՄ, ՇԱԿԱԼՆԵՐ	152
ԵՍ ՀՈԳՈՎ ՍԿՍԵՑԻ ՀԱՅՏՆՎԵԼ ԱՂՎԱՆՍՏԱՆՈՒՄ	154
ՄՈՐ ՀՈՒՅՄԻ ԱՂԵՐՍԸ	157
ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ	158
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԵՐԸ ԱՐՁԱԿԱԳԻՐ ՎՐԵԺ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ	
ՄԻՋՈՑՈՎ ԻՆՉ ԱԶԱՏԵՅ ՉԱՐ ՓՈՐՉՈՒԹՅՈՒՆԻՅ	159
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԿԱՐԻՉ- ՄԱՆԿԱՎԱՐԺ ԵՎ ԼՐԱԳՐՈՂ ԿՈՂՅԱ	
ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԸ ԹՔԵՅ ՀԱՅԱԿԵՐ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴԻ	
ՄԵԾԱԴԻՐ ՆԿԱՐԻՆ	162
ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐՍ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՀՅՏ ՍԿՍԵՑԻՆ ԵՐԳԵԼ	
ՀԱՂԹԱԿԱՆ ՄԻ ԵՐԳ	164
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	166



Մեր Փրկչի Հարության ժամին պատանքի վրա
արտածված դիմային մասի պատկերը: Պատանքը
պահպանվում է Թուրինում:


**Գիրքը հրատարակվում է մեքենասութեամբ
Տիարք Բրայան Բեդրոսեանի (ԱՄՆ) եւ
Արսեն Մանասեանի (Արցախ)**

Արցախյան վկայութիւնները գրի են առնվել բանավոր իրական պատումներից:
Բնական է, որ վկայութիւնների մեջ բանավոր պատմվելու պատճառով կարող են
անուններ դուրս մնացած լինել կամ չփոթել այլ անունների հետ: Ներողամիտ եղեք:
Նման չփոթում նկատելիս, խնդրվում է հրատարակչատան միջոցով գգուշացնել
հեղինակին՝ հաջորդ հրատարակութիւնների ժամանակ շտկումներ կատարելու
համար: Մաղթում ենք ամենայն բարին: Ամեն:



Հրատարակչութեան տնօրեն՝ Վիտայի Ասլանյան,
Առաջին գրքի նկարները՝ ՆԻԿՕ -յի (Նիկոլայ Մանուկյան):
Առաջին գրքի նկարների համակարգչային մշակման նվիրածեռնութիւնը՝ լուսահոգի
և բարեպաշտ քույր՝ Նազելի Հարութիւնյանի: Օրհնութեամբ հիշենք: Ամեն:
Առաջին գրքի սրբագրութեան նվիրածեռնութիւնը՝ արժանապատիվ քույր,
«Տիրամայր» ժողովածուի հեղինակ, բանաստեղծուհի Գոհար Սարգսյանի:
Երկրորդ գրքի սրբագրութեան նվիրածեռնութիւնը՝ բարեձեռ քույր Սուսաննա
Շաքարյանի:
Խմբագրական և համակարգչային աշխատանքները, շապիկը և երկրորդ գրքի
համակարգչային նկարները՝ Մաքսիմ Անդրանիկի Ոսկանյանի:
Տեխնիկական խմբագիր՝ Վահան Խաչատրյան:
Տպագրված է «Լուսարաց» հրատարակչատանը

ՀՀ, Երևան, Պուշկինի 46: Հեռ. +374(10) 53 96 47, +374 (55) 78 47 87



Նախորդ հրատարակութեան շապիկի նկարը:
Շապիկի երկրորդ էջի Տիրամոր, այս նկարի և «Առաջին գրքի»
նկարների հեղինակը տաղանդավոր նկարիչ ՆԻԿՕ-ն է: Աստուծո
օրհնանքը խնդրենք բարեձեռ ու բարեսեր այս նկարչի համար:
Ամեն: